

Ա. ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

Ս Պ Ի Տ Ա Կ
Ա Ր Դ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն




— Պատմութիւնք —

1938

ՏՊԱՐԱՆ «ՆՈՐ ՕՐ»Ի, ՖՐԷՋՆՕ

891.99

Կ - 58



391.99

Q-58

56

20 JAN 20

19 NOV 201

[REDACTED]

ՍՊԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— ՍՊԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ	Ե—ԺԹ
2.— ԱՆԱՆՈՒՆԻ ՄԸ ՕՐԵՐԷՆ	3
3.— ԿՈՏՐԱԾ ԹԵԻԵՐՈՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ	
Ա.— Պատուհասուածը	49
Բ.— Նախանաշէն Առաջ	63
Գ.— Ճերմակ Գտակը	69
Դ.— Մինչ Շոգեմար կը Սուլեր	76
Ե.— Կեանքի եզերքին	83
4.— ԸՆԿԵՐՆԵՐԸ	89
5.— ՍՊԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ	181

ՍՊԱՆԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ

Սպանիոյ ժողովուրդին եղերական ու հերոսական այս դիւցազնամարտը արդէն բոլորեց իր արիւնոտ վեցամսեան: Եւ արդէն կէս միլիոնէ աւելի դիակներ, հողին մէջն ու վրան՝ սառած բիւրերով որդերուն կամ ազոաւներուն կը նային: Կրունկներէ ճղմուած, զնդակներէ ծակծկուած, սուրներէ բզբտուած մարմինները մարդոց, կիներու եւ մանուկներու, որոնք չարչարեալ, խաչեալ բայց անթաղ սստուածորդիներու պէս պառկեցան Իպէրեան թերակղզիի երկայնքին, գիշակեր կտուցներու եւ քաղցած շուներու հալածող ստուերներուն տակ: Եւ զոհերու արեան լերդացած խաւին ներքեւ կը հեծեծեն Սպանական դաշտերն ու լեռնակողերը եւ կը պատտախին իրենց ամեհի ցաւէն: Եւ հիմա՝ հողի այդ վէրքերէն վեր կը ցցուին բոսոր կարմիր տառերով վիթխարի ցուցանակներ ու կը ծածանին մարդկային խղճմտանքին դիմաց: Եւ այդ գիրերէն ժողովուրդի մը ողբերգական բայց վսեմ ու փրկարար պայքարին ցաւազին յաղթանակները կը կաթկթին...:

Եւ Սպանիոյ մէջ կատարուող եղերադէպը բրտորէն կը ժխտէ ահադեմական միտքերու ձեւած շարք մը «օրէնքները», հիմերէն շրջելով անոնց իմաստը:

Մինչեւ երէկ, իբր վաւերական ճշմարտութիւն կը ծանուցուէր եւ կը դաւանուէր այն պսակաւոր կեղծիքը թէ «սահմանադրական» կառավարութեան մը դէմ ըմբոստացողները պաշտօնական խռովարարներ եւ դաւադիրներ միայն կրնային ըլլալ: Եւ քրէական յանցանքի մը կապուած դատապարտութիւնը կը ծանրանար անոնց վրայ վամբիւրներու մահաբեր մազիլներուն պէս: Նման վճիռներ կ'արձակէին փարիսեցի դպիրներ եւ վաճառուած դատաւորներ՝ որովհետեւ բոլոր դժգոհներն ու ապրտամբները մի՛շտ եւ անխուսափելիօրէն կուղային ժողովուրդներու ժառանգազուրկ եւ հարստահարուած խաւերէն:



5697-55

Կը հաւաստէին ճարպիկ ու ընչաքաղց կեղեքիչները, թէ ընկերութեան բոլոր դասակարգերը հաւասար իրաւունք եւ պատեհութիւն ունէին նիւթական, մշակութային եւ հոգեկան լիութեան իրենց հետապնդումին մէջ: Թէ իրենք, երկրին տնտեսութեան հայրենասէ՛ր տէրերը պիտի չչլթայեն դանդուածներու աղատութիւնը եւ պիտի ենթարկուին քուէնքու իմաստութեան: Եւ այդպէս սով՝ Բարեշրջումը թաւշապատ, ծաղկազա՛րդ պողոտայ մը պիտի ունենայ իր բնական յառաջընթացքին համար:

Եւ զարմանալի միամտութեամբ մը, ինքզինքնին ազատական կամ յեղափոխական դաւանողներ հրապուրուեցան այս խոստումներուն փայփայիչ հմայքէն: Ու իջան մինչեւ մեղկ անձնատուութիւն: Չէ՞ որ այս նոր իշխողները կը հանդուրժէին իրենց հպատակներու բողոքներուն եւ նոյն խսկ հայհուհներուն: Մանաւանդ կ'արտօնէին անոնց ազատ խօսքն ու դործունէութեան ծրագիրներուն թոթովումը հրապարակներու վրայ: Չէր անդրադառնար միջադպային ռամկավարը, թէ այն տարրական բարիքները որ իբր շնորհք կ'ընդունի ինք, իր սեփական եւ անկողողպտելի իրաւունքներն են, վաստկուած շնորհիւ արիւնտոտ եւ ահարկու յեղափոխութիւններու, որոնց ծնունդին եւ դիեցումին համար իր հայրերն ու պապերը իրենց սիրտերն ու բիրերն են հոսեցուցեր անխընայ եւ անհաշիւ, ցաւով ու երջանկութեամբ իբրեւ կաթ, իբրեւ արեւի շող ու տեսիլք: Չէր ուզեր համողուիլ միջադպային ազատականը, թէ իր այդ թանկազին իրաւունքները իրմէն յափշտակել փորձող քաղաքական եւ տնտեսական բռնակալութիւնները սանձահարելու կամ տապալելու համար, քուէներէն աւելի կարծր ու հզօր գործիքներու միջամտութիւնը անհրաժեշտ կը դառնայ դրեթէ միշտ:

Որովհետեւ կ'ապացուցանէ պատմութիւնը, թէ ինքնակալ այդ տէրերը երբեք «բարութիւնը» եւ հեռատեսութիւնը չեն ունենար ինքնաբերաբար քանի մը փշրանք զիջումներ նետելու Բարեշրջումի պաղատող ափերուն մէջ: Եւ բոլորին ծանօթ իրողութիւն մըն է հիմա, որ

«հաւասարութեան» այդ առաքեալները, որոնք երկիւղով կը ժպտին գործաւորներու աշխատանքէն կարծրացած բազուկներուն եւ քրտինքէն խորշոմած ճակատներուն, անոնցմէ քամուած, կողոպտուած ոսկիի դէզերուն ետեւէն՝ պիտի յարգեն անոնց քանի մը «աղատութիւնները» այնքան ատեն միայն, որքան ատեն որ անոնք չեն դպիր իրենց: Որ «վտանգաւոր» չեն դարձեր անոնք: Այսինքն՝ մեծ դրամատէրը, առաջնորդուած իր շատ տարածուն եւ դերդրայուն շահերէն, պիտի դարպասէ Ռամկավարութեան եւ պիտի հովանաւորէ դայն այնքան երկար, որքան Ան հրաժարած կը մնայ իր բռն դիրքին, ժողովուրդներուն ազատ եւ ապահով կեանք մը պարզեւելու իր երբեմնի այնքան վեհաշուք ու նուիրական յանձնառութիւններէն...:

Եւ Սպանիոյ քաղաքացիական պատերազմը, ահաւոր դնով մը, կը հաստատէ բռնակալ եւ անուղղելի իշխողներու այդ դժոխային խարդաւանանքը: Ու զարթնումի ահագանդի մը պէս կը շառաչէ մտաւորականութեան անեղծ, կաշառուիլ մերժող հատուածին դոհունակութենէ թմրած հողիներուն դէմ: Ու այսօր, «անարիւն յեղափոխութեան» ջատագովները, անոնք որ անհպելի աւանդութիւն մը կառուցած էին Ռամկավարութեան տեսարանական բարեշրջումին անվրիպելութեան վրայ, յուսախար ու շփոթած՝ իրենց պէխերուն կամ եղունգներուն ծայրերը կը խածնեն: Խուլ փլուզումով կը կքի իրենց խարուած վստահութեան շէնքը, զոր խանդավառ պարզմըտութեամբ մը կառուցաներ էին ընկերութեան «օրինապահ» մակարոյժներուն եւ հարստահարողներուն, դրամազլուխի բազմադոյն արքաներուն նենգամիտ խոստումներուն վրայ: Կը խարխափէ եւ կը դանդաչէ անոնց մտածումը եւ համողումներ, որոնք այնքան անսասան եւ անվիճելի կը թուէին երէկ՝ կը սկսին տատանել եւ ճարձատիլ խորունկէն: Պիտի համարձակի՞նք անոնք ներքին հաշուեյարդարի մը տանիլ իրենց նախկին դնահատումները այս նոր դէպքերուն ընծայած պայծառ լոյսին տակ:

Այդ յանդգնութեան ուժգնութենէն պիտի վնասուի միջազգային Ռամկավարութեան ցակատագիրը:

* * *

Օտար տիրապետութիւններ, զիրար հալածելով եւ յաջորդաբար իշխելով՝ Սպանիան բերին ու յանձնեցին Միջին Դարերուն, բաժանուած եւ իրերամարտ մանր թագաւորութիւններով:

Հռովմի աշխարհակալ թաթը վտարեց Կարկեղոնը թերակղզիէն եւ տարածուեցաւ հոն երկրորդ Փիւնիկեան Պատերազմէն վերջ, (218-201 Ք. Ա.) երբ Աննիբալի հռչակաւոր արշաւանքը Ալպեաններէն դէպի հարաւ՝ աւարտեցաւ Կարթագէնացիներու խորտակումով: Երկու դար ետք՝ առաջին կայսր Օգոստոս Հռովմէական ծայրագաւառի մը կը վերածէր զայն: Այդ ազդեցութիւնը երկարեցաւ մինչեւ հինդերորդ դարուն սկիզբները, ուր փրշրուեցաւ եւ հալեցաւ հիւսիսէն ներխուժող Վանտալներու եւ յետոյ Վիսիգոթներու յորձանուտ թաւալումին տակ:

Իսկ ութերորդ դարը Ափրիկէէն ներածեց լուծը Պէրպէրներուն եւ Մաւրիտանացիներուն, որոնց Եւրոպա խուժումին դէմ՝ Շարլը Մարթէլի եւ իր թոռան Շարլըմաների Ֆրանքները հազիւ կրցան կղպել Պիրէնեան լեռնաշղթան: Մահմետականներ, իրենց եաթաղանով, արուեստներով եւ ճարտարապետութեամբ տիրեցին երկրին մինչեւ տասնեւհինգերորդ դարուն վերջերը, երբ ներքին սլաոակտումները արդէն խոցելի դարձուցեր էին զիրենք:

Այսպէս՝ Ասթուրիայի, Լէօնի, Նաւարի, Արակօնի եւ Գասթիլի մրցակից թագաւորութիւնները, ընդհանուր վտանգէն հարկադրուած դործակցելով հասարակաց թշնամիին դէմ՝ յաջողեցան հետզհետէ դէպի հարաւ մղել իսլամ տիրակալութիւնը: Եւ 1492 թուականին, երբ Գոլոմպոս իր տեսլապաշտ բիբերը անսահման ովկիանոսի մը ալիքներու փրփուրին մէջէն կը յառէր անծանօթ արեւմուտքին՝ Իզապէլայի եւ Ֆէրտինանտի ամուսնութեամբ Գասթիլի եւ Արակօնի միաձուլուած ուժերը

վերջնական պարտութեան կը նետէին Մաւրիկները, գըրաւելով Կրանատան: Ու այդ օրերուն է որ թեւաւորուած կը սկսի ծածանիլ, արքայական տուներու փոխադարձ խնամութիւններուն շնորհիւ այլեւս միացեալ Սպանիոյ աշխարհածաւալման դրօշը, հզօր նաւատորմի մը առաջաստներուն թառած:

Բայց նաեւ զօրացման, մագլցումի այդ շրջանին, կնքուած դատապարտութիւնը արդէն կ'ընկերանար անոր յաղթանակներուն, Յիսուսեան կրօնաւորներու (ճիզուիթ) մռայլ ու կործանարար շուքին մէջ ծուարած. որովհետեւ տակաւին 1478-ին, հաւատաքնութեան պատուհասը իր դալիք դարհուրանքներուն թունաւոր առաջին սերմերը կը ցանէր...:

Կաթոլիկ եկեղեցիին այդ Ատեանները «հերետիկոսներ» հալածելու եւ դապելու, իրենց մոլեգին կիրքով եւ դժոխային վայրագութեամբ, ստուերի տակ ծածկեցին Ներոնի կրկէսներուն սարսափը: «Հաւատաքնութիւնը», իրեւ մահարեք եւ անքննելի դատաւճիռ՝ կրօնական եւ աւատական բացարձակապետներուն կողմէ շղթայադերձ շարտուեցաւ բոլոր դժգոհներուն վրայ, որոնք կուգային գիւղացիներու, քաղաքի արհեստաւորներու եւ մանր աշնուականներու դասերէն: Ընկերային այս ճնշումներուն եւ տնտեսական անսանձ շահագործումներուն դէմ ընդվզող խիղները կը յայտարարուէին սատանային վաճառուած, եւ իբր «հերետիկոսներ» արժանի այնպիսի մահուան մը, որ անոնց «հողիներն ու աղիքները մաքրէր չար ոգիներէն»: Խարոյկի կամ կացինի սահմանուած ընկերային ապստամբի մը կամ քաղաքական առաջնորդի մը կրօնական հերձուածողի շապիկ հազցնելը նենդաժէտ աւանդութիւնն է ճարպիկ եւ ապականած ինքնակալներուն: Որովհետեւ ժողովուրդները խաբելու աւելի դիւրին եղանակ մըն է հի'ն դարերէն կտակուած այդ խաղը, — Աստուածային անհասանելի պատգամներուն ընդդէմ մեղանշողի բանադրանքը: (Եղերականօրէն յօրինուած դատաւարութենէ մը վերջ՝ 1431 թ. Ժան տ'Արք իբր «կախարդուհի» այրուեցաւ Ատեանին վճիռով...)

նոյն եկեղեցին սակայն, «արժան եւ իրաւ» դտաւ սրբա-
ցննելու Օրլէանի Կոյսը 1919-ին) :

Բայց ո՛չ բոցավառ խարոյկներ, ուր կ'ողջակիրողւէին
ըմբոստները, ո՛չ հալած կասարը, որ կը հոսեցնէին ա-
նոնց կոկորդներէն դարվար, ո՛չ սղոցաւոր եւ բեւեռաւոր
անիւնները, որոնք կը դառնային անոնց մարմիններուն
վրայ հետզհետէ մօտենալով եւ միտերը բղքտելով, ո՛չ
ալ չարչարանքի ուրիշ աներեւակայելի գործիքներ յա-
ջողեցան ահարեկել ճշմարտութեան եւ արդարութեան
ողին եւ խափանել անոր ցաւադին ճախրանքը: Ազատա-
կան մտածումը, խաւար զնտաններու կամ ծածուկ դոխ-
ներու մէջ կը սաւառնէր միշտ, թէեւ վիրաւոր թեւերով:

Եւ այդ ժամանակներու Եւրոպայի կրօնական պա-
տերազմներէն ու ջարդերէն մինչեւ մեր օրերը՝ ապըս-
տամբական եւ յեղափոխական շարժումներու ռազմա-
դաշտ մը հանդիսացաւ Սպանիան...:

Դարէ դար երկարաձգուող այս կղերապետութիւնը,
իր սարսափին շուքը տարածած զանդուածներու հողե-
կան, մտային եւ ֆիզիքական զարգացման բոլոր հիմ-
նարկներուն վրայ՝ ըրա՛ւ իր կարելին, որպէս զի Միջնա-
դարը նախապաշարումներու եւ տղխտութեան իր աղջա-
մուղջով յաւէրժանայ ժողովուրդներու ճակատադրին
պլլուած: Այդ փորձը յաջողեցաւ դժբախտ Սպանիոյ հա-
մար, շարունակական ներքին խռովութիւններու արիւ-
նոտ զսպումներով եւ ընդարձակ կայսրութեան քայքայ-
ման զնով:

Այսպէս՝ Պօնաբարդ գրաւելէ վերջ Թերակղզին՝ իր
եղբայր Ժօղէֆը կայսերական արծիւներու թեւերուն
հովանիով Սպանիոյ թաղաւոր կը հուչակէր 1808-ին: Եւ
որպէս արդիւնք՝ Մէքսիկոն եւ Կեդր. ու Հարաւային Ա-
մերիկաներու երկիրները կը թօթափէին Մատրիտի լու-
ծը, իրենց անկախութիւնը խլելով Սպանիայէն, որ հիմա
ի՛նք զերեկվարուած օտար բանակէ մը, իր ազատագրական
պայքարին պիտի նուիրուէր: Անոր հին փառքը կը խո-
նարհէր դէպքերու զահավիժումին զուգահեռ: Եւ եր-

բեմնի աշխարհակալութեան վերջին բեկորներն ալ,—
Ֆիլիպեան, Բօրթօ Րիկօ եւ Քուպա կղզիները իրմէն կը
փրցուէին Մ. Նահանգներու կողմէ, 1898-ի զգուժտու-
քին մէջ:

Բայց ապարդիւն չմնացին յառաջընթացներու յա-
մառ ճիղերը: Սահմանադրութիւն մը չահեցան 1812-ին,
որ յետոյ անտեսուեցաւ Ֆէրտինանտ 7-րդ-էն եւ որ
1820-ի նոր յեղափոխութենէն հարկադրուած վերահաս-
տատեց դայն: Ուրիշ քաղաքացիական պատերազմ մը
պսակուեցաւ առաջին հանրապետութեան ստեղծումով,
թէեւ կարճատեւ՝ 1873-ին: Սակայն ազատականներու եւ
պահպանողականներու յաջորդական բախումներուն զու-
ղընթաց՝ կը զօրանար շրջաններու անջատողական ձեռ-
տումը, որ յանդեցաւ Քաթալոնիոյ անկախութեան
(1932):

Դարաւոր այս հակամարտութիւնները, հիմա ուժգ-
նօրէն շեշտուած՝ վճռական ճակատումի մը համար ի-
րենց ջիղերը կը պրկէին: Տը Րիվերայի զինուորական
բռնատիրութիւնը (1921-30) աւելի ձգտեց այդ լարումը,
բոլոր ընդդիմադիր հատուածները գործակցութեան մը-
ղելով: Ու ժողովուրդին կուտակուած դառնութիւնը ա՛լ
գերազրգուած գայրոյթի հօր թափահարումով մը շը-
պըրտեց իր ուսերէն Տը Րիվերայի մենակալութիւնը, ո-
րուն անկումէն յետոյ երերաց ու փլաւ նաեւ արքունիքը
եւ միլիոններու կողոպտւումով մը, 13-րդ եւ վերջին Ալ-
ֆօնսօն դարձաւ փախստական: Փրկարար այս փլուզում-
ներու փոշիներէն ծնաւ երկրորդ հանրապետութիւնը
1931 Սպրիլին, գրեթէ ընկերվարական ծրագրով: Ազա-
նա, Հոկտեմբերին յաջորդելով Նախագահ Չամօրայի,
արմատական իր դահլիճով ձեռնարկեց սահմանադրու-
թեամբ ժողովուրդին խոստացուած բարեկարգումնե-
րուն: Անհրաժեշտ էր սակայն ճիղուիթներու եւ մեծ հո-
ղատէրերու կալուածները — երբեմն ամբողջ գիւղեր,
աւաններ, գաւառներ — կտրատել եւ բաժնել ընչազուրկ
եւ թշուառ գիւղացիութեան:

Աւատապետական հնամեայ, նուիրականացած առանձնաշնորհումներ կրճատելու այս յանդուգն նախաքայլին գաղափարը խորապէս ցնցեց ու գործունէութեան մտրակեց յետադիմական հոսանքները: Եւ յաջորդ ընտրութեան՝ պետութեան ղեկը յանձնուեցաւ անոնց ցասումէ գալարուող մագիլներուն, Լըրուի եւ Բօպլէսի միջոցաւ: Բայց այս անգամ, այլեւս մերկացած երբեմնի հմայքներէն՝ կրօնական, արքայական եւ զինուորական դիւանակայներ իրենց յետադիմութիւնը կը սկսէին ձեւաւորել Փաշիզմի կաղապարով, իւրացուցած անոր դիւշատիչ եւ բարբարոսական յատկանիշները: Եւ 1934 Հոկտեմբերին Ասթուրիայի հանքագործներուն ըմբոստութիւնը խեղդուեցաւ ա՛յնքան առատօրէն թափուած արեան յորձանքներու մէջ: Անոնք իրենց սահմանադրական իրաւունքները պաշտպանել փորձելու անքաւելի մեղքն էին գործեր:

Եւ աղատութեան դործաւորները յուղուած, վճռակամ՝ շարժեցան դարձեալ եւ իջան հրապարակ, կաղմակերպուած հիմա, նոր, հրապուրիչ յայտադրի մը շուրջ եւ բոլորին սիրելի, բոլորը վստահացնող պայծառ ցուցանակով մը, — ժողովրդական շակատ: Ու կրկին յաղթանակը վարձատրեց զիրենք 1936 Փետրուարին: Բայց կառավարութեան ներքին կաղմաւորումը հաղիւ աւարտած, երբ ռամկավարական բարեշրջումի ճամբով ընկերային ու տնտեսական վերականգնումի նախափորձերուն կը ձեռնարկուէր՝ պայթեցաւ Յուլիս 17-ի յետադիմական զինեալ դաւադրութիւնը:

Եւ ապստամբներու առաջնորդ Ֆրանքօն օտար, վարձուած զօրասիւններու դարչապարներով կոխկրտեց, աւերեց իր հայրենիքին գիւղերն ու քաղաքները: Օտար, վարձուած սուրիներով շոայլօրէն, վայրագօրէն ան հոսեցուց իր ժողովուրդին արիւնը եւ առունք ձեւեց անոր հեղեղումին համար: Եւ դարձեալ օտար ռումբերով ու գերեզմանափորներով ան խրամներ պատուեց ըզբտուած անհամար դիակներու իրր պահարան:

Եւ տակաւին՝ ահաւասիկ Ֆրանքօն Արար, Իտալացի եւ Գերման զօրաբաժիններով, որ կը շարունակէ իր մահացու կռիւր ժողովուրդին եւ անոր օրինաւոր, քուէնքով ընտրուած կառավարութեան դէմ: Որ կ'ասպատակէ իր հայրենիքը եւ կ'երդնու անպատկառ լրբութեամբ՝ թէ ինք պատրաստ է բնաջնջելու Սպանիոյ կէսը, յաղթանակը գրաւելու համար:

Ահաւասիկ նաեւ ժողովուրդը իր առաջնորդներով: Հրաչապատում դրուաղներով ընդելուզուած դիւցազնամարտ մը կը վարէ ան, քաղաքական եւ տնտեսական իր աղատութիւններուն ի խնդիր: Մանաւանդ, քաղաքացիական կռիւի անունով սկսուած այս դաւադրութիւնը իրեն համար վերածուած է անկախութեան պատերազմի մը, ընդդէմ Իտալական եւ Գերմանական ներխուժման:

Անցեալ դարերուն մէջ կա՞յ հատ մը որ անարգուած ըլլայ նման վիթխարի դաւաճանութեան մը խարանով: Հաւանաբար: Բայց Ֆրանքոյի խմբակին ազդադաւութեան տարողութեան քով հասարակ, ողորմելի սկսնակներու խարխափումներ են մեր Վասակին եւ Մերուժանին ոճիրները...:

* * *

Եւ ահաւասիկ վախճանը առաջին վեցամսեային: Կէս միլիոնէ աւելի դիակներ, գետնին տակն ու վրան՝ մեռած բիրբերով կեանքին կը նային: Ու դայն այլեւս պիտի չտեսնեն երբեք: Երբե՛ք, բռնաբարուած եւ սուինահար սա աղջիկը, որ կիսամերկ փռուեր է հոն, երազով պիտի չփարի արեւոտ սէրի մը: Սա ծերունին, որուն գանկը Մաւրիկ մը վայրենի քրքիջ մը արձակելով փշրեց հրացանի բունով, երբե՛ք բահէն ու բրիչէն կոշտացած մատներովը ալ պիտի չկրնայ փայլալայել իր ձիուն պայծառ ճակատը կամ յլի կովին մէջքը: Հոն՝ իրար գրկող մանուկն ու կինը, որոնք հնձուեցան օտար սաւառնակի մը զնդացիքէն՝ այլեւս երբե՛ք, երբեք զաւակ ու մայր պիտի չըլլան իրարու...:

Բայց ճակատները որ յարդարուած են հոն դէմ դիմաց, զիրար ջախջախելու մտասեւեռումով՝ ներքին շատ աւելի խորունկ նշանակութիւն մը կը մարմնաւորեն իրենց վրայ: Բոլորին ծանօթ դադտնիք մըն է, որ վճռական գօտեմարտի մը փոխակերպուած է ան Փաշիգվիմ եւ Ռամկավարութեան միջեւ:

Անհրաժեշտ է ստորագծել, շեշտել, շեփոթել այս ճշմարտութիւնը իր բովանդակ էութեամբ: Անոր վաւերականութիւնը տարակոյսի ենթարկող ամէն միամիտ կամ չարախինդ ակնարկ կամ հաստատում պէտք է ընդհարի յամառ բայց դիտակից մերժումի: Որովհետեւ յետադիմութեան դադափարախօսները եթէ «կարմիրով» յաճախ կը հագուեցնեն զայն՝ այդ բառը սլատող նախապաշարումը իբր աւելի դաժան սպառնալիք մը թափահարելու համար է տատանող աղատականներու մտքին վրայ: Որպէս զի ասոնք, այդ խառնուրդէն դալիք ժամանակաւոր չփոթութեան մէջ, տատամսին կողմերու ընտրութեան պահուն: Ըշմարտութիւնը, սակայն, անզուսպ աղաղակ մըն է հոն, որուն արձագանգները խանդով կը շառաչեն բոլոր հորիզոններուն ետեւ ու կը թափանցեն ամէն պարիսպէ ներս. — Միջագային Փաշիգվիմ կանգնած Ֆրանքոյի թիկունքին՝ իր հրետանին շիտկած է Միջագային Ռամկավարութեան վրայ, որ սակայն կը պաշտպանուի միայն Սպանիոյ Ժողովրդական ձակատի բանակներէն:

Եւ անոնք որ Ժողովրդական ձակատը կ'երանդաւորեն «կարմիրով», անծանօթ են զայն բաղկացնող հոսանքներուն: Կամ կը զրսլարտեն այդպէս՝ շեղեցնելու համար անոր կապուած դանդուածային համակրանքը այն թելադրանքով թէ, երկու կողմերն ալ, Փաշիստ եւ «կարմիր», յարձակողներ են եւ հետեւաբար պատասխանատու կատարուող ողբերգութեան: Իսկ իրողութիւնը այն է, որ այդ նակատը թանձրացումը եղաւ Ժողովրդական համատարած շարժումի մը, որուն պատրաստութեան մէջ իրենց խօսքը եւ աշխատանքը բերին չափաւոր ռամ-

կավարէն մինչեւ անսանձ անիշխանականը: Եւ համայնավարութիւնը որ իբր վտանգ եւ չարիք կը ծանուցուէր՝ ամէնէն անձնուէր, խիղախ ու հերոսական դիմուորները տուաւ հանրապետութեան:

Հնարաւոր չէ յամենալ Սպանական աղատամարտը վարող բոլոր դէմքերուն քով: Բայց հարեւանցի մօտեցում մը անոնց ըմբռնումներուն, պիտի ապացուցանէր այդ նակատին համապարփակ եւ համազգային բնոյթը:

Նախադահ Մանուէլ Ադանա. հի'ն հանրապետական եւ աղատական՝ — բայց ոչ այս նահատակուած բառին որձ եւ էք իմաստով — ան կը յայտարարէր Յուլիս 17-ի շղթայակերծումէն քանի մը շաբաթ վերջ. «— Հիմա, միայն հիմա է որ միապետութիւնը կ'իյնայ Սպանիոյ մէջ: Այդ չպատահեցաւ 1931-ին: Յաղթութիւնը Սպանիոյ վերածնունդը պիտի ըլլայ: Կռիւը հիմա շատ աւելի ընդարձակ դեմքի մը վրայ է քան 1808-ին, շատ աւելի լայն քան մեր անկախութեան պատերազմը Նարուէօնի դէմ»:

Վարչապետ Լարկօ Գապալէրօ. ընկերվարական, 1917-ի ընդհ. դործադուլին ձերբակալուած եւ ցկեանս բանտի դատապարտուած, օր մըն ալ ինքզինքը աղատ եւ Տը Բիվերայի Խորհուրդին անդամ դտաւ, շնորհիւ իր մեծ Ժողովրդականութեան: Ասթուրիոյ Հոկտ.ի կոտորածին ձերբակալուեցաւ դարձեալ, իբր պետութեան դաւադրող, բայց անպարտ արձակուեցաւ դատարանէն, յաջող ինքնապաշտպանութենէ մը ետք՝ ուր ըսաւ. «... Ես ջատագուցի միայն ընկերային յեղափոխութիւն, որ կրնայ իրագործուիլ առանց բռնութեան դիմումի...»:

Արդարութեան Նախարար ծուան Օլիվեր, անիշխանական... որ կը հաւատայ թէ պէտք է ընկերային եւ ընտանեկան սէրը մշակել երբեմնի ոճրագործներուն մէջ. դաստիարակել, բարեկարգել զանոնք:

Կայ Քաթալոնիոյ նախադահը, Լուիս Գոմբանիս, արմատական-հանրապետական, որ իր անձին հմայքովը յաջողեցաւ անիշխանական սէնտիֆալիստ հատուածները մօտեցնել համայնավար եւ ընկերվարական կուսակցու-

թեանց, կը խօսի ուժեղ շեշտով մը. «Ռամկավարութեան ջերմեռանդ հաւատացողներ ենք մենք»:

Կայ տակաւին մտաւորականութիւնը:

Մշակոյթի պաշտպան Մտաւորականներու Միութեան նախագահ Ճօղէ Պէրկամին, դործօն կաթողիկ մը, կուտայ իր կարծիքը. «...Կայ համայնավար կուսակցութիւն մը եւ ընկերավարական կուսակցութիւն մը. կան անիշխանականներ եւ արհեստակցայիններ (սէնտիքալիստ), բոլորն ալ կողք կողքի կուուող հարադատ ուսմիւսնէրներու հետ, Հանրապետութիւնը պաշտպանելու համար... Ի՞նչպէս կրնանք խօսիլ «համայնավար» վտանգի մասին, երբ համայնավարները մեզի հետ Սպանիան կը պաշտպանեն ոճրատարտ Ֆաշիզմին դէմ...»:

Տօն Կալարտօ, առաջնակարգ իրաւաբան, պահպանողական կաթողիկ, այսպէս կ'եղբարտակէ իր միտքը. «... Համակրանքս կը տեղաւորուի կառավարութեան եւ ժող. ձակատին հետ: Հանրապետութեան համար: Անտարակոյս: Կեցցէ՛ Հանրապետութիւնը: Սպանիո՞յ համար: Բնականաբար: Կեցցէ՛ Սպանիան: Ա՛հ, բայց ատոնց վրայ՝ նաեւ ուրիշ խորհուրդներով, որոնք կ'աշտարակուին Սպանիայէն եւ Հանրապետութենէն բարձր, — հոգեկան — անմահ արժէքներու համար, Քրիստոնէական քաղաքակրթութեան համար, դործաւորներու քաղաքական եւ տնտեսական ազատագրումին համար, ժողովուրդներու ինքնորոշումին համար եւ մարդուն ազատութեան համար...»:

Մօրալէս, հին հանրապետական կաթողիկ քահանայ մը, այսպէս կ'աւարտէ պարզաբանում մը. «... Ժողովուրդին ատելութիւնը ուղղուած չէ Աստուծոյ եւ եկեղեցիին դէմ. այլ դարձած է դէպի իրենց վարդապետները, որովհետեւ անոնք իրենք ղիրենք յառաջապահները չըրին ժողովրդական բանակներուն... Աւետարանը դօրաւորին դէմ խոնարհը պաշտպանելու պարտքը կուտայ եկեղեցականութեան...: Երկա՛ր ապրի Հանրապետութիւնը: Մի՛շտ ապրի ազատութիւնը եւ ուսմիւսնէրութիւնը: Կեցցէ՛ բանուորութիւնը»:

Ահա նաեւ Սպանիոյ դիւցազնուհին, Տօլօրէս Իպարիւրին, համբաւաւոր «Լա Բասիօնարիան», համայնավար երեսփոխան Ասթուրիայէն, սերունդով հանքագործ: Անոր հրեղէն խօսքերը մութ երկինքէ մը ինկող լուսաճայթ շառաչի մը պայթուցիկ ուժգնութիւնը ունին միշտ: «... Մենք երբեք պիտի չումբակոծենք բաց քաղաք մը: Որովհետեւ մարդկային էակներ ենք մենք, ո՛չ մարդասպաններ: Մեր թշնամիներուն կիներն ու զաւակները յանցաւոր չեն անոնց մեզի դէմ գործած բաղմամբիւ ոճիրներուն համար»:

Այսպէս: Մատրիտի դարպասներուն առջեւ ու ամբողջ ռազմական դժի երկայնքին՝ միջագային ֆաշիզմն է որ միաձոյլ կոհակի մը վերածուած, իր հրանօթներուն կրակէ փրփուրը կը շարտէ Ռամկավարութեան երեսին, իբր մահացու սպառնալիք: Եւ կ'ուռի, կը գալարուի հետզհետէ վայրի կատաղութեամբ մը, խորտակելու համար զայն պաշտպանող մարտիկներու վերջին թումբը եւ իր սանձարձակ թաւալումին տակ խեղդելու համար հանրապետութիւնը, որ անթիւ զոհերու արիւնով գնուած էր: Այն ատեն է որ, իբր տաժանելի մղձաւանջ՝ պիտի տեսնենք նորոգ վերադարձը միջնադարեան հաւատաքրնութեան, զոր դերեզմանելու համար, ժողովուրդը ծա՛նր երկունքով յեղափոխականներու բանակներ հասցուց Քրօմուէլի օրերէն մինչեւ մեր ժամանակները:

Ու ցաւազի՛ն հիասթափում ակադեմական մտածողին համար: Որովհետեւ «յարմարադոյնին վերապրողի» այս ճակատագրական մրցումին մէջ, ուր ֆաշիզմը նետուեր է յարձակողական հոգեբանութեամբ եւ մինչեւ դարչապարն ու սիրտը սպառազինուած՝ միջագային Ռամկավարութիւնը կը յայտնուի մեղկ ու կրաւորական, անհամաձայն ինքն իր մէջ աջի, կեղորոնի եւ ձախի ծանծաղ ու մեղապարտ ուրացումներով: Եւ ինչո՞ւ այսպէս: Արդեօք ի՞րապէս ծերացեր է ան եւ իր ակունները ա՛լ անզօր են հակառակորդին խոչափողին միւրճուելու: Թէ՛ հին, երիտասարդ յեղափոխականի աւանդութիւնները միայն կակուղցեր, թմբեր են թաւապապտ բազկաթոռ-

ներու մէջ ծփացող ողորկ միսերու գիրկը, եւ հօր ցըն-
ցում մը տակաւին կրնա՛յ զինք ընդունակ դարձնել խո-
յանքի, թռիչքի ու մահուան:

Կ'ապացուցանէ Սպանիան՝ թէ երկրորդն է ճիշտ:
Թէ Պասթիլլի խորտակման ողեկոչումը դեռ կրնայ հա-
սարակ ուսմիտարին մէջ արթնցնել ազատութեան եր-
բեմնի ախոյեանը: Թէ ան, այսօ՛ր իսկ, պիտի կրնայ հե-
տեւիլ Տանթօնի մը, որ պիտի փշրէր հացով լեցուն փու-
ռերու եւ սննդեղէնով յորդող շտեմարաններու սողապատէ
դուռները, փողոցներու մէջ անօթի եւ անտէր տառապող
միլիոնները կշտացնելու համար: Թէ ան բաւական ա-
ռողջ է, հաւատալու ճէֆըրսընի հետ որ, «... Ազատու-
թեան ծառը երբեմն պէտք է թարմանայ հայրենասէրնե-
րու եւ բռնակալներու արիւնով...» եւ Լինքընի հետ՝ թէ
«Աշխատանքը դերադաս է դրամադուլսէն»...: Թէ այ-
սօր՝ այլասերած «ազատականներու» շռայլած անսպառ
ամբաստանութիւններէն վերջ՝ անոր մտածումին մէջ
տակաւին Բօպէսրիէս կրնա՛յ կանգնիլ իրր Յեղափոխու-
թեան Անկաշառեիլն:

Այս՛, հասարակ քաղաքացին որ մինչեւ հիմա հա-
ւատացեր է Ռամկավարութեան՝ կրնա՛յ տակաւին վստա-
հիլ անոր... բայց պայմանով մը. անխուսափելի, ան-
ճողոպրելի պայմանով մը, — Որ արդիանայ ան, յառա-
ջապահը դառնալով ետը ըմբռնումներու, բայց նոր աւելն
խմելով նախ: Եւ այդ կ'իրականանայ միայն այն ատեն,
երբ ան կ'ազատուի դրամատիրութեան ճիրաններէն, ա-
նոր ուսերէն կը շարտուի դրամադուլսէն թանձրացած
մարմիններու քայքայիչ բեռը, որուն ծանրութեան տակ
կը հեծէ ան եւ ա՛լ կը կքին, կը դանդաշեն անոր սրունք-
ները: — Մտածման եւ խօսքի անկաշկանդ ազատութիւն՝
այս՛: Մարդերու ամբողջական հաւասարութիւն, ի՛նչ
գոյն ալ ունենայ անոնց մորթը՝ այս՛: Նախաձեռնելու
իրաւունք՝ միայն ի՛ր ձերքերուն զարգացումով, որ եր-
բեք չի թարգմանուիր ուրիշի մը նո՛յն իրաւունքին եւ
քրտինքին շահագործման: Եւ սեփականութեան ճանա-
չում՝ այս՛, բայց այնքան միայն, որքան անհրաժեշտ է

մէկու մը պէտքերուն...: Այլապէս՝ ժողովուրդներ
մի՛շտ ստեղծեր են ու պիտի ստեղծեն իրենց ժամանակն
ու հողերը հասկցող եւ անայլայլ կախաղան ու կառափ-
նատ բարձրացող առաջնորդներ:


Պատմութիւնը երախտապարտ պիտի մնայ հերոսա-
կան Սպանիոյ: Որովհետեւ «ուսմիտար դերադանց եւ
թանկագին դրութիւնը աշխարհին համար» հո՛ն, Մատ-
րիտի խրամներուն մէջ է որ կը պահպանուի եւ ոչ թէ
այդ պայքարէն «չգոքացած» բարձրախօսներու վրայ:
Որովհետեւ Սպանիան վերադարձի պատեհութիւն մը
կ'ընծայէ Ռամկավարութեան դէպի հին, խիզախ մար-
տնչողի դիրքերը, դէպի մեծ ու վսեմ իր յանձնառու-
թիւններուն լիակատարումը: Եւ ահռայ կուտայ անոր:
Եւ ժողովրդական բոլոր հոսանքները, մինչեւ երէկ իրե-
րամարտ՝ եղբայրօրէն կը համախմբէ նոյն պատնէշնե-
րուն ետեւ: Վկա՛յ միջազգային կամաւորներու Զօրա-
սիւնը, ուր կողք-կողքի կը կոտուին ու կը մեռնին ուսմ-
կավարը, համայնավարը, ընկերավարականն ու անիշխա-
նականը, Ռամկավարութիւնը պաշտպանելով՝ անոր եւ
մարդկային ընկերութեան թուեաւոր ու կատարի թշնա-
միին, — Ֆաշիզմին դէմ:

5694-55

Եւ Պատմութիւնը երախտապարտ պիտի մնայ Սպա-
նիոյ: Ու Հանրապետութեան յաղթանակը ցնծութեան
լուսապսակներ պիտի բոլորէ Սէրվանդէսի, էլ Կրէքոյի,
Կօյեայի եւ ա՛յնքան ուրիշներու հողիներուն շուրջ, որոնք
կուլան հիմա եւ խաղաղութեամբ պիտի հանդէին այն ա-
տեն:

20 Գեկտ. 1936, Նիւ Եորք





Ա. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

**Ս Պ Ի Տ Ա Կ
Ա Ր Դ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն**



— Պատմութիւն —

1938

ՏՊԱՐԱՆ «ՆՈՐ ՕՐ»Ի, ԳՐԷՏՆՈ

ԱՆՆՈՒՆԻ ՄԸ ՕՐԵՐԷՆ

ԱՆՆՈՒՆԻ ՄԸ ՕՐԵՐԷՆ

1932

ԱՆԱՆՈՒՆԻ ՄԸ ՕՐԵՐԷՆ



Ա.

Փչրուած ալտոսիրը իր մէկ աչքին կուտար ետանկիւնի ձեւ: Եւ երբ թարթէր զայն կամ փակէր՝ բիբը կը մանրանար, կը խորանար այնքան, որ կը դառնար կարծես, անյատակ վիճի մը գոգը թաղուած ասաղ մը գորշագոյն, անդունդէն կլանուած ցոլքերով:

Գերման գնդակներ իր աջ բազուկը տարած էին ուստիքէն եւ ձախ սրունքը ամբողջութեամբ խորտակած: Կաշիէ մաշած սլառանք մը սեղմօրէն կը գրկէր իր անկենդան ծունկը:

Մոխրագոյն «չքանչան» մը աժաննոց թիթեղէ, անպակասօրէն բողմած գոյնն ու ձեւը կորսնցուցած բաճկոնին սրտին՝ կը ստտար ցից ու փայլուն գիւրերով:

«Պատերազմի հաշմանդամ, օգնեցէ՛ք այս խեղճին»

Բայց ինչ որ դեռ կը մնար իրմէ, որպէս աւերակ, — աւելի ցուալին քան մոխրակոյտը հրդեհուած ասպարանքի մը, կամ զիտիկը թեւտուած թիթեղի մը, կամ կտորուանքը ջախջախուած հայելիին, — կրնար մրմնջել անցորդներուն թէ ան երբեմն ունեցեր է հրապուրիչ դէմք, սլացիկ հասակ ու զեղակերտ մարմին:

Արեւելեան 25-րդ փողոցի շէնքերէն մէկուն զոնապանը, տան գեանափոր նկուզէն մթին խցիկ մը տրամադրած էր անոր փոքր վարձքով: Գիշերները ան կ'երթար հոն հարածուած, խոցոտուած շան մը պէս կծկուելու եւ իր վէրքերը լիզելու: Մինչ սենեակին կարծրացած հողէ յատակէն եւ խոնաւ, բորբոսած պատերէն թոնձր ու կծու հոտ մը զոլորչիանալով կը լուծուէր օդին մէջ, տաժանակիր աշխատանքի վերածելով իր շնչաուրթիւնը:

Իսկ ամէն առաւօտ, տակաւին արևու չարթնցած, վերաւոր անթացուպերը հնչեցնելով մայթերու անառակ կողերուն, համաչափ տատանումներով կը թաւալէր առաջ, օրուան իր կայանը հաստատելու մարդոց երթեւեկին մօտ, երկու թիղ զեանի վրայ:

Հանրապարտէզի հարաւային նոսրերին, Մէքրոքօլիքէն Ապահովադրականին դիմաց կը յամենար պահ մը: Բաճկոնին զրպանէն դանդաղօրէն կը հանէր զուիցերական ժամացոյցը, յիշատակ Արեւմտեան Ճակատէն: Եւ նայուածքը կը սկսէր մագլցիլ վե՛ր դէմի վիթխարի աշտարակէն, որ կը մխրճուէր երբեմն կապտաւուն կամ բաց վարդալոյն, երբեմն գորշ կամ մառախլամութ միջոցին մէջ: Կը հասնէր կատարին ու կը թառէր զայն բուրբակոյ հսկայ ժամացոյցներէն մէկուն թեւերուն եւ կը յարէր ու կը ճշգէր իրենը:

Յետոյ՝ ... բայց ցուպերը զիտէին ճամբան:

Ամբողջ տասներկու տարիներ փողոցէ փողոց եւ անկիւնէ անկիւն շրջեր էին անոնք, իր խեղանդամ մարմինին ահաւոր ողբերգութիւնը ցուցադրելով մարդոց: Եւ ինք հլու, գրեթէ անարտունջ հետեւեր էր անոնց, ողջ ուսէն կախած, յաւերժական նախասիրնքի մը պէս՝ ծխախոտի հին սուփը, լեցուած ձութով, մասխտով եւ լուցկիով:

Երկարաձիւղ այդ տարիներու շրջանին, մարդկային նայուածքներու երբեմն խոժոռ, երբեմն կարեկից տողանցքին տակ՝ ան Ջնաց լուռ ու ցամաք: Անոր հողին յուսահատօրէն կը գալարուէր անցորդներու դժգոհ, պարսաւոյ ակնարկներէն, որոնք յաճախ կ'իջնէին բաղէի վայրագ կոցահարումին նման, հատու եւ զիշատիչ: Բայց կուրծքին խորերէն շղթայազերծուող բոլոր հեկեկանքներն ու մոնջիւնները ան սորվեր էր թաղել իր խեղդուած աչքին ճախճախտտին մէջ:

Եւ մարմինին խաղաղած աւերակոյտին վրայ մոայլօրէն հանդարտ անոր դէմքը ենթադրել կուտար մարդոց, թէ անողգայ եւ այլամերժ, սովորական զրատարկապօրա՞ մըն է ան: Որովհետեւ հեռաւոր, դժգոյն յի-

շատակ մըն էր դարձեր Պատերազմին եղբրադէսը եւ ձեռքերու, ոտքերու ճղակոտոր երեւոյթէն սրտերը չէին յուզուեր այլեւս. անոնք անգոր ապացոյցներ էին «վաւերականութեան» համար իսկ:

Աննովոր, չարաշուք ծանրութիւն մը ունէին օրերը:

Սակարանային մեծ փլուղումէն բարձրացաւ ժանտաւանի վոշեմբրիկ մը, որ Տնտեսական Տարնապ կոչուեցաւ եւ հետզհետէ թանձրացող արձիճէ իր ստուերը տարածեց երկրին ամբողջ ժողովուրդին վրայ: Այդ ճշուումին տակ՝ կարծես մարդիկ աւելի կ՛հուսեցան իրենք իրենց մէջ, դարձան ինքնամփոփ, անձնասէր, ժլատ:

Եւ անոր խնայողական բոլոր փորձերը կը մնային անբաւարար ու խցիկին անվճար ամսավարձերը կը շարունակուէին բարդուիլ իրարու վրայ: Իսկ զոնապանք զինք տեսնելուն՝ կը կատողէր պարզապէս: Կը կատողէր ու կը հայհոյէր իր մեռելներուն, անոնց ոսկորներուն:

Դեկտեմբերի մուսյլ առաւօտ մըն էր: Ակուսներուն տակ դառնութիւն եւ անէծք ծամծմելով ան անցաւ Մէքրոքօլիքէնի առջեւէն, առանց նայելու մշուշէն դիտատուած անոր աշտարակին: Անութափայտերը շտապով քալեցին մինչեւ վեցերորդ Պողոտայ եւ իջան 14-րդ փողոց: Հոն նոր բացուած վաճառատուն մը, չքեղօրէն զարդարուն իր ցուցափեղկերով հրապուրեց զինք: Եւ չզբողբուելու համար տէրը, նստաւ պատուհանէն գիրկ մը անդին: Մուկիւն տափակցուց հին, ծերացած դիտարկը եւ ուղ ձեւը կարկառեց վեր, ձութ մը եւ մատիտ մը բլուրնա՞ծ:

Մինչ զլուիւր կախ, մաքով կը հնձէր խորհուրդի եւ վերջիչումի այն դեղնած եղիճներն ու սոկեճոյլ հասկերը, որոնք կը ծլէին, կը հասուննային ու կը թառածէին վայրկեանէ վայրկեան: Մինչեւ որ մայթերը արթնցան ոսնածայններէ եւ լեցուեցան կեանքով: Մինչեւ որ, հանդիպակաց շէնքին վեցերորդ յարկի պատուհաններէն մէկուն ապակին, իրեց կարծիք ճառագայթ մը բարձրա-

ցող արեւէն եւ ծծելէ վերջ անսր արիւնը, դժգոյն՝ զայն շարտեց իրեն: Բայց ինք դոհացաւ այդ գործածուած, նուազ ջերմութենէն ալ: Ու ժպտեցաւ: Թէեւ թեթեւ, բայց որոշապէս ժպտեցաւ:

Եւ օրը կարծես փայփայուած իր ժպտէն՝ ելաւ բարի, դարմանալիօրէն բարի: Իւրի եւ աղտի անհաւասար շերտաւորումէն բազմադոյն, զստամած իր դլխարկը կը լուսադարձուէր ինկող քէնիներու շողերէն, որոնք պղնձէ ճառագայթներու բեկրեկումով կ'արտացոլային իր մեռած աչքին մէջ: Կամ այնպէս կը թուէր իրեն:

Եւ ուրիշ ամէն ձայնի կղպուած իր լսողութեան պատրանքը թերեւս՝ որ իւրաքանչիւր պղինձի անկման հնչիւնին մէջէն հեշտալուր մեղեդի մը կը ծաւալէր: Եւ հոգեպարար ու անըմբռնելի դաշնորդ մը կը յօրինուէր անոնց յաջորդական կաթկթումէն:

Յանկարծ սպիտակ դրամ մը ստատստեց քէնիներուն վրայ: Տասը սէնթնոց արծաթ մըն էր, որ մանրանկար լիտուանի պէս ծագեցաւ դլխարկին մէջ եւ ճերմակով օծեց պղինձները: Երախտապարտ յուզումով ան վերցոց աչքը — մէկը միայն: Որովհետեւ վախճանած էր միւսը — եւ տեսաւ տրտում ու պայծառ աղջիկ մը պայծառ ու տրտում նայուածքով: Ու դուրսը կարծանեց վար, ծածկեցու համար անհելի տգեղութիւնը իր վրած այտին:

Եւ անցաւ աղջիկը:

Աղջիկը անցաւ: Բայց նայուածքը վայրի շատաշմամբ ինկող մարակի մը պէս զալարուեցաւ աղուն հոգիին շուրջ: Եւ երբ քակուեցաւ՝ կասոյտ ու խորունկ ակօս մը թողուց հոն, ուրկէ արիւնի պէս կարմիր ու տա՛ք, շա՛տ տաք, հոսեցան պատասիկները հին ու բարի օրերու անմարմին սէրերուն: Աղօտ փշրանքները միայն: Միայն փշուրներ այն օրերէն՝ երբ տակաւին ստուեր չէր դարձեր ինք:

Անցեալի այդ վերադարձումը կաշուն ջերմութիւն մը հաղորդեց իր շրթներուն, որոնք շառագունած՝ ուժգնօրէն դողացին: Եւ մեռած աչքը սուղուեցաւ, անյուսօ-

րէն ընկղմեցաւ ցող մը արցունքի մէջ: Կուրծքը լայնցաւ մոռեղին կարօտով մը, որ ճանկրթելով դէպի սիրտը կը խուժէր մարմինին բոլոր մասերէն: Հոն կուտակուեցաւ, փրփրեցաւ, յարձանք տուաւ կարօտը. ու բարձրացաւ մինչեւ կոկորդը, մինչեւ լեղուն. եւ անօթեց ան... Ան երգուընցաւ որ տարփանքով, խանդով պիտի սիրէր... այնպէ՛ս խորունկէն, քա՛ղցրօրէն, քնքօրէն պիտի սիրէր այդ աղջիկը:

Բայց վիշտէն ծամածուած ժպտ մը ինկաւ իր դէմքին: Ան ծիծաղեցաւ լուսնի ցոլքերուն պլլուած՝ զայն համբուրելու ելլելու իր անմտութեան վրայ: Յիշեց որ մայթապղինձներու տղմաշաղ ճաշակն անդամ արհամարհեր եւ մերժէր էր զինք: Եւ սիրելու, փայփայուելու այս բուռն տենչը, անյայտ ու քայքայիչ՝ վայրի կատաղութեամբ լեցուց զինք դէպի այն գերմանը, որ այսպէ՛ս խեղանդամ հասկա մը շինած էր իրմէն,

— Սրիկա՛ն...

Յետոյ անդրադարձաւ, բայց մոռցաւ թէ ի՛նչ քանի. յիշեց միայն որ այն գերմանը երբեք չէր տեսած զինք. որ իրարու շարիք հասցուցած չէին իրենք. անձանօթ էին նոյն իսկ իրարու դայութեան. ինչո՞ւ ուրեմն այս այլանդակ կերպարանքը տուաւ իր մարմինին,

— Սրիկա՛ն...

Ինչո՞ւ, ինչո՞ւ:

Կրկին անդրադարձաւ. այս անգամ իր դասաստանին՝ ու զղջաց մեղքեցաւ այն գերմանը եւ զղջաց իր անբուրաւ դրպարտութեան համար. որովհետեւ ձայն մը իրեն կը փսիսար թէ «սրիկայ» չէր ան, որովհետեւ սրիկայ չէր ինք ալ եւ դիտէր թէ քանի՛ գանկեր ջախջախած էր ինք. եւ անձանօթ գանկեր: Եւ ո՛վ դիտէ թէ ի՛նչ եղաւ այն գերմանը: Թերեւս իրեն պէ՛ս. կամ թերեւս հրանօթներէն պայթած բոցեղէն աստղ մը զայն կերաւ ամբողջութեամբ... փշուր-փշուր ծամեց ու կերաւ. ո՛վ դիտէ...:

... Գիշերը տուն դարձին, իր խուցին առջեւ, միջանցքի կիսամութին մէջէն դռնադանին դաժան ուրուս-

գիծը ցցուեցաւ դէմը, թեւերը մէջքին, գայրացկոտ, սպառնադին: Եւ որպէս զի այդ գիշեր իր մեռելներուն ոսկորները հանգստանան քիչ մը, դրպանը պարպեց անոր արեւուն մէջ առանց հաշուելու, գուհունակ, ժպտադէմ:

* * *

Յաջորդ առաւ օրօրուելով երբ կ'անցնէր 23-րդ փողոցի հրապարակէն, աշտարակին ժամացոյցը եօթն անգամ կանչեց: Բայց ինք ետ չդարձաւ, նոյն խակ չլսուեալ եկաւ: Ու շտապեց դէպի երէկուան կայանը, դոր կարօցեր էր ա՛յնքան: Այսօր ալ կը յուսար քիչ մը դրամ «վաստիկը» եւ թերեւ մօտ ատենէն յաջողէր իր մեռելներուն ոսկորները դանապանին զաղբիլի ախոսներուն տակ ձարձատեղէ ազատել:

Եւ հոգիէն ներս հետզհետէ խոշորցող բերկրանք մը գգուելով, սանձելով՝ նստաւ դարձեալ գիւրկ մը անդին փարթամ, շողջողուն վաճառատունէն: Թո՛ղ չզգո՞հի աէրը: Մինչ շտապունոց երկինքէն վարդաթոյր երանութիւն մը կը մտպուէր իր մէջ ու կը շողար, կը պարէր, կը վազվզէր դէմքին վրայ:

Բայց յանկարծ ցաւատիթ սարսուռ մը դարկաւ իրեն: Եւ կասկածով վերցնեց ակնարկը, յամբ ու դանդաղ: Վայելչակազմ երիտասարդ մըն էր ընդմիջողը: Մակայն զարմացաւ թէ ինչպէ՛ս այդքան բարի եւ պայծառ երեւոյթով մէկը կրնար խոթոտիլ, կրնար չարտնալ: Թէ ի՛նչպէս անոր թարմ եւ աղուոր շրթունքներէն այդպիսի անդութ, սարսափելի խօսքեր ինկան դուրս: Բայց դայն սխալ հասկցաւ թերեւս, կամ չըմբռնեց եղածը ու անշարժ՝ նայուածքը յաւած պահեց անոր:

Իսկ կրկնեց տղան խուլ, գտպուած ձայնով:

— Սա սատկած աչքդ եւ կապիկի երեսդ ա՛ն ու կորուսէ՛ սրկէ:

— Բայց պարոն, ես ձեզի սրեւէ վնաս չեմ բերեր, մեղմ ու երկչոտ թոթովեց ան:

— Կորուսէ՛, քանի միւս աչքդ ալ չեմ ճաթեցուցեր, մուշտաց տղան, ոտքի կոպիտ հարուած մը տալով անոր ապրիին:

— Պարոն, ես ձեր խանութի գեանին վրայ չեմ նրատեր. եւ վատահ եմ որ իմ հոս կենալս չվնասեր ձեր գործին, ան մ'ըմբռնեց նորէն:

Ալ չհամբերեց տղան: Գործատէրը հրամայած էր իրեն հետացնել «այդ կապիկը»: Իսկ խայտառակը անպատկառօրէն կը յամառէր եւ յապաղումը տիրոջ բարկութիւնը պիտի զրգռէր իր դէմ: Ու բռնած անոր ողջ ուսէն եւ օձիքէն՝ քաշեց մայթին կեղրոնը, մինչ ընդդիմանալ կը փորձէր ան: Անցորդներ դանդաղեցան անոնց շուրջ, կեցան, բաղմացան ու արանջացին: Ամօթ էր որ այդքան առօրէ կը հուժկու մէկը բռնանար խեղճուկ հաշմանկամի մը վրայ: Գանդատները հասան երիտասարդ ծառայողին: Անհրաժեշտ էր սր արգարացնէր իր արարքը, որ հերքէր գիրենք շրջապատող մարդոց դատապարտութիւնը. եւ կեղծ զայրոյթով մը սրուաց անոր երեսին:

— Գո՛ղ, աւաղա՛կ, չե՞ս ամ չնար:

Այս գրպարտութիւնը վերաւորեց զինք: Մրտմտեցաւ եւ ամօթէն դողդղացող շրթներով նայեցաւ բազմութեան: Երէկուան ճերմակ ու տրտում աղջիկը տեսաւ հոն, եւ յանկարծօրէն իր ներսը շարժիլն ու մեծնալը զգաց հին, մտոցուած բանի մը, որ հպարտութեան կը նմանէր:

— Դուն աղտոտ ստախօս մըն ես, դոչեց եւ բարձրացուց անութիախայսն ու ճօճեց տղուն գլխուն վրայ. բայց տակաւին չիջեցուցած՝

... Աչքը բացաւ — միւսը միշտ բաց էր արդէն — ստիկանասան բանտին մէջ: Գանկին աջակողմը խոշոր ուռեցը մը կը բարախէր լայն ճեղքուած բերանով: Եւ անկէ կ'արտահոսէր վայրադ ցաւ մը, որ ժանիքները սրած՝ կը մխրձէր իր քունքերուն, ճակատին, թոքերուն եւ մինչեւ ոտքի մատներուն: Չեւքը տարաւ վէրքին, բայց հպումը ցաւազին հառաչանք մը խլեց իրմէ. պահակը դարձաւ իրեն եւ նկատելով որ սթափեր է ալ, յայտնեց թէ ազատ է մեկնելու: Զինք դուրս առաջնորդող համազգեստաւորին հարցուց ճամբան.

— Պարոն ստրիկան, ինչո՞ւ այսքան սաստկորէն կը ցաւի գլուխս :

Ոստիկանը երերցնելով ձեռքի բիրը,

— Ասոնք միայն կ'ուռեցնեն, ըսաւ անվրդով, բայց կ'երեւի մեր ընկերը քիչ մը ուժով զարկած է ընկոյղիդ, անոր համար պայթեր է ուռեցքը եւ անոր համար է որ ութը ժամ է կը քնանաս : Եւ՝

— Միւս անգամ կը կոտրտե՞նք, աւելցուց :

Ուզզակի տուն գնաց : Նկուղէն դարչելի հոս մը դեմաւորեց իրեն : Կարծես դռնապանը իր մեռելներուն սահորները կը խանձէր : Եւ խոնաւ պատերէն կարծես սովորական հայհոյանքները կը քամուէին ածիւնացող սակորներուն վրայ որպէս վերջին հրաժեշտ, վերջին աղօթք :

Յողնատանջ, խռովայտ՝ փուռեցաւ օձառի սրնատակներէ կաղմուած իր ննջանոցի երկայնքին, դուսը կըզպելով կոնակէն : Ու փորձեց վերջիւ էլ այն պատահարները, որոնք ծաղկեցան այդ ասուօտ արեւին հետ եւ հետեւեցան իրեն մինչեւ այս պահը : Ի՞նչ եղաւ . ինչո՞ւ այսպէս եղաւ . ի՞նչպէս եղաւ : Հարցումները յամաւ արձագանդներով կը հնչէին իր յիշողութեան պարապին մէջէն, բայց ինք ժամանակ չունեցաւ անդրադառնալու անոնց պատասխաններուն : Սանդի, կարօտի եւ անյատեթեան այն թանձր հոսանքը, որ երէկ մինչեւ կոկորդն էր ելեր՝ խուժեց դուրս խուլ, խորունկ, կոտրատող հեհեկանքով մը : Երկար տարիներու իր լքումին եւ թշուառութեան մէջ, երբէք այսքան առանձին, այսքան սնորհ, երբեք այսքան դաժանորէն ունահարուած չէր զգացեր թեքիներ :

«Միւս անգամ կը կոտրտե՞նք» : Ականջներուն դէմ տակաւին կը բզզային այդ ցուրտ աղղարարութեան հառու շեշտերը :

— Կը կոտրա՞նք, հարկաւ . կողոսպելէ վերջ դիւբազուկէս ու ստքէս, մարմինս ապրող զխակի մը վերածելէ վերջ այսպէս՝ անշո՞ւշտ կը կոխկրտէք, հարկաւ կը ստակեցնէք անօթի, թշուառականներ, հարկաւ, ինչո՞ւ չէ . . .

Ու դաւարուեցաւ դառնորէն հծծելով եւ կարծես դուրս ու սարսուռով ճոնչեցին օձառի սնատակները իր տակ : Խուռն նախանձով մը մտածեց իր այն ընկերներուն, որոնք ա՛լ չկանգնելու համար թաղուեր էին խրամներու սարսափին մէջ : Եւ անդուսպ, աղաղակող բաղձանք մը զբաւեց զինք, նետուելու այդ խրամներէն մէկուն վերկը եւ խեղդուելու անոր ցեխին ու հեղեղուող ուռքերէն սարածուած թունաւոր ամպերուն մէջ : Եւ երեւակայութիւնը արցունքէ թեւերով, սաւառնեցաւ ահաւոր անցեային վրայ :

Բ .

Ա՛հ, իր յիշողութիւնը երբեք պիտի չզոզանայ այդ յաղթապանծ, կրտսուէտ օրուան արբեցնող ջերմէն :

Երկիւղած ու տենչահար ի՞նչպիսի՜ բարախիւնի մը յանձնուեցաւ սիրտը եւ տրոփները ի՞նչ ուժղնութեամբ ընդհարեցան քունքերուն ետեւ՝ երբ վերջապէս աւեախսը կարկաջեց դռնէն ներս արշաւող հեռաստառ կողորդէ մը : Նման յուզումներ կը դրկէին զինք յամէն անգամ, որ արթուն երազի մը ծոցը ամուսնացած Օրիորդ ձէնէթի հետ՝ առաջին գիշերուան «սարսափելի» երջանկութեան կը մօտենար տենդալաւ հոգեզմայլումով :

Եւ մինչ վայրկեանները, խոշոր ժամացոյցի մը ճօճանակէն կաթկթելով կ'ընկղմէին անցեալի լայնարաց երախին մէջ, իր հոգիին խորերէն հետզհետէ կը մեծնար, կը հսկայանար նախագահ Ռուլսըն մարդաբէշաշունչ սուսքեալի լուսապսակով : Նոր դարերու Մովսէսը պիտի դառնար ան : Ու Ռամկավարութեան հրեղէն գաւազանով ճեղքելով արցունքի եւ արիւնի դառնակարմիր ծովը, մարդկութիւնը պիտի առաջնորդէր դէպի Սաղաղութեան ծաղկազարդ հորիզոններ՝ որոնք ահա՛ կ'ուրուաղմուէին հեռո՞ւն, արեւով ու ծիածանով սկեզօծուած :

Ա՛հ, Աւաղ Ռերբաթի այդ ասուօտը զինք ոչ ներչինչուած ու լուսարիւ տեսնողի մը փոխակերպած էր կարծես :

Եւ տիեզերքի անհունութեան մէջ հազիւ մը ջիւնի մը դուրս սա մեր աշխարհը պարագրկող զարհուրելի քառասին վրայ՝ արդէն լուսափառ դիտարի մը շողալը կ'ընդհնմարէր: Ի՞նչն էր այդ երկրային դիտարը: Այն ըստը որ կիսադունդէ կիտագունդ կը սուրբար հիմա: Թրուան թուակա՞նք, ուր ծնունդ անած էր ան, թէ՞ մարտը, որ ստեղծեր էր երկունքն ալ: Պիտի չկրնար սահմանել այդ պահուն: Բայց սարակոյս չունէր, որ իր սատանումին մէջ, ան վիթխարի պոչով պիտի զարնուէր թունաւորներու բարբարոս դահերուն ու պիտի փոշիացընէր զանոնք: Եւ անոնց արիւնաշաղ մտկաններուն մոխիրէն՝ սղատագրուած ժողովուրդներու երջանկութիւնը պիտի ծլէր ու աճէր:

Այժմ կը յառաջանար համաշարի եւ հնչել քայլերով ձայններու ժխորին մէջէն, որ բաղմապատկուած կ'արձագանգէր իր գանկին սրմերուն դէմ, աղմկայոյզ քաջայրի մը վերածելով զայն: Ու կը մնար անզգայ շուրջի քարէ իրարանցումին, ուրկէ ցնծութեան, ճայթիւններ, ատելալաւ հայհուներ, խանդարորբ մաղթանքներ ու վշտարեկ հառաչներ կը քակուէին:

Մինչ իր մէջ տակաւ կը պայծառանար Ուիլյունի ձայնը: Զախ բազուկով կը սեղմէր լրագիրներու տրցապէր եւ մտածումով՝ սոլառադէն համազգեստ մը եւ արագահարուածին այրող ու ցնցող բունը: Եւ կ'անսպարէր տուն, դէմքին հաղցուցած լայն ու անճաշակ ժպիտ մը, որ տակաւին հինգ ժամ առաջ, որպէս անխմաստ, արտառոց դիմախաղ ծիծաղելի պիտի թուէր բոլորին եւ զոր ոչ ոք կը նշմարէր հիմա:

Մաքուր կահաւորումով հանգստաւէտ իր սենեակը մտնելուն՝ դլխարկը շարտեց թաւապատ թիկնաթոռին: Բայց ան դլորեցաւ չինականի կեղծուած տեղական դորդին վրայ, ուր վառ դոյններով հսկայ վիշապ մը կը դաւարուէր, դեղին լեզուէն կարմիր բոցէ լեզուակներ թափթրվելով: Բացաւ անութած չորս տարբեր օրաթերթերը եւ շարեց մահճակալի երկայնքին: Ու կարգով նայեցաւ անոնց թուականներուն: Նոյն թուանիշերը կը կրէին ս-

մէնքն ալ,— Ուրբաթ, 6 Ապրիլ, 1917: Յետոյ իջեցուց աչքերը եւ երկարօրէն սեւեռած պահեց մէկէն երեք մատնաչափ հասակաւոր տառերուն, որոնք սեւ դրօշներու պէս պարզուեր էին անոնց ճակատներուն եւ կարծես կը ծածանէին իր կրակէ բաղձանքը հովհարելով:—

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԵՄ:

Ու մեղկօրէն փռուեցաւ անկողնին վրայ: Եւ երբ հին կաղնեփայտը քանի մը ճռինչ արձակելով դոհացաւ ու լուեց՝ ան մոլեգնօրէն անձնատուր եղաւ իր խորհուրդներուն: Մինչ իրմէ ներս անսովոր, անբացատրելի յագեցում մը կը հոսէր խայտալով:

Յետոյ, հետզհետէ տրտմող երազանքի մը մշուշէն՝ տարտամ նայուածքը բարձրացաւ դէմի պատին: Հոն, արծաթուած թիթեղով երեք շրջանակներէ երեք սիրելի դէմքեր կը նայէին իրեն: Անմիջապէս, ցուրտ սարսուռի մը խայթուածքով զգաց ներկայութիւնը պղինձէ խաչելութեան մը, որ կը հանդէշէր եռոտանի փոքրիկ սեղանին վրայ, սնարի աջ կողմին եւ որուն մէկ թեւէն սատափէ վարդարան մը կը կախուէր: Զեռքը տարաւ անոր ոտքերուն կրթնող կաշեկազմ Աւետարանին: Վերցուց զայն յուլօրէն ու խորասոյզ դիտելէ վերջ պահ մը, կողքը դարձուց եւ դանդաղօրէն շրթներուն իջեցուց խաչը պաշտելի ձեռագիրի մը՝ որ կը կարդացուէր:

«Իմ սիրելի տղուս. Յիսուս Մանուկը թոյլ ամէն չարէ սիրելի մանչս պահէ, պահպանէ: Միշտ քեզ սիրող՝ Մայրդ»

Ու կրկին աչքերը ինկան երեք լուսանկարներուն: Եւ արցունքի քանի մը կարօտակէզ կաթիլներ, որոնք կուպե-րը խանձել կը սկսէին, ճմլուեցան դուրս:

* * *

Վերջին շտապօրէն էր ընտանիքին: Հայրն ու մեծ եղբայրը, ուրիշ չորս հանքադործներու հետ հեղձամահ եղեր էին, անժամանակ պայթումով կղպուած ամխահո-րի մը մէջ: Այս աղէտին չլիմացաւ մայրը: Եղբերական, անիոխարինելի կորուսաներուն կրծող վիշտն ու ապրող զակին օր մը նոյն վախճանին վիճակուելուն սարսափը հիւժեցին զինք: Եւ հոգեվարքի մահիճին վրայ, հան-դարտօրէն աղօթեց եւ օրհնեց որդին միայն այն ատեն, երբ ան խոստացաւ իր թաղումին յաջորդ օրն իսկ ձգել ու մեկնիլ հանքահորերէն:

— Գնա քաղաք եւ գրասենեակի անվտանգ դործ մը գտիր...:

Տարի մըն էր բոլորուեր անկէ ի վեր: Եւ հիմա, այդ մերձաւոր անցեալէն այրող կայծեր կը ցատկէին դէպի թախճալի ներկան:

Երկու եղբայրներուն համար, իրենց ծնողքին ամուս-նութիւնը նուիրական եւ անլուծելի խորհուրդի մը շուքը պահեց միշտ: Բողոքական տունէ բարեպաշտ, համեստ եւ երկչոտ աղջիկ մը մայրերնին, ի՞նչպէս հանդիպեր էր կաթուղի, ընկերային դաւանանքով արժատական երի-տասարդի մը եւ հաւաներ էր միանալ անոր իբրեւ ամուսին: Մանաւանդ, քառօրդ դարու կենակցութենէ մը վերջ, տակաւին մնալ նոյն Աստուածավախ կիներ:

Եւ մեծ եղբօր անհող ու հնչեղ ծիծաղը յաճախ կը սպառնար պատուել սրբազան այդ խորանին վարագոյրը՝ հօր համբերութիւնը խաչելով:

— Երեսուցի ըսէ նայինք, հայրիկ, ամուսին եւ հո-ղէն աղտոտ ու կոշտ սատանայի այդ ձեռքերովդ ի՞նչ-պէս յափշտակեցիր մեր այս հրեշտակ մայրիկը:

— Ինձի նայէ դուն, տղա՛ս, մեր վէպը...:

— Ի՞նչ կ'ըսէիր, հայրիկ...: Մեղմ, շատ մեղմ ու գաղտնի սաստով մը կ'արտասանէր մայրերնին այս բա-

ները: Սակայն զարմանալի, թերեւս կախարդական զօ-րութիւն մը ունէին անոնք: Եւ կը յաջողէին սանձել մար-դուն արտակարգ եռանդը, որով սկսեր էր կեանքին «փա-ռաւորագոյն յաղթանակը» գրուատել:

— Լա՛ւ, լա՛ւ, մոռցիր: Ու կը լռէր:

Բայց երբեմն վայրկեան մը կ'ուշանար լուռութիւնը: Այդ կը պատահէր, երբ սովորականէն աւելի դուարթ ըլ-լար ինք եւ տղոց անառակ խնդուքէն հեղնանքի թեթե՛ւ հով մը զար սօսափել կնոջ փետուրէ խօսքերէն խոնարհող իր հեղութիւնը: Յապաղման այդ միջոցին էր որ ան կը ձեռնարկէր իր ամէնէն խիզախ ըմբոստացումին: Ու մի-այն վայրկեան մը թարթափող այս ապստամբութեան հաշուեյարդարէն գո՛հ եւ ինքնաբաւ, շահուած բոլոր պա-հանջները կը խօսացնէր հակիրճ յաւելուածի մը մէջ, որ համողիչ, վեհերոտ ու աղաչական ձայնով մը կը կցէր իր գասական վերջաբանին.


— Լա՛ւ, լա՛ւ, մոռցիր...: Բայց մայրիկ սիրելի, չէ՞ որ ասոնք ալ կամաց կամաց վարժուելու են մէջ մէկ կնիկ առնելու եւ քովերնին պառկելու հասարակաց օրէն-քին, եւ...:

— Աստուած իմ, հայրիկ, ամօ՛թ, ամօ՛թ քեզի... Ի՛նչպէս կրնաս նման անվայել բաներ խօսիլ զաւակնե-րուդ առջեւ. եւ տակաւին կը յուսաս իբր բարի քաղա-քացիներ դաստիարակել զանոնք:

Այս վերջիշումներէն հետզհետէ սղոտրեցան երեք լուսանկարները, իրենց փայլուն շրջանակներուն հետ: Կարծես սպաղուս աւագահատիկներու բարակ անձրեւ մը կը մաղուէր անոնց վրայ: Եւ երբ իր նայուածքը աղօ-տող թափանցիկ բայց ծփուն քօղին ետեւ անոնք զրկուե-ցան իրենց դիճերէն՝ դառնօրէն ան հծծեց.

— Ա՛խ, ինչո՞ւ պիտի չապրէիք դուք, ինչո՞ւ պիտի գոհուէիք այդպիսի սոսկալի արկածի մը...: Ա՛հ, ա-գա՛հ, անա՛րգ ոճրագործներ...:

— Չէ՛, ոչ ոք չեմ գրպարտեր, աւելցուց: Եւ որպէս զի համոզէ խիզճը թէ անարդար ու անհիմն ամբաստա-նութիւն մը չէ բրածը՝ խորհրդածեց ինքնիրեն.



— Այո, այո, երկրորդ կարգի մարդասպաններ են անոնք: Որովհետեւ այդ «արկածը» պիտի չանդամալուծէր հինգ ընտանիք, եթէ խնայողութեան անունով չարտաքսէին կարգ մը բանուորներ, ոչոնց վտարման բուն պատճառը, յայտնուեցաւ որ, Հանքադործներու Միութիւնը վերակազմել փորձելին էր: Շահամոլութենէ մղուած, տէրերը փոխանակ նոր մարդիկ բերելու, ճամբուածներուն աշխատանքը բարդեցին մնացողներուն վրայ: Եւ ասոնք, ահանք որոշուած ժամուն պայթեցնելու իրենց հապճեպին մէջ, անհրաժեշտ խնամքով չկըրցան դասաւորել ուժանակը եւ մոռցան աւելի ներսը փորողներուն իմացնել: Արդիւնքը ահուելի ոճիր մը եղաւ, որուն պատասխանատուները, իբր արժանապատիւ քաղաքացիներ, օրէնքի պաշտպանութեան հետ յարգանքն ալ կը վայելեն:

Տակաւին երբեք այսքան բացայայտ ու ծանրակշիռ եզրակացութեան մը յանդելու հարկին տակ չէր գըտնուած: Եւ այս տրամաբանութիւնը նախ չափազանց ուղղակի եւ ուժգին թուեցաւ իրեն: Սակայն համողումը ապահովցուց զինք, կրկնելով. — Բայց ճիշտ է, չէ՞, կարեւորը այն է որ ճշմարիտ է, անոնք պիտի սպրտէին այսօր, եթէ այդ կերպով սպաննուած չըլլային:

Այս վճիռը իր կուրծքէն ներս ցաւագին քրքիջ մը շարժեց, որուն հեղեղը խեղդուեցան արտասուած հեղձ կոկորդին մէջ: Իսկ դէմքը, թէեւ արցունքով թաց՝ ցայտուն կերպով գծեց ծիծաղի մը պատկերը, — Հա՞յրն էր որ կը փսփսար իր երգիծող ձայնին զուարթ ելեւէջներով:

— Ա՛հ, տղաս, արդէն սկսեր ես շատ յանդուգն դատաստաններ կտրել: Քու եւ եղբորդ «տիեզերական սկըրբունքը» — կը յիշե՞ս բառերդ — որ «ամէն խնդիր երկու կողմ ունի», նո՛ր կ'ըմբռնես ահա: Անչո՛ւշտ երկու կողմ: Բայց երբ ես մեր կողմը կը բացատրէի ձեզի, երկուքդ ալ կուշտ մը կը խնդայիք վրաս: Երբեմն նոյն իսկ կասկածեցայ որ «ծեր խենդուկ» մը կը նկատէք զիս. այո, մանկամիտ «ծեր խենդուկ» մը, որ բորբոքելով կը խօսի

եւ յաճախ կը պարծենա՛յ 1886 Մայիս Մէկի մեծ ցոյցերուն պզտիկ առաջնորդ մը հանդիսացած եւ ուրախութենէն արտասուած ըլլալուն համար...:

* * *

Հովէն սանտրուող ալիքներու փրփուր վարսերէն եւ երկնքի կապոյտ մերկութիւնը անթեղող մշուշի սառած մոխիրէն ցուրտ ու աղի տամկութիւն մը քամուելով, քրտինքի նուրբ հատիկներ կը ցողէր իր մազերուն, մորթին եւ զոքստին վրայ: Իսկ ինք, ալ ձեռքով սեղմած երկաթէ եզրաձողը եւ երեսով յենած անոր, սեւեռուն նայուածքը կը մխրձէր կարծես շօշափելի հորիզոնի մը հեռաւորադոյն խորշին: Հոն, հարիւր քայլ անդին, ան զարնուելով մառախուղի անթափանց որմի մը, կ'իյնար փշրուող կոհակներու սպիտակ բաշերուն ու կ'օրօրուէր անոնց հետ:

Մինչ նաւը, կոյր հսկայի մը պէս խարխափելով կը յառաջանար ովկիանոսի մութ ու մոլեգնած ջուրերուն մէջէն: Սուր քիթով երբեմն կը թաղուէր իր վրայ փըլչող ծփուն բլուրի մը հեղուկ ծոցը, պատուտելով զայն ու սարսալով այս կրքոտ գրկախառնումէն՝ ուրկէ կը ցցուէր յաղթական, փոշիով ու պղպղակով ողողուած: Երբեմն ալ կոհակը, գլխատուած վիթխարի ծովաուիծի մը պէս, ձերմակ արիւնող պարանոցով կը խորտակուէր անոր մէկ այտին դէմ ու կողերէն կը սողար դարվար մոնչելով, ճանկրտելով, ցնցելով:

Իր խորասուզումէն սթափեցաւ, երբ ետեւէն, բաց լուսամուտէ մը Պիլ աղաղակեց.

— Հէ՛յ, հո՛տ, նե՛րս եկուր, ձեռք մը բօբըր դարձնել կ'ուզենք:

— Ձէ, Պիլ, շնորհակալ եմ, ճիշտ հիմա ախորժակ չունիմ. քիչ վերջը թերեւս դամ:

— Հայտէ՛, յիմար մի՛ ըլլար, ի՞նչ կը փնտռես այդ ջուրերուն վրայ այս խոնաւ օդին:

— Ա՛հ, ան արդէն մատըմզէներուն կակուղ բոյրերը կը հոտուրտայ: Սուր ձայն մը խնդաց ներսէն: Յե-

տոյ, երկու խոշոր աչքերու հետ լայն բերան մը բացուեցաւ լուսամուտի բոլորակին մէջ.

— Խեղճ, իմ խեղճ տղաս. բայց ես քեզի չըսի՞ թէ պիտի հողամ քու բոլոր պէտքերդ, չխոստացա՞յ քեզ կըշտացնել ամէնէն թարմ կողիկներով, պարարտ զիստերով ու մեղրախաշ լեզուներով, հէ՞, չխոստացա՞յ... չըսի՞ թէ քեզմէ աւելցածներով պիտի զոհանամ, ալ ի՞նչ ինքզինքդ կը ճմրթկես հիմա:

— Հէ՛յ, Պիլ, չե՞ս կընար սա լակտոլին երախը կըզպել:

— Ինչո՞ւ դուն չես դար եւ փորձեր, հէ՞, կը վախնա՞ս բօքքրին մէջ իյնալէ, լա՛ւ, կը զիջանիմ քու խաղընկերդ ըլլալ եւ հետդ կողոպտուելու պատիւին կ'արժանացնեմ քեզ...:

Երբ ամէնքն ալ նստան քառանկիւն սեղանին շուրջ, «երախ» կանգնեցաւ մեծավայելուչ լրջութեամբ ու խօսեցաւ պաշտօնական շուքով մը.

— Տիկիներ եւ պարոններ, այս յիշատակելի եւ հանդիսաւոր պահուն, բոլորիդ գերապայծառ ներկայութեան, խոնարհ բայց պատուաւոր քաղաքացիի ասպառածեայ ուխտս կուտամ, որ պարտազանց պիտի չզըտնուիմ մեր «մեկամաղձոտ տղուն» հանդէպ: Իբր ասպացոյց այդ ազգասիրական նուիրումիս, ձեզ կը ներկայացնեմ բանաձեւ մը, որուն մշակման ընծայեցի իմ համեստ բանականութեանս ամբողջ պաշարը երկար զիշերներ, եւ որ պիտի կարգամ վկայուած հանրային «քըզանցքներու», Չեմբոգ Իգիլէի*) երկայնքին, վաւերացման խնդրանքով: Ահա այդ պատմական փաստաթուղթը.

«Սիրելի մատրմդէլ, բարի եղէք ձեր սրտով, հոգիով, մտքով եւ մանաւանդ, ա՛լս, մանաւանդ մարմնով տրամադրուելու սա Երիտասարդ Էանքիին, յանուն ռամկավարութեան եւ ձեր հայ-

*) Champs—Elyse'es (Շան գ'էլիզէ) — Բարիգեան համբաւաւոր պողոտային կ'ակնարկէ:

րենիքին, որոնց փրկութեան համար կռիւի կը վագէ ան եւ որ, հողի եւ որդի յախտեմական մաշացուցակին հրախրուելէ առաջ՝ քննաքնանկութիւնը ունի կենսախայտ ու առողջ վաւեակ մը մաշակելու... ֆրանսական տապկուած փաթաթեալ»:

Ա՛րդ, ազնուափայլ տիկիներ եւ անոնց թշուառական որսորդները, եթէ հիմնական առարկութիւն մը չունիք այս...:

Բայց քանի մը բազուկներ ցատկեցին անոր մագերուն, ուսերուն ու բերնին եւ տասպալեցին զայն սեղանին վրայ:

— Սա՛նկ, հանդիստ մը նստէ տեղդ եւ սա թուղթերը բաժնէ նայի՛նք:

* * *

... Յունիսին Բարիզ ժամանող Ամերիկեան առաջին զօրաբաժինն եղաւ իրենցը, որ վեցամսեայ զինավարժական փորձերէ վերջ՝ 1918 Յունուար 31-ին կրակի եւ տիղմի զիծերուն փոխանցուեցաւ:

Երբ հեռուէն լսեց թնդանօթներուն որոտը, որմէ գետինը զլրդաց իր ոտքերուն տակ՝ երկիւղէն մտեցաւ: Անոնց ամէն մէկ թնդիւնէն ահազեցիկ զգայնութիւն մը կը սփռուէ: միջոցին մէջ ու ծորելով դարձաւ, կը պարուրէր զինք: Վախցաւ որ ամբողջովին կը նուաճուի այդ ջլատիչ դողէն եւ դիմեց հօր յիշատակին, իբր անխարդախ ասպաէնի մը: Այդ ոգեկոչումը կը խրախուսէր զինք: Որովհետեւ ինք հայրը անբեկանելի կորովի մը մարմնացումը նկատած էր միշտ, խանդի անսպառ աւագան մը, ուր հոգեկան անպարագիւր վայելքի մը կը վերածուի համոզումին համար մարտնչիլը: Ինչպէ՛ս կիրք ու թախիծ կը միաձուլուէին հօր ձայնին, երբ կը պատմէր այն պայքարները, որոնք անիրաւուածներու անպաշտան եւ երբեմն խուճապահար շարքերը հաներ էին ընդդէմ տէրերու ահարկու եւ մահահոտ ուժին: Մանաւանդ երբ կը պանծացնէր իրենց ընտանեկան «սքանչելի

աւանդութիւն»ը, որ ազատութեան եւ իրաւունքի կատարի սէր մըն էր սերունդէ սերունդ կտակուած՝ եւ որ զինք կապեր էր գործաւորներու «մարտական» դասին :

— Կը յիշե՞ս, այն կողմը իմաստուն գլուխներ ունէինք, որոնք կը ծաղրէին հաւատացեալները իբրեւ միամիտ, տղէտ կամ ապուշ : Արքայութիւն չկայ, դժոխք չկայ, սատանայ չկայ կը նորոային : Շիտակը, արքայութեան մասին ես ալ շատ բան չեմ գիտեր, բայց դժոխքը կը տեսնեմ հոս : Վա՛հ : Եւ բոլոր դուռերն ալ կոնակի վրայ բաց կ'երեւին : Նա վա՛րը նայէ : Սա թնդանօթները դժոխքի շուններուն չե՞ն նմանիր : Կրակ կը հաջեն շանձադերը : Ի՛նչ ալ սարսափելի են, հէ՞, մարդուն արիւնը սոսկումէն կը պնդանայ, մարդուն շեռը կուզայ վախէն...

Տժգունած, նուրբ թրթռացում մը ձայնին մէջ՝ կը խօսէր «երախ» :

— Մոռցա՞ր ամիսներու մեր ռազմավորձերը : Այս ճաթրուքին շատ մօտէն ծանօթացանք, չե՞ :

— Հա՛, բայց անոնք զուարճալի խաղեր էին : Միայն մենք էինք նետողները եւ քար, օդ ու թռչուն կ'որոսայինք : Տարբեր էր անիկա : Չե՞ս տեսներ որ կատակ չէ ասիկա : Այս դժո՛խքի կը նմանի : Դժոխքն իսկ է աս : Զարմանալի չէ որ Աստուած երբեք չիջներ հոն...

Ու կը խնդար «երախ» եւ ակոսներուն մէջէն դուրս նետելէ առաջ բռները՝ կը զալարէր լեզուին տակ, երգիծանքի շեշտեր կախելով անոնց վրայ : Կեղծուած այս զուարթութիւնը սակայն կը մնար անգոր, որովհետեւ գունատ դէմքը եւ ձայնին երանգներուն փաթթուած դողը յայտնօրէն կը ցուցնէին թէ ո՛րքան ահաբեկած էր ան : Արդարեւ, բրակողի մը խրամներէն դէպի դիրքերը կ'իջնէին հիմա : Իսկ վարը, ռազմադաշտի համայնապատկերը, դժոխային տեսիլքի մը ամբողջ զարհուրանքով կարծես կը քրքշար առասպելական բոլոր գեհններու համաձոյլ ցասումին վրայ :

Զգաց որ ընկերով այդ վիճակը ցուրտ ու յամառ եր-

կիւղով մը կը ճնշէր իր կուրծքը եւ անխնայօրէն կը յոգնեցնէր զինք : Ու հանգչելու համար այդ խոնջէնքէն՝ մտածումով դարձեալ վերադարձաւ իրենց ընտանեկան «պանծալի աւանդութեան», որ պիտի վերականգնէր իր մէջ եւ ապրէր իր շունչին չափ : Հօր եւ եղբոր դադադներուն առջեւ, բարեկամներու եւ արհեստակիցներու բաղմութեան մը դէմ եւ մօրը սրտապատառ հեկեկանքներուն հետ՝ ցաւէն ցամաք աչքերով ու փշաքաղուած մարմնով երդուեր էր պահել եւ ծաղկեցնել այդ աւանդութիւնը : Հետադային, անոր պատուանդանին վրայ էր որ նախադահ Ուիլսըն բաղմեցաւ բռնակալ կուրքի մը պէս : Ու մղեց զինք դէպի բանակ, կամաւոր մեռնելու «Աշխարհի վերջնական խաղաղութեան» համար :

Քանի դեռ կ'ապրէր հայրը, այս բոլորը անհոգ ծիծաղ մը միայն կրնային արթնցնել իր մէջ : Ընտանիք եւ անկէ փրթող յիշատակներ՝ դաւաթ մը ջուրի ու շերտ մը հացի չափ բնականօրէն անկարելոր կը թուին, որքան ատեն որ ունինք զանոնք... : Բայց երբ առանձին դտաւինքըլինք, դտաւ նաեւ որ «տունը» այլամերժօրէն կ'իջխէր իր բոլոր զգայարաններուն : Որ աներևոյթ, անբացատրելի զօրութիւն մը, հօր ստուերը հազած, կը սանձահարէր իր կամքն ու զինք կ'առաջնորդէր իրեն անծանօթ բայց մտերիմ արահետէ մը : Եւ իր հարադատներուն համար ունեցած անսահման սէրը հետզհետէ խտացեր էր միակ գլխաւոր նպատակի մը մէջ.— Արժանի զաւակ մը ըլլալ անոնց, հաւատարիմ մնալ «տունին»... :

Ու հիմա, թնդանօթներու խուլ, զահանդական բոմբիւններուն եւ զնդացիներու չոր ու մահասփիւռ կտցահարումին դէմ՝ ցուրտ եւ յամառ վախին հետ՝ երկչոտ թպրտումով մը թեւ առնող այդ գոհունակութիւնն ալ ունէր : Կը սկսէր հաւատալ որ իրեններուն հողիները ուրախ (կամ թերեւս տխուր) հպարտութեամբ մը պիտի լեցուէին, տեսնելով թէ ինչպէ՛ս, ինք, անոնց վերջին շառաւիղը, իր կեանքն իբր պատուար կը նետէր մեծ անիրաւութիւններու դէմ, ինչպէ՛ս կը կուէր փոքր, ճրգմուած ժողովուրդներու եւ Ազատութեան դատին հա-

ժար: Այս խորհրդածութիւններով փորձեց զրահել ինք-
զինք: Նոյն իսկ վճռական որոշում մը տուաւ — Խրամ-
ներէն ճայթող մարտահրաւէրը դիմադրաւել վառօղի եւ
ուժանակի որոտումներուն վարժ հանքագործի մը քա-
ջութեամբ...:

Գ.

Ռուսական բանակներու վերջնական քայքայումը կը
զգացուէր տակաւին 1917 Յուլիսէն: Քանի մը ամիս
վերջ, պարտուած, յոգնաբեկ այս զօրագունդերը Նոյեմ-
բերեան մեծ Յեղափոխութեան խիզախ, հերոսական
պաշտպանները պիտի հանդիսանային ամբողջ չորս տա-
րի տեւող քաղաքացիական կռիւններու մէջ: Բայց Խոր-
հրդային Ռուսոյ հետ առանձին հաշտութեան դաշնա-
գիրը յաղթանակի նոր յոյսեր ներշնչեց Կեդրոնականնե-
րու սպայակոյտին: Մանաւանդ որ Միացեալ Նահանգ-
ներ պատերազմ յայտարարած էին արդէն եւ եթէ անոնց
թարմ, կուշտ, արդիական սպառազինումով զօրախում-
բերու դէպի ճակատ հեղեղուելէն առաջ, իրենք չջախջա-
խէին դաշնակից ուժերը, այլեւս յաջողութեան ոչ մէկ
խարկանք պիտի կրնային սնուցանել:

Այսպէս՝ խաղաղութեան դաշինքով մը փակելով ա-
րեւելքի ռազմագիծերը, հնարաւոր դարձաւ զօրաբաժին-
ներու փոխադրումը Արեւմտեան ճակատ՝ զոր վերա-
կազմեցին, աշխուժացուցին, զրահաւորեցին վերջին եւ
վճռական արշաւով մը ոգողելու համար Բարիզը:

Չորս տարի ըման, Մահը իր մագիլները մխրձած
խնամներու կողերուն, կաղկանձեր ու ոռնացեր էր հա-
զարգլխեան սովալլուկ բորենիի մը մոլուցքով: Եւ դան-
կերու մէջ տապկուած, որդնոտած ուղեղներն ու կարմը-
բած, լուսավառ բերերը լափիլիզելէն յափրացած՝ կը
քրքջար... Ու հրանօթներու եւ հրազէններու հրաշէկ ե-
րախներէն հոսող այդ զարհուրելի քրքիջէն ալիք-ալիք
տարածուող սոսկումն ու սարսափը ջլախտաւորներու,
խելացնոր մարդասպաններու երամակի մը վերածեր էին
կարծես կրակէ գիծերուն բոլոր զօրագունդերը:

Բայց անօրինակ էին այդ օրերը: Այդ օրերուն՝ կար-
ծես քաղուածքը ըրին պատերազմական չորս տարիներու
աւերներուն, փլուզումներուն եւ մահացումներուն:

Մեծ յարձակողականին նախանշանը տրուեցաւ թըն-
դանօթներէն: Անոնց հետեւեցան զնդացիւրներու, ռում-
բերու եւ հրազէններու համազարկները: Եւ պարսպուած
ահեղավազ հեղեղատի մը շղթայազերծուած ուժգնու-
թեամբ, յորդահոսան, արձակուեցաւ Գերման արշաւը:

Չախ կողմէն Ռէյմսի առջեւ էին արդէն, մինչ աջ
թեւերին կը զարնուէր Ամերիկեան առաջին զօրաբաժ-
նին: Մայիս 30, 1918-ին, իբր վերջին խրամ՝ Մառն դե-
տը կը հոսէր իրենց եւ յաղթութեան միջեւ: Սակայն
Լիւտէնտօրֆ վարանեցաւ անցնիլ դայն: Շարաթներով
իր ուժերը նետեց մանր բախումներու վրայ, թշնամիին
ուշադրութիւնն ու զօրութիւնը տարտղնելու համար հե-
ռաւոր անկիւններ, բայց ձախողեցաւ իր այդ ծրագրին
մէջ, հետզհետէ յոգնեցնելով, ցամքեցնելով Կեդրոնի
բանակները:

Վերջապէս Յուլիս 15-ին, Արեւմտեան ճակատը ամ-
բողջ երկայնքով շարժեցաւ ամէնէն առաջաւոր կէտերէն
մինչեւ Ռէյմս եւ աւելի արեւելք: Որրագոյն կէտին, որ
զրպանի մը պէս կ'իջնէր վար՝ Մառնը անցան անոնք,
սակայն Մարաջախտ Տօշը դտան հոն:

Իսկ Յուլիս 17-ին Ֆրանսական հակայարձակողա-
կանն էր որ ինկաւ Գերմաններուն վրայ, որոնք 18-ին կը
կռուէին իրենց նահանջը կանոնաւորելու համար միայն:
Այդ օրերու բուռն ընդհարումներու միջոցին էր որ, Շա-
քօ Թիէրիի շուրջ, Ամերիկեան զինուորներ անսովոր,
հերոսական խիզախութեամբ դիմադրաւեցին թշնամին,
իրենց ձգած բազմաթիւ զոհերուն դիակները իբր պատ-
նէջ զործածելով:

Լայնածաւալ եւ ահարկու ճակատամարտը վերջա-
ցաւ Գերմաններու վերջնական խորտակումով:

Մարդկային յորձանուտ հեղեղի մը կոհակները
ձեղքտեցան մարդկային երկաթապատ վանդակորմի մը
դէմ փշրուելով:

Այդ ալիքներուն պղպջացող փրփուրները բոսոր-
վարդագոյն կարմրեցան կոուտղներու խոչափողերուն եւ
աազմադաշտի հողին, դալարիքին, փշաթելերուն եւ խը-
ճաքարերուն վրայ:

Սուկիններու եւ դաշոյններու այդ դօտեմարտութեան
կը վաղէին գլխատիչ կատաղութեամբ մը արբշիւ, մո-
լեզնած:

Կարծես խրախճանքի մը կը սուրային, ուր մերկա-
ճարմին յաւերժահարսեր իրենց դարպաս պիտի ընէին:
Եւ զեղանի կաքաւողներու քրտնած պորտերէն դուր-
չիացող հեշտանքն ու շրթունքէ շրթունք ոստոստող զի-
նիի կուժերէն արտախուժող բոյրն ու համը այծամար-
գերու հեթանոս որոնումներով արբեցուցեր էին զի-
քենք...:

Այդպէ՛ս վերադարձան նոր դիրքերը:

Իրենք եւ անոնք այդպէ՛ս վերադարձան: Կոխկրտե-
քով կիսակենդան հծծիւնները, հեւքերն ու կիսամբմունջ-
ները: Կոխելով անգլուխ դիակներու, կէս մարմիններու,
քառորդ մարմիններու, իրաններու, անդամներու, կը-
տորներու, պատառներու, բեկորներու, փշրանքներու
վրայ, բոլորն ալ արիւնաշաղ, յօշոտուած, անճանաչ...:

* * *

Կառքը կապած թեւաւոր նժոյգներու սլացքին՝ Մա-
հը կը սաւառնէր ռազմաճակատի երկայնքով եւ ցածէ՛ն:
Եր կմախք ոսկորներուն ժանտ ու ցամաք ճարճատիւ-
նէն, հրաշէկ կապարի եւ պողպատի անհամար շեղբեր
կը սրնուէին կոուտղներուն վրայ: Եւ ասոնք, մահա-
հոտ անոնց համբոյրին տակ իրենց հողիներուն կառչած՝
կը հալէին հետզհետէ կամ յանկարծակի:

Եւ հիմա ինչպէ՛ս կը վերյիշէ այդ ամէնը:

Բոլոր ատոնք, կարծես հրացայտ պտուտակներու
պէս բեւեռուած են իր ուղեղին եւ հալած բիրին մէջ: Ու
պիտի չհանուին երբեք: Բնաւ չելլեն պիտի: Մանաւանդ
Պզոստոսի այն օրը, որ բախտորոշ հանդիսացաւ Սօմի
Յրանսական յարձակողականին համար: Ա՛հ, վայրագօ-

րէն գեհենային ու թշուառական այդ օրը, երբ վայրկեա-
նի մը ինքնամոռացման մեղքը քաւեց իր մարմնին ողոր-
մադին եղծումով:

Միայն երեսուն քայլի միջոց մը կ'անջատէր զիրենք
թշնամի առաջին գիծերէն: Ռազմական գերագանց դէբ-
քերու մէջ խրամուած՝ թանձրահիւս, անանցանելի փամ-
փուռչտէ վարադոյրի մը ետեւ, Գերմաններ անպարտելի
կը թուէին: Սակայն պէտք էր կոխկրտել անոնց դիմադ-
րութիւնը, կարենալ յառաջանալու համար: Եւ ապա-
դիւն ու ծանրագին փորձերէ վերջ, անդլիական քանի մը
հրասայլեր դժոխային կրակ մը բացած, խրամի մը վրայ
քայլեցին: Ճամբան, վիրաւորներ իրենց հեւքերուն, վէբ-
քերուն եւ հոնդիւններուն հետ, տրորուեցան, ճզմուե-
ցան հրասայլերու ժանիքաւոր անիւներուն տակ: Իսկ
փոսին մէջ յամեցողներն ու փախչողներն ալ ծակծկուե-
ցան արիւնծարաւ զնդակներէ: Մէկը, խելագարի նման
դէպի զիրենք կը վազէր ճշալէն եւ ձեռնառումբը ցցած-
Յանկարծ պայթուցիկ մը անոր գլուխը վերցուց ու տա-
րաւ: Բայց մարմինը, անգլուխ, վարդակարմիր շա-
րուան մը կամարելով խոչափողէն վեր՝ շարունակեց իր
վազքը մինչեւ իրենց թումբին, ուր թաւալըր փոռե-
ցաւ զետին, կոկորդէն ցայտող արիւնով լուալով իրենց
երեսները...:

Դէմէն, լաւ պատնիշուած մարտկոցէ մը, «սեւ սա-
ղաւարտակիրներու» խմբակը գնդացիներու հրափողերը
իրենց դէմ շիտկած, ամենափոքր շարժում մը փորձողին
ուղեղը դէմքին եւ հողին կը հոսեցնէր: Երկու ժամուան
մէջ քսանեւհինգ զոհեր տուած էին անոնց: Եւ բռնա-
դատուած էին անշարժութեան կամ անպտուղ մահաց-
ման:

Յուզումի եւ կորովի միախառն հովէ մը կը բեկբե-
կէր յիսնապետին թաւ ձայնը, երբ սկսաւ խօսիլ կացու-
թեան շուրջ: Տեսանելի, հոտոտելի ըլլալու չափ մերձ աւ
անխուսափելի վիճակ մը կը սպառնար իրենց: Կը մօտե-
նար ընդհանուր յարձակողականի պահը, երբ իրենք պի-
տի հրամայուէին խուժել գերմաններուն վրայ: Բայց այժմ

ատեն ամբողջական բնաջնջում մը զիմագրաւելու յանձնառու պէտք է ըլլային: Որովհետեւ «սեւ սաղաւարտակիրներն» ու իրենց գնդացիները պիտի չհանդուրժէին ո՛չ մէկ կենդանի եւ երեքող ստուերի:

— Աւելի նախընտրելի է որ մեզմէ ոմանք մեռնելու վտանգը աչք առնեն հիմա եւ փորձեն լռեցնել սա դէմի հաջիւնները: Այդպէսով թէ մեր ընկերներուն կեանքերը չափով մը կ'սպաւնակենք եւ թէ վաշտին յառաջսաղացքը կարելի դարձուցած կ'ըլլանք: Ո՞վ կ'ուզէ երթալ...

Կամաւոր ներկայացողներէն Յրանսացի սպտանի մը աղերսեց որ իրեն շնորհուի առաջնութեան իրաւունքը: Հազիւ երկու ժամ կ'ընէր, որ իր երէց եղբայրը, բախումի մը ընթացքին երկու կտորի կիսուեցաւ: Եւ թաց էին իր աչքերը, թէ կարմիր եւ թէ վճիտ էին: Ու անոնց յուսահատ խոնաւութեան մէջ զայրագին ու վայրագ ցուրէր կը ծփային, մուկէին բռնկումով...

Ծայրայեղ զգուշութեամբ ու դանդաղօրէն ան սուղոսկեցաւ խրամէն դուրս համազարկներու մոխրագոյնկանաչաւուն ծուխին սակէն եւ սկսաւ սողալ, ինքզինք ծածկելով այս քարի կտորին, այն հողի բունծին կամ մացաւին ետին: Յանկարծ, ցցուելով ամբողջ հասակով վեր, աղէկտոր, լալահառաչ եւ ահասարտուտ սուղըտուքով մը դարձաւ ետ: Փորը ճեղքուած էր վերէն վար: Եւ երկու ձեռքերով աղիքները բռնած, ան կը վազէր դէպի իրենց փոսը: Բայց չհասաւ: Ծալլուեցաւ ինքն իր վրայ ու սրտաց:

— Մեռցուցէք զի՛ր՛ի՛ս, երկնքի սիրո՛յն, սպաննեցէ՛՛ք զիս...

Այդքան կողկողազին եւ քստմնելի բառաչ պուտպուտ, յամբօրէն մորթուող ոչ մէկ անասունէ լսած չէր ինք: Յետոյ բառաչը նուազեցաւ պայթիւնի մը մէջ եւ ալ չտեսան տղան:

Ուրիշ հինգ հոգիներ կանչուեցան: Այս անգամ պէտք էր աւելի արագ, յանկարծակի զարնել: Անմիջապէս ուժգին հրացանաձողութիւն մը բացին իրենք թշնամի դիրքերուն վրայ, զանոնք դէթ վայրկեան մը ծածկոյթի տակ

մղելու համար: Ակնթարթերու այդ շփոթութիւնը օգտագործեցին հինգ կամաւորները, ձեռքերնուն պատրաստ երկուական ռումբերով խոյանալով դուրս: Իրարմէ չորսական քայլ անջրպետով վազեցին դէպի ահարկու եւ աննուաճելի մարտկոցը: Անոնցմէ երկուքը հնձուեցան ճամբան: Իսկ մնացեալ երեքին ուժանակները շուրջանակի սլայթեցան «սեւ սաղաւարտակիրներու» բոյնին վրայ:

Գնդացիները դադրեցան իրենց ահռանքը կճրտելէ...:

Բայց նոյն պահուն այն երեքին միջեւ ահուելի, զահանդական որոտում մը դետինը պատուեց, հողէ ամպասիւն մը շղթայազերծելով միջոցէն վեր: Խրամները սարսեցան խուլօրէն: Եւ օդին մէջ դողդղացին ձեռքեր, ոտքեր, եւ գլուխ մը գլորեցաւ իրենց առջեւ...: Երբ նօսրացաւ փոշեծուխը, շնչատ հոնդիւն մը ճեղքելով պարզուող աղիտաւայրը, իջաւ իրենց խրամէն վար: Քիչ յետոյ արդէն նշմարեցին մնացեալ երեքէն վերջինը, որ տարածուած կոնակին վրայ, կ'ունար ցաւին սաստկութենէն: Երկսայրի սլողպատէ շերտ մը խրած էր անոր սրտին մէջ: Ան փորձեց թաւալիլ դետինը ճանկրտելէն, ան փորձեց քաշկրտուիլ դէպի իրենց փոսը:

Հեռուէն՝ ձիու մը աղէխարչ ու վայրի վրնջիւնը հասաւ իրենց ախանջներուն: Չարնուած էր խեղճը: Եւ այդպէս կուլան անոնք: Բարձրաղաղակ, կարծես բռնօրէն: Բայց իրենք չկրցին զանազանել վիրաւոր ձիուն վրնջիւնք երեքէն մէկինէն, ա՛յնքան անասնօրէն կը ճչար ան ալ...:

Հո՛ւտ էր որ կորսնցուց ինքզինք: Հո՛ւտ էր որ չէրիմացաւ հողեւլարքի այդ խելացնոր տեսարանին: Ի՞նչպէս դիտէր այդպիսի խուժուժ մահացում մը: Եւ ուղեց օգնել անոր: Չէ՞ որ ան կրնար դարմանուիլ եւ փրկուիլ տակաւին:

Ու դետնաքարչ նետուեցաւ դէպի վիրաւորը: Եւ զայն գրկած կը սողար երբ գնդակ մը իր ձախ ծունկը ծակեց եւ անցաւ: Փլաւ ստըր: Ինք ծռեցաւ աւելի եւ

ցաւագին սողոսկումով ձգուեցաւ առաջ, փրկութեան դժին Հասնելու յոյսով, առանց լքելու ահեղօրէն մոռնող իր բեռը: Բայց ճեփ-ճերմակ բոց մը սուլեց աջ կողմէն եւ բազուկը ուսէն յափշտակեց ու տարաւ: Ինք վազեց թըռչող բազուկին ետեւէն, որ բռնէ՛... սակայն չգտա՛ւ...: Նորէն վազեց, սուրաց, սլացաւ, ո՞ւր, ո՞րքան, երբեք չգիտցաւ: Եւ իր բազուկը ա՛լ չտեսաւ: Միայն՝ երբ վերադարձաւ, — երբ սթափեցաւ՝ դիշեր էր: Բոմբիւններն ու որոտումները լրեր էին:

Զարնուած լուսինէն, — կիսովին հաշմուած էր ան ալ — սպիտակ, դողդոջուն խաղաղութիւն մը կը ծաւալէր ամբողջ մարտադաշտին վրայ: Երկիւղէն ակուաները կափկափող անդորրութիւն մը: Այնքան երկչոտ, այնքան ճղճիմ ու հիւանդագին էր այդ հանդարտութիւնը, որ կը կծկուէր, կը դողար, կը սրսփար ամէն անգամ որ վիրաւորներէն ոռնոց մը, վայնասուն մը կամ հոնդիւն մը կամ հեծեծանք մը բարձրանար: Եւ կամ, մերթ ընդ մերթ, երկու կողմերէն թնդանօթի հարուածներ իրենց հսկումը ծանուցանէին:

Երբ լման մը արթնցաւ եւ ինքզինք ճանչցաւ, զգաց սուր, զայրացած ցաւի մը ձախ ծունկէն աջ ուսին, մագլցիլը եւ անկէ, բարկաճայթ ոստումով մը՝ այտին եւ աչքին ցատկելը: Ողջ ձեռքը մօտեցուց եւ կամաց՝ շօշափեց... փշրուած էր այտոսկրը եւ աչքը կաթիլ- կաթիլ կը թափէր վար:

Իսկ ընկերը մեռեր էր արդէն:

Թեթեւ, զով հովի մը անէական ճնշումը վէրքերուն՝ գիտակցութիւնն ու զգայարանքները ընդարմացուց կըրկին:

Բոլորէն դադտնի, — ինք այդպէս կարծեց — հին օրերու անուշ ու մեկամաղճոտ մեղեդի մը մրմնջելէն, տժգոյն եւ նուաղկոտ զեփիւռ մը զովաշունչ թեւերը օղակեց իր մարմնին շուրջ: Գորովով, քաղցրութեամբ համբուրեց իր ճակատն ու շրթները եւ քնքօրէն, մայրօրէն շոյեց ճաթած այտը...: Իրեն այնպէս թունցաւ թէ, երկինքէն իջած թեւաւոր եւ արծաթ հագած վարդածին

աղջիկ մըն էր այդ զեփիւռը: Եւ գլուխը անոր գրկին, — ինք այդպէս կարծեց, — յուլօրէն, մեղհօրէն յանձնուեցաւ անոր զթութեան: Ու փորձեց քնանալ: Բայց թըմրութիւն մը կանխեց քունը: Յողնատանջ իր մարմնով՝ մինչեւ քունին ժամանումը չկրցաւ դիմադրել ցաւի խայթոցներուն:

... Ինք հոն էր, սակայն մարմինը փոխադրուեցաւ հեռո՞ւն, եօթը բլուրներ անդին: Անոր համար ինք չզգաց աջ բազուկին եւ ձախ սրունքին անշատումը իրմէն: Ու չլացաւ սիրելի դիակներ կղպող սնտուկներու եւ պատանքուող իր ծունկին վրայ: Անոր համար՝ հաղիւ լսեց սղոցին խժրտիւնը իր ոսկորներուն դէմ, մուրճերուն դանդիւնն ու շեփորներուն եղերերգը անհետացող զինակիցներու դադաղներուն եւ գերեզմաններուն վրայ: Այնքա՛ն հեռուէն կ'արձագանգէին անոնք եւ այնքա՛ն քաղցրօրէն կ'օրօրէր ու կը դգուէր զինք արծաթ հագած վարդածին զեփիւռը:

... Երբ սթափեցաւ ատկից ալ, ինքզինք դտաւ թափօրի մը մէջ, որ քաղաքին շքեղօրէն դրօշազարդուած պողոտաներէն կ'անցնէր: Փողոցներու զոյգ եղբերուն, ոստիկաններու երկար շղթայ մըն էր ձգուէր, խուժանացած հանդիսականներու անզուսպ խանդաղատանքն ու ինքնամոռաց խենթութիւնները սանձելու համար: Շէնքերու պատուհաններէն եւ տանիքներէն թուղթէ դոյնըղ-դոյն բաթիլներ ու ժապաւէններ կը հեղեղուէին իրենց վրայ եւ բոլորտիքը: Մայթերէն բարձրացող խաժամուժը կարծես պիտի պայթէր երջանկութենէն:

Նայեցաւ շրջապատի շռայլ պերճանքին: Դիտեց պճնուած, սիլվանեմ նուագախումբերն ու քաղաքային համազգեստաւոր պաշտօնեաները: Ժպտեցաւ անոնց տողանցքի սկոնակ ու բռնազբօսիկ եղանակին եւ զմայլեցաւ այս փարթամ ու համադաշնակ գեղեցկութեան վրայ: Եւ հաշմուեղէն ի վեր առաջին անգամ ըլլալով միխիթարուած զգաց, վարձատրուած նկատեց ինքզինք: Այսպիսի բուռն համակրանքի, այսքան ինքնայորդ սէրի փոխարէն կ'արժէ՛ր տալ ամէն ինչ, կ'արժէ՛ր տալ ձեռք, ոտք,

աչք եւ կեանք: Չէ՞ որ իրենց համար էին այս բոլորը: Բոլոր այս ծափերն ու կեցցէները, ճիչերն ու աղաղակները, խինդն ու ցնծութիւնը իրենց համար էին:

Բայց քանի մը շարաթներու զուարթ ու հոգեւարար շքահանդէսներէն, երեկոյթներէն, հանդիսութիւններէն եւ յոյսերէն վերջ՝ ահաւոր, քայքայիչ ու վայրազ հիասթափում մը հարուածեց զինք:

Երբ օրերը վերադարձան իրենց բնականոն ընթացքին, յիշեց որ առանձին էր մարդերու այս անսահման յորձանքին մէջ: Նոյն իսկ իր հարազատներուն յիշատակն ու հոգիները յաւիտենապէս բաժնուած կը թուէին իրմէ անհուն անջրպետով մը: Կարծես անծանօթ, անթափանց ու անմատչելի տիեզերք մը կը տարածուէր հիմա իր եւ անոնց միջեւ: Ու ինք ժամանակ չունեցաւ որոնման ելլելու այդ նոր, արտասովոր երեւոյթէն ներս:

Չյաշողեցաւ մտաբերել թէ ո՞վ իրեն ներշնչեր էր այն վստահութիւնը, որ երբե՞ք պէտք չունի հացի մասին մտածելու: Ո՞ւրիկէ ծագում առած էր այն սեւեռուն համոզումը թէ ամէն օր, սովորական երեք ճաշերու հրաւէրներ սլիտի դային իրեն: Այո, ժուժկալ թէեւ ու անկանոն, բայց վերջապէս ապրուստ մը սլիտի հայթայթուէր կերպով մը: Ա՛յնքան բնական եւ անվիճելի կը թուէր այս ակնկալութիւնը:

Սակայն լերկ ու յամառ կասկած մը կը դրաւէր զինք կտոր-կտոր: Կը զգար հետզհետէ թէ անսպոյզին ստուերը ամէն օր քիչ մը աւելի կը թանձրանար իր քայլերուն առջեւ: Խնայած դրամը կը սպառէր անսպասելիով եւ ինք կը սկսէր ժլատօրէն ու դուրդուրանքով համրել մնացածը: Եւ եկաւ ատեն մըն ալ, երբ բնակարանի սպահանջը յանկարծակիի բերաւ զինք, որովհետեւ հիւրընկալ ընկերներ իրենց քաղաքներն ու դիւղերը կը ցրուէին արդէն:

Ակամայ եւ բնադժօրէն հետեւեցաւ իր նմաններէն մէկուն խորհուրդին ու ներկայացաւ սպտերաղմի խեղանդամներու խնամատար գրասենեակը:

— Կը հաճի՞ք ձեր անունը տալ, զօրաբաժնի եւ վաչ-

տի յարակից ծանօթութիւններով:

Եւ իրեն համար երկար, չարչարագին վայրկեաններու փնտռուածքէ մը վերջ, օրիորդը դարձաւ կասկածոտ զարմանք մը դէմքին.

— Բայց... կը ներէք... բայց դուք սպաննուեր էք: Այսինքն ձեր անունը կրող անձը մեռեր է գործողութեան սեղանին վրայ:

— Ինչպէ՞ս: Խնդրեմ, օրիորդ, մէկ կողմ ձգեցէք կատակը, որովհետեւ բարեբախտաբար կամ դժբախտաբար կ'սպրիմ տակաւին եւ ահաւասի՛կ եմ... իրա՛ւ որ՝ ե՛մ, ու առա՛նց չափազանցութեան:

— Չարմանալի բան է, չէ՞ք կարծեր, շա՛տ զարմանալի... Կը հաճի՞ք վայրկեան մը սպասել:

— Օ՛, հարկա՛ւ, հարկա՛ւ:

Քիչ անդին, կարճատեւ խորհրդակցութիւն մը կատարուեցաւ փսիսուքներով, որոնք լսելի կ'ըլլային երբեմն:

— Ո՛չ, օրիորդ ձօյս, այդ տեսակ խնդիրներով չենք կրնար զբաղիլ: Մեռած արձանագրուեր է, լմնցաւ: Մեր դործը չէ քննել ու փնտռել, որեւէ ճշդումի համար: Արդէն հասարակ զեղծարարներ կը վլստան չորս բոլորնիս:

Քարտուղարուհին կը մօտենար տխուր եւ շփոթ երեւոյթով մը.

— Կը թուի թէ ձեր անունին քո՛ւն տէրը...

Սակայն ինք միջամտեց, ինք կանխեց զայն դառն ժպիտով մը, որ արցունքոտեցաւ հետզհետէ.

— Չափազանց վստահ կ'երեւին սպաննուած ըլլալու մասին, այնպէս չէ՞ օրիորդ... Բայց ողջ եմ, չէ՞ն տեսներ որ ողջ եմ... սարսափելի չէ՞ որ կը կասկածին թէ ինքզինքս չեմ, ի՞նչպէս թէ ինքզինքս չեմ, ո՞վ եմ հասարակ, չէ՞մ դիտեր ես թէ ո՞վ եմ, թէ ո՞ղջ եմ... Եւ ինչո՞ւ կ'ուզեն որ անսպասան մեռած ըլլամ, ըսէք, խնդրեմ, ինչո՞ւ կ'ուզեն...

Կոկորդը լեցուեցաւ յուզումով: Պիտի փղձկէր ցաւէն, պիտի լռէր յուսահատութենէն: Սակայն զայրոյթէն ճչաց.

— Բայց այս ամբողջը ապուշ բան է, ծիծաղելի բան է, դժոխսային բան է, չէ՞ որ հոս կանգնած եմ ես, ատրկա չի՞ նշանակեր թէ ողջ եմ ես եւ կ'ապրիմ...:

Այլընկը հաղիւ կրցաւ թոթովել կերկերոււն ձայնով մը.

— Ես շատ... ես խորապէս կը ցաւիմ: Եւ հեռացաւ:

... Ու հիմա մ'աշած անթացուպեր ունի միայն եւ այն մոխրադոյն «չքանչանը» աժաննոց թիթելէ, զոր իրեն նուիրեցին իր կորուսած անդամներուն փոխարէն եւ որուն վրայէն ցից ու փայլուն դիրեր կը կանչէին.

«Պատերազմի հաշմանդամ, օգնեցէ՛ք այս խեղճին»

Դ.

Եւ զսպուած զայրոյթով մը դռնապանը որոտաց.

— Նայէ՛, հիմակուրնէ կ'ըսեմ, եթէ այս իրիկուն առանց դրամի դաս, կողերդ կը ջախջախեմ, հասկցա՞ր, կողերդ կը ջարդեմ, վերջը չեմ խառնուիր:

— Այս դիշեր կը բերեմ, Ծնունդ է, տօն է այսօր. ձեզի Սուրբ Ծնունդ կը շնորհաւորեմ եւ նոր տարուան առթիւ երկար եւ երջանիկ կեանք կը մաղթեմ: Իրապէս կը յուսամ թէ այս գիշեր կը բերեմ քիչ մը դրամ:

— Քի՞չ մը, ըսիր, յիմա՞ր ես, ինչ ես: Նայէ՛, յիշէ որ ամէն բան չափ եւ սահման ունի. քեզի մեղքնալով սենեակներէս մէկը տուի, եւ ինչի՞ փոխարէն, ութը տուար, ամսական ութը տուարի չնչին դումարով: Ա՛լ, հիմա չորս ամսական կը պարտիս ինծի, եւ մի՛ մոռնար ատրկա, որովհետեւ իմ գործս չէ քեզի պէս դատարկապորտ անասուններ խնամելը, հասկցա՞ր, իմ պարտքս չէ. այնպէս որ վազէ՛. եւ հաւաքած դրամներդ հոս բեր, փոխանակ սրիկայութեամբ մտխելու...:

Ու հեռանալու շարժում մը ըրաւ: Բայց քանի մը քայլ առնելէ վերջ կեցաւ յանկարծ եւ դառնալով՝ ըսաւ խուլ ու ցամաք ձայնով մը.

— Մտիկ ըրէ որ ըսեմ. եթէ մինչեւ իրիկուն պարտքիդ կէսը դռնէ չչահիս, եւ եթէ քու բարիքդ կ'ուզես, ա՛լ այստեղ ոտք չկոխես, հասկցա՞ր, ա՛լ աչքիս չերեւաս,

քեզ դուրս կը շարտեմ, բայց դէշը այդ պիտի չըլայ, կրնայ բան մը պատահիլ, վերջը չեմ խառնուիր, այդ՝ չափ... հիմա կորսուէ գնա՛...:

— Կ'աղաչեմ, պարոն Օ՛ֆանըր, մի՛ բարկանաք... ես դիտեմ որ դուք շատ աղնիւ կերպով վարուեցաք ինծի հետ... եւ ես երախտապարտ եմ ձեզի: Ես չեմ ուրանար ձեզի ունեցած տալիքներս... միայն կը խնդրեմ որ քիչ մը ժամանակ շնորհէք եւ ես կը վճարեմ, իրա՛ւ կ'ըսեմ, Աստուած վկայ սր իրաւ կ'ըսեմ, կուտամ... կամաց-կամաց... ամէն մարդ կը խորհի թէ գործերը պիտի լաւնան քանի մը ամիսէն... կ'աղաչեմ, մէկ վայրկեան, միայն մէկ վայրկեան լսեցէք ինծի... թոյլ տուէք որ գիշերները հոս անցնեմ, ի՞նչ կ'ըլլայ... Պարոն Օ՛ֆանըր... դուրսը այնքան շատ ցուրտ է եւ ես մէկը չունիմ... ո՞ւր կրնամ երթալ... աշխարհիս վրայ մէկը չունիմ... կը խոստանամ որ կրցածս ընեմ... այս գիշեր ձեր ուղածին չափ դրամ բերեմ, բայց... հակառակ պարագային, թոյլ տուէք որ սենեակս դառնամ... կը պաղատիմ, պարոն Օ՛ֆանըր... ես ո՛չ ոք ունիմ, ոչ ոք... եւ դուրսը մարդ կը սառի... ես կը...:

— Եւ որի՞ն հողը, ըսէ՛ նայիմ, որի՞ն հողը: Իմ ի՞նչ գործս է թէ դուն կը սառիս կամ կը մեռնիս, հէ՞, ապու՛շ քեզի: Ես միայն մէկ բան գիտեմ, առնելիք ունիմ քեզմէ, ուրիշ ոչինչ: Դուն եթէ չես կրնար ապրիլ, կրնաս մեռնիլ, չէ՞, կրնաս սատկիլ, իմ ի՞նչ հոգս... եւ ինչո՞ւ կ'ապրիս արդէն... հա՛, ա՛ն ալ հասկնանք, ինչո՞ւ կ'ապրիս որ...:

Այս այլանդակ ու վայրադ հարցումը սուր ճպտոի շաչիւնով ինկաւ իր թշուառ քամակին: Բայց զայն չլսելու զարկաւ կարծես եւ շտապով փողոց բարձրացաւ աստիճաններէն:

Միապաղաղ մոխրագոյն երկինքէն ձիւնը կ'իջնէր մարդարտածաղկի թերթերու ձերմակ ու մեղմ նազանքով: Ինք կը յառաջանար ամպերէն հիւսուած այդ սպիտակ սաւանին մարդոց երթեւեկէն դեռ չարատուած, անբիծ մասերէն: Ու իր աջ ոտքին եւ ձախ անութափայտին

գորչ ու լարծուն հետքերը կնիքներու պէս կը դրոշմուէին մայթերու սոսկունն, արծաթէ մաքրութեան վրայ: Ի՞նչ պիտի տխրազին այլափոխում, մտածեց: Եւ անմիջապէս խորհեցաւ ինքզինքին: Ա՛հ, ինչպիսի՞ գարհուրելի տը- խեղծում մը, ի՛նք: Մարդու կրունկին տակ ճարճատիւ- նով ճմլուող ձիւնը իր վէրքը կը սպիացնէր քանի մը վայրկեանէն ու ապա բոլորովին կը բուժէր, կ'անյայ- տացնէր այդ սպին ալ: Բայց ինք, դարնուած պատերազ- մի դարչապարէն, անոր գիշատիչ ճիրաններէն փետեկ- տուած մարմնով, հաշմանդամ, մինչեւ դերեզման որպէս անջնջելի խարան պիտի կրէր փամփուռչաներու եւ ուռմ- բերու բռնաբարումին այդ նախատինքը:

Կոկորդին մէջ իր հեղձուցիչ տառապանքէն դալար- ուող հեծեծանք մը, որ դուրս կրնար հոսիլ ամէն վայր- կեան, եւ սրտին վրայ խոցոտող թաթը վաղուան սար- սափին՝ ան շրջեցաւ անկիւնէ անկիւն եւ թաղամասէ թա- ղամաս, իր ձայնին հետզհետէ աւելի աղաչանք եւ յու- սահատութեամբ ու արցունքով խոնաւ յուզում խառնե- լով: Մինչ դունազեղ թուղթերով պատաստուած ծրարներ անութած, մարդիկ կ'աճապարէին ծամածուռ երանու- թեամբ շողացայտ գէմքերով: Եւ այնքան երջանիկ էին անոնք ու յափշտակուած, որ չէին տեսներ իր անօրինակ թշուառութիւնը: Գոնէ այդպէս խորհեցաւ ինք:

Ահա շտապով կ'անցնին անոնք, մարդեր եւ կիներ, կծկուած իրենց կոճկուած վերարկուներուն մէջ, օձիք- նին բարձր, ձեռնոցուած ձեռքերով: Ահա դոյզեր իրար- մով համադրաւ, իրարու նայուածքներու խորը մոռցած աշխարհ, իր բոլոր ցաւերով: Ահա մէկը որ, աչքերը չվերցնէր մայթէն, զգո՛յշ որ չսահի, եւ ուրիշ մը, որ կը նայի իրեն արգահատանքով, ձեռքը դրպանէն հանելու շարժում մը կ'ընէ, բայց յանկարծ կը փոխէ միտքը, խորհելով թերեւս թէ շատ ցուրտ է եւ պիտի մտնի մատ- ները:

Պահ մը կը կանգնի շարժապատկերի տան մը մուտ- քին քով: Տօնական նոյն անհող զուարթութիւնը կը մազուի հոս ալ: Զիւնի բաթիւններ կ'իյնան առոյգ քըր-

քիջներու վրայ ու սարսուռով կը հալին այդ հպումին ջերմութենէն: Եւ ցուրտէն կապտած շրթներով նիհար ու աղքատ կիներ կը մօտենան իրեն, դողդոջուն մատներով մանրուք փնտոելով իրենց անօթի դրամապանակներուն մէջ:

— Ի՞նչ անշնորհք տեսարան է սա, այսպիսի օրուան մը համար, չէ՞, մարդու ուրախ տրամադրութիւնը կը- տոր-կտոր կ'ընէ. պէտք է օրէնք մը ըլլայ, որ դանոնք իրենց տուններուն մէջ արգելափակէ ասանկ օրեր:

Չոր, անխռով ձայնով խօսեցաւ չափահաս մարդ մը իր ընկերներուն, տոմսավաճառ աղջկան քսան տողարնոց նոր թղթադրամ մը երկարելով՝ «վեց հատ, կը հա- ճիք»-էն վերջ, մինչ վերադառնալ կը սպասէր:

Աղջիկը անհրաժեշտ նկատեց այս պատահարը պատ- մել թատրոնի մուսետիկին: Բարձրահասակ երիտա- սարդ մըն էր ան, նիքէլէ վայլուն կոճակներով եւ ոսկե- դեղին երկիցներով կապոյտ համազգեստ հագած՝ որ նոյն պահուն դարձող պատկերները կը ծանուցանէր միօրի- նակ բամբ շեշտերով եւ անցորդները կը հրաւիրէր ներսի վայելքին:

— Իսկ ի՞նչ կը խորհիս թէ մենք կրնանք ընել, ը- սու ան:

— Ձեմ դիտեր, բայց դանդատը կրնայ վերակացուի ականջին հասնիլ եւ դիտես թէ ան շատ դիւրազգած է յա- ճախորդներու դժգոհութեանց հանդէպ:

Տղան ուրիշ երկընտրանքի կարելիութիւն չգտաւ նոյն իսկ ծոճրակը քերելէն յետոյ եւ մօտեցաւ անոր, տասը սէնթնոց մը ձգեց տուփին մէջ ու փափսաց:

— Շատ կը ցաւիմ, բարեկամ, բայց կը վախնամ թէ պիտի ստիպուիս ուրիշ տեղ մը փնտոել քեզի համար:

Իր պարտուած ու մեղամաղձոտ նայուածքը պահ մը յամեցաւ տղուն վրայ: Եւ ձայնը յայտնօրէն կը դողար երբ մըմնջեց.

- Շնորհակալ եմ ձեր բարի վարմունքին համար:
- Արդէն բախտս երբեք հաճոյք չէ՞ զգացեր իմ ըն-

կերակրութենէս, աւելցուց յետոյ: Ու տատանեցաւ առաջ: Մինչ դանդաղօրէն, մերձեցող գիշերուան խաւարահիւս քղանցքներու ծածանումէն՝ մութը թափահարուելով վար, կը թափանցէր Համատարած մշուշէն ներս:

Դէպի անձանօթ թաղեր այլեւս անորոշ ու բնազդական թափառումի մըն էր որ ան անձնատուր եղաւ կարծես: Դարձեալ բնազդօրէն, հետզհետէ ան սկսաւ աւելի յամառ դառնալ, անցորդներու կառչելով ալ երբեմն: Ինչ որ ստացաւ սակայն, քանի մը փոքր դրամներէ զատ՝ թելադրանքն էր յուսալքիչ հարցումի մը, որ ուղղեց ինքնիրեն — Արդեօք երանութիւնը կրնա՞յ դիմուկցնել մարդոց խիղճերը, զանոնք շրջելու, զգայազիրի ընկուստի՞ճան...:

Ահա Մնունդը սիրոյ ու բարութեան երիտասարդ վարդապետին, որ թերեւս հիմա կ'արտասուէ ցնծութենէն, դիտելով անվախճան կարաւանները բարեպաշտ եւ աստուածալախ հետեւորդներու, որոնք Իր մարդեղումը կ'օրհնեցին: Բայց ի՞նչպէս, շարունակեց ան մենախօսել անշշուկ, ի՞նչպէս մարդիկ կրնան փառաբանել Սիրոյ Առաքիչը, առանց անոր անսահման էութենէն կաթիլ մը ներածելու իրենց հոգիներէն ներս եւ հաղորդուելու անկէ: Եւ ի՞նչպէս չեն նշմարեր իր անութեամբայտին փաթթուած արդարութեան խեղճամազ պատկերը:

Չգաց իր մտածումին անձնասիրական հոտը եւ ամբողջաւ: Բայց այդ պահուն, իր ամբողջ կեանքէն՝ անխառն երջանկութեան դէթ մէկ վայրկեան չկրցաւ վերջիչել: Եւ այս դառնութիւնը ծանր մեղանշում մը չթուեցաւ իրեն: Նոյն խիլ խորհեցաւ թէ արդեօք իրապէս այնքան բարեմի՞տ էր Քրիստոս, որ կրկին խաբուէր ու ներէր բոլոր անոնց, որոնք կը դոհանային շողջողուն ընծաներով եւ առատ իւղագիններով շէնցնելով Իր խորանները, որոնց մարմարէ կամ կրանիթէ ծանրանխատ սիւներուն տակ, սրտապատառ հեծեծանքներ ու անլուր անէծքներ իրենց ցաւախանձ ոսկրուտ բերաններուն՝ կը ճարճատէին կմախքները անօթի եւ յոգնատանջ բիւրբիւր Ղազարոսներու...:

Բայց այն ատեն, որ վերջին անկիւնէն խոնարհ փողոց մը կը դառնար, ականջներուն զարնուեցան առաջին խաղերը քաղցր ու տրտում շարականի մը:

Silent night! Holy night!
All is calm, all is bright.

Եկեղեցիի մը լուսաւոր պատուհանները տեսաւ: Անշուշտ անկէ կը բարձրանային զինք յուղող այս աղօթքին խռովիչ արձագանդները:

«Լճ՛ա գիշեր, սո՛ւրբ գիշեր»:

Ինչո՞ւ այսպէս երեբաց եկեղեցին եւ դողդղացին անոր կամարները: Ինչո՞ւ այդքան խռովեցաւ ինք եւ գլորաւուեցաւ հոտ ծոնկի դալու բուռն փափաքէ մը: Թերեւս՝ որովհետեւ տակաւին լսած չէր այս պարզ ու քաղցրանուազ մեղեդիին այսքան տխուր եւ ժպտուն երանգներով երգուելը: Կամ թերեւս ան, հեռաւոր ու մոռցուած ժամանակներու անջրպետէն, իրեն բերաւ յիշատակը կնոջ մը աչքերուն վճիտ թախիծին, որ կը սիրուէր իր վրայ խանդակաթ մաղթանքներու սրտազեղումին հետ —

«Սիրելի դաւակ, եւ մայրը կը համբուրէր զինք ցնծութեամբ դողդոջ աղու՛որ շրթներով, թող Աստուած երբեք իր աչքերը չվերցնէ քեզմէ... հոս կը միջամտէր հայրը — Սրտիդ արժանի դաւակներ ունենալու երջանկութիւնը շնորհէ քեզի, զանոնք ու քեզ ալ սիրող ու խնամող աղջիկ-հրեշտակով մը... եւ դարձեալ կը շարունակէր մայրը, — Քու բոլոր նեղ ու դժբախտ օրերուդ մէջ, յոյսը եւ սիրող վստահէ Յիսուս Փրկիչին եւ Ան բնաւ պիտի չլքէ քեզ...»:

Բայց ահա միջոցը՝ որ հոյ կը սուլէ: Եւ,

Holy infant, so tender and mild,
Sleep in heavenly peace.

Ահա ձիւնի բաթիլներ, մտրակուած այդ անառակ շունչէն, կ'արշաւեն իր վրայ մեղմօրէն, մօլեղնօրէն:

«ԼՈՂԱ զԻՂԵՐ, ԱՄՂՐՐ զԻՂԵՐ»:

Երկրորդ համարն է որ կը սկսի ահա, հոգեչունչ, ջերմեռանդ, քաղցրահնչիւն նոյն ելեւէջներով:

— ԼՈՂԱ զԻՂԵՐ, Տէ՛ր, սո՛ւրբ զԻՂԵՐ, որքան ցո՛ւրտ է զԻՂԵՐԴ, Տէ՛ր...

Հծծեց: Բայց մտադրեց սպասել պաշտամունքի աւարտելուն: Արդէն ա՛լ սպառած էր ինք: Վերջին յոյս մը, փրկարար ապաւէն մը թուեցաւ այս աղօթարանը եւ այս ժամուորները աւելի բարի երեւցան իրեն: Կարծես առոնց աղօթքները անեղծ ու երանաւէտ խորութենէ մը կը ցայտէին եւ աւելի այլասէր թախիծ ու հառաչանք կար ասոնց շրթունքներուն վրայ: Ասոնց սիրտերը, Աստուածային սիրոյ եւ ողորմութեան անսահման ու հեշտաբոյր ծաղկաստանին մէջ, երջանկութեամբ արբած՝ խենթ ճոռուղիւններով թռչկոտող ճնճղուկներ ըլլալու էին:

Եկեղեցիի մուտքէն երկու դուռ վեր, վաճառատան մը պատուհանին մէջ վառ ձգուած աղօտ լամբարէն գեղնաւուն լոյս մը կ'իյնար մայթին վրայ: Իսկ վերը, երեքտարական վիթխարի սպակեպատ ցուցանակ մը, շղթաներով ամբարցուած առաջին յարկէն, թեթեօրէն կը տատանէր հովէն, մետաղի դուսպ կճրտիւններ քամելով վար: Նստաւ հոն, անկիւնը նետուած լրագրի մը վրայ, կարենալ տեսուելու համար հաւատացեալներէն, որոնք պիտի արձակուէին քիչ յետոյ:

Արդէն վերջին համարն էր որ կ'երգուէր:

«ԼՈՂԱ զԻՂԵՐ, ԱՄՂՐՐ զԻՂԵՐ»:

— Որքա՛ն ցուրտ է զԻՂԵՐԴ, Տէ՛ր...

Ու սարսռաց: Եւ իր ոսկորներուն ծուծը մինչեւ՝ խըքին զգաց սուր ու ցուրտ ասեղներու, որոնք կ'այրէին նախ եւ ապա կ'ընդարմացնէին իր անդամները:

— Շնորհաւոր Սուրբ Ծնունդ, եղբայրներ...

— Օգնեցէք ինծի, խնդրեմ...

— Կ'աղաչեմ, բարեկամներ, օգնեցէք որ ետ ստանամ սենեակս... կը խնդրեմ, օգնեցէք որ տուն դառնամ...:

Յուրտէն պնդացած ու կապտած իր շրթներէն հագլու կը լսուէին մրմունջները իր մաղթանքներուն եւ պաղատանքներուն, երբ պատարազը աւարտած՝ ժամուորներ շտապով կ'անցնէին առջեւէն, մուշտակ եւ օճիք սեղմօրէն կոճկած իրենց պարանոցներուն շուրջ: Հիմա՛ ճիշտ իր կարկառած ափին եւ մեռած աչքին պէս, ալ պարապ ու մութ է եկեղեցին:

Դռնապանին բարկածայթ եւ սպառնադին ուրուականը չէր զինք ցատուժով եւ դառնութեամբ համակողք: Անոր սարսափէն ազատագրուած կը զգար ինքզինք ու թեթե՛ւ, անչափօրէն թեթեւ ու անկաշկանդ, որովհետեւ գիտէր այլեւս թէ պիտի չդառնար իր երկարամեայ գերութեան: Եւ կարծեց թարգմանած ըլլալ իր հոգին կրտսեանարող զիշատիչ ցաւը, անոր բուն պատճառն ու տարողութիւնը յայտնելով՝ երբ անխելի աղաղակով մը շըջընչաց:

— Յո՛ւրտ զԻՂԵՐ, Տէ՛ր: Եւ ներէ՛, ա՛հ, ներէ՛, բայց որքա՛ն վատ են ու վարնոց արարածներդ, Տէ՛ր, մե՛ղք պատկերիդ...:

Յուցանակին ճօնիչը ընդմիջեց զինք ու երկնցաւ քանի մը փողոց աւելի: Եւ կարծես մէկն երկինքը թօթուեց այնքան ուժգնօրէն, որ ամպերու մշուշապատ լեռնաշղթաները փլան փշուր-փշուր ու թափեցան վար ձիւնի լայնածիր փերթերով: Մինչ հովը, սառնաչունչ քրքիջով կը հալածէր, կը թափահարէր զանոնք եւ վարելով դուռերու եւ աստիճաններու կողերուն դէմ՝ կը ծեծէր քիչ մը ու փակցնէր անոնց մութ անկիւններուն:

Չկրցաւ հանդուրժել այդքան ստորին եւ նենգամիտ կեղծիքի: Նոյն իսկ մեղքցաւ Աստուծոյ: Այն երկիւղը, թէ բարեմտարար Ան կրնար խաբուիլ անարդ ու խորամանկ մարդոց աղօթքներէն, լեցուց իր կոկորդը անյոյս կսկիծով եւ աչքերը արցունքով: Որովհետեւ համոզուած էր ինք, թէ աղերսական եւ դետնաքարչ խոնարհութեան անոնց մրմունջները դարձեալ ուրանալու, կրկին դողնալու, վերստին շնանալու թոյլտուութեան խնդրանքներ էին միայն...:

«ԼՈՂՈՒ զԻՉԵՐ, ԱՌՆՐՔ զԻՉԵՐ» :

Իրապէս վախցա՛ւ, որ սրտայոյզ եւ դաշնանուադ այս մեղեդիները օրհնութեան անթափանց քողերու պէս ծածանէին մարդոց յանցապարտ հողիներուն վրայ եւ բարի, միամիտ ու անփորձ Որդին չճանչնալով զանոնք՝ իյնար բուրումնաւէտ այդ սրողայթներուն խորը : Եւ անկեղծօրէն արգահատեցաւ Անոր :

Ինչպէ՛ս կասկածէր երիտասարդ Վարդապետը, թէ իր պատուէրներէն ամէնէն վսեմագոյնն ու հրաշալին, — Սիրեցէ՛ք զԻՍԵԱՆԱՍ — մարդոց որդիները քանդակած, պատուաստած էին հոլանի կուրծքերու, հեշտագալար պորտերու, տարփաղբիւ աղբերու վրայ եւ ոսկիի դէ՛ղին քրքիջին մէջ :

Ու անդիմադրելի բաղձանք մը ունեցաւ Հովիւը ծանօթացնելու հօտերուն, որպէս զի անոնց դաւադիր մայիւններուն դո՛հ չերթայ «միւս անդամ զալստեան» : Որովհետեւ շատ մտերմօրէն ինք կը ճանչնար նենդութիւնը անոնց, որոնք կը ծնրադրէին ոսկեճոյլ եւ արծաթակուռ խաչերու առջեւ, իր մօր «անուշ Քրիստոսը» խաբելու, կաշառելու համար քանի մը կաթիլ արցունքով կամ քանի մը հեղամրմունջ աղօթքներով :

Ինք զիտէր թէ անոնք, մեղաւոր ամբարիշտ ու չուայտ, բուռ մը արծաթի կամ շերտ մը մանրինի փոխարէն նորէն պիտի խաչէին զինք : Եւ հիմա ա՛յնքան բաղմամբիւ են Վայխափաներն ու Յուդաները, լայնաթիւ ու ծանրաքարչ են խաչերը . Գողգոթաները ա՛յնքան սեպ են ու բարձրաբերձ, բեւեռները հաստ են ու երկար, մուրճերը լայնիրան ու կարծր են ա՛յնքան : Նիզակները սայրասուր են ու թունածեփի եւ շիրմաքարերը քարաժայռ են հիմա : Եւ պողպատեայ անհողի վիշապներ են պահապանները, որոնք շանթ ու վայլակ կը ժայթքեն իրենց երկաթափող ունդերէն :

— Մի՛ գար, Տէ՛ր, ա՛լ մի՛ գար, Հաւատա՛, ինծի պէս կ'ընեն Քեզի ալ, ճշմարիտ կ'ըսեմ, Աստուած վկայ ճշմարիտ կ'ըսեմ, ինծի պէս կ'ընեն Քեզի ալ...

Հովի քմայքստ սուրոցներուն հետզհետէ անսանձ ձիւնամրրիկ մըն էր յաջորդէր : Եւ ցուցանակի շղթաներուն ժանդոտ օղակները կը պրկուէին ու կը ցնցուէին անոր հարուածներուն դէմ, բարձրաճիչ կոխններ արձակելով : Մինչ ձիւնը կը տեղար շուրջն ու վրան, համատարած սպիտակ պատանքին ներքեւ շնչահեղձել փորձելով զինք :

Սակայն իր դաւայարանքները թմրած կը թուէին արտաքին վիճակներու ներդործումներուն հանդէպ : Զինք ըմբոստացնող դառնութիւնն ու ցասումը բորբոքեր էին անանձնական, տեսլային հիասթափումի մը պատճառած ներքին փլուզումէն : Վաղեմի ծանօթներ էին իրենք. ինք եւ մարդկային անարդարութիւնն ու կեղծիքը եւ ճանչցեր էր զանոնք իրենց բոլոր երանգներով : Բայց անոնք երբեք չէին երեւցեր իրեն այսքան դապրելիօրէն փետրաթափ ու այլանդակ : Հաւանաբար այս ծայրայեղ յոռետեսութեան ցուրտ շունչէն զարնուած՝ դռնապանին ուրուականը, Ծնունդը, սա եկեղեցին եւ սառեցնող ձմեռնային զիւշերը նահանջեցին իր էութենէն, տեղի տալով հոգեկան փոթորիկումի մը, որուն տարերքը կուտակուեր էին տասնեւերեք տարիներու զրկանքներէն եւ տուայտանքէն եւ հիմա, տասպալած ամէն պատուար՝ կ'ասպատակէին իր դիտակցութիւնը : Այդ երկար տարիներու ընթացքին արհամարհանք, արցունք եւ անօթութիւն ծամած էր ինք, բնա՛ւ ինքզինքին չներկելով մտածել մեռնելու այն համր ու հեղ փափաքին, որ երբեմն կը յայտնուէր իր մէջ : Եւ կը խորհէր թէ Քրիստոս անշուշտ տեսած էր այս բոլորը : Տեսած էր թէ ինչպէ՛ս ճամբեցին զիրենք ճակատ ու երբ դարձան տուն ամբողջ, հաշմուած կամ կիսատ՝ տեսաւ թէ ինչպէս իրենց կրունկներուն տակ սէր եւ ժպիտ եւ ոսկի հեղեղեցին...

— Դուն տեսա՛ր այդ ամէնքը, Տէ՛ր, դուն տեսար, չէ՞, բայց հիմա՛ նայէ, նայէ հիմա՛, տես ինչպէ՛ս կը փախչին մեղմէ, մեր տառապանքէն, մեր մարմիններէն, որոնք իրենց համար քայքայուեցան, իրենց համար բըզբուեցան, իրենց համար, այնպէս չէ՞, Տէր, իրենց

Համար...:

Վերջին քանի մը օրերուն մէջ, երկրորդ անգամ ըլլալով ցանկաց մահուան խաղաղ անէութեան: Եւ ասիկա, վերջնական ու անկանդնելի պարտութեան մը խոստովանանքն էր այլեւս: Որովհետեւ միշտ մոռցուած, միշտ կիսաքաղց եւ անտուն եւ անսէր այս տանջահար կեանքը խուժուժ ցաւի մը պէս. հիմա կը կրծէր, կը յօշոտէր զինք, իր հարազատներու ճակատադրին մասնակից ըլլալու հօր կարօտի մը հետ: Եւ որովհետեւ անհունօրէն չարչարուած, վտարուած կեանքի բոլոր դուռերէն՝ միակ բաց եւ հիւրընկալ մուտքը զոր կարծեց տեսնել՝ դերեզման առաջնորդող անցքի մը մթնշաղ բերանն էր: Ու առանց վարանման կամ երկիւղի մեղմազոյն հպումին, ինք ուղեց, ինք խնդրեց իր Քրիստոսէն այդ ճամբուն իրաւունքը.

— Բա՛ց Քու դուռդ, Տէ՛ր, եւ ընդունէ զիս ներս, կ'աղաչեմ,

— Կ'աղաչե՛մ...

Ու հեկեկաց: Գլուխը կախեց կուրծքին եւ դառնօրէն հեկեկաց:

Իսկ ձիւնը կը պատէր զինք արդէն եւ ցուցանակին շղթաները ուժգնօրէն ճռնչելով կը հիւժուէին իրենց ժանգոտ օղակներէն: Յանկարծ հովը շաչեց մուկնաբար: Երկաթի եւ թիթեղի դայրազնած ճանկրտուքի երկարաձող կճրտիւններ լսուեցան: Անոր խաղալիքի մը պէս, ցուցանակը իր ձողին աջ ու ձախ կողմերուն շարտուեցաւ քանի մը անգամ: Ապա շրջան մը բոլորեց իր առանցքին վրայ, խղեց իր կապանքներն ու պահ մը կախուած տատանելէ յետոյ վերջին շղթայէն՝ փրաւ վար խուլ ու զուսպ շառաչիւնով մը:

Մերձաւորագոյն անկիւնէն, անտէր եւ քաղցած շան մը լալկան ու կերկերուն կաղկանձիւնը եկաւ, կարծես որպէս արձագանդ...:

Ե.

Յաջորդ առաւօտ երբ վաճառատան տէրը ցուցանակը վերցուց, սարսափահար իր աչքերը դամուած մընացին մարմնակոյտի մը վրայ: «Քաղաք»ը հասաւ անպարանքով եւ դտաւ դիակ մը, որ կը ժպտէր սառած գոհունակութեամբ: Բա՛ն չկար վրան. ո՛չ անուն, ո՛չ հասցէ, ո՛չ աջ ձեռքը, ո՛չ ձախ ոտքը, ո՛չ ալ մէկ այտն ու աչքը:

Տեսաւ միայն երկու անթացուպեր եւ ծխախոտի Հին տուփ մը, լեցուած փայթացած ձութով, մատիտներով ու լուցկիով: Տեսաւ նաեւ մոխրագոյն «չքանչան» մը ատանոց թիթեղէ, անպատկառօրէն բազմած գոյնն ու ձեւը կորսնցուցած անոր բաճկոնի սրտին՝ որուն վրայ ցից ու փայլուն դիրեր կային.

«Պատերազմի հաշմանդամ, օգնեցէ՛ք այս խեղճին»



ԿՈՏՐԱԾ ԹԵԻԵՐՈՎ

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

«Մարդիկ այսօր, կը նային քեզ
Ու կը սպասեն որ շուտ մեծնաս.
Դէմքդ ու հոգիդ դըժոխակեզ՝
Մարդիկ մոռնա՛լ կ'ուզեն, տըզաս»...

Վ. ԹԵՒԵՆԱՆ

1932--35

ԿՈՏՐԱԾ ԹԵԻՆԵՐՈՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Ա.

«ՊԱՏՈՒ ՀԱՍՈՒՍԾ Ը»

(Նոր Հեփաթ)

1.

Ապառաժուտ լերան մը կողերէն առկախ, Այեօս-
տրկէոսի կիսակործան ու լքուած մենաստանը, տակա-
ւին կանգուն իր շրջապարիսպին մէջ եւ զանգակատան
կամարներուն տակ, ահաւոր եւ հրաշալի առասպել մը կը
գլխեցնէր :

Անյիշատակ դարերու աղջամուղջէն փրթած աւան-
դութիւն մը, սոսկումով եւ խորհուրդներով լի մրմունջ-
ներով կը փսփսար հարիւրամեայ գեղջուկներու դողդո-
ջուն շրթներէն, — Ամէն տարի, Զատիկի դիշեր, կիսա-
փուլ վանքի պարիսպներէն ներս՝ անծանօթ երեք աստ-
ուածներու մարմիններ կը բոցալառէին, երեք հրաւառ
խաչերու վրայ :

Գիւղին հովանաւոր սուրբերուն նուիրուած վիթխա-
րի բայց հոյատեսիլ կաղնիներուն շունջները եւ սեպա-
ձեւ ու մահասարսուռ քարաժայռերուն արձազանդները
չէին յուշեր ոչ մէկ մարդկային նայուածքի, ոչ մէկ
մարդկային շունչի կամ հունչի խիզախումն ու մխրճու-
մը խորհրդաթաթախ վանքի ստուերներէն ներս :

Եւ երկիւղած սերունդներ յաջորդելով իրարու, ե-
կեր ու անցեր էին, իրենց երգիւրներու պոկունքներէն
կախուած առասպելին ծանրութիւնը կուրծքերնուն :

... Օր մըն ալ Այեօս-Ենրիկոսի ժայռերը դղրդացին թափահարումէն կատաղի, ժանտատեսիլ ու համայնաւեր մրրկահաւի մը, որ կը բարձրանար հեռո՛ւն, երեք ծովեր ու երեք ցամաքներ անդին եւ կը սաւառնէր ու կը դառնար օղակ-օղակ, քաղաք-քաղաք: Անոր ճիրանաւոր մագիլները կ'երկարէին, կը խրէին ամէն գիւղ, ամէն հիւղ, ամէն բոյն ու բրտօրէն, ու բռնօրէն կը խըլէին ամէն հեւք, ամէն բարախիւն: Եւ երբ ալ արմատ չմնաց չրդբտուած, եւ երբ ալ խրճիթ չմնաց մոխիրի եւ փոշիի չվերածուած եւ շունչ չմնաց, որ խանձած չըլլար անոր լեզուին մահահոտ շաչիւնէն, արիւնարբու եւ դիւշտիչ՝ մրրկահաւը կշտացած, յափրացած՝ ամփոփեց իր հազար-հազար ժանիքները եւ ուրականի փոթորկավար թեւերով բարձրացա՛ւ, բարձրացաւ ու սլայթեցաւ ասեղաճայթ որոտումով մը: Եւ ամէն անկիւն, ամէն փոս, ամէն դազաթի ու կոհակի վրայ ցանեց ու ցրուեց իր աւարը առատօրէն, անխնայացած, կիսակենդան եւ անդգայ...:

Այդ կոզոպուտէն մարդկային բեկորներու բուռ մը թափեցաւ Այեօս-Ենրիկոս լեռան ստորտը, ուր կայսերական շքեղ ու մեծափարթամ ապարանք մը իր վանդակապատ դարպասը կը բանար քաղաք իջնող ուրապոյտոյտ քառուղիին վրայ:

Մանուկներու, պարմանիներու անոնց մարմինները կը գծուէին ցցուն ոսկորներով եւ շեշտուած ափօսներով: Կարծես իրենք իրենց միսերն ու երակները ծամեր էին, կենդանի պահելու համար մորթերնին, որ դեղներ, խորշոմեր ու ծերացեր էր հովին, արեւին եւ աւազին ժանտ հպումէն: Կարճ հասակներ, խոշոր սոքեր եւ բարակ վիզեր ունէին անոնք:

Կեանքի, աշխոյժի եւ յանդգնութեան որպէս ապացոյց սակայն, դեռ կը սլահէին իրենց անհանդարտ աչքերը, որոնց բիբերէն նայուածքնին կը հոսէր հալած աստղերէ ջրվէժի մը լոյսէ յորձանքով եւ յստակութեամբ: Հոն, իրենց հոգին կը ցոլանար քիչ մը բերտ, քիչ մը վայրագ, քիչ մը հեթանոս այլ վսեմ ու ազնուա-

կան դեղեցիութեամբ մը: Անոնք կտրատեցին անծայրածիր հորիզոնները երեք ցամաքներու եւ երեք ծովերու ակնթարթ թուող պահէ մը եւ ինկան Այեօս-Ենրիկոսի փէշերուն ու խռովեցին անոր դարաւոր նինջը...:

2.

Կարմիր թաթառը, որ դարկաւ իր ժողովուրդին եւ հայրենիքին, յորդահոտան հեղեղներով կարծես սահեր ու անցեր էր իր պղտիկ դէմքին վրայէն: Ու սրբեր տարեր էր նրբութեան ամէն երանդ, բարութեան ամէն արտաքին նշոյլ: Հիմա՝ աւլուած ու չորցած ճախճախուտի մը մոռյլ լեռկութիւնն էր որ կը գրկէր Անոր դէմքին բուրբ գիծերը: Երբեմն միայն, այդ նոյն գիծերուն երկայնւոր օրերուն վրայէն ալ մղձաւանջային արհաւիրքի մը թունալի խորշակն էր քալեր...:

... Զատիկի գիշեր: Կաթիլ-կաթիլ թանձրացող խաւար մը կոխկրտելէն, նեղ եւ քարքարուտ արահետէ մը Ան կը մաղցէր դէպի հնամեայ փլատակները մահաչչուկ վանքին: Անհամար սերունդներ շղթայած ցնորական առասպելի մը տիրակալութիւնը փչրելու վայրագ հրճուանք մըն էր որ կը մղէր զինք մենաստան: Կամ զաղտնի, տառապազին ցանկութիւն մը, մէկ անգամ, գոնէ մէկ անգամ տեսնելու աստուածները, որոնք ճառամէկ անգամ տարգետն արեւին եւ անէճք ու պատիժ իր գայթներ էին սարգեւեր արեւին եւ անէճք ու պատիժ իր հայրերուն, եւ պոռալու եւ աղաղակելու անոնց երեսն ի վեր իր քէնը այս անօրէն սահմանումին համար:

Այդ գիշեր դոց մոխրագոյն մշուշ մը վար էր քաշեր երկինքը: Եւ որպէս զի չփլիւ ան, դոց մոխրագոյն մշուշը կլլեր էր ցից ու սրածայր կատարները շրջակայ բարձրաւանդակներուն, անոնց վրայ հանգչեցնելու համար խոժոռ ու սպառնալի երկինքը:

Եւ Ան կը ճեղքէր մութ ու անթափանց գիշերը օձա-
գալար շաւիղին հետ: Եւ բոլոր աստուածներուն դէմ իր
մէջ ամբարուած ցասումն ու արհամարհանքը հիմա իր
չրթներու երկու անկիւններուն թառած՝ կքեր էին զա-
նոնք վար: Եւ ինք այդ դառնութեամբ համադրաւ, ինք-
նամոռաց, ոտնահարելով փախչող սողուններու խշր-
տիւններն ու մարդկային դարչապարներէ անարատ որ-
ձաքարերը՝ կը դիմէր առաջ, անտարբեր երկրի նենգա-
նիստ մութին եւ երկնքի վրէժխնդիր զայրոյթին:

Բայց բարի թուփեր, որոնց այտերը տակաւին խո-
նաւ էին պայծառ արշալոյսի մը արցունքներէն՝ փաթ-
թուեցան Անոր սրունքներուն: Ուզեցին արգիլել, ուզե-
ցին փրկել այս անխորհուրդ եւ խիզախ արկածախնդիրը:
Փորձեցին զայն շեղեցնել անկոխ ու վտանգաւոր այս ու-
ղիէն. եւ փափսացին. եւ քրթմնջեցին: Սակայն Ան չկըր-
ցաւ լսել անոնց մրմունջը: Այն ատեն բարակ սօսափ մը
ելաւ տերեւներէն.

— Ո՞ւր կ'երթայ այս մանուկ տղան, ո՞ւր կ'երթայ
այս յիմար տղան. անծանօթ ու նենգաւոր այս բաւիղնե-
րուն մէջ ի՞նչ կ'որոնէ այս յիմար տղան, այս մանուկ
տղան...

Բայց մանուկ տղան չկրցաւ հասկնալ թուփերուն եւ
տերեւներուն հեծեծանքը: Եւ ստքերը ճմլեցին քանի մը
նորարարող ծիւեր, որոնցմէ ցաւազին հծծանք մը բարձ-
րացաւ.

— Խենթ տղայ, անմիտ տղայ... ի՞նչպէս մոլորեր
է... ի՞նչպէս այս ճամբուն ճանկն ինկեր է... չի՞ գի-
տեր արդեօք... չէ՞ լսեր արդեօք թէ ո՞ւր կը մեռնի այս
ճամբան... ո՞ւր կը քաշէ այս ճամբան...:

Նոյն պահուն երեք ծովերէ եւ երեք ցամաքներէ ժա-
մանող հօլ մը սաստեց զանոնք եւ մտրակելով անցաւ.
մինչ սաղարթներուն եւ ցողուններուն շուրջ երկարօրէն
յամեցան իր սոյլին արձագանգները.

— Ան կ'երթայ աստուածներուն իր ցասումը պոթ-
կալու: Անոր հօզին Վչտին փրփուրներուն վրայ տատա-
նող տրտունջի սաղմոս մըն է. Ան դժսխքի հրաբորբօք

կաթսաներէն բուռ-բուռ կուար ու կասար խմեց, բայց
ծիծաղեցաւ զանոնք որպէս մահաշուր իրեն մատուցա-
նողներուն անմտութեան վրայ, իր բոցակիզուած հոգիին
եւ մոլեխինդի վա՛րժ քիմքին համար այնքան զով էին ա-
նոնք ու ա՛յնքան քաղցր, ա՛յն-քա՛ն քա՛ա՛ղ-սը՛ը՛ր՛ր... .

Հովը հեռացաւ. անոր քղանցքներէն քաշքշող դիւա-
յին քրքիջ մը լսել կարծեց տղան ու նայեցաւ իր բոլոր-
տին: Կարծեց տեսնել տարօրինակ ու արտառոց ստուեր-
ներ, որոնք յանկարծ դուրս խուժեցին պուրակներէն, հո-
ղի ու քարի ճեղքուածքներէն ու անդունդներէն եւ սկսան
պարել ձիթենիներու այլանդակ թեւերուն վրայ, թա-
փանցիկ գեփիւռի մը տրտում ու հեզ նուագով:

... Եւ վիհի նման խորունկ այդ գիշերին մէջէն, Ան
միշտ կը յառաջանար մեղմ, շատ մեղմ շշուշով մը ա-
ղօթքի հին փշրանքներ ցանցնելով ճիւղէ ճիւղ ոստոստող
ուրուններուն եւ սրսփացող նարնջենիներուն.

— Երկնէ՛ր երկին, երկնէ՛ր երկիր...

Յանկարծ, հեռաւոր խուլ դղրդիւնէ մը ցնցուեցաւ
լեռը. տղուն կրունկներուն տակ՝ խիճերը սարսուացին:

Ձիթենիները երերացին, խոնարհեցան եւ աղերսե-
ցին: Առուակներուն ու գեփիւռին մեկամաղձոտ դաշներ-
դը խեղդուեցաւ խաղոտ կաղկանձիւնի մը մէջ: Այն ի՞նչ
էր անցաւ. երկարեց վիզը տղան, հասկնալու համար թէ
ի՞նչ էր որ անցաւ: Բայց երկիւղը լայնաբաց աչքերով
ուզեց ներս սողոսկիլ Անոր կղպուած ակուաններուն ընդ-
մէջէն. խածաւ զայն ու վազեց:

Ու հարցուց, որո՞ւն, չգիտցաւ, բայց հարցուց.

— Ինչո՞ւ այսքան մութցաւ, ինչո՞ւ այսքան մութ-
ցաւ:

Մէկէն՝ վանքին ու միջոցին սերտօրէն պլլուած խա-
ւարը պատուեցաւ երկնքէն ինկող, կոտրտած ճերմակ նի-
զակէ մը. Ան նայեցաւ վեր.

— Աստուածները ջահեր կը նետեն ճամբանին լու-
սաւորելու, մտածեց:

Սակայն հաւանաբար՝ անոնցմէ մէկուն ոտքը դայ-
թած ու շանթ մը փրթած էր անկէ: Եւ տղան տեսաւ քիչ

մը վեր, միայն քիչ մը վեր, վիթխարի կաղնիի մը սա-
պալումը հրդեհէ մէջ ընկղմողի լալազին կանչերով:

Ամպերը ճեղքուեցան նորէն եւ օրոտումը կրկնուե-
ցաւ. ծանր ու յորդ՝ ջուրէ պարաններ կախուեցան եր-
կինքէն եւ շառաչեցին ժայտերու կոնակին, ու գալարուե-
ցան տղուն մարմնին բոլորափքը:

— Աստուածները այս պարաններով պիտի իջնեն.

Ըսաւ, ու վազեց նորէն ու հարցուց.

— Ինչո՞ւ չի հատնիր այս շաւիղը:

Բայց դարձեալ փչրուած, ճեփ-ճերմակ նիզակ մը
ինկաւ վար ու միտուեցաւ իրեն մօտ, շատ մօտ սպառաժի
մը կուրծքին՝ որ փլաւ յուսահատ պոռչաուքով:

Իսկ Ան դեռ կը վազէր գետինը ճանկրակէն: Ամպե-
րէն ջրվէժող ջուրէ պարանները լերան կողերէն դարվար
կը սողային ուռած, մոլեգնած: Տղուն թափանցիկ, սեւ-
ճերմակ դժաւոր շապիկը եւ մինչեւ ծունկերն օղակող
տափաւր, ցեխով թաթառուն՝ փակած էին մարմնին:
Ա՛յնքան յաճախ հողն ու խիճերը կը դաւէին իրեն, ա՛յն-
քան յաճախ իր ամբողջ հասակով Ան փուռեցաւ լեռը ա-
կօսող հեղեղներու երկայնքին:

Անկումներէ պարտասած այս արշաւի վախճանին,
անորոշ, հարթ զանգուածի մը դարնուեցաւ յանկարծ:
Նոյն միջոցին ամպերը լուսաւորուեցան կրկին եւ տղան
զանգակատան լայնաթեւ խաչին ուրուադժուրը նշմա-
րեց պարիսպին վրայ բացուած ոտնաչափ պատուածքէ
մը, եւ ներս սողաց շուրջը դիտելէն:

Հիմա, կամարի մը տակ կձկուած, յողնատանջ,
ուժասպառ, Ան կը սղասէր երեք աստուածներու աւան-
դական այցին:

Մինչ քրքջող ջուրէ պարանները քաշուեցան, նրբա-
ցան հետզհետէ ու դարձան կշռաւոր, օրօրուն: Որո-
տումները հեռացան, նուաղեցան, լուցին: Ամպերը ամ-
փոփեցին իրենց հրեղէն լեզուները եւ երկիրը հարուածե-
լէ դարբեցան... Թէ ո՞չ՝ դանդաղօրէն, դանդաղօրէն
կ'իջնէին տղուն թարթիչները, կը խորանային բիրերն ու
կը ծածկուէին կզպուող կոպերուն ետեւ: Բայց նախ

ուածքը կ'երկննար, կը հասնէր անօրինակ Տեսիլքի մը
սահմանները եւ խուժելով ներս՝ կը փորձէր դահակալել
հոն...:

3.

Յամբօրէն Ան բացաւ աչքերը այդ տեսլաշխարհին
վրայ: Բայց հազիւ նշմարած զինք պաշարող արտասո-
վոր շրջապատը՝ փակեց դանտնք:— Սպիտակ ու պայ-
ծառ, շատ պայծառ լոյսէ մը արծաթուած ասեղներ խը-
րեցան իր նայուածքին մէջ: Ընկրկեցաւ քիչ մը եւ յուլօ-
րէն վերցուց կոպերը: Ծառադոյն երկինք մը տեսաւ եւ
կանանչ թաւիչէ դարատափ մը բաւական ընդարձակ: Ու
հանդիպակաց սարաւանդին վրայ, ա՛հ, վերջապէ՛ս,
վերջապէ՛ս երեք լուսապայծառ մարմինները տեսաւ ե-
րեք աւանդական աստուածներուն, դամուած երեք հրա-
վառ խաչերու, ընկղուղուած եօթն անդամ կաթնագոյն
բոցերու մէջ...:

Այլայլեցաւ տղան: Այդ որբա՛ն շառայլ: Այդ ի՛նչ
շատրուան ձիւնասպիտակ եւ հրաչէկ լեզուներու եւ լեզ-
ուակներու: Այդ ի՛նչ բացավառ ջրվէժ մարմիններու:
Ու մղուեցաւ առաջ, աւելի մօտէն դիտելու այդ նորօրի-
նակ ցայգատօնը: Բայց աստուածներուն ճակատները
ճերմկեցնող հրդեհէն հեղձուցիչ ջերմութիւն մը ծաւա-
լելով պարուրեց զինք: Եւ քրտինքը լճացաւ դէմքին խո-
րացած դիժերու երկայնքին ու կապարի հալած կաթիլ-
ներու պէս սկսաւ կրծել իր միտը: Կարծեց թէ իր քուն-
քերուն տակ ականներ կը փորէին: Նոյն իսկ կը լսէր
մուրճերուն հնչիւնն ու դանդիւնը քլունքներուն եւ կը
զգար անոնց հարուածներուն ձգած փուլղումը: Այնքա՛ն
անոր երակները կ'ուռէին երկրիցած պատկառանքի մը
բերած տենդով: Ու պիտի կործանէր ծունկի՛: Պիտի սո-
ղար դէպի անոնց դարչապարները, փայփայելու, համ-
բուրելու համար դանտնք, եթէ յանկարծ չմտաբերէր նա-
խորդ սերունդներուն կրած քայքայումը այդ համբոյր-
ներէն. եթէ բոլոր աստուածներուն հանդէպ իր ունեցած
վրէժիւնդիւր ասելութիւնը, փշապատ խարաղաններու

զայրոյթով չչաչէր իր զգայարաններուն վրայ:

Այն ատեն հալած կապարէ քրտինքը սառելով, դովովիւն սրակեց իր մորթին: Քիչ առաջ դէմքն այլայլու սարսափը նահանջեց քէնի եւ կատաղութեան արշաւոյ յորձանքին փէշերէն: Անոնցմով լեցուեցան կռուիները եւ սրկուեցան: Եւ աչքերուն կայծկլտուքը բռնկեցաւ շրթներուն, — անոնք թրթռացին, դողացին պահ մը, յետոյ յանձնուեցան հոգիէն արտախուժող վիրաւոր եւ ցաւազին եւ թունալի ճիշերուն, որոնք հոսեցան աղմըկայոյ յորդութեամբ, փրփրած մոլեգնութեամբ:

— Աստուածներ՛ր, աստուածներ՛ր, պերճազիճներու ամուլ արգանդներէն վիժած աստուածներ. հզօրներու վայրագութիւնը շլթայազերծող, թշուառներուն առատօրէ՛ն արտասուք եւ յոյս պարզեւող թշուառակա՛ն աստուածներ...

Այնպէս թուեցաւ տղուն, թէ կաթնագոյն բոցերը կը դունատէին եւ կը հալէին հետզհետէ շրջապատի կիսամութին մէջ: Սաչերէն հեռաձգուող ճառագայթները, իր ձայնին սուր եւ աղջամղջային շեշտերէն կտրատուելով, տժգունելով՝ կ'ամփոփուէին, կը մարմրէին կարծես: Մինչ շարունակեց Ան.

— Դուք տեսաք իմ բարի եւ խոնարհ պապերուս հոգեւին փարումը ձեր մարդասպան կրունկներուն: Դուք տեսաք թէ ի՛նչ երկիւղած պաշտամունքով, անոնք ծունկ կտորեցին ձեր զխակնացած մարմիններուն առջեւ. թէ ի՛նչ անձնուրաց նուիրումով անոնք ձեզ փոխադրեցին անմատոյց քարանձաններ, իրենց կուրծքերուն պարիսպը որպէս վահան ցցելով ձեզ հալածող հեթանոս աստուածներու զայրոյթին դէմ: Բայց դո՛ւք, դուիճներու ո՛վ գոհէիկ աստուածներ, զանոնք մատնեցիք մարդանման յովազներու ճիրաններուն, անոպայ եւ անձնապաշտ՝ անոնց հոգիներուն բիրերը փորելէ եւ կամքերուն բազուկները մեղկութեամբ կտրատելէ վերջ:

— Ինքնասպան հաւատքով մը անոնք ձեզ երկրպագեցին քառադմբէթ տաճարներու, անարեւ խցիկներու եւ մթին նկուղներու մէջ, բայց դո՛ւք, հրէշածին ու դա-

ւադի՛ր աստուածներ՛ր, կործանեցիք տաճարները, խըցիկները աւերեցիք եւ մռայլ նկուղները իրենց մռայլ բնակիչներով, շիկակարմիր հեղեղներու ամենակուլ երախին յանձնեցիք...

Հազիւ երեք խաչերը գիշերին սեւութենէն անջատու շափ աղօտ, բեկբեկուն շողեր մնացեր էին աստուածներուն բոլորաիւրը:

— Դուք տեսաք իմ հայրս ալ: Քառասուն երկարաձիգ տարիներ ձեր ոտքերուն փոշիները լուաց ան իր արցունքներով ու սրբեց իր մօրուքին սպիտակ թելերով: Քառասուն տարի, ձեր անիծապարտ ստուերներուն առջեւ խունկ ու մոմ վառեց հողեղմայլ վերացումով: Քառասուն տարի ան բուրվառ ճօճեց ձեր ցաւազար ճակատներուն դիմաց: Բայց օր մըն ալ, նուազ բարբարոս աստուծոյ մը դրօշակիրները, ձեր այդ մեղսաւոր խաչին մէկ թեւով անոր ուղեղը հաղորդութեան սկիհին մէջ թափեցին եւ ջախջախուած մարմինն ալ աշտարակէն կախեցին: Եւ մայրս ու քոյրերս, ո՛վ ծաղրածու, ո՛վ ոճրապարտ աստուածներ՛ր, ձեր մերկամարմին եւ ծամածուռ պաստառներուն դէմ՝ խժդժօրէն... խժդժօրէն մահացան...:

Լուեց: Աստուածները լուծուեր էին կիսաստուերին մէջ: Նայուածքը տարածեց հորիզոնէ հորիզոն, բեւեռէ բեւեռ եւ ասողէ ասող ու զանոնք որոնեց յուսախաբ անձկութեամբ: Անյայտացեր էին անոնք: Այդ ճղճիմ, այդ դասալիք աստուածները որ վատօրէն փախան, այդ յիմար աստուածները դարերով իր ազնիւ, իր առաքինի ժողովուրդին ճակատազիրը կատաղած ցուլի մը քամակին կապած՝ հրճուեր էին անոր արիւնլուայ մարմինին եւ փշրուած ոսկորներուն նայելով: Բայց ինք իր ժողովուրդին վրէժը լուծեց զայն պատուհասող աստուածներէն: Հնազարեան իր ազգը բարբարոսներուն մատնող անմատչելի, ահեղազօր աստուածներուն մօտեցած եւ ամբաստանա՛ծ էր զանոնք: Անոնց երեսին իր եւ իր նախահայրերուն ռին ու ստելութիւնը աղաղակած էր վայրի բայց արդար ցասումով:

Եւ առաջին անգամ ըլլալով՝ դէմքի կնճիռներուն պլլուած տասնեւեօթ աշուններու թախիժին տեղ, դարուններու կենսախայտ ժպիտը փթթեցաւ: Իր բարի, իր սքանչելի ժողովուրդը ա՛լ ազատ պիտի ըլլար այդ խարդաւանող աստուածներու ժանտ կասկանքներէն ու պիտի ապրէ՛ր, պիտի խնդա՛ր, պիտի մեծնա՛ր...:

— Դուն... դուն այն ազգին... դուն այն ցեղին դաւակն ես...:

Հեռուէն, խորունկէն, կտրատուած խօսքերու պատաներ հասան իրեն: Հեռուէն, խորունկէն, այդ պատաները մօտենալով հետզհետէ՝ կը միաձուլուէին, կ'ամբողջանային եւ ներս կը խուժէին իր ականջներէն, իրենց արձագանգներուն հատու եւ յամառ ճանկերը թաղելով Անոր գերազրգուած զգայարանքներուն մէջ:

— Դուն այն ցեղին դաւակն ես... Բայց ի դո՛ւր կը հայհոյես քու պատերուդ աստուածներուն: Անոնք չկըրցան ժողովուրդդ պաշտպանել դայն հարուածող բազուկներէն՝ որովհետեւ քու եւ քու հայրերուդ թշնամիներն ալ ունէին աստուածներ եւ բոլո՛ր, բոլո՛ր աստուածները հաւասարադօր են... անդո՛ր են...:

Ո՛ւրիշ, ուրիշ՝ ծանր ու հանդարտ ու դաշնաւոր այս ձայնը: Եւ դարձաւ տղան, դարձաւ ինքն իր վրայ, որովհետեւ միշտ կունակէն կուղար ձայնը եւ կը լայննար, կը բարձրանար կոհակ-կոհակ:

— Քու ազգիդ պատմութիւնը պիտի ըլլար դիւցազնաւիպ մը բարիին նուիրուած փառահեղ մարտնչումներով, զեղեցիկին ընծայուած հրաշալի յաղթանակներով, դրասանդուած... եւ եթէ ան դարձաւ ողբամատեան մը չտեսնուած նախճիրներու, եթէ ան փոխուեցաւ արիւնաւառ շատրուանի մը դիակնաժայթ, քու աստուածներդ չեն մեղաւորը: Վկայ՝ հին-հին հայրերդ, որոնց բազուկները ունէին ուժ, հարուածելու. որոնց մտքերուն եւ հողիններուն մէջ ստեղծագործումի հանճարին է՛ն կենեղուտ, է՛ն կենսառատ արմատները կ'աճէին: Բայց եթէ շարաւստ եւ յաւերժացող խոցուածք մը ձեր ողնայարը դարերով կրճեց՝ անոր որդը ձե՛ր հոգիներէն իր սնունդը

կ'առնէր, ձե՛ր ներսն էր անոր բոյնը: Քու պապերդ անհատապաշտութեան այլամերժ տունկը պատուաստեցին իրենց սրտին վրայ եւ փայփայանքի առուն բացին դայն կենսունակ պահելու համար. բայց լճացաւ առուն, պանդոյր ճահիճ մը դարձաւ, ուր դարչահոտ, զաղբատեսիլ կանաչ սողուն մը հասուեցաւ, որ անձնապաշտութեան թոյն կը մատակարարէր...:

Ձայնին ալիքները զարնուեցան յանկարծօրէն պայթող ահաւոր թնդիւնի մը եւ փշրուեցան: Տղան կարծեց թէ երկիրն էր որ ճչաց այդ զարհուրելի մոնչիւնով: Ու սոսկուճէն փոռուեցաւ գետին: Աչքերը սեղմեց կուռփներու կունակին եւ թաւալեցաւ ինքն իր վրայ: Եւ սերտօրէն, ուժգնօրէն հազար-հազար ասեղնաւոր վերմակի մը փաթթուին զգաց իր մարմնին: Ու սարսուտ: Եւ երբ աչքերը բացաւ տեսիլքէն դուրս՝ տեսաւ անթափանց գիշեր մը եւ դողացող երկինք միայն: Ու փորձեց կանգնիլ ոտքի: Բայց ծանր հարուածի մը անկումը իր ծոծրակին՝ զդետնեց զինք եւ եռուն ու յարաճուն ցաւ մը մխրճուեցաւ մինչեւ ծայրամասերը իր անդամներուն...:

4.

Չարհուրելի այն մոնչիւնը, որ Լըկրի աղիքներէն փրթած ճիշ մը թուած էր աղուն, իր տեսիլքին մէջ՝ որոտումի մը պայթիւնն էր երկինքէն: Ամպերու թանձր ու վիթխարի զանգուածներ, սանձարձակ հովերու շաշիւններէն մտրակուած, վայրագ խոյանքով մը իրենց սեւ եւ ահարկու ճակատները զարկած էին իրարու: Այդ բախումէն փշրուեցան ամպերու փայլակէ եղջիւրները: Եւ բեկորներէն կոտրտած շանթ մը սուրաց վար ու խրեցաւ Այեսու-Նարկէասի զանգակատան ժանդոտած խաչի մէկ թեւին, որ, ճիւղակոտոր, ինկաւ աղուն ծոծրակին եւ տապալելով դայն սէտին՝ անդիմադրելի նուաղում մը հոսեցուց պատուածքէն ներս:

Հետզհետէ չքացան վանք ու աշտարակ, ինք եւ երկինքը: Եւ անէացած, աննիւթացած՝ Ան փոխադրուեցաւ դարձեալ այն ջինջ ու շառագոյն երկնակամարին

տակ, որ մանիչակազոյն հորիզոններ ունէր: Կանանչ թաւիչէ մարդագետինը տեսաւ նորէն, բոցավառ մարմիններ շալկած հրդեհուող խաչերով: Վերջիչեց աստուածներուն աղաղակած իր ամբաստանութիւնները եւ անոնց ուժն ուզեց կշռել: Բայց ժամանակ չունեցաւ: Երազին ձայնը երեւալ սկսաւ իր աչքերուն դիմաց: Այն ձայնը, որ իր պապերուն եւ եղբայրներուն մեղքերն էր համբեր եւ անոնց ներսը թաղնուած ճահիճն էր մատնանշեր: Եւ տարօրինակ էր այդ ձայնը. տարօրինակ էր անոր շեշտն ու հնչիւնը...:

Իր ժողովուրդին պատմութիւնը տեսաւ երկարածիւղ, լայնատարած: Եւ այդ պատմութեան երակներուն մէջէն տեսաւ նաեւ — այո՛, տեսա՛ւ, դրե՛թէ տեսաւ — սողալը կանաչ ու զոռելի այն որդին, որ ողնասիւն կը լափէր անյաղօրէն: Ու անկիւնադարձէ անկիւնադարձ եւ դարաշրջանէ դարաշրջան դուրս կը ցցէր դուրսը ջրածի մը նման ու կը յառաջանար տիրական նազանքով, վեհափառ եւ ամբարտաւան նայուածքով: Եւ կարծես կը քրքշար սողոսկող այդ որդը. կը քրքշար էդի հոտ առած աւանակի մը պէս շրթունքները շուլլած վեր եւ ակոսները ցից...: Տղան փորձեց շարժել իր անդամները, թերեւս մահացու վէրք մը շարժելու համար անոր: Բայց ջիղերը չհնազանդեցան իրեն: Փորձեց հեռու պահել իր թել-թել: Բայց ի դուր: Ծանր ու հուժկու մատներ զանոնք քաշեցին, միաձուլեցին իրարու: Ու ալ թեթեւ, խուլ հեւք մը միայն կը մնար Անոր, դիտակցութեան նշոյլի մը հետ, որով զգաց, որով տեսաւ դարձեալ այն կանաչ կենդանին, մողէսի կերպարանքով այս անգամ, որ կ'առաջնորդէր սողուններու, որդերու, ճճիներու անհամար շարքեր, որոնք սկսան ունաւ եւ շուրջ, որոնք հեղեղուեցան իր վրայ եւ սկսան կայծակ, կրծեւ, կաթիլ-կաթիլ ուտել իր մարմինը դիւային սուլոցներով, կոխնշներով ու պարերով...:

Այս բոլոր ճիշերը յանկարծ սանձուեցան արձիճէ ձայնի մը — երազի ձայնին — թեւերէն, որոնք երկնցան

ժինչեւ իր դանկին տակ ու դալարեցին, ու ճմլեցին ու խոցոտեցին իր ուզեղը.

— Ասոնք այն սողուններն են, որ ցեղիդ ողնայարէն անոր ծուծը ծծեցին... ասոնք այլամերժութեան, եղբայրատեսացութեան այն դարչահոտ որդերն են, որ կը յարածին ձեր հողիներու պանդոյր ճահիճին մէջ...:

Ձայնին ալիքները ճգմուեցան կրկին ահեղ որոտումի մը կոհակներուն տակ: Նորէն փայլակ մը խաւարին զարկաւ, — բայց տղան ոչ լսեց, ոչ տեսաւ, միայն՝ — հեռուէ՛ն — հարուած մը զգաց աջ ոտքին եւ կարծեց թէ զայն արմատէն խլեցին տարին, առանց ցաւի...:

Ու մրմնջեց.

— Ընկերնե՛ր, եղբայրնե՛ր, անասուննե՛ր...:

— Ա՛խ, փնտռեցէ՛ք, փնտռեցէ՛ք այս որդերն ու ճճիները ձեր մէջ... ձեր ոսկորներուն, ձեր միսերուն, ձեր սիրտերուն մէջ...:

— Անոնք փակած են ձեզի... անոնք ձուլուած, շաղախուած են ձեզի... ուրեմն փնտռեցէ՛ք զանոնք բոլոր ձեր զգայարաններով եւ արեան բլիթներով... փնտռեցէ՛ք ու դտէ՛ք... դտէ՛ք ու յանձնեցէ՛ք ձեր ակոսներու կատաղութեան ու ճգմեցէ՛ք, ու ճգմեցէ՛ք, ու ճգմեցէ՛ք զանոնք, եթէ նոյն իսկ պէտք ըլլայ ծամծամել ձեր երակներէն, ձեր ջիղերէն, ձեր յօդերէն մաս մը, պզտիկ մաս մը, մեծ մաս մը անոնց հետ...:

Հովը սուլեց բարկացած եւ ցրուեց Անոր խօսքերը:

Եւ ցուրտը իր հազար-հազար ասեղնաւոր վերմակով աւելի սեղմուեցաւ Անոր մարմնին:

Երկինքն ու երկիրը մեղմ բղղիւնի մը վերածուեցան հետզհետէ:

Ու հետզհետէ՛ ամէն բան անյայտացաւ համր ու խուլ ու նենդադաւ խաւարի մը մէջ...:

Օր մը վերջ, Անոր ընկերները իրենց հեռասպառ փըն-
տըռտուքներէն յուսահատ եւ պարտասած, երբ խմբովին
աւանդութիւնը արհամարհեցին եւ մտան աստուած-
պատկան վանքին պարիսպներէն ներս՝ բակին մէջ տեսան
տղան, տարածուած գետին կոնակի վրայ:

Կայծակէն կտրուած ժանգոտ խաչին թեւը, զանգա-
կատան կատարէն ինկած էր Անոր ուսին, կտորելով ոս-
կորի բարակ շերտ մը: Իսկ մարմարի կտորէ մը ճմլուեր
էր աջ ազդրը: Լանջքը, տկար ու զանգաղ ելեւէջով մը
կ'ուռէր ու կը պարպուէր տակաւին:

Սրբուեր, պարզուեր էին տասնեւեօթ դաժան աշուն-
ներ շալկած Անոր խորշոմները: Հիմա՝ հոգեպարար խա-
ղաղութիւն մը կ'օծէր անեղծ մնացած, անձրեւէն լուաց-
ուած Անոր պայծառ, պայծառ ու բարի, պայծառ ու
քաղցր դէմքը:

Ալ անկէ վերջ, Յունական այն փոքրիկ գիւղին բնա-
կիւններուն համար, առասպելը հիմնաւորուած ճշմար-
տութիւն մը դարձաւ: Անոնք իրենց կենդանի աչքերով
տեսան այն տղան, որ անսաստել յանդգնած էր աստ-
ուածներու կամքին՝ եւ «պատուխաւում» էր անոնց-
մէ...:



ՆԱԽԱՃԱՇԷՆ ԱՌԱՋ

Յուլիսի պայծառ, ըսել է վայրագ առաւօտ մըն ալ
ահա: Եւ ահա չոր կանչը չորս շեփորներուն, որ կը փըշ-
րուի ձիթենիներու սապատներուն դէմ ճաթած քրքիջով
մը:

«Դուք ապո՛ւշ, անօթի կմախքներ, մարդանքի՛...»:

Մինչ անդին՝ վերի եւ ստորին պալատներուն ետեւ,
ընդարձակ եւ անհարթ փորձադաշտը խիճերով բորոտ
էր կոնակը արեւին պարզած՝ կը տաքնայ ու կ'եռայ մեր
բոպիկ ոտքերուն համար: Հիւանդ այդ սրունքներէն եր-
կուքը դողացին ու կքեցան երկրորդ շարքին վրայ:

Գրկեցինք անոնց աէրը:— Ի՞նչ ունիս, Պօղոս:

— Սուրէ՛ն եղբայր, փորս բան մը կ'ըլլայ, ոտքերս
կ'այրին, Սուրէ՛ն եղբայր... անօթի կը մարի՛մ, չեմ
կրնար կայնիլ ալ...

— Տղա՛ք, չըջան շինեցէք շուտ մը:

Հեռուէն՝ ալիք բացաւ սուլիչին սպառնալիքը:

— Սուրէ՛ն եղբայր, Չաղալօֆը կուգայ, զիս պիտի
սասկեցնէ:

Շապիկիս ձախ դրսանին երկնցաւ ձեռքս եւ պզտիկ
դմելի մը հանելով՝ շիտկեց անոր սուր բերանը: Ձեռքս
այդ դմելին դարկաւ Պօղոսի ներբանի կաշիին եւ նուրբ
չրթունքաձեւ ձեղքուածքէն արիւնը մեղեխիկէ կարմիր
հատիկներ հոսեցուց դարվար: Մեզ չըջանալող մարմին-
ներու պատը սարսուց եւ աչքերը թարթեցին խոնաւ:

— Դանակդ պահէ՛, Սուրէ՛ն, եկա՛ւ. դուք ալ տե-
ղերնիդ, տղա՛ք:

Եւ խմբապետ Նորայր դիմաւորեց անոր թրքերէն աղաղակը .

— Հէ՛յ, հէ՛յ, Էֆէնտիներ, ի՞նչ է այս խնջոյքը :

Զինուորական բարեւոյժ մը Նորայր թո՛թովեց .

— Միւսիւ Չաղալօֆ, Պօղոս... ապակիի վրայ կոխեր է եւ ոտքին արիւնը չի դադրիր, կարծեմ...

— Թող երթայ խնամուի, դուք շարունակեցէ՛ք, հայտէ՛, քէմպէլ անասուններ :

— Տասնապետ Սուրէն, տղադ Հեռացո՛ւր, հրամայեց խմբապետը, յետոյ՝ պատրաստ, — հի՛նգ-վե՛ց-եօ՛թը-ո՛ւթը՝ մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, — մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս...

Ու խումբը շարունակեց տատանիլ թիւերու հնչիւններուն հետ :

* * *

— Ի՞նչ ունի այս սղտիկ աղուոր մանչուկը :

— Օրիորդ, եթէ ան ձեր կէս մատ հաստ հացի շերտերէն հատ մը տաք իրեն, այն ատեն կ'ըսեմ ձեզի թէ ոտքին տակ ապակի մտաւ :

— Հա՞, հասրա ատիկա մեզի արդիւրեւած է նէ՛... իրա՞ւ, մարդու չէ՞ք ըսեր. աղէկ, առէք նայիմ մէյ մէկ հատ... հիմա՛, հոս կերէք... դուն չե՞ս ուղեր, ինչո՞ւ, կո՞ւշտ ես :

— Ձէ՛, կուշտ չեմ, օրիորդ, բայց թող երկուքն ալ Պօղոսը ուտէ, ան չըլմանար. արդէն ոտքն ալ սլտի ցաւցնէք :

— Ես իրեն հատ մըն ալ կուտամ, դուն ա՛ն աս... հա՛, հա՛, կուտամ, դուն ասիկա առ կ'ըսեմ :

Եւ օրիորդը իր ձեռքերը դրաւ մեր խոզուած դլուխներուն ու ծպտեցաւ : Ապա դարձաւ Պօղոսին .

— Վերցուր նայիմ ոտքդ. օ՛, ի՞նչ է աս... սո՞ւտ ալ կը խօսիք, ես չէի գիտեր թէ դուք ձեր մեծ քոյրիկը կը խարէք... ասիկա ապակիի կտրուածք չէ. ինչո՞ւ կը խարէք ինծի. ըսէ նայի՛մ, Պօղոսի՛կ, աս ինտո՞ր եղաւ...

— Օրիորդ, Սուրէն եղբայրը դիտէ...

Այն ատեն ձայնս, մօտեցող լացէն դողահար, պատմեց զմեղիքն վատութիւնը :

— Ի՛նչպէս, որպէս զի մարդանք չընէ, դանակով այս չօմուխին ո՞տքը ծակեցիր, անխիղճ տղայ, չամչցա՞ր դուն քեզմէ, չմեղքցա՞ր աս պէպէ՛ք :

— Ձէ՛, օրիորդ, անոր ատանկ բաներ մ'ըսեր, օրիորդ... Պօղոս ցատկեց սեղանէն վար ու կախուեցաւ հիւանդապուհին ճերմակ գոգնոցէն... Օրիորդ, — անոր ոտքերն ու ձայնը սկսան լալ — դուն չես գիտեր, դուն չես ճանչնար Չաղալօֆը : Անոր մատները երկաթի պէս են : Անոր դարկած տեղը շարաթ մը կասուտ կը մնայ, օրիորդ, Սուրէն եղբայրը ինծի ազատելու համար կըտրեց ոտքս... Սուրէն եղբայրը մեզ բոլորս ալ կը սիրէ... չա՛տ կը սիրէ... Սուրէն եղբայրը մեր բոլորիս տեղը կը կուռի, բոլորիս տեղը ի՛նք ծեծ կ'ուտէ... բոլոր սղտիկ տղաքը Սուրէն եղբայրին տասնեակին մէջ դալ կ'ուզեն, բայց...

Ճերմակ քոյրիկը դրկեց Պօղոսն ու նստեցուց սեղանին վրայ, վայելակեց :

Նոյն պահուն, ճանճ հալածող կատուի մը պէս ներս խուժեց Յակոբ, Արիսի ձեռքէն բռնած :

— Ռուսացած Յոյնը ա՛յր խառնեց նորէն. տղուն անանկ մը իջեցուց որ, քանի մը քայլ անդին գլորեց : Գըլուխը քարի դպեր է : Օրիորդ, հաճէ բան մը քսել սըտեղ : Յետոյ դարձաւ ինծի .

— Պօղոսդ ի՞նչ ունի, Սուրէն :

Աչքերս սեւեւեցի տախտակամածի այն մասին, ուր Պօղոսի ոտքին ճեղքուածքը պարարտ միջակէտներ էր չիննր վարդադոյն արիւնէ մեղանով :

— Հա՛... զմեղիք սկսեր է կարդին դործ տեսնել. քանի՞ երրորդն է ասիկա, բայց նայէ որ չընտուի՞ս...

Օրիորդին դարմացած նայուածքը մօտեցաւ ինծի : Մատնաչափ դանակիս արկածներուն այսքան ընդհանրացած ըլլալն էր որ զինք չիթթեց թերեւս : Ու մինչ չրթները կը բացուէին խթանուած ապշութիւն մը պատմելու՝ կրցան միայն ըսել .

— Բայց ինչո՞ւ Չաղալօֆ կը չարչարէ հայ տղաքը:

— Իշտէ հոտ է թաղուած իշուն գլուխը, օրիորդ, ատկէ կը հոտի այդ խարդախ աղուէսին խորամանկութիւնը: Ինչո՞ւ կը ծեծէ հայ տղաքը, ինչո՞ւ անօթի կը պահէ զանոնք, ինչո՞ւ մտրակել կուտայ չըպլախցնելով: Բայց պարզ է, չէ՞, Բրօֆ. Խաչատուրեանի բորոտ մօրուքին պէս պարզ ու մաքուր է քու «ինչո՞ւ»-իդ պատասխանը. — Չաղալօֆ շա՛տ կը սիրէ մեզ, շա՛տ կը սիրէ հայ տղաքը, իշտէ անոր համար է որ իր կատղած ծնօտները կիւլէշի կը բռնուին արգելելու զինք, որ մենէ մէկը խեղդելու չափ առաջ չերթայ իր սէրին մէջ... Մեր մէկ վարժապետն ալ անանկ կ'ըսէ, — մարդ իր սիրածը կը պատժապետն ալ անանկ կ'ըսէ: Եա՛, մեզ այդպէս չխածա՞ւ Ամերիկացի պատուելին ալ. «—Սիրելի՛ր դաւակներս... ծառէն տերեւ մը չի շարժիր առանց ամենակարող Աստուծոյ հրամանին... սիրելի՛ր դաւակներս... դուք հը պարասցէք եւ ցնծացէք ձեր հայրերուն եւ մայրերուն նախանձելի ճակատագիրներուն համար... սիրելի՛ր դաւակներս... ամենաբարին Աստուած դթաց ձեզի եւ ձեզ արժանի տեսաւ իր սիրոյն եւ իբրեւ ազացոյց՝ ձեր հայրերը նահատակել տուաւ հեթանոսներու ձեռքերով եւ ձեր մայրերն ալ անապատներն ու հարէմները առաջնորդեց: Այսպէս՝ արդարն Աստուծոյ անխմանալի կամքին կատարումով, անոնք սրբուեցան իրենց աշխարհային մեղքերէն եւ հասան յաւիտենական կեանքի փառաւոր սեմին... սիրելի՛ր դաւակներս... Իր անսպառ ողորմութիւնը այսպէս ձեր վրայ թափելով, ամենագէտն Աստուած հաճեցաւ փորձել ձեզ, իր ամենասիրելիները, ձեր հաւատքին չափը գիտնալու եւ ձեզ արքայութեան պատրաստելու համար...»: Քարոզի այս կէտին էր որ լսեցինք հեծկլտուքի նմանող ճիչը, — «ատա՛նկ, հա՞», ու նայեցանք ետեւ: Մեր Միհրանն էր: Ձեռքերն ու մարմինը կը ցնցուէին այնքան սաստկօրէն, որ կարծես Դեկտեմբերի առտու մըն է եւ արտաքնոցին լեցուած խոշոր ամանները քաշքշէին մեր փորած փոսերուն մէջ պարպելու կը տանինք: Անա՛նկ կը դողար: Եւ պայթեցաւ մէ-

կէն արցունքով եւ դայրոյթով.

— Պատուելի՛, քու հողիդ որդնոտած դիակ մըն է, որուն դարչահոտութենէն մողէսները, կարիճները եւ օձերն անգամ կը թունաւորուին: Պատուելի՛, եթէ քու այդ Աստուածդ ըսածիդ պէս կար, եւ մեր հայրերուն, մայրերուն եւ մեր տեսածներն ու ասրածները տեսաւ ու չարգիլեց, պատուելի՛, այդ քու Աստուածդ աշխարհի ամէնէն կատաղի, ամէնէն բարբարոս, ամէնէն ճիւղալային արարածն է, արարչադորձութիւնը պղծող քու հրէշային նախատիպդ է:

Յակոր աւարտեց ձեռքերու, դէմքի եւ ձայնի ուժգին խաղերով արտասանուած իր երկար ճառը եւ ծիծաղեցաւ: Ցաւազին պարտութեան եւ զսպուած բարկութեան բախումին շառաչն էր այդ քրքրիչը, սուր եւ խուլ եւ հընչուն եւ խոնաւ...

— Իշտէ՛ ասանկ, օրիորդ: Չաղալօֆ օղտուեցաւ Միհրանի տկարութենէն եւ շարժմը բանտարկեց զայն, միայն անօթութիւն ու ծեծ տալով: Փոխ վրէժ էր: Անցեալ տարի, երբ դեռ չափահաս որբերը չէին ճամբուած, բոլոր կոիւններէն յոյն աղաքն էին որ կը նահանջէին պատուոտած դուխներով: Մեր բոլոր դորձերը կը մատնէին, կը ստեղծէին վէճեր իրենց ուսուցիչներուն թելադրութեամբ: Քորֆուն Յունաստանի կը պատկանի, մենք դաղթական ենք իրենց երկրին մէջ... ասա՛նկ բաներ... եւ Չաղալօֆ այն ատեն կը կարեկցէր մեզ եւ կը պարսաւէր յոյները: Հիմա՞ ինչո՞ւ կը չարչարէ հայ տղաքը, կը հարցնէք: Հիմա միայն չօլուխ-չօնուխ մնացինք, ալ չի վախնար այս «Խլլոտ անվարտիններէն»: Տախա Մայիս Մէկի կատաղութիւնն ալ կայ վրան: Այդ օրը մերժեցինք դասարան երթալ: Ըսինք թէ մեր հայրերը գելազցի մարդիկ էին եւ մենք կ'ուզենք յարգել Աշխատանքին եւ Աշխատաւորին տօնը: Ձիթենիի ճիւղերէ պսակներ հիւսեցինք եւ կախեցինք մեր ննջարաններու պատուհաններէն: Փրփրեցաւ Չաղալօֆ: Ի՞նչ համարձակութիւն այս մատմը «իիճերուն» քով: Ինք որ խոստացեր էր տնօրէնին զանոնք «կակուղցնե՛լ»: Բայց ֆէրէզէ եղաւ աւանակը:

Աչքերը ուռեցուց, ճաղատ դուրսը փարտեց մանուկներուն վրայ, սարսափեցուց, լացուց զանոնք: Իսկ Մայիսը կը խնդար, արեւը տաք էր եւ չորցուց բոլոր թաց երեսները: Իշտէ Չաղալօֆին քէլը անկէ զըզմիշ եղաւ: Փորձանք է դարձեր հիմա: Ա՛, բայց ան չի ճանչնար որբերը: Չի՛ դիտեր թէ մենք վարժուած չենք իրեն պէս վարնոց բռնակալներու, որոնք հին ու ճղճիմ քէները ութըսասը տարեկան անտէր տղոց կողերէն եւ գլուխներէն կ'առնեն: Պիտի թօթուրէնք օր մը երբ համբերութիւննիս լենայ: Եւ չեմ կարծեր որ այդ օրը հաճելի ըլլայ իրեն...:

* * *

... Յուլիսի առաւօտ մըն էր, տաք ու պայծառ: Հեռուէն՝ չորս փողերուն հրաւէրը քահուեցաւ նորէն: Եւ ահա ճամբաներուն աւաղը կարծես կը խշրտայ անոր թաւալումին հետ: Մինչ տժգոյն քաքաօն կը հոսի դաւաթներուն մէջ փողահարներուն երգին ձուլուած: Այդ երգը կանչն էր նախաճաշին:

- Քալէ՛, Սուրէ՛ն, տղադ վերցուր երթանք:
- Նայէ որ ուրիշ անգամ դանակդ չդործածես, կըրնայ թունաւորում առաջ բերել, վերջը դէշ կ'ըլլայ, դիտել տուաւ օրիորդը:
- Ի՞նչ ընեմ, մեծ քոյրիկ, թոթովեցի, այդ դալիք կամ չդալիք հետեւանքները մտքէս անգամ չեն անցնիր, երբ Չաղալօֆին երկաթէ ձեռնոց անցուցած թեւերը կը տեսնեմ ասոնց գլուխներուն վրայ...
- Իջանք դէպի ճաշատահները, որոնք Վիլհէլմ Բ.ի գլխուորական ախոռներն էին երբեմն:

— Այսօրուան «արշաւը» Յունարէնի եւ Անգլիերէնի պահերուն պիտի ընենք: Պատրաստ եղիր պէտքարաններուն ետեւ: Նարինջի եւ «նոր աշխարհի» պիտի երթանք: Վերջը կը խօսինք չբռնուելու կամ բռնուողը աղատելու ձեւերուն վրայ: Յը՛...:

Գ.

ՃԵՐՄԱԿ ԳՏԱԿԸ

Անցեալ շաբաթ տնօրէնը յայտարարեց, թուրքերէն լեզուով եւ անգլիերէն ծեփծեփուն արտասանութեամբ, թէ խստօրէն — ժուժկալ էր ան բառերուն հետ — խըստօրէն պիտի պատժուին գողութիւն ընողները: Երեւակայելի բոլոր զգուշութիւններուն հակառակ յայտնուած էր, որ որբեր օձառ, կօշիկ, պաքանիա — բուրդէ կամ կտորէ վերմակ — կը փախցնէին շէնքերուն ետեւի բացաստանէն եւ կը ծախէին յոյն գիւղացիներուն կամ կը փոխանակէին նարնջի, խնձորի, թուզի եւ «նոր աշխարհի» հետ:

Նաեւ, չըջակայ հողատէրներէն պատգամաւորութիւն մը եկած էր բողոքի եւ 60,000 տրախմիի հատուցման պահանջով: Կը պոռային թէ որբերը անխնայօրէն կը մերկացնէին իրենց պողատու ծառերը եւ ճիւղերն ալ առանց խղճահարութեան կը կտորտէին:

Այս բոլորը ճիշտ էին եթէ նկատի չառնուի այն թեթեւ վրիպակը, որ վերագրելի է յոյն տեսլապաշտութեան, եւ ամէն դէպք բաղմապատկելով պատկերելու ճկունութիւնը կուտայ իրենց: Վնասներու գումարը 600 տրախմին չէր անցներ հաւանաբար:

Բայց տնօրէնը զոհացուցեր էր զանոնք: Այսինքն պատուիրեր էր, որ յանցաւորները բռնեն եւ անոնց անունները առնելով իրեն բերեն:

Եւ երէկ եկան քանի մը անուններ:

* * *

«— Այնքան պիտի ուտէք որ անօթի չսատկիք...»: Եղած էր պատասխանը Նպաստամատոյցի Գործուրբանոցներու ընդհ. տեսուչին: Այդպէս ըսաւ՝ թերեւս ձանձրացած, զայրացած սնունդի նուազութենէն դան-

դատող ասերա՛խտ տղոց անըմբռնելի յամառութենէն :

Բայց մենք, ասերախտ տղաք, դտանք որ կարծուածին չափ հաճելի բան չէր քաղցէն սատկիլ փորձելը : Անոր համար էր որ կը ձեռնարկէինք մեր «արչաւներուն» դէպի դրացի եւ հեռաւոր պարտէզներ : Անոր համար էր, որ աւելի փոքրերն ու երկչոտները սկսան կտոր-կտոր դողնալ իրենց ընկերներուն գոյքերը եւ տանիլ վաճառքի :

Եւ անոր համար էր, որ քանի մը անուններ եկան երէկ :

Կէսօրուայ ճաշին էինք նստեր փոքրերու սրահին մէջ : Գեռ հին, ծանօթ քաղցրութեան վերջին մնացորդները կը ծփային Չագալօֆի հիւսիսէ ժպտներուն ստուերին տակ եւ դեռ հետադայի անբացատրելի ատելութեան կանանչը չէր կլաներ բաց կապոյտը անոր նայուածքին : Փսիսուք մը դուրս կանչեց զինք : Վայրկեան մը վերջ հինգ յոյն դիւղացիներու ոտնաձայներուն հետ ներս վերադարձաւ, ժանիքաւոր դառնութեան առաջին խոժոռումին շուքով :

— Որոնց որ անունները կանչեմ, պոռաց թուրքերէն, թող ոտքի ելլեն անմիջապէս : Եւ թուղթի կտոր մը առնելով նորեկներէն մէկէն՝ կարգաց ուրախ խստութեամբ .

«— Փետրուա՛ր Շարաթեա՛ն», ոտքի՛, ո՛վ որ է, կրկնեց :

Աննչմարելի ակնարկներով իրարու նայեցանք մենք :

— Երկու տարի կեցայ Եէտի-Գուլէի որբանոցը, խենթանոցին կից, բայց այնքան չսարսախցայ որ շիտակ անունս տայի ասանկ ատեն . . . : Եւ Արամ պնակը վերցուց բերնին, կերակուրը խմելու :— Խայտառակնէ՛ր, դժոխքը կը կործանէ՞ր եթէ քանի մը ոսպ ձգէին սաւոր մէջ : Պարէ մենք ալ կը գլխանայինք քի ո՛սպ է կերածնիս . . .

Մինչ Չագալօֆ առաջին թուղթը յանձնելէ վերջ տիրոջ, երկրորդ թուղթը կ'առնէր ուրիշէ մը :

— Լռեցէ՛ք եւ լսեցէ՛ք բոլորդ, պոռաց, եւ կանչեց .

«— Քուռա՛կ Աւանակեա՛ն», ոտքի՛, ո՛վ որ է :

Երկուդէ կարատուած քրքիջներու գրեթէ համը շշուռն մը սողաց սեղանէ սեղան : Լոռութիւնը կրկին պաշարեց Չագալօֆի շփոթած ձայնը :

— Իշտէ ոտքի ես եա՛, ալ վո՞վ կը փնտռես, քըրթմընջեց Արամ :

— Ասոնք ճանչցող չկա՞յ ձեր մէջ . . .

— Կրնան մեծերուն ճաշարանը ըլլալ այդ տղաքը, փորձեց օգնել յոյն հսկիչը Չագալօֆին :

Իսկ ան ամէն անկիւնէ լսուելու մտահոգութեամբ, ուռեցուց ձայնին արձագանգները երրորդ անունին վերայ .

«— Վայ՛ Բէռլսան . . .»

Չաւարտեց : Ո՛ւրիշ, կատաղութիւնը յանկարծօրէն նետուեցաւ ու ծալապատիկ բաղմեցաւ անոր աչքերուն մէջ : Անդրադարձաւ եւ կարծես զգաց նաեւ խաղը նախորդներուն : Յօնքերը կախուեցան վար եւ բիրերը իրենց խրամներէն ծանրօրէն շրջեցան մեր նստարաններու երկայնքին, լուսարձակովը մութ կանաչ ցոլքերու : Ստորին շուրթը ցցուեցաւ վեր եւ վայրկեանի մը իր անշարժութիւնը ճեղքեց արճիճէ ձայնով .

— Ասոր տէրը պիտի զղջայ իր ըրած կատակին համար . . . եթէ դտնեմ : Եւ յամբաքայլ ելաւ դուրս խաբուած այցելուներուն հետ :

— Ծօ՛, հայրենին մէջ չդտա՞ր, իլլէի տաճկերէն բա՞ն մը պիտի քէիք անունիդ տեղ, դարձաւ Արամ Յակորին :

— Լակտը անա՛նկ առաջարկութիւն մը ըրաւ որ, ատկէ նէ՛ լաւը դտայ, նէ՛ դէշը . . . :

* * *

Բայց մեր «արչաւները» չաղուեցաւ, չվիրաւորուեցաւ այս դէպքէն : Գացինք ու վերադարձանք լեցուն գրպաններով եւ ծոցերով : Նստանք աւարի բաշխումին, մինչ Գուրդէն վառ պատկերներով կը թարմացնէր մանր միջադէպը զոր ունեցանք .

— Չտեսնուած փան էր, ծօ՛, քիտէք եա, սովորա-
կանին պէս սոսքալի չարթ մը կուտայի կոր խնցորեներուն :
Մէյ մ'ալ նայիս ի՞նչ տեսնամ . բայց քիտէ՞ք ինտոր վեր
չուլուեցայ ծառէն : Սանկ կակո՛ւղ բան մըն էր : Սիմո-
նին պէս աղու՛որ մը պլլուեցայ եւ սղմելէն, կամթելէն,
պաքնելէն ելայ վեր... քիտէ՞ք Սիմոնը ինտոր կը փաթ-
թուի, ան պալյնուղու հիւանդապահուհիին հարցուցէք,
հա՛, հա՛, հա՛... եւ Գուրգէն դարկաւ դետին ճերմակ
դտակ մը, որ մինչեւ այն ատեն կը ճմլէր արեւրուն մէջ :

— Գեղի տասն անգամ ըսեր եմ որ, բան մը կ'առնես
նէ, լուր տուր : Առտուընէ ի վեր ես ատ դլխարկս կը
փնտռեմ, — եւ Տիգրան ցատկելով տեղէն, վերցուց դը-
տակը, թօթուեց, դարկաւ ծունկին եւ անցուց դլուիւր :

— Ծօ՛ թուն անցեալ կիրակի կօշիկներս եւ պլուզս
հաքար քաղաք քացիր նէ, ինծի լուր տուի՞ր... :

— Աղէկ, աղէկ, միջամտեց Արամ՝ ատ պօշպօղագու-
քեմէդ վաղ անցիր տէ ըսելիքդ լմնցուր, երկու ժամ է
բան մը պիտի պատմես՝ տախա սկսած տեղդ ես :

— Ծօ իշտէ ծառին վրայէն «պառպայիմ» վազելը
տեսածիս պէս՝ պրուացի, նետուեցայ վար եւ կծիկինիս
դրինք, ալ ի՞նչ... :

Փողերուն կանչը անսովոր այդ ժամուն, ծալլեց
Գուրգէնի լեզուն եւ մեծ անակնկալի մը աւետիսը կամ
դոյժը տարադնեց ձիթենիներու դոց կանաչին վրայ :

— Ա՞ն ինչ է, հաւաքման փո՞ղ այս ատենը, վազե-
ցէ՛ք, տղաք, թերեւս իրիկուան ճաշին գէյքուռն մը աւելի
տալերնին պիտի յայտարարեն . — եւ Յակօբ անմիջապէս
խնձորները թաղեց անկողնին ծալքերուն մէջ ու ցատկեց
դուրս : Անխոյժ՝ բոլորս հետեւեցանք իրեն :

... Տնօրէնը անցաւ ամբողջ շարքի երկայնքին : Հինդ
վեց հարիւր դլուխներու շղթայ մըն էր այդ շարքը : Վե-
րադարձին պահ մը յամեցաւ Տիգրանի առջեւ, բան մը
փափսաց ժպիտով եւ յետոյ հրամայեց հնչեցնել հան-
գիստի փողը :

Տղաք խուժեցին Տիգրանի վրայ :

— Չարկի՛ր նորէն, ծօ... նորէն չնորհի արժանա-
ցար... ի՞նչ ըրիր... ի՞նչ ըսաւ... :

— Գրասենեակ կանչեց երկու ժամէն : Բայց չսիրեցի
իր խնդուքը : Ամպոտ կ'երեւէր : Եւ Տիգրան փորձեց ծի-
ծաղի մը ուրուագիծը բերել դէմքին :

— Ի՞նչ ամպ, ի՞նչ բան, եղբայր, երեք օր է ճգնա-
ւորի կեանք կ'սպրիս եւ հոս եթէ յանցանքիդ օրը չպատ-
ժուիս, ալ վախ չկայ : Հիմա վազենք «դերի» մը խա-
ղանք :

* * *

Թիւ 58-ը մեր խմբակին ննջասենեակն էր այդ շրջա-
նին : Անոր մէջէն կը բացուէր դուռը տնօրէնի դրասենեա-
կին, ուր կը դտնուի Տիգրան տասը վայրկեանէ ի վեր :
Մենք կը քրթմնջենք, կը կատակենք, կը բամբասենք
դուրսը եւ անհամբեր կը սպասենք տեսակցութեան ար-
դիւնքին :

— Ինտո՞ր ալ ամէնուն աչքը կը մտնէ, բախտաւոր է
լակոտը... :

— Սո՛ւս... :

Մենք ճանչցանք յատակ բղիւնն ու շառաչիւնը որ
պայթեցաւ ներսէն : Գիտէինք թէ այդպէ՛ս կը դալար-
ուէին կաշիէ մտրակները ծառերու կանաչ կեղեւին :
Ճանչցանք նաեւ «բախտաւոր լակոտ»ին զսպուած հծծիւ-
նը, որ յաջորդեց անոր : Յետոյ կրկնուեցաւ, յետոյ նո-
րէն կրկնուեցաւ, յետոյ նորէն, յետոյ նորէն, յետոյ
նորէն կրկնուեցաւ... :

— Ի՞նչ է ասիկա :

— Ինչո՞ւ ասիկա :

— Ինչո՞ւ, ծօ՛, ինչո՞ւ, ի՞նչ ըրաւ ան... :

Եւ դէպի դուռը խոյացաւ Գուրգէն : Հագիւ կրցանք
հասնիլ եւ զրկել զինք : Հանեցինք միջանցք : Ի՞նչպէս կը
յորդորէինք, ի՞նչպէս կրնայինք միխիթարել... :

— Ինչո՞ւ կը ծեծէ, եղբա՛յր, ինչո՞ւ, ի՞նչ իրաւուն-
քով... սրիկանե՛ր, անտէ՛ր դտեր են... պատառ մը հաց
կուտան տէյի իրաւո՞ւնը ունին սատկեցնելու... :

Սորունկէն, խորունկէն յուղուած, յորձանք առած հեկեկանք մը իր թաւալումին տակ փշրեց Գուրգէնի ձայնը: Մէկ գծի տարափով՝ արցունքը կ'իջնէր անոր չրթներու անկիւններուն, ուրկէ ան կը լիզէր անոր տաք ու աղի կաթիլները եւ կը ճմլէր, կը ճզմէր, կը բզբտէր զանոնք ակունքերուն տակ, լեզուին վրայ, կոկորդին մէջ...:

Յետոյ, մէկէն դառնալով մեզի.

— Խե՞նթ էք, ի՞նչ էք, ծօ՛, փոլորդ ալ կեցեր չօֆուխներու պէս կուլաք... ըսաւ եւ մտաւ ննջարան:

... Իրիկունը ի՞նչպէս սպրդեցաւ մեր պատուհաններէն ներս: Ե՞րբ հրաժեշտ տուաւ արեւը: Չղիտցանք նոյն իսկ թէ ի՞նչ կերանք ընթրիքին: Յաւէն ու տրամութեան հաւմուեր էր մեր գիտակցութիւնը եւ մեր լեզուները թանձրացեր, ծանրացեր էին այնքա՛ն, այնքա՛ն:

Տիգրանի մարմինը կը նմանէր մանուկի մը ձեռքէն առնուած թուղթի կտորի մը, որուն վրայ ան մատիտ է խաղցուցեր քմահաճ անզգուշութեամբ: Բայց աննշան տարբերութիւն մը կար թերեւս խաղիւղուած, ճմլրթկուած թուղթի կտորին եւ Տիգրանի մարմնին միջեւ: Բոսոր. էին ասոր գիծերը եւ տեղ-տեղ ճեղքրտած մորթէն քանի մը կաթիլ արիւն սահած էր դուրս: Բայց ան կը փորձէր խնդալ մեզի համար: Կը խնդար, որպէս զի չլանք մենք: Կը խնդար... եւ ամէն շարժումի մեզմ, անլսելի հծծիւն մը կը խածնէր գաղտնի:

Պատուիրեց Յակոբին որ երթայ այրէ ճերմակ դըտակը: Գուրգէն յափշտակեց զայն անսանձ զայրոյթով.

— Ե՛ս կը վառեմ, ես մոխիր կը թարցնեմ. ես կտոր-կտոր-կտոր-կտոր կ'ընեմ այս մատնիչ գտակը, աս խարթախ գտակը... աս... աս... աս... հեծկտուքէն խեղդուեցաւ ճիչը եւ ինք նետուեցաւ դուրս:

Անզգա՛մ գտակ:

Յոյն գիւղացին զայն տեսեր էր Գուրգէնի գլուխը, ծառին վրայ: Ու վաղեր էր տնօրէնին: Եւ միակ ճերմակ գտակը որբանոցին մէջ, կը պատկանէր Տիգրանի:

Քունի շեփորը այդ իրիկուն լացաւ կարծես:

Գուրգէն գրպանէն հանեց ընթրիքի իր բաժինը եւ երկարեց Տիգրանի.

— Կե՛ր ասիկա:

Ան մերժեց.

— Մ'ինչեւ առտու անօթի՞ պիտի կենաս, դո՛ւն կեր:

Յամառեցաւ միւսը.

— Քեզի՞ ինչ, կե՛ր կ'ըսեմ ես:

Սակայն չլսելու զարկաւ Տիգրան եւ այս պատճառ եղաւ որ Գուրգէն այլեւս անզուսպ իր բողոքը պոռայ.

— Իսկ ինչո՞ւ չըսիր տնօրէնին թէ ջլխարկդ ե՛ս քործածեր էի, այո՛, փոլորս ալ կ'ուզէինք քիտնալ թէ ինչո՞ւ չըսիր...:

Տիգրան ծիծաղեցաւ. յետոյ աղուոր աչքերուն բարի ու խաղաղ նայուածքը վերցուց Գուրգէնին եւ ըսաւ անտարբեր.

— Երկուքէս մէկը պիտի ուտէր ծեծը, չէ՞, ուրեմն ի՞նչ տարբերութիւն կ'ընէ թէ ո՛վ կերու:

Միւսը խածաւ իր ընթրիքին հացը արցունքէն աղի եւ անկողինն ու վերմակը նետեց անորինին վրայ եւ յարդարեց: Թող կակուղ ըլլայ որ չցաւին անոր վէրքերը: Եւ թող լաւ ծածկուի որ չմտն մարմնոյն բոսոր-մանիշակադոյն օղակները:

Գուրգէն պառկեցաւ մեզմէ մէկուն քով:

Խժղժօրէն երկար եղաւ գիշերը: Կարծես մուրթ, անթափանց խաւարը վրէժ կը լուծէր մեզմէ: Մեր երկու ընկերները վրդովեցին գիշերին հանդիստը եւ ան բարկացած՝ երկարօրէն, երկարօրէն քալեց մեր ճակատներուն վրայէն ու կոխկրտեց, ու քաշկրտեց ու ոտնահարեց մեզ անդադար, անդադար:

Մեր ընկերներէն մին մէկ կողմէն միւսը դառնալով միշտ եւ հծծելով եւ հառաչելով վիրաւորեց գիշերը: Մեր ընկերներէն միւսը իր հեծեծանքով, իր խղճահար եւ անձնասէ՛ր լացով խռովեց գիշերին վեհափառ անդորրը եւ գիշերը բարկացած եւ գիշերը զայրացած՝ եղաւ դաժանօրէն, դաժանօրէն երկար եւ կոխկրտեց, եւ քաշկրտեց, եւ ոտնահարեց մեզ անդադար, անդադար...:

Դ.

ՄԻՆՉ ՇՈԳԵՆԱԻԸ ԿԸ ՍՈՒԼԷՐ...

Սոչոր բայց ապուշ իշամեղուն, թեւերը լայն տա-
 րածած, բարկութեամբ յարձակեցաւ լուսամուտին վը-
 րայ: Սակայն երբ տեսաւ որ չիչրուեցաւ ապակին՝ ճան-
 կըրտեց, բզզաց ու նահանջեց: Յետոյ, աւելի յուսահատ
 եւ խօլական դայրոյթով մը նետուեցաւ յաջորդ պատու-
 հանին: Եւ երբ անբացատրելի յամառութեամբ մը դի-
 մադրեց միւսին ապակին ալ, խոչոր բայց ապուշ իշա-
 մեղուն ոտքերով, գլուխով եւ թաթերով ծեծեց զայն եւ
 արշաւեց դէպի ատաստաղ ու սանձակոտոր բղղկւնով մը
 սպանեաց, լըջորէն սպառնաց:

Բարձրացան ցից ականջները տեսուչին եւ աջ ձեռքը
 ինքնարեւարտ երկարեցաւ դրասեղանի ոտքին կրթնած
 ճիւղոտին: Բայց չհասած՝ ինկաւ ծունկին, պարապ: Եւ
 հաստ ծիծաղի մը արձագանգները, փչուր-փչուր խոր-
 տակուեցան սենեակին սրտերուն դէմ:

— Խեղճ ըմբոստ բզկզ. ես ալ կարծեցի թէ ան շան
 ձագերէն մէկն է նորէն: Բայց ի՞նչ հերոսական է իր սլայ-
 քարը աղատութեան համար:

Եւ թաւ ու խոսրոտ ձայնով մը կերկերեց.

«Մերք կուում է, մերք բարձրանում քաջ ֆէտան,
 Եգակի է, պատմութեան մէջ, արշաւանքի տեսարան»:

— Արշաւանքի եղակի տեսարա՞ն, իրաւ ալ եզա-
 կի...:

Եւ հզօր խնդուքի մը ալիքները թաւալեցան իր վը-
 րայ: Ու թէեւ ինք կրցաւ դիմադրել անոնց եւ արդիւնել
 զանոնք բոլորովին զինք կլանելէ՝ սակայն թօթուեցան

ուսերը եւ կոկորդը բռնուեցաւ ծիծաղի յորդ հոսանքով
 մը: Ու յանկարծ, քրքիջի անսանձ պատառ մը սողաց ալ-
 ոաներու ամբարիակ վանդակներէն դուրս եւ պայթեցաւ,
 աղմուկով պայթեցաւ.

— Ի՛նչ ալ պօշպօղագ ու սարսախ մարդիկ են եղեր
 մեր կուսակցութեան բանաստեղծները, պէ՛հ, «արշա-
 ւանքի եղակի տեսարա՞ն»... հա՛, հա՛, հա՛...:

Ապա՛ մօտենալով պատուհանին, բացաւ եւ,
 — Թու՛ր, դնա՛, բացադանչեց, — թու՛ր, դնա՛,
 դուն յեղափոխական եւ աղատատենչ անասուն, թու՛ր
 դնա ու վայելէ բնութեան աստուածատուր պարզեւը,
 ազատ ճախրանքդ:

Ու մինչ տեսուչը դո՛հ իր անասնասիրական վեհանձն
 ձեռնարկէն, գլուխը կը շարժէր խորունկցած ժպիտով
 մը, խոչոր բայց ապուշ իշամեղուն կարծես մոռցուած
 բանի մը համար՝ վերադարձաւ, սուբայ ուղղակի դէպի
 տեսուչը եւ իր ծնօտներուն աքցանով ո՛ւժգնօրէն, շատ
 ուժով գտրկաւ անոր կարկոտուն քթի կեօ ծայրին եւ
 աներեւութացաւ ճառագայթի մը սեկիւն մէջ:

— Վա՛յ ապերա՛խտ, գետնաքա՛րչ կենդանի, վա՛յ,
 պոռաց ան, եւ ցուցումատով տրորեց իր անարգուած,
 սրտկառուղղու քիթը:

Եւ երբ, պատուհանը փակելէ առաջ, պատահարաբ
 նայուածքը շրջեց վար՝ հոն, քարէ աստիճաններէն մէ-
 կուն վրայ նստած տեսաւ «շան ձագ»երէն մէկը, որ ոտքը
 դրկած՝ կրունկէն բան մը քաշել կը փորձէր, դէմքի ցա-
 ւադին կծկումներով:

— Ծօ՛, շունշանորդի՛, քեզի չըսի՞ որ խոհանոց եր-
 թաս փաքաքէս մաքրես, հէ՞, հայտէ՛, վազէ՛ նայիմ...:

Տղան ոտքը դետին նետեց դիրկէն: Պահ մը զսպուած
 եւ մէկէն արձակուած ջուրի ցայտքի մը պէս ցատկեց
 վեր եւ սողաց սանդուխներէն դարվար: Քաշկրտուեցաւ
 մինչեւ պատը, կառչեցաւ մէկ ձեռքով անոր, միւսով
 վերցուց վիրաւոր ոտքը եւ ոստոստելէն, թուչկոտելէն
 ինկաւ խոհանոց...:



Ծանօթ սոյլ մը, թաւ ու բեկբեկուն, քարափէն հոսեցաւ որբանոցին բակը եւ ալիք նետեց տեսուչի խցիկին: Պառաւցած բեռնատար շոգենաւէ մը կուգար ան:

Եւ տակաւին շատ սովորական այդ սոյլին վերջին կաթիլները չցամքած՝ ճաշասրահէն հաւաքոյթի դանդակը իր հնչուն հրաւէրը տարածեց մինչեւ մութ ու ծածուկ անկիւնները բոլոր յարկաբաժիններուն:

Ու միայն քանի մը վայրկեան վերջ, ընդարձակ սրահը վտիտ մարմիններու, բարակ պարանոցներու վրայ քարացած մանր ու խուզուած գլուխներու լայն շրջանակ մը կը սեղմէր, որուն կեդրոնը, երկար ու պղտոր ստուերով մը կ'արձանանար բարձր հասակը տեսուչին, ձեռքը ծրար մը թուղթով:

Եւ երբ լուսիւնը, թանձր ու խոժոռ ամպի մը պէս իր շուքն ու դովութիւնը փռեց, անշարժօրէն հանդէսեցուց ճաշատան սեղաններուն վրայ՝ երեքաց տեսուչը:

— Տղա՛ք, մինչեւ հիմա ձրի կերա՛ք, խմեցի՛ք, պառկեցա՛ք: Հիմա կարգը եկած է որ աշխատիք եւ ձեր ճակատին քրտինքով ձեր հացը եփէք: Ձեզմէ առաջ երեք կարաւաններ մեկներ են Գավալա, Տրամա, Սերէզ եւ ուրիշ շրջաններ: Ծխախոտի դործարաններու եւ ազարակներու մէջ տարտղնուած կը դործեն անոնք: Դուք ալ անոնց պէս պիտի ըլլաք: Ձեզի եկած նամակներէն անոնք որ բացի կարդացի, շատ դէշ բաներ կը գրեն: Հարկաւ այստեղի պէս հանգիստ պիտի չըլլաք, բայց Տէր-Ձօրներէն աղէկ է: Հիմա կը կարգամ այսօրուան խումբով դացողներուն անունները. որուն որ կանչեմ, թող անմիջապէս վաղէ դայ քովս, հանդերձատունէն իրեն ծրար մը պիտի նետեն հոս, մէջը պաքանիա մը, շապիկ-վարտիկ մը, պըլուզ մը, թաշկինակ եւ սրբիչ: Ետքը երբոր փարա վաստրկիք՝ աւելի կ'առնէք: Եւ վա՛յ անոր, հասկցա՞ք, վա՛յ անոր որ կ'ուշանայ... տէ՛, ուշադրութեամբ մտիկ ըրէք նայիմ...:

Եւ տեսուչը հաս-հաս քակեց օղակները անուններու շղթային:

Դողահար, անաղմուկ, անմրմունջ կը սողային անունները անոր բամբ, շառաչող ձայնին եղերքէն:

Հանդերձապահները կարգով կը նետէին ծրարները կանչուողներուն եւ ասոնք, իրենց ճակատագիրը չալկած կը սուրային քարափ, պառաւցած բեռնատար շոգենաւը կը սուրային սոյլը անոր, միշտ թաւ ու բեկբեկուն, թաւալեցաւ ճաշասրահի բաց դուռէն ներս եւ խածաւ սպառող համբերութիւնը տեսուչին:

Ան դեռ հաս-հաս կը քակէր օղակները անուններու շղթային:

Բայց յանկարծ հանդոյցի մը անակնկալը ճմլեց իր լեզուն եւ ինք փորձեց արձակել, լուծել դայն.

— Առաքել՛... Առաքել Մա՛-նուկ-եա՛ն...

Երկարեցան բարակ պարանոցները աղոց եւ դալարուեցան մօտեցող սարսափին մատներուն մէջ:

— Ո՞վ է Առաքել Մանուկեանը, ո՞ւր է աս լակուտը...: Անոր ձայնը որոտաց ուժգին, ատելավառ:

Բայց թանձր ու խոժոռ ամպը լուսեան, իջաւ, սահեցաւ առաստաղէն վար եւ գրկեց սրահը իր ստուերով, իր ցուրտով:

— Ծօ՛, անասուններ, ձեզի՛ կ'ըսեմ, չէ՞ք լսեր, ո՞վ է Առաքել Մանուկեանը, ո՞ւր է աս...:

Սակայն քովընտի անկիւնէն, հեղ, երկչոտ փսիսուքի մը հետ, տատանեցաւ գլուխներու անտառակը:

Նեղ կածան մը շինուեցաւ եւ ափ մը մարմին ինկաւ դուրս, որուն թեւերէն կը քաշքշէին ընկերները: Տեսուչը լսեց նոյն իսկ քանի մը կտորուանք անոնց քրթմնջիւններէն:

— Մ՛ըներ, ծօ՛, խենթ մ՛ըլլար... մ՛երթար... շատ բարկացեր է...:

Բայց ափ մը մարմինը յառաջացաւ բուռ-բուռ:

Եւ զոյգ մը աստղերու արծաթէ այն ստուերները, որոնք աժդոյն ցուրբերով կը պլալային տեսուչին աչքե-

րուն խորը, մերկացան իրենց քողերէն, շողացին, վառեցան, դարձան կենդանի կայծեր, դարձան աստղեր բոցարծարծ, դարձան խորտակուող շանթեր:

— Դո՞ւն ես Մանուկ Առաքելեանը:

... Ա... ա... յո, պա...

— Շո՞ւն-շան-որ-դի՛— շան-ձա՛դ... ես երկու ժամ է շունի պէս կը հաջեմ, չե՞ս լսեր, չլսեցի՞ր, հա՞...
Ու բարձրացաւ տեսուչին հսկայ բազուկը եւ կիսաշըրջանակ մը օղակելով օդին մէջ՝ ինկաւ, ծանրօրէն, վայրագօրէն, կատաղօրէն ինկաւ ափ մը մարմնին ձախ այտին: Թաւազլոր՝ ինքն իր վրայ չորս անգամ դարձաւ ափ մը մարմնը առանց հծծիւնի, առանց շիթ մը հեւքի: Հանդերձապահ մը ծրարը նետեց անոր: Ան մէկ ձեռքն ապտակուած երեսին, միւսով զրկեց կապոցը եւ ծունկերով սողաց դուրս եւ երբ ծածկուեցաւ տեսուչին տեսողութենէն՝ ցատկեց ստքի ու սլացաւ քարափ:

Մի՛այն՝ խորունկ դողի մը մեղմ հովը սահելով անցեր էր մանր դուլիներու անտառակին մէջէն...
Եւ հանդոցը լուծուած՝ անուններու շղթային օղակները կը շարունակուէին քակուել հատ-հատ:

* * *

Ծովը, կարծես երկիւղէն կապուած պատկառանքով կը դիտէր իր եղերքին ալեկոծումը: Մանրանկար զինուորներու մանրանկար զօրակոչի մը բազմապատկուած ժխորն ու փոթորիկը կը բզկար հոն, վիթխարի իշամեղուի մը թեւերով: Յաւ, ծիծաղ, արցունք, քրքիջ անհամար ոտքեր հազած՝ անկիւնէ անկիւն կ'արշաւէին եւ աներեւոյթ կտուցներով մեկնողներուն եւ մնացողներուն դէմքերը կը կտցահարէին տխուր կամ դուարթ կամ բռնազբօսիկ ծամածուծներով:

Ափ մը մարմինը իր ապտակուած այտը պահելու համար կապոցը ձախ ուսին բարձած՝ Առաքելը հարցուց անոնց: Ըսին թէ Անգլիական որբանոց դասեր է իր եղբոր վերջին հրաժեշտ մը տալու, հիմա կուգայ:

Եւ ահա Առաքելը, հեռուէն: Աչքերը կը շիթ պլուզին թեւերով: Կը քալէ օրօրուելէն: Կը մօտենայ ճամբուն ալ:

կողմը եղերող պարիսպին եւ կը կրթնի մինչեւ մէջը բարձրացող հաստ պատին: Կը նայի վար, ստորտաին, հոն դռացող ծովին եւ փշրուող, փրփրող ալիքներուն: Յետոյ կը նայի հեռուն, դէմի ափը: Ալպանական մշուշուած եղերքներուն, մինչեւ իրենց կողերը ամպածրար լեռներուն... ու կը մօտենայ, դարձեալ՝ օրօրուելէն, գլուխը կախ, եւ դարձեալ՝ աչքերուն քսելով դոյզ ափերուն կոնակը...:

— Անունդ կարդաց հոն չէիր, քու տեղդ ես դացի եւ դոյքերդ առնելով բերի. վախցայ որ վերջը քեզ կը զրկէ ասոնցմէ:

— Ատ երե՞սդ ինչ է եղեր նորէն...

— Հի՛չ, Պրն. Պէզէզեան շոյեց թեթեւ մը: Անունդ առաջին անգամ կանչելուն չերեւցայ. կը խորհէի թէ ան կողմերը կ'ըլլաս. յետոյ երբ շարժեցայ, արդէն բարկացեր էր, կատողեր էր եւ երբ զիս ալ տեսաւ՝ ա՛լ քեզի շաշըմիշ ըրաւ...

— Ատ սրիկան օր մը գլխուն փորձանք պիտի բերէ: Գիտէ՛ր որ դուն Առաքելը չես եւ նորէն դարկաւ, հա՛...
— Է հա՛, չե՞ս յիշեր որ քանի մը շարաթ առաջ լուացարաններու խումբին մէջ էի: Զեռքերս ճեղքտեցան խողանակին սուր անկիւններէն, մայրիկները մեղքցան եւ ըսին որ շատ պզտիկ եմ պաքանիա եւ սաւան լուալու համար:

— Ի՛նչ է, ան ատենուան վրէժը հիմա՞ լուծեց...

— Է հա՛, երբ Պէզէզեան հայհոյելով զիս լուացքի տաշտին առջեւ հրեց, մայրիկները վերջը ինծի Ամերիկացի տնօրէնին տարին, ան ալ ափերուս նայեցաւ, կանչեց Պէզէզեանը եւ պատուիրեց որ զիս չաչխատցնէ մինչեւ աղէկանս վէրքերը: Իշտէ՛ անկէ քէն պահեց դէմս...:

— Դուն ալ սարսափի պէս ելար դացիը այս քանի մը կտոր քուրջներուն համար, հա՞...
— Խորհեցայ որ ան կողմերը ցուրտ-մուրտ կ'ըլլայ. արդէն բժիշկը ըսաւ որ առողջ չես: Բայց քեզի դէմ ալ ցաւ ունենալուն համար կը զրկէ, դիտե՞ս, կ'ուզէ որ իրեն դերի ըլլանք բոլորս ալ:

— Կը վախնամ որ փոքր եղբայրս ալ չտեսնեմ...
այսքան տարի չարչարուեցանք... միշտ միասին էինք...
հիմա մեզ կը բաժնեն... չեմ դիտեր թէ ալ պիտի տես-
նե՞մ պղտիկ ախրբարս... խեղճը այնպէս կուլար որ...

Եւ Առաքել, դողդղացող իր շրթունքներով կը պաճ-
բերնին մէջ խոչորցող, այրող հեկեկանք մը՝ թաց ու
կարմրած աչքերը դարձուց պառաւցած բեռնատար շողե-
նաւին, միանուազ շառաչիւնով քարափին դէմ ջախ-
ջախուող ալիքներուն եւ Ալպանական մշուշապատ ափե-
րէն վեր ցցուած ամպածածկ լեռներուն... :

* * *

Առաքել, սիրելի՛ ընկեր, այսօր, տասներկու տարի-
ներու փոթորկախանձ անջրպետ մը ձեզքած, տակաւին
կը տեսնեմ, չա՛տ մօտէն կը տեսնեմ ու կը զգամ բարձ-
րացող ու սաւառնող ստուերը Պարոն Պէզդէղեանի արճիճէ
մատներուն: Այդ յիշատակին բռնակալ յաճախանքէն դեռ
կը կծկուի ձախ այտս, որուն մանիշակազոյն-կապոյտ
ակօսներուն վրայ, բարի մատներուդ փայփայտանքը ա՛յն-
քան քաղցր է հիմա ալ... :

Առաքել, իմ դժբա՛խտ եղբայրս, ինչպէ՛ս նախա-
զգացիր այն օրը, թէ պիտի չգրկէիր այլեւս պղտիկ աղ-
բարդ եւ ինչպէ՛ս դուշակէի ես, որ մեկնելէդ միայն
տասնեւհինգ օր վերջ, ծխախոտին թոյնը, խեղդամահ
պիտի ճգմէր քու վերաւոր, խոցոտուած սիրտդ...

Դուն խստօրէն յանդիմանեցիր զիս, լաթի այդ քանի
մը կտորներու սիրոյն, ինքզինքս անոր դաժանութեան
յանձնելու համար: Բայց՝ Առաքել, սիրելի՛ ընկեր, ես
այդպէս ըրի, որպէս զի անձանօթ ագարակի մը անկա-
բեկիւր գիշերները չսրսփացնեն քեզ առանց ծածկոցի: Ափ
մը մարմին այն ատեն՝ ինչպէ՛ս ըմբռնէի վայրագ քի-
նախնդրութիւնը տեսուչին, որ քեզ, սկսնակ թոքախտա-
ւոր, զրկեց դէպի անթափանց խաւարը լայնաբաց, ա-
պահով գերեզմանի մը...

... Ինչպէ՛ս հասկնայի այն ատեն, թէ «ճակատա-
գիրը» բոլոր ըմբոստներու դարչապարներուն խուժուժ
վախճան մըն է շղթայեր... :

Ե:

ԿԵԱՆՔԻ Ե ԶԵՐՔԻՆ

Անասթաս, իմ բարի Անասթաս...

Այսօր նորէն, երէկուան պէս, անցնող բոլոր օրե-
րուն պէս, յիշատակդ կը ծածանի աչքերուս խոնաւ
տրամութեան վրայ: Ու տարիները, որոնք նենգ ու դա-
ւադիր իրենց ստուերներով փորձեցին մշուշել քեզ՝
դարձեալ կը նահանջեն ահա ցաւիս յորձանքին առջեւէն,
որ կը մոլեղնի, կը դայրանայ եւ վայրի շառաչիւնով կը
ճեղքուի մտածումիս թափանցիկ ու դողդոջուն պատ-
նէշներուն դէմ՝ ողողելով զանոնք իր մռայլ թախիժով...

Ահ՛, իմ սիրելի Անասթաս...

Այսօր նորէն, անցնող բոլոր օրերուն պէս, փշրուած
ողնասիւնիդ՝ ճարճատիւնը յուսահատօրէն կը ձռնչէ,
տիրօրէն կը հեկեկայ ականջներուս մէջ: Իրա՛ւ: Չեմ յի-
շեր հիմա, թէ Պրուքլինի ո՛ր աղբանոցին մօտ կը շնչէր
այն խարխուլ գործատունը, դոյնզոյն թիթեղներով եւ
տախտակներով կարկտնուած, ուր այս երկրին աշխա-
տանքի առաջին շաբաթս ահաւոր հիասթափումով մը
ցնցուեցաւ: Այո, չեմ յիշեր ճիշտ հիմա:

Բայց ներէ՛ այդ մոռացումին, ճակատագրի եղբայր:
Որովհետեւ ամէն նոր ծանօթի կեանքէն ներս, եղե-
րական անհամար արարներով անհուն ողբերգութիւն մը
յայտնուեցաւ, որոնցմէ կսկիծի հզօր երակներ սուղուե-
ցան մարմնիս խօրերը մինչեւ:

Եւ օրովհետեւ ամէն նոր ցերեկ, նոր գիշերուան մը
հիւսած երազին վերաւոր, հաշմուած կամ խեղդամահ
դիակը նետեց յիշողութեանս մահաստուեր գերեզման-
նոցին մէջ:

Այդ երազները, յաւիտենօրէն եւ աներազ նինջով մը
քնացած իմ բարի Անասթաս, կենսուրախ եւ յուսալիտ

ժպիտոներն են իմ եւ քու եւ բոլոր մեզի բախտակից տը-
ղոց: Անոնք դեռ պարմանի, — գիտե՛ս դուն թէ որքան
անողորմ ու անդառնալի է հացին հրամանը, — քեզի եւ
ինձի պէս պարմանի, իրենց վտիտ մատներով եւ դիւրա-
բեկ եղունգներով կը կառչին Կեանքի Եգեթիւն, ուրկէ
չչունջ մը անդին, լայներախ կը բառաչէ խաւար ու գի-
շատիչ անդունդը, որ մարդկային ընկերութիւն կը կո-
չուի:

Ու այնպէ՛ս ցաւագին է Հեծեծանքը այդ մորթուած
ժպիտներուն, անոնց կոխկրտուած կմախքներուն, գի-
տե՛ս դուն...

Եւ կը տեսնես դուն, կը տեսնե՞ս դուն, Անասթաս,
որ այսօր նորէն, երէկուան պէս, անցած բոլոր օրերուն
պէս, յիշատակիզ ծփանքէն կը խռովի աչքերուս պղտոր
լիճը եւ դառնօրէն անդուսպ, իր ափերը ծեծելէն՝ կը
մագլցի կոպերուս թումբերուն: Հոն, քանի մը կաթիլ
արցունքներու վերածած ինքզինք, կը նստի պահ մը եւ
բոլորտիքը կը դիտէ, որոնելով քեզ, փնտռելով քու պայ-
ծառ ու արեւոտ ժպիտը: Բայց հիասթափ, բայց յուսա-
խաբ՝ կ'իջնէ թարթիչներուս եղերքը մինչեւ եւ անկէ,
դահավէժ կը նետուի իրեն համար անծանօթ եւ անսահ-
ման միջոցի մը ծոցը...:

Անասթաս, դժբաղդ բարեկամ...:

— Հալլօ՛, ծոնի՛:

Ու բարեւոյ, իմ բարի Անասթաս, սիրազեղ ու բարի
նայուածքի մը պէս գրկեց, փայփայեց զիս:

Վեց տոլարի դնուած յանձնարարական մը ձեռքիս,
բոլոր դուռերէն մերժուած, յողնատանջ ու յուսահատ
երբ հասայ գոյնզգոյն թիթեղներով եւ տախտակներով
կարկտնուած ձեր գործարանի մուտքին՝ արեւի չափ տաք
ու բարի բարեւոյ ինկաւ ներսս արեւի մը ջերմութեամբ,
պայծառութեամբ ու լուաց եւ օծեց զիս լոյսով, յոյսով
եւ կեանքով...:

— Բարի լո՛յս, ընկե՛ր...:

Եւ դուն թերեւս զարմացար պատասխանիս տարօրի-
նակ թրթռումէն: Եղբայրական այդ հովդ, ուրիշ դէմքե-
րու վրայ հեղնախառն իր խաղերով ա՛յնքան շա՛տ խա-
բեց, այնքան շա՛տ ծաղրեց զիս, Անասթա՛ս, որ աննենդ
ու մաքուր բարեւ մը փոխադարձելը Հծծող կարօտ մը
դարձեր ու կ'այրէր լեզուս, հաւատա՛, կ'այրէր ու կը
ձեղքրտէր լեզուս: Անոր համար՝ թերեւս դուն զարմա-
ցար պատասխանիս շատ թափանցիկ յուզումին եւ անսո-
վոր գորովին վրայ...:

— Հալլօ՛, ծոնի՛:

— Գալի մե՛րա, Անասթաս...:

Յաջորդ օրերու մեր բարեւներով ալ չապշեցուցինք
զիրար: Ալ կը ճանչնայինք զիրար, ցաւով, բղբոտուած
հեռուոր կարօտներով եւ բազմատեսակ զրկանքներով
հիւսուած իրարու պատմութիւններու մէջ:

Դուն գիտէիք թէ Արարատին դէմ շղթայադերձուած
ահոնքի ուրականին ժանիքներէն ճողոպրած, անոր մա-
հահոտ շունչէն աւլուած փշրանքներէն էի ես: Եւ գիտէի
ես, որ նոյն ժանտաշունչ ուրականին ուրիշ մէկ թեւը
հրդեհեց քու քաղաքը ու տունդ եւ իզմիրի բոցերը քեզ
չօրտեցին դէպի ծով... դէպի Աթէնք, ուր հրաշքով մը
միացեր էիր ընտանիքիդ:

Օր մըն ալ, ըսիր, չյիշեցիր թէ ի՛նչպէս, ինքզինքդ
գտար Պրուքլինի կամուրջին վրայ, ենթուղիին մէջ, որ
խաւարէն լոյսին խոյացող մոլեգնած ցուլի մը պէս, եր-
կաթագիծերը կը քերէր կատաղօրէն, երկաթէ սմբակ-
ներով...:

Գործի չեկար այդ Չորեքշաբթին:

Գիտե՛մ: Ամբողջ գիշերը հսկեցիր քրօնը սնարին վը-
րայ: Ծանրօրէն հիւանդ էր քոյրդ եւ խուժուով հեւք մը
նստեր էր անոր կոկորդին: Ճակատը կ'այրէր, չրթները
կ'այրէին կարմիր ու փայլուն ջերմի մը կրակէն. ու դուն
ամբողջ գիշերը դողացիր անոր վրայ, մինչեւ այն ատեն

անդոյ եւ անծանօթ աստուածներու աղօթելով, պաղա-
տելով անոր առողջութեան համար:

Եւ դուն մինչեւ արշալոյս հսկեցիր հիւանդ քրօջ
ցաւին: Ու աշխատանքի չեկար այդ Չորեքշաբթին:

Բայց իրիկունը, երբ երկաթի աղտէն, ժանդէն ու
փոշիէն լուացուած, հագուած դուրս կ'ելլէինք դործա-
րանէն՝ տեսայ քեզ վարպետին խցիկին մէջ: Իսկ ի՞նչ
խօսեցար հոն, որ փրփրեցաւ վարպետը եւ սկսաւ պոռ-
չլտալ:

— Ի՞նչպէս... այսօր չեկար, վա՞ղն ալ չդաս, ը՞...
եւ ինչո՞ւ, որովհետեւ հիւանդ է քոյրդ... յիմա՞ր ես
դուն... ի՞նչ դործ ունիմ ես քրօջ հետ... չե՞ս խոր-
հիր թէ ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս, եթէ չդործես
դուն... ըսէ՛ նայիմ... ի՞նչ պիտի ուտեմ ես, եթէ չաշ-
խատիք դուն եւ քու ընկերներդ... ը՞... ըսէ՛ նայիմ,
ի՞նչ պիտի ուտեմ ես...

Յետոյ բացաւ դուռը եւ նետուելով դուրս՝ այս նոյն
խօսքերը կրկնեց մեզի, առանց անդրադառնալու որ ար-
դէն լսեր էինք մենք: Ապա կրկին դարձաւ դէպի քեզ եւ
ցասուժով պոռաց:

— Եթէ վաղը չդա՛ս, ալ մի՛ դար, հասկցա՞ր...: Եւ
մտաւ իր խօսքը:

Եւ դուն եկար «վաղը»: Եկա՛ր: Բայց դարձեալ ամ-
բողջ գիշերը քրօջ հողիին հսկելէ վերջ: Եկա՛ր, քնատ
ու յոգնարեկ. յուսահատ ու վշտահար, որ թերեւս աստ-
ուածները մոտցեր են քեզ, պիտի չմեղքնան քեզի, եւ
պիտի չփրկեն քոյրդ անողոք այդ Չերմին ճիրաններէն:
Կը յիշե՞ս, երբ փափսացի որ դանդաղ դործես, չաճա-
պարես, ես իմ պատրաստած օղակներէս մաս մը քու ան-
կիւնդ կը նետեմ դադանի, որպէս զի ետ չմնաս շատ եւ
չզայրանայ վարպետը նորէն՝ տրտմօրէն ժպտեցար դուն:
Եւ քու վերջին ժպիտդ եղաւ այդ: Որովհետեւ... մեքե-
նային վիթխարի ձողը բարձրացեր էր ու պիտի իյնար...
եւ դուն, ա՛հ, իմ սիրելի, իմ բարի Անասթաս, աւար-
տած օղակներդ պարպած՝ ձեռնասայլով կը դառնայիր
ետ... եւ յոգնած էիր եւ քնատ ու վշտարեկ... ու կը

քալէիր մշուշուած նայուածքով, կը քալէիր կիսափակ
աչքերով... երերալէ՛ն... ու չնայեցա՛ր վեր, չտեսար
ձողը, որ անտարբեր ու անփո՛յթ, իջաւ ողնասիւնիդ
վրայ ու փշրեց դայն... ու խորտակեց քեզ:

Անասթաս, ճակատագրի եղբայր...

Այսօր նորէն, երէկուան պէս, անցած բոլոր օրե-
րուն պէս, ջախջախուած ողնասիւնիդ ճարճատիւնին ար-
ձագանդները կը ծփան աչքերուս պղտոր լիճերու մակե-
րեսին ու կը խռովեն անոնց դառնութիւնը...

Բայց Անասթա՛ս, այսօր տակաւին, այն ժանդոտ ու
արիւնհարբու շղթան, որուն մէկ նիհար օղակն էր վար-
պետդ, ոլորուած, դալարուած է անհամար անծանօթ
Անասթասներու կողերուն, ու կը ճղմէ, կը կոտորէ դա-
նոնք անյադ, դիշախանձ ախորժակով մը...

Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ մենք մեր մուրճերը չիջեցու-
ցինք այդ անարգ շղթայի օղակներուն դանոնք փշուր-
փշուր խորտակելու եւ ո՛չ թէ պողպատելու համար...:



Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Նուէր՝
Շատ Սիրով՝

ԱԼԵԿՍԱՆԴՐ ԳԼԸՃԵԱՆԻՆ



«Ինչ մարդ ունենայ իւր մտքը
հաւատարիմ ընկեր,
Յերեկի նման անցնում է մութ-
գիշերը մարդուն»:
ԱՇՈՒՂ ԶԻԻԱՆԻ

1934

ԸՆԿԵՐՆԵՐԸ

Ա.

Լքուած դիակի մը նման, թիւ տէ՛ Souffrirիքնը փրո-
ուեր էր կոնակի վրայ: Ափրտտիդեան գիշատիչ ախտե-
րով վարակուած մարմին մը կարծես, որ կը կրծուի շա-
րունակ եւ հետզհետէ խորացող վէրքերէն զաղբելի դար-
չահոտութիւն մը ծաւալելով, կը սարուրէ շրջապատը:
Տոմինիկեաններու անունով կոչուող այդ փողոցը շուկան
էր, բոլորին ծանօթ, ուր անվաւեր, դառամած աղիճներ
իրենց հիւանդ մարմինները կը մատուցանէին անցորդ-
ներուն աժա'ն, գրեթէ անվարձ:

Փողոցի աջ ուսին կանգնած՝ դէմի եկեղեցիին աս-
տիճանները կը համբէր Փրանկիւլ: Որոշեց սպասել հոն
անոնց համբանքով վայրկեաններ միայն, բայց երբ իջաւ
ամէնէն վարինին, տատամսեցաւ թիւ մը տալ անոր:
Այնքան մօտ էր անիկա կիսապաշտօն հանրատան դրան:

Մերձաւոր աշտարակի մը զանգակներէն պղինձէ վեց
դողանջներ փրթան եւ կոտրտուելով սուրացին դէպի
ծայրամասերը թաղին: Սակայն աջէն վաղոյններուն կո-
ղերը խորտակուեցան Տոմինիկեաններու եկեղեցիին խա-
չին թեւերուն դէմ: Եւ Փրանկիւլ լսեց վար թափող ար-
ծաթէ վեց շառաչներու գանկերուն փշրուիլը սալարկին
վրայ, ոսկիէ երկար ու կողկողաղին հնչիւններով:

Ու չհաշուեց ամէնէն վարի աստիճանը: Համբերու-
թիւնը նետուեցաւ դարձեալ բարձրագոյն սանդխամա-
տին եւ սկսաւ դարվար սահիլ յուլորէն, ծանրօրէն: Երբ

Հասաւ վերջընթեր քայլափոխին, յամեցաւ հոն գլխակից վարանումով մը: Ոորհուրդը մխրճեցաւ մեղքի տան վանդակներէն ներս եւ թափառեցաւ սենեակէ սենեակ, մահիճէ մահիճ: Յետոյ, յանկարծ սլացաւ տաճար եւ թառեցաւ ճակատի բոսորաներկ խաչափայտին: Ու խորանը մօտեցուց մեղաւոր նոր Մաղտաղէններու սնարներուն: Եւ երկար, անձանձիր, աղչահար դիտեց զանոնք: Նայեցաւ սրբամաքուր, աստուածարնակ խորանին եւ ցաւատանջ մեղանչումներով ու անտանելի մղձաւանջներով ծանրաբեռն մահիճներուն: Ինչո՞ւ, — դարմանալի, անխմանալի՛ դասաւորում, — ինչո՞ւ հաղարարմատ եւ հազարագոյն ողբերգութիւնները անձնավաճառ այս աղջիկներու վիրաւոր ապրումներուն: Սիրոյ եւ արգարութեան, — Աստուծոյ բնակարանին լուսամուտներուն դիմաց եւ ստուերին տակ՝ ինչո՞ւ ապարդիւն եւ անմարդկային ինքնամատուցման յանցապարտ դոհարբութիւնը Կոյս Մարիամի այս թշուառ քոյրերուն, ինչո՞ւ...:

Մարդերէն ըխած եւ երկնքի անունով նուիրականացուած այս օրէնքները այլանդակ ու բարբարոս թուեցան իրեն եւ անոնց անկարեկիր դաժանութեան հանդէպ իր մտածումը լուծուեցաւ, անզօր ու հիասթափ:

— Կուգա՞ս, անո՞ւշս...

Ոորհուրդին թելերը, որոնք ոտքերուն էին հանդուցեր Փրանկիլի նայուածքը, անաղմուկ՝ կտրտեցան բոլորը մէկ եւ ան կրցաւ վեր նայել աղատօրէն: Բայց յուզումը, հի՛ն ծանօթ, մատները աւելի խորունկ թաղեց իր խոչափողին մէջ եւ ան չրթունքը խածաւ ակամայ, — «Այս պղտիկ աղջի՞կն ալ»:

— Քանի՞ տարեկան էք, օրի՛որդ, թոթովեց:

— Օրի՛որդ, ինծի՞ կ'ըսես, հա՛, հա՛, հա՛... Լաւ է որ մենք վարժուեր ենք ամէն ծաղրի ու նախատինքի: Իսկ նայէ՛, միսերուս եւ մորթիս տեսքը չի՞ հաստատեր թէ դեռ պառաւցած չեմ: Ահա՛, շօշափէ անդամ մը սըւոնք, եւ աղջիկը կուրծքին խոնարհեցուց աչքերը: Չե՞ս դար սենեակս, աւելցուց յետոյ, հոն հաճոյքով պիտի համո-

զուրիս որ տասնեւեօթ ամառներու կրակ ունիմ տակաւին:

— Ես կասկած չունեցայ ձեր դեռատի ըլլալուն... օրիորդ, այլ դարմանք, այդ փոքր տարիքնուդ՝ ինքզինքնիդ ապրուստի այսքան նուաստացուցիչ եւ չարչարազին լուծի մը դատապարտելնուդ համար: Մանաւանդ, ո՛վ դիտէ ի՛նչ տառապանքով ձեր մատղաշ մարմինը կ'ենթարկուի ամէն տեսակ այցելուներու անսանձ քմահաճոյքին եւ յաճախ վայրագ ու գարշելի կիրքերուն: Կը խորհէի թէ ինչո՞ւ ձեզի պէս աղուոր աղջիկ մը...

— Հա՛րկաւ, կը հասկնամ... բայց չե՞ս տեսներ ձեզ նման կեղծաւոր բարոյախօսները, թէ որչափ ապուշ եւ ճղճիմ կ'երեւին իրենց այդ խարդախուած խրատներուն մէջէն: Կարծես մեր կամքով ինկեր ենք այս ճամբան: Ուրեմն լսէ՛. ես բոլորովին տարբեր վիճակ մը կ'ունենայի այսօր, եթէ քու բարի երեւոյթովդ ծածկուած անարդ լակոտ մը, զիս յղի ձգելէ վերջ, չուրանար իր դաւակը: Եւ հիմա այդ յիմար քարոզդ մտիկ ընել պիտի չստիպուէի, եթէ պատառ մը բուն ուտելու համար քանի մը սանթիմ ունենայի քոյս... ի՛նչ է, թէ ոչ կշակ կը ծեծես որ քիչ մը աժա՞ն կապենք... հա՞...

— Խնդրեմ, օրիորդ, ներեցէ՛ք որ ձեզ վշտացուցի. հաւատացէ՛ք, խնդրեմ, որ ամենեւին նպատակ չունէի որեւէ կերպով ցաւ պատճառելու ձեզ: Եւ... ուրախութեամբ հետերնիդ կը քալէի դէպի ճաշարան մը, եթէ ժամադիր չըլլայի հոս ընկերոջս: Սակայն եթէ հաճիք ընդունիլ այս... այս քսան Փրանքնոցը իբր... իբր...

— Ի՞նչպէս, իրա՞ւ. բայց իբր ի՞նչ, քանի որ սենեակս ալ չես դար. իսկ անկողինիս վարձքը, ինձմով միասին միայն հինգ Փրանք է այսօր: Կ'ուզես որ առնե՞մ ասիկա... ա՞նպայման... լո՞ւրջ ես...

— Խնդրեմ, ընդունեցէ՛ք, եթէ կ'ուզէ՛ք՝ որպէս տուղանք... որպէս տուղանք ձեզ ակամայ վիրաւորելուս համար, օրիորդ, եւ...

— Փրա՛նկ:

— Եկա՞ր: Ընկերս է, օրի՛որդ, այժմ, ներողութիւն մեզի, պէտք է մեկնինք: Երթաք բարով դուք ալ, մեր

լսանադոյն մատթանքներով :

— Ա—հա՛ա՛, ո՞վ էր այս «օրիորդը», Պրանկ, ձայնդ այնչափ կազուզեցեր, այնչափ խոնաւցեր է, որ կարծես պիտի փլիս, հի՛մա պիտի փլիս : Հէ՞, ըսէ՛ նայինք, ո՞վ էր այս «օրիորդը» :

— Ո՞վ կ'ուզես որ ըլլայ, անոնցմէ մէկն է : Բայց կրնար իմ քոյրս ըլլալ. այո. չեմ գիտեր ինչո՞ւ. բայց պահ մը խորհեցայ թէ սպաննուած քոյրս եթէ ապրէր՝ ասոր դէմքը կրնար ունենալ : Եւ ենթադրեցի, դարձեալ չեմ գիտեր ինչո՞ւ, թէ ան կրնար ինծի ներկայանալ ճիշտ այդ պաղատանքով եւ անճանաչելի... : Սարսափելի բան է, չէ՞, ասոնց կեանքը : Ամէն անգամ որ անոնցմէ մին տեսնեմ, դաժան ցաւի մը յարձակիլը կը զգամ վրաս եւ բարձր ու ճաթած ձայնով լացը կը լսեմ այդ ցաւին, աղանջներուս դէմ... :

— Աղջիկը դեռ հոն կայներ է. մեր կողմը կը նայի, դարձիւր անգամ մը, Պրանկ, կարծես թէ կուլայ այդ... :

— Լա՛ւ, լա՛ւ... դուն հիմա պատմէ թէ ի՞նչ ըրիւր : Մինչեւ ժամը վեց աստիճան համրեցի ես :

— Բայց նայէ՛, դեռ հոն անշարժ կեցեր է այդ աղջիկը. կը հեկեկա՞յ, ի՛նչ կ'ընէ, իրա՛ւ կ'ըսեմ, կը հեծկըլտայ այդ աղջիկը, դարձանալի՛ բան է, նայէ՛, դարձանալի չէ՞... :

— Գեղի ըսի ձոյն՝ անիկա եւ պատմէ թէ մինչեւ ո՛ւր հասաւ գործը :

— Աղէկ, ահա ուրեմն : Գիտես որ գործակատարին դացի եւ անկէ կուզամ : Ըսաւ թէ ծանր եւ անբեկանելի երգումով, — իրենց սեւ բծաւոր կատուին գլխուն վրայ էր երգումը — խոստացեր է իր կնոջ, որ երբեք դէմքէն պիտի չվտարէ ժպիտը, որովհետեւ առանց անոր ապուշի երեւոյթ կ'առնէ եղեր : Յետոյ անունները հաղորդեցի անցադիրներուն համար, Նազենի Տիգրանեան, աղջիկը, 19 տարեկան. մայրը՝ Նոյեմզար, 37 տարեկան : Պատասխանեց թէ իր կնոջ, Սէլէսթինի տարիքը թէեւ ուռեր, յորդեր եւ 37-ի պարխսպները խորտակեր է արդէն՝ բայց տարիներու այդ արեւոտ ու բեղմնաւոր աւազանէն

հազիւ ան կրցեր է սեւ բծաւոր կատու մը հանել... : Ապա երգուընցաւ, — դարձեալ իրենց կատուին գլխուն վրայ — որ յառաջիկայ շարթուան մէջ անպայման պիտի պատրաստէ բոլոր թուղթերը : Աւելցուց թէ, երբ ինք իմ տարիքս ունէր, նշանածէն հետո զտնուած պահերուն անձնասպան ըլլալու անդիմադրելի ցանկութիւն մը կը խաբարանէ եղեր զինք : Եւ Նօթր-Տամ ալ լա կարտի բարբառանքն զանգիւղեմը ամէնէն գեղեցիկն ու վիպականը կը համարէ եղեր բոլոր մահերէն : Բայց ամէն անգամ ալ, այդ մտադրութեամբ ճամբայ ելլելէ վերջ, անհաւատալի դիպուածով մը Սէլէսթինի ննջարանին մէջ կը բանայ եղեր աչքերը, աղուոր բան չէ՞ ասիկա :

— Սքանչելի՛, միայն թէ, երբ դուն կը զուարճանայիր այդ յիմար գրոյցով, հոս ես քու ծնունդդ կը նզովէի զիս այսքան երկար սպասցնելուդ համար :

Տը լա Ֆար փողոցի անկիւնն էին հասեր :
— Դեռ կանուխ չէ՞, Պրանկ, քանի մը ոտք կրնանք

դառնալ :

— Եթէ կ'ուզես :

— Գիտե՞ս, Պրանկ, իշխանավայել ընդունելութիւն դասայ վարպետէս : Նազենիին նկարին վրայ կ'աշխատէի, երբ կունակէս ճաթած գոլինջի նման աղաղակ մը փրթաւ. «— Հիանալի է, տղա՛ս, գմայլելի է, հրաշալի է» պոռացան : Շատ խնամքով գործեր եմ վրան, յարեցի : «— Ո՞ր մէկին վրայ գործեր ես, հա՛, հա՛, հա՛, ծօ պատկերին համար չեմ խօսիր ես, աղջիկ՛ը, ո՞վ է այս գեղեցկուհին, հը՞, նշանածդ, շունչան-որդի, ճաշակու տեղն է, արուեստաղէտ ես եղեր ջիղերովդ ալ, բարի վայելում, լա՛ւ, բարի վայելում» : Եւ շարաթակասաւ ալ բարձրացուց : Ամուսնացող մը աւելի դրամի պէտք կ'ունենայ, ըսաւ : Բայց այդ չէ ըրած շնորհին պատճառը : Լոյսի պէս պատկերներ կը հանեմ հիմա եւ բաքթոսի հարցնող չկայ ալ : Լը պօ Արմէնիէնը խանութին իրական դէմքն է դարձեր եւ գիտե՞ս, Պրանկ, մարդուկս կը վախնայ որ, եթէ տեղափոխուիմ՝ շատ յաճախորդներ կը տանիմ հետս :

— Անշո՛ւշտ : Եւ օր մը դուն ալ պէտք է ունենաս քու սեփական լուսանկարչատունդ : Չեմ կարծեր որ շատ դժուար ըլլայ, եթէ մանաւանդ աղջիկներուն հասոյանալու համար թափած ճիղերուդ մէկ փոքր մասն ալ դորձիդ յաջողութեան յատկացնես :

— Իրաւունք ունիս, ի՞նչ ըսեմ, մեզաւորը ես եմ որ ամէն բան կը սրտմեմ քեզի եւ ատեն ատեն ալ ասանկ աղուոր առիթներ կը շնորհեմ, որ խածնես ուրախութիւնս : Բայց ի՞նչպէս ալ չես մտնար, ը՞, միշտ լեզուիդ ծա՞յրն է, ի՞նչ է :

— Չեմ պնդեր թէ մեծ յանցանք է այդ տկարութիւնը : Շատեր ենթակայ են անոր : Կրնա՞ս սակայն ուրանալ, որ վտանգ կայ հոն, ուր այլապէս ոսկորի նման կարծր կամքդ կը կակուղնայ աղջկայ մը ժպտուն նայուածքին մէջ :

— Եւ ինչո՞ւ չես հաւատար որ բարեմիտ եւ անկեղծ է վարմունքս անոնց հետ :

— Ի՞նչպէս կրնամ, երբ դիտեմ թէ որքան շուտ եւ դիւրին կը տարուիս կանայի քնքոյշ ձեւերէ եւ սչրանքներէ : Դուն ինձմէ աւելի լաւ դիտես որ անոնց շոյլած քու բոլոր փաղաքանքներդ բան չեն աւելցնէր արուեստիդ վրայ : Յետոյ, ես տեսեր եմ թէ ի՞նչպէս կը նային վարպետիդ աղջկան եւ անոր աչքերուն մէջ ալ կարդացեր եմ բաղձանքներ, որոնք այնքան ալ բարեմիտ չեն երեւիր ինձի :

Մինչ յուզումի, դորովի հեղատահ հոյ մը մեղմօրէն կը թրթռացնէր Պրանկիւլի թաւ ձայնը եւ քաղցրաբոյր, զովարար անձրեւի մը վերածուելով՝ կը ցօղուէր անոր վերջին բառերուն վրայ եւ ջերմութեամբ, մտերմութեամբ կ'օժէր անոնց քիչ մը բերտ թաւալումը : Անզգալարար ան մօտեցաւ ու սեղմուեցաւ ընկերոջ կողքին : Խանդոտ ու երջանիկ քրքիջ մը դասկեց կօկորելին մէջ, բայց ժպտի ծիւ մը ծաղկեցաւ անկէ, որ սուր խրամներ դժեց անոր բերնին երկու անկիւններուն : Իսկ իր ներսը ալեկոծուող երանութեան աւազանէն՝ ցնծութեան ճառագայթներ անդրադարձ ցողացումով մը կը շողային բերուն խորէն :

— Երբեմն չե՞ս երեւակայեր թէ կառավարներու կը նմանին մարդիկ, շարունակեց ան : Ենթադրենք թէ ամէնքն ալ իրենց առանձին ճամբան ունին կտրելիք : Այդ շաւիղին երկու կողմերուն վրայ ալ գեղեցիկ ու դրաւիչ տեսարաններ կը տարածուին : Բայց կառապանը շրանալու չէ անոնց հրապոյրէն, որովհետեւ եթէ ուշադրութիւնը կողոպտուի պահ մը եւ լքէ սանձերը, փոքր սայթաքում մը կրնայ անդնդախոր ձոր մը գլորել զինք :

Պէնսիլանի փողոցի անկիւնն էին վերադարձեր :
— Պրանկիւլ :
— Ի՞նչ է, Տիրան :
— Երբեք չեմ մտնար որ Մարսիլիոյ մեր երեք տարիներու կեանքը, ընդարձակ եւ անյատակ ճահիճի մը եզերքէն քաշկրտուելու պէս բան մը եղաւ : Եւ կը հաւատա՞ս, կը վախնամ մտածելու իսկ թէ մինչեւ ո՛ւր թաղուած կ'ըլլայի անոր մէջ, եթէ չունենայի քու բարեկամութիւնդ, որ իբր զրահ զրկեց ու պաշտպանեց զիս : Եւ դիտե՞ս ինչն է զիս ամէնէն շատ զարմացողը . որ տակաւին ցեխի փոքր բիծ մը անգամ չցատկեց վրաս... ատո՛ր կը զարմանամ... կը հասկնաս ըսել ուղածս, այնպէս չե՞, Պրանկ :

— Վա՛յ, ահա վիպերդել սկսար նորէն : Բայց խենթ բաներ կ'ըսես :— Մտեցաւ կօշիկներուն կապերը հանդուցելու, — Չէ՞ որ նոյն դժուարութիւնները ինկան երկուքիս ալ վրայ, — քակեց կօշիկներուն կապերը, որովհետեւ կապուած էին անոնք, եւ սկսաւ կապել վերստին, — եւ ո՛վ դիտէ թէ մինչեւ երբ պիտի կրնայի դիմադրել անոնց, եթէ քու ձեռքդ չունենայի արիւրուս մէջ, — ձայնը սկսաւ մսիլ թեթեւ, խոնար դողէ մը, — ճիշտ է, որ յիշատակներ եւ մեռելներուս ուրուսականները ունիմ... բայց անոնց չլստահուիր, անոնցմէ մարդ չկրնար կախուիլ անդունդի վրայ, — բարձրացաւ, ձեռքերը խրեց տափատին զրպանները եւ ալ մատները բան մը սեղմեցին ուժով, — ես դիտեմ որ խոժոռ ու ցամաք կ'իսալայ-

րենի մըն եմ, եւ համոզումներս ալ բիրտ ու յամառ են ինծի պէս: Եւ դուն կը հանդուրժես անոնց ու այդպէսով ալ կ'օգնես ինծի որ ապրիմ անոնց համաձայն...: Ատկէ դերագոյն երջանկութիւն չեմ յուսացած ես: Եւ, թերեւս չհաւատաս ասոր, բայց երբեմն կը զգամ թէ երախտապարտ մնալու եմ քեզի: Ձէ, կարծեմ շատ դժուար պիտի ըլլայ ճշդել թէ, մեր երկուքէն ո՛վ աւելի պէտք ունի միւսին... — Եւ աջ դրպանին մէջ, աջ ցուցամատը շօշափեց ինչ որ սեղմեր էր այնքան ուժգին, արցա՛կը քսան հատ տասը Ֆրանքոնցներուն, զոր այդ իրիկուն պիտի յանձնէին սմասրին...:

Բ.

Ու Պէնետա փողոցի անկիւնէն վար դարձաւ Ֆրանկիւլ:

Տիրան հետեւեցաւ անոր խոնաւ, զարմանալիօրէն խոնաւ եւ մանրացած աչքերուն ժպիտ մը տալ փորձելով: Ձգաց որ անհուն պարապութիւն մը իր հողիին պատերն ու յատակը կը քերէր: Ձգաց որ կը մեծնար, կը լայննար; կը տարածուէր ան հետզհետէ եւ կը զարնուէր կըրծոսկրներուն, կարծես դանոնք կոտորուելու, պայթեցնելու համար: Ու կարծես խոչարիողէն վար յուզումի եւ կարօտի հրաշէկ պարան մը կը սողոսկէր, պատառ-պատառ Ֆրանկիւլը փոխադրելով ներս: Անոր նայեցաւ խանդակաթ սիրով: Ու անդուսպ բաղձանք մը դալարուեցաւ իր մէջ փարելու անոր, աղաղակելու անոր որ, ինք պարսլուեր է ամէն ուրիշ զգացումէ, ամէն ուրիշ խորհուրդէ, ամէն ուրիշ հրճուանքէ ու տառապանքէ եւ լեցուեր է իրմով, միմիայն իրմով: Ուղեց ըսել այդպէս:

Սակայն զայրացած՝ Ֆրանկիւլ իր ոտքերուն էր սեւեւեր նայուածքը. անոնք իր հրամայածէն աւելի լայն ու արագ կը բացուէին եւ անհարկի, տաղտկալի աղմուկ կը հանէին կրօնիկները: Ներդաշնա՛կ այդ աղմուկին հատհատ արձագանգները, ջուրի հեշտ ու զովարար շիթերու պէս, թառած յուզումի եւ կարօտի հրաշէկ պարանին վը-

րայ, հոսեցան Տիրանի հողիէն ներս ու դրաւեցին անսահման պարապը եւ թանձրացուցին Ֆրանկիւլը հոն:

— Նե՛րս եկէք, փետուրէ են շինուած մեր անկողինները, եկէք նե՛րս...:

— Եկո՛ւր, անուշ մանչուկս, եկո՛ւր, այնպէս բանե՛ր պիտի տամ քեզի...:

— Կը մերկանամ բոլորովին, լման կը մերկանամ, աղուոր կաղամբս, եկո՛ւր...:

— Նայէ՛, նայէ՛, սիրունիկս...:

— Եկո՛ւր, վարուե՛ղս, եկո՛ւր...:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, նայէ՛, Ֆրանկիւլ, պառաւներ են, բոլորն ալ պառաւներ են, մեծ մօրս տարիքը ունի սա մէկը, նայէ՛. սոսկալի չէ՞ ասիկա, սարսափելի չէ՞ն ասոնք, ըսէ՛, սարսափելի չէ՞ն այս պառաւները:

— Հա՛, բայց դեռատիներն ու դեղանիները կան տակաւին: Անանկ բերաններ ու անանկ աչքեր կան տակաւին, որ անօթի եւ ծարաւ կ'ընեն մարդը եւ կը մսեցնեն սսկորները: Ձե՞ս հանդիպեր բնաւ:

— Օ՛, բիւքէն, բիւքէն...:

— Հա՛րկաւ, եա՞, շատ դիւրին է հայհոյել: Բայց բող չծնան անոնք, եւ ո՛չ մէկը անոնցմէ. բող չէին անոնք երբ ծնան իրենց մայրերէն, յե՛տոյ եղան, որովհետեւ ուրիշներ այնպէս ըրին որ, անոնք ըլլան... ահա հոս է, մտնենք:

Եւ դրպանէն ելեքտրական լուսարձակ մը հանեց Ֆրանկիւլ: Մութ ու նեղ միջանցք մը զիրենք կը բաժնէր վերնայարկի սանդուխէն:

— Սա աստիճաններուն ճոնջիւնը որքան կը նմանի վարի «աղջիկներու» հծծիւններուն. անոնց պէս յագնած, անոնց պէս տրտում ու վրէժխնդիր:

— Բարե՛ւ, բարե՛ւ, ծօ՛, դուռը չէ՞ն զարներ:

— Փարադ բերինք, պարոն Աստուր, ասանկ փարաբերսը դուռ չի զարներ:

— Ծօ դուն ետաւան բան ես, դիտե՞ս, դե՛ւ, լման դե՛ւ. սէ՛, նստեցէք, նստեցէք նայինք, ինտօ՞ր էք:

Եւ Աստուր ուղղուեցաւ հիւրերուն:

— Ձեզ ծանօթացնեմ: Աս ասլանը՝ Տիրան, Տիրան Մանուկեան, հրեշտակի պէս աղուոր եւ բարի տղայ մը, հա՛ղիւ 22 տարեկան: Նշանածը Սուրխայէն պիտի բերենք: Աս միւս շէյթանը՝ Ֆրանկիւլ, սատէ Փրանկիւլ, 24 տարեկան կ'ըսէ, սուրաքը միշտ ասանկ կախ, կարծես մտքին մէջ մարդ կը սպաննէ ամէն վայրկեան... եւ ամբողջ մարմնով խնդաց Աստուր: Ապա աւելցուց.

— Աղջիկ չունի անկից է, նշանած չի կրնար դտնել, ո՞վ պիտի նայի աս սատանայի ձագին երեսը, հա՛, հա՛, հա՛...

Եւ յանկարծ կտրելով ինքզինք՝

— Ներողութի՛ւն, Պարոն Տէմիրճեան, ըսաւ, շարունակեցէք դուք, աս երկու լակոտները մոռցնել տունն ձեր շաքարէ խօսքերը:

Հիւրը նախ կասկածոտ, յետոյ ինքնաբաւ ակնարկ մը ձգելով «երկու լակոտներուն» վրայ, հաստ սիկառը խոշոր բերնին մէկ անկիւնէն փոխանցեց միւսին եւ խօսող ձայնով մը ըսաւ.

— Հա՛... աստեղի փիսուրթիւններուն վրայ կը խօսէինք: Յայտնի է որ հոս տեղի տղաքը զիշեր ցորեկ տէնսիմկներուն եւ գէշ տուններուն մէջ են: Ֆրանսայի հայ երիտասարդները բարոյապէս փճացեր լմնցեր են շուրջի...:

— Հետաքրքրական է զիտնալ, Պարոն Տէմիրճեան, Ամերիկահայ տղաքն ու աղջիկները վանքերո՞ւ մէջ կ'ապրին արդեօք:

— Ձէ, ատիկա չեմ կրնար ըսել: Բայց Ամերիկա տարբեր քընքրի է, հոն տեղի խոշոր պիլտիմկներուն պէս եւրոպական ոչ մէկ քընքրի չունի: Ամերիկացիք շատ հայ ֆլէս մարդիկ են, անոր համար անտեղի հայերը դարդացած կ'ըլլան եւ շատ մաքուր կեանք ունին: Տղայ ու աղջիկ բոլորն ալ հայ սքուլ եւ ֆալէն կ'երթան...

— Ատիկա շատ լա՛ւ է, միջամտեց Ֆրանկիւլ, շա՛տ լաւ, Պարոն Տէմիրճեան, բայց պատճառ մը չէ որ նա-

խատէք մեզ եւ մեր ընկերները, առանց ծանօթացած ըլլալու մեզ չըջապատող պայմաններուն: Վերջապէս, որքան որ գիտեմ, հաղիւ ամիս մըն է ձեր հոս գտնուելը եւ այդ կարճ ժամանակին մէջ չափազանց դժուար է այնքան բան տեսնել որ...:

— Օ՛, ես տեսնելու պէտք չունիմ: Ամերիկայի մէջ բոլորս ալ գիտենք որ Ֆրանսացիք կատ տէմ վարնոց ժողովուրդ մըն են եւ մեր հայերն ալ անոնց պէս անպատիւ կ'ապրին: Մեր աստեղի երիտասարդները զիշանոցներէն դուրս չեն ելլեր:

— Շատ ցաւալի է, որ այդքան աննպաստ կարծիքներ ունիք մեր մասին, Պարոն Տէմիրճեան: Եւ ողբալի է, իրապէս ողբալի է, եթէ ձեր այդ համոզումները քաղուած են Ամերիկահայութեան նոյն իսկ մտքով բեռնառած են Ամերիկահայութեան նոյն իսկ մտքով բեռնառած ենք բնակիլ անպաշտօն հանրատուններու մէջ: Բուած ենք բնակիլ անպաշտօն, որոնք մեզի մատուցող, այն տուններն ու պանդոկները, որոնք մեզի մատուցելի սենեակներ ունին, բնակարաններն են նաեւ վկայական չունեցող «գէշ» կիներու. սակայն դուք կ'անգլիտանաք թէ մեր բոլոր ջիղերով ու միտերով ո՞րքան բուռն պայքարներու կը լծուինք, որպէս զի չիյնանք այն սայթաքումներուն մէջ, որոնցմով դուք մեզ կորսուած կը նկատէք ծիծաղելի ամբարտաւանութեամբ մը...:

— Ծ՛օ՛, սատանայի կտոր, ատա՞նկ կը վարուին մեր միաափիլիս հետ. ու խնդաց Աստուր եւ դառնալով միւսին՝ աւելցուց. կարեւորութիւն մի՛ տաք այս խենթին խօսքերուն, Պարոն Տէմիրճեան, ատեն-ատեն կը տաքնայ ասանկ...:

— Եւ այդ բոլորով միասին, — ու հոս փորձեց ժրպտալի Ֆրանկիւլ, կարծես մէկը զոյգ մը հրազեններ խրած անոր քունքերուն՝ կը սպառնար որ ժպտէր ինք: Եւ ան տուաւ այդ ձեւը իր գէմքի զիծերուն բռնադբօսիկ, զրեթէ խոժու կերպով, — Այո, Պարոն Տէմիրճեան, կը տեսնէ՞ք, այդ բոլորին հետ, իմ այս ընկերս, դեռ շատ երիտասարդ՝ կ'ամուսնանայ արդէն եւ իրմէ միայն երեք տարու փոքր աղջկայ մը հետ, մինչ դուք... հա՛, ըսէք

մեզի թէ ինչո՞ւ ձեր կիներ կ'ընտրէք ապականածներու մեր շրջանակէն, ինչո՞ւ չամուսնացաք Սմերիկահայ դարդացած աղջիկներէն մէկուն հետ, թէ ոչ՝ անոնք չղիջանեցա՞ն լսել ձեր անշնորհք լեզուէն հոսող անխմաստ շաղակրատութեան...

— Յրա՛նկ, ձգէ՛ ալ, կը բաւէ...

— Պարոն Յրանկիւլ, դուք կը մոտնաք որ...

— Խնդրեմ, ներեցէ՛ք, եթէ կարգ մը բաներ մոռցայ յիշելու: Իսկ դուք կ'ելլէ՞ք, Պարոն Տէմիրճեան: Բայց տակաւին մեզի չըսիք թէ դուք ի՛նչ պիտի կրնաք տալ այս մաստաշ աղջկան, որուն հօրը մեծ եղբայրը կրնայիք ըլլալ, դուք որ սպասեր, քամեր էք ինքզինքնիդ գոխներու եւ գիրկերու խորը եւ ա՛յնքան անողոք ու խստապահանջ էք ուրիշները իրենց չգործած մեղքերուն համար դատելու եւ դատապարտելու մէջ... կ'երթա՞ք, երթա՞ք բարով Պարոն Տէմիրճեան. Տիկին Տէմիրճեան, հաճեցէ՛ք ներել ինձի, եթէ կարենաք...

Ու մեկնեցան հիւրերը:

— Ծօ՛, փորձանքի լակոտ, դուն խե՞նթ ես, ի՛նչ ես, ատանկ մարդ կը քէն, ատա՞նկ կ'ընեն խեղճ յաճախորդներու. ձգէ՛ քի մարդը փարաս տուեր է ես'...

Մինչ Տիրան Մարսէյեզի առաջին տողը կը սուլէր խեղդուած քրքիջի մը շունչով:

Գ.

Մութը տիրեր էր երկնքին ու քաղաքին, երբ անոնք բաժնուեցան Աստուրէն:

Մութը, խարդախ ու դաւադիր, իջեր էր դանդաղօրէն, եւ սողալէն սլլուեր էր փողոցին, մայթերուն, տուներուն եւ ոտք մը ներս ինկած դուռերուն:

Միայն՝ անկիւնէ անկին, մարտիրոսուած սուրբերու ճաղատ դլուխներու նման, որոնք կը կախուին ցիցերէ լոյսի տակաւին բեկրեկուն պսակներով՝ ելեքորական լամբարները կը հիւժին միայնակ, իրենց հիւանդ, պարտասած լուսեղէն մատները մխրճելով խաւարին յա-

մառ եւ անպատկառ թաթերուն, անոնց մահաստուեր հըպումը անջրպետ մը հեռու պահել փորձելով իրենց կրտսեղներէն:

Անոնք կանգնեցան անոնցմէ մէկուն դալուկ, մշուշոտ շատրուանումին տակ:

Նոյն հասակը ունէին երկուքն ալ:

Տիրան խոշոր, պայծառ աչքերով, ուր բաց շաղանակազոյն բիրերը անհանդիստ խաղ մը կ'ընէին իրենց ծոցը պարող ցուքերուն հետ: Լեցուն դէմքին եւ լայն ու անկնճիւռ ճակատին դուարթ կարմրութիւն մը կը հանդէպ եւ մաղբը, մետաքսի նրբութեամբ ու թուխ, սանաբուած ետ, կը թափէին մարդային ջրվէժի մը հեզութեամբ՝ վարդով ջնարակուած սպիտակ ծոճրակին:

Ուրախ էր յայտնապէս: Շառագոյն երանութիւն մը խածեր էր այտերն ու անկիւնները շրթներուն: Ի՛նչ լաւ էր այսպէս: Զով ու մաքուր օդ. կենսախայտ բայց անխոռով մարմին: Եւ լեցունութիւնը, մակընթացութիւնը տենչերով, երազներով յորդուն օրերուն, որոնք կուգային, պիտի դային Նազենիին հետ, անոր թաւիչէ ոտքերով: Նազենի՛: Եւ մտածումով աղջիկը մօտեցուց իրեն: Բայց խոռվքը վազեց աւելի արագ: Յուզումի ալիքներ քակուեցան մարմնին բոլոր մասերէն եւ արշաւեցին դէպի վեր ու ճմրթիկելով, կոխկրտելով սիրտը, անցան եւ ուժգնօրէն փչրուեցան ճակատի ոսկորմին դէմ: Զեռքը բարձրացուց ճակտին: Ո՛րքան տաք էր հոն: Իսկ ինչո՞ւ այս կարմիր ջերմութիւնը: Նազենի՛: Եւ տեսա՛ւ աղջիկը: Կարծեց տեսնել: Սեւ ու լայնածիր աչքերը կարօտով եւ անհամբերութեամբ վառ, ան եկաւ իրեն: Քաղցր խօսքերով, ներզանակ, դիւթական ձայնով անցեալի ցաւերն ու ապագայի յոյսերը փափսաց: Անհասկնալի մըմունջներով տրտում բայց իմաստուն եղանակներ երգեց: Յետոյ՝ հանդարտօրէն, ծանրօրէն ձախ բազուկը ոլորեց իր պարանոցին շուրջ եւ աջին փափուկ, մեղրամոմէ մատները քնքշօրէն շոյեցին, զգուեցին իր այտն ու կղակը: Աչքերուն մէջ կոտորող սիրոյ եւ խանդի շողացայտ ցուքերը ծածկուեցան ամօթխած թրթռացումով մը խոնար-

հող կոպերուն ետեւ: Եւ աղջիկը, սիրավառ ու դողդոջուն ու կիսաբաց շրթները պատկառանքով, երկիւղածօրէն սեղմեց իրեններուն... Նազենի՛:

— Ողորմելիներ, առանց դիտնալու թէ ինչպէս կ'ապրինք, կը հայհոյեն մեզի կործանումի ճամբուն երգերքէն քալելնուս համար... մինչ իրենք արդէն մինչեւ ծայրը թաւալեր են այդ ճամբուն, ու կը մեղքնան ալ մեզի...:

Բայց թուեցաւ Փրանկիւլի թէ նոյն պահուն հարիւրաւոր մահիճներ ճոնչեցին իր դանկէն ներս: Նայեցաւ գետնայարկերու բոլոր լուսաւոր պատուհաններուն: Անոնց ետեւ իրեն անծանօթ տղաք, վաղուան ընկերները թերեւս, կը հեւային — կարծես տեսաւ — մոլորած եւ վարակուած զիրկերու մէջ: Նիհար այտերուն վրայ հըսկող ցից այտասկրները դորովի թափանցիկ երանդ մը հազան: «Դիւրին չէ ամէն վայրկեան պահեստի այնքան ուժուննալ, որ դիմադրէ ամէն փորձութեան եւ խորտակէ զայն»: Գրգռիչ մերկութեամբ ցուցադրուող սրունքներու եւ հեշտատեսիլ կուրծքերու քսուելով կ'ացնէին ամէն օր այդ երիտասարդները, մարմնի քաղցը ծամծմելով չոր եւ ուռած շրթներով: «Դիւրին չէ...», բայց Փրանկիւլի ահռաները իրար ճանկրտեցին յանկարծ: Եւ կայծակ մը կտոր-կտոր փշրուեցաւ իր խորունկ աչքերուն մէջ: Ու ծալքերու մութ ամպ մը նստաւ ճակատին: Սակայն դէմքը նորէն պայծառացաւ կաթիլ-կաթիլ: «Եղբայրներս էք, բայց չէք դադրիր սրիկաներ ըլլալէ»: Տամուկ ու ջերմին քօղ մը ինկաւ բիրերուն: Ու թարթիչներուն վրայ երկու կաթիլ ճերմակ ցօղեր երերացին:

— Քիչ մը թափառի՞նք տուն դառնալէ առաջ, Փրանկ, կը խօսինք քիչ մը:

— Եթէ կ'ուզես գէշ չըլլար: Գիշերուան դովութիւնը խաղաղութիւն կուտայ ճեծուած հոգիներուն: Քունդ չի՞ դար:

— Չէ՛, ընդհակառակը, տրամադրութիւնս կը ճըռուողէ: Այս գիշեր երազիս մէջ ժամադրութիւն ունիմ Նազենիս հետ, եւ կ'ուզեմ որ գիշի լեցուն գաւաթի մը

վրայ բերանս կարմրցնեմ անոր համար: Եւ կ'ուզեմ, այս իրիկուն, հազարաւոր անցորդներու մէջէն փնտռել եւ դանել ամէնէն գեղեցիկ եւ հրապուրիչ աղջիկը, որպէս զի անոր վրայ ձեւեմ իմ Նազենիս:

— Լա՛ւ, լա՛ւ, ուրեմն ետանդդ ոտքերուդ փոխանցէ նայինք:

Եւ ծոկեցան դէպի Թափի Վէռ փողոց, անկէ Գաննըպիէն իջնելու համար:

Բայց քիչ մը վար, քառանկուն երկաթէ ձողերով վանդակուած պատուհանէ մը շուշանի սպիտակութեամբ, ողորկ ու հոլանի բազուկ մը երկարեցաւ դուրս եւ կառչեցաւ Տիրանի փողկապին:

— Եկո՛ւր, եկո՛ւր, աղուո՛րս, եկո՛ւր...

Շփոթած՝ անոնք նայեցան ներս: Պատուհանին բազրիքէն հաղիւ կը ծածկուէր աղջկան մինչեւ պորտը: Անկէ վեր՝ կը բարախէր կախարդիչ մերկութիւնը արտասովոր, հրաշալի կիսանդրի մը, կենդանի, ապրող մարմարէ կերտուած, որ կը դերեվարէ մարդոց ուղեղներն ու կը խարսխուի անոնց նայուածքներուն մէջ, բոնորէն չլթայուելով անոնց: Պատերէն՝ լոյսին դունատ ոսկեփոշին անսովոր շնորհալիութեամբ մը կ'ողողէր աղջկան հեշտաբոյր մարմինը, անոր տալով թովիչ երանգաւորում մը յաւէրժահարսերու մորթերուն:

— Եկէ՛ք, նե՛րս եկէ՛ք, սիրականներս...

Եւ զոյգ արիերով ճմլեց իր փարթամ կուրծքը: Թանձրօրէն սնդուրուած թարթիչները բացուեցան լայն-լայն եւ աչքերուն մէջ քարօրինակ, մեղկ ու վայրագ բոցեր պարեցին եւ կտորտուելով թափեցան դարվար, ամփոփուելով՝ ուղղուեցան կէտի մը եւ յամեցան հոն պահ մը: Մատներուն մէջ կլորեցան, չողացին, շնչեցին կուրծքերը: Երկու բուռ ճառագայթ թուեցան ըլլալ անոնք, փրցուած արեւէն, որոնք հոսեր էին աղջկան լանջքին եւ մարմին էին առեր հոն, իրենց հետ քարշ տալով երկու խաւարած լուսիներ, որոնք հիմա կը թառէին անոնց կատարներուն:

— Եկէ՛ք, ի՛մ սիրականներս, եկէ՛ք, ի՛մ սիրոյ ծաղիկներս, եկէ՛ք, կը մըմնջէր աղջիկը պաղատազին:

— Ինչե՛ր ունի, ինչե՛ր ունի ձեզի տալիք, եկէ՛ք, հայտէ, եկէ՛ք... Ժանդոտած կոկորդներով, պատած ձայնով խօսեցան երկու պառաւ սենեկակիցներ եւ պատահանին մօտեցուցին իրենց շնորհքէ ամայացած մարմիններուն աւերակ մնացորդները...:

Յանկարծ սթափեցաւ Փրանկիւլ եւ բրտօրէն՝

— Քալէ՛, քալէ՛, սլոռաց, յիմարներու պէս կեցեր կը նայինք, կեցեր ապուշներու պէս կը նայինք... քալէ՛: Եւ զզաց որ օտար, անծանօթ էր իրեն այդ ձայնը: Իրն էր շեշտը, իրն էր խօսքը, բայց չզխացաւ թէ ուրկէ՛ եկան անոնք: Ձայնը հնչեց շփոթ եւ արձագանդեց խորունկէն, այնպէ՛ս խորունկէն: Վրդովումը այդպէս, դաւադրօրէն դադտնի ցնցեց զինք եւ սրկեց, դաժանօրէն սրկեց զինք:

— Լոյսի կտոր է, լո՛յս է այս աղջիկը... Ի՞նչպէս հոտ ինկեր է. արեւի կտո՛ր. շան աղջիկը արեւի կտո՛ր է. ատ քաֆթառներուն մէջ ի՞նչպէս է ինկեր, ր՞, Փրանկ. արեւի աղջի՛կ, արե՛ւ, արե՛ւ...:

— Ակոաներդ կը կտորտեմ... ու երերաց, դանդաշեց Փրանկիւլի ձայնը, ա՛յնքան յոգնեցաւ մինչեւ հասաւ կոկորդը.— Ակոաներդ կը կտորտե՛մ...:

— Ի՞նչ... հա՛... կատակ կ'ընեմ եղբայր, դուն հիշ կատակէ չե՞ս հասկնար, կատակ կ'ընեմ: Բայց զեղեցիկ է, այնպէս չէ՞, շան աղջիկը դարմանալիօրէն զեղեցիկ է. եւ մեղք ալ է... մե՛ղք է որ այդքան աղուոր աղջիկ մը հող իյնայ, այնպէս չէ՞, Փրանկ...:

Դ.

Մերձաւոր աշտարակ մը հառաչեց, խուլ ու խորունկ, զիշերուան ժամը ծանուցանելով: Նոյն պահուն քառանկիւն խոշոր աչք մը բացուեցաւ Տ՛է՛քս փողոցին վրայ, դեզին մարմրուն լոյսով: Խաւարը մօտեցաւ դադտադողի եւ փեղկերու արանքէն նայեցաւ ներս: Սենեա-

կին կէսը դրաւուած էր լայն մահճակալով մը, մէյ-մէկ աթոռով իւրաքանչիւր կողմը: Անկիւնը պահարան մը զետեղուած էր երեք դարակներով: Մօտը՝ փոքրիկ քառակուսի սեղան մը, երկու քովերէն սրբիչներ կախուած, վրան կոնք մը եւ լեցուն սափոր: Վերը, պատին դամուած ձուածեւ հայելի մը կը հանդէ՛ր:

— Ճոխ յայտադրով փայլուն օր մը անցուցինք, վախնամ դուխնուս դալիք կայ:

— Որո՞ւն ինչուն պէտք դուխու, եթէ դուն չղարնես դայն քարերուն: Շուտ հանուէ եւ մարէ լոյսը:

— Քուն չունիմ, քունս չի դար. այսօրուան պատահարները, թէեւ անչուշտ շարունակութիւնը երէկուանին, դարմանալի յամառութեամբ կը հալածեն ուղեղս եւ այս խեղճ որդը, հովէն տարաղնուող ամսի կտորի մը պէս կորսնցուցեր է իր դուխն ու սոչը...:

— Լա՛ւ, լա՛ւ, լոյսին կոճակը դարձուր. մութին մէջ աւելի համարձակ պիտի շարժի դանկը անհանդուտացնող այդ անշնորհ կենդանին:

— Փրանկ, չե՞ս խորհիր թէ այն զեղեցիկ աղջկան, ըսել կ'ուզեմ անոր նմաններուն համար չափազանց նուաստացուցիչ ըլլալու է այդ դրադումը:

— Հո՞ն ես տակաւին: Իսկ ինչո՞ւ միայն անոնց համար: Ի՞նչպէս մարմիններու տարիքէն կամ հրապոյրէն կրնաս չափել անոնց ներքին յուզումներուն եւ տառապանքին աստիճանը:

— Ինչո՞ւ սակայն չեն ընտրեր աւելի պատուաւոր դործ մը եւ նախապատուութիւն կուտան այդ ասպարէզին, ի՞նչ հաճոյք կը դտնեն հոտ որ...:

— Այն հաճոյքը, կը կարծեմ, որ թիապարտ մը կ'առնէ իր դնտանէն եւ տաժանակիր աշխատանքէն. այն վայելքը, որ մահապարտը կ'ունենայ կառավնասափ տեսքէն, անոր սուր շեղրին վայլէն... եթէ կարելի է դտնել արարած մը ամբողջ աշխարհի վրայ, որ համաձայնի մեղի հետ հաճոյք կոչել ասոնք:

— Բայց բազմաթեան եզրեր չեն երեւիր ինծի-
այդ երկու խումբերուն միջեւ: Ասոնք կ'ապրին իրենց ա-
զատ կամքով եւ կրնան թօթւորել տիրմէն եւ հանել ա-
նարգանքի շապիկը իրենց վրայէն երբ որ ինքզինքնին
պատրաստ դրան ատոր: Միւսները դատուած եւ դատա-
պարտուած են օրէնքէն եւ ի վիճակի չեն իրենց բախոր
որեւէ փոխօրութեան ենթարկելու, որքան ալ ցանկան
ատոր:

— Գնա ըսէ գինովի մը թէ ազատ է եւ կրնայ չլսմել
ալ: Գնա պոռայ անձնասպանի մը թէ կրնար հրաժարիլ
մեռնելու իր որոշումէն: Ջանա համոզել այդ ազջիկներէն
մէկը, թէ իր ձեռքն է ուրանալ ցաւազին անցեալը եւ
փարիլ մարդոց եւ աստուածներուն հաճոյալի կենցաղի
մը զաղափարին, եթէ կը փափաքի: Անոնք նախ պիտի
խնդան վրադ ու ծաղրեն քեզ եւ յետոյ պիտի հայհոյեն՝
եթէ սնդեա: Ռոյլհետեւ՝ ազահովարար ահաւոր եւ դա-
ժան փորձառութիւն մը առաջնորդած կ'ըլլայ զիրենք հող
եւ ընդհանրապէս լաւագոյն ուղին կը կարծեն այդ իրենց
համար: Այն ատեն՝ փորձէ լոկեցնել խիղճդ, ամբաստա-
նելով դանոնք թէ իրենց կամքով են ընտրեր այդ ճամ-
բան . . . :

— Անշուշտ իրենց ազատ կամքով են չարժեր: Անանկ
դարու մը մէջ կ'ապրինք, որ որեւէ արտաքին ուժի չար-
տօնէր բռնադատելու անհատ մը, որ չեղի իր ընտրած
չաւիղէն: Ամէն մարդ իր նախասիրած դործով կը զրաղի,
իր փափաքած եղանակով կ'ապրի: Չէ՞ որ ամէն մարդ իր
կեանքին եւ ճակատագրին տէրն է հիմա:

— Հարկաւ. Մարտէլ իր ազատ կամքով գիպուածին
յանձնեց կիներ երկու զաւակներով եւ վրդը պառկեցուց
Սէն Ժիւլիէն գացող հանրակառքին անխններուն տակ:
Մարթէն, ան՝ որուն քոյրը ինքզինք թունաւորեց եւ ահ-
ուելի հոգեվարքով մը մեռաւ անցեալ շարաթ, սրիկայէ
մը յղի մնացած՝ ազատ կամքով իր վաճառած կարասի-
ներու փոխարժէքը, քրոջ յուզարկաւորութեան յատ-
կացուելիք՝ հալեցուց գինետան մը մէջ եւ յետոյ որպէս
դատարկապորտ բանտարկուեցաւ երկու օր: Տուն դար-

ձին, քրոջ անթաղ դիակին տեսքը քարափ մղեց գինք եւ
յաջորդ օր ուռած մարմին մը հանուեցաւ ջուրէն . . .
Ճիշտ է, իրենց ազատ կամքերով ընտրեցին այս ողբեր-
գական վախճանները, սակայն . . .

— Ալ ի՞նչ սակայն . . . ո՞վ է յանցաւոր կամ պատաս-
խանատու, ո՞վ դրդեց, ո՞վ պարտադրեց զիրենք այդ
անշահ եւ յուսահատական արարքներուն դիմելու:

— Բնական է, յուսահատութիւնը ի՞նքը: Իսկ ո՞վ
դանոնք մատնեց անյուսութեան ճիրաններուն, — ես ու
դուն եւ մարդկային ընկերութիւնը: Մեր բարոյականի
ըմբռնումները եւ ընկերային կարգերը դարբերու փոշին եւ
ծանրութիւնը կը կրեն իրենց կոնակին: Եւ մինչ քաղա-
քակրթութիւնը, ճակատը հովերուն տուած կը սուրայ
ապշեցուցիչ արագութեամբ, մարդոց օրէնքները կը բա-
րեջջուին կրիայի քալուածքով:

— Ձեմ կարծեր որ արդար է մեզ կամ որեւէ մէկը
մեղադրել բարեկարգութեան դանդաղ ընթացքին հա-
մար: Վերջնապէս, պէտք է ընդունիլ թէ բնութեան օրէնք-
ներուն սրբադրութիւնը մարդկային ուժէն վեր է:

— Հարցը փոթորիկ մը կամ կայծակին փայլատա-
կումը արգիլելուն վրայ չէ, այլ մարդոց կողմէ հաստա-
տուած եւ նուիրականացուած կանոններն ու սովորու-
թիւնները ժամանակի պահանջներուն յարմարցուելուն
վրայ: Երբ բեռնաւորուած աւանակի մը քալուածքը ու-
ղինք արագացնել՝ կը պոռանք, սանձը կը թօթուենք, նոյն
խնկ կը մտրակենք ու կը խարաղանենք կենդանին: Իսկ
երբեք կը հարցնենք թէ, օրուան կենսական հարցերը
լուծելու համար ի՞նչ կ'ընեն անոնք, որոնց մենք տիտղոս
եւ հեզիլնակութիւն կուտանք ժողովուրդներուն հայր եւ
վարիչ դառնալու: Անոնք պողպատէ ոսկեղօծուած ա-
նուրներ կը նետեն մեր պարանոցներուն օրէնքներու միջ-
նորդութեամբ, ազաղակելով միաժամանակ թէ մե՛նք
ենք շինեք դանոնք . . .

— Լաւ, բայց ի՞նչ կապ կը տեսնես կառավարական
դրութեանց եւ օրէնքներու քիչ մը դանդաղ բարեկարգ-
ման, քաղաքակրթութեան արագընթաց զարգացման եւ

այս անբարոյական դասակարգին պատկանող կիներուն մէջ: Սորհրդարաններն ու նախադասները ի՞նչ դործ կրնան կատարել այս առնչութեամբ:

— Շատ բնական եւ անխուսափելի պարտքի մը հատուցումը ունին ընելիք: Քանի որ քաղաքակրթութեան յատաճիւմներով մարդոց կեանքը արմատական յեղաշրջումներու կ'ենթարկուի, պետութիւնն ալ, որպէս կազմակերպուած ընկերութեան ներկայացուցիչը, պարտաւոր է դիմագրաւել այդ փոփոխութիւնները, դանոնք ժողովուրդին երջանկութեան ծառայեցնելով: Եւ քանի որ ընկերային դրութիւններու ուղղակի կամ անուղղակի դոհներն են այս կիներն ու աղջիկները...

— Ուրեմն, ըսել կ'ուզես որ մենք, այսինքն ժողովուրդները, յանցաւոր ենք, որովհետեւ ճնշում չենք բանեցներ մեր կառավարութեանց վրայ, որպէս զի այս եւ ուրիշ չարիքներու դարմաններ գտնէ:

— Անշուշտ. եւ միայն այդ ալ չէ: Տակաւին, իբր թէ չէին բաւեր ատոնք, մենք այրերս ստեղծեր ենք ապուշ ու խարդախ բարոյականի մը մեղապարտ չափերը, որոնցմով՝ շուստ ու շնացող մարդիկ կրնան մաքրակրօն բարոյախօսներ դառնալ հանրութեան մէջ, իսկ դոհերը՝ խաբուած այն աղջիկները, որոնց գլխաւոր յանցանքը մեղի վստահելու միամիտ անմեղութիւնն ու անկեղծութիւնն է եղեր՝ վատօրէն կը շարժուին «ընկերութիւն» կոչուած վիթխարի անասականացէն դուրս որպէս «պոսնիկներ», ջախջախուած եւ խարանուած օրէնքէն եւ կրօնքէն...

— Ես կը խորհիմ թէ պատասխանատուութեան որոշ բաժին մը կ'իյնայ այդ խարուող աղջիկներուն վրայ: Ի՞նչ արդարացում ունին այդքան թեթեւամտօրէն վարուելուն համար իրենց կեանքերուն հետ: Յետոյ՝ չենք կրնար պնդել թէ ամէն խաբուող կը կորսուի անյուսօրէն, եւ առաջին սայթաքում մը չքմեղանք չէ, որ մէկը բնդմիշտ թաղուի այդ անկեալ ասպարէզին մէջ: Ոմանք օգտուելով այդ դժբախտ փորձառութենէն, աւելի զգուշաւոր եւ նոյն իսկ անխոցելի կը դառնան այնուհետեւ:

— Թերեւս, սակայն մինչ այդ՝ դժուար է անտեսել այն սլարազանները, որոնք ճամբայ կը յարդարեն անոնց սայթաքման համար: Օրինակ՝ թերի դաստիարակութիւն, յոռի միջավայր եւ մանաւանդ տնտեսական անապահովութիւն: Գիտենք որ ճնշող մը կատուին ճանկերուն մէջ խեղդուելէ առաջ՝ հազիւ կրնայ թարտալ քանի մը անգամ: Մինչ կատու մը խեղդել ուզող շունը բաւական պիտի քրտնի: Արդ, մանկատի, անխորձ, դործաւոր աղջիկ մը դիմադրականութիւն չունի գրեթէ: Անմեղ երազներու եւ արեւոտ յոյսերու մշուշէ մը ան կը նայի աշխարհին ու մարդոց եւ ամէն բան կը տեսնէ մաքուր, պայծառ ու բարի: Այդ շրջանին, նոյն իսկ անճարակ սրիկայ մը, առանց երկար հետապնդումներու, մէկերկու ապուշ խոստումներով եւ կեղծ երդումներով կը յաջողի հրապուրել զայն եւ...

— Մինչեւ հող ճիշտ է: Սակայն կը կրկնեմ թէ առաջին ցաւալի սխալը պատճառ չէ, որ իր ամբողջ կեանքը շարժէ անբարոյութեան անդունդէն վար:

— Այդ ալ, դարձեալ կախում ունի անոր դատած վերաբերմունքէն: Մոռնալու չէ որ անկումէն վերջ, ահուելի հիասթափութիւն մը հիմերէն կը ցնցէ եւ կը դղրդղացնէ անոր հաւատքն ու կուռքերը: Արեւը կը սեւնայ եւ աստղերը լեզու կը ցուցնեն իրեն: Երբ օր մըն ալ սարսափով, դարհուրանքով կը սկսի խլրտումներ դգալ կողերուն տակ՝ իր ընկերուհիներուն եւ հարազատներուն սովորական նայուածքներն ու բնական շարժումները անտանելի յանդիմանութիւններու, անլուր նախաները անտանելի յանդիմանութիւններու, անլուր նախահետքերը անտանելի ի վրայ... յետոյ, հետըտինքներու նման կը կախուին ի վրայ... յետոյ, հետըտինքները երբ կը յայտնուի իր «մեղքը», կարծես անոր շրջապատին մէջ բոլորը կը դործակցին, կատարեալ դժոխքի մը վերածելու համար իր կեանքը: Եւ միակ ելքը՝ փախուստը կը մնայ այս բոլորէն դէպի անձանօթ ու խոշոր քաղաքները, ուր կը յուսայ ծածկել ինքզինք:

— Ուրեմն այդպէսով, այդ նոր շրջանակին մէջ, անոր պատահութիւն մը կ'ունենայ, իբր դէշ երազ մը մոռնալու իր անկումը եւ պարկեշտ կեանք մը վարելու հա-

մար հաւաքելու իր ամբողջ կորովն ու բարոյական ուժերը, եթէ ունի, եւ պայքարելու ամէն վտանգի դէմ:

— Այո, բայց մեծ քաղաքը շատ քիչ անդամ գրկաբաց կ'ընդունի զինք: Աւելի յաճախ՝ որոգայթներու ցանց մըն է ան: Աղջիկը անոնց մէջ կը թափառի, կը տատանի քանի դեռ իր սրունքները չեն կապուեր, չեն կաշկանդուեր անօթութենէն: Գիշերը, եթէ մէկը չքաշկրտէ զինք դէպի նոր անդունդ մը, անկիւն մը կը դտնէ կծկըտելիք: Սակայն յաջորդ օրը որսչելու է երթալիք ուղղութիւնը եւ մեկնելիք կայարանը: Որովհետեւ արդէն քաղցը սկսած է եղունգներով ստամոքսին պատերը քերել արիւններով եւ աղիքները մատներուն վաթթած՝ կը դալարէ խելագար կատաղութեամբ: Այդքան գիւրբն կը կարծես դործ գտնելը կամ անօթի մեռնիլը: Ես եւ դուն ալ պիտի չգիմանայինք ատոր: Եւ կուգայ պահ մը, երբ ան կը զգայ թէ ընտրութիւն ընել հարկադրուած է մահուան կամ ո՛րեւէ կերպով ապրելուն մէջ: Զօրաւորներ քարափը կը նախընտրեն ընդհանրապէս: Տկարները, ջուրին սեւութենէն կամ պարանին կարծրութենէն վախցողները, իրենց թարմ ու լեցուն գիծերով, նորափթիթ մարմնով գրկաբաց կ'ընդունուին հանրատուններէն:

— Ահա հասանք մեր սկզբնական հարցին: Արդ, ընդունինք թէ միամիտ եւ անփորձ աղջիկ մը պայմաններէն դատաւարտուի այդ անբարոյական շրջանակին մէջ մէկերկու տարի ապրելու: Անշուշտ միշտ նոյն դիւրախար եւ անզօր արարածը չմնար ան: Այլ օրէ օր կը ծանօթանայ աշխարհին ու մարդոց եւ պայքարիլ կը սորվի: Լա՛ւ ուրեմն: Եթէ իրապէս, անկէ յետոյ, իր ազատ կամքով չէ որ կը մնայ հոն եւ իրապէս կը տատապի ամօթի այդ ճահիճին մէջ լողալուն համար, ինչո՞ւ մասնաւոր ճիգ մը չթափեր բարձրանալու զինք հոն քչո՞ղ պղտոր ու կործանիչ հոսանքէն, պարկեշտ կեանք մը վարելու բողձանքով:

— Որովհետեւ այլեւս արմատներէն խախտած են բարոյականի իր ըմբռնումները: Հանրատունը եռացող ջուրով կաթսայ մը կ'ըլլայ, ուր նետուած ձիւնի փա-

թիւներու նման կը հալին աշխարհի բարքերուն եւ մարդոց վարքերուն մասին երէկուան իր համոզումներն ու երկիւղած պատկառանքը: Ան հոն կը տեսնէ, եւ չա՛տ մօտէն, դեռատի եւ ամօթխած ուսանողներ, ճաղատ ու մօրուսաւոր դասախօսներ, զինուորներ եւ դասատուներ, նշանածներ եւ ամուսիններ, որոնք դուրսը արհամարհանքով եւ զգուանքով կը վախչին բողբոջն, բայց որոնք ներսը անոնց մարմինները կը լիզեն...: Այդ այցելութիւններուն մէջ, ցաւազին ցնծութեամբ ան կը ճանչնայ դարչելի թշուառականութիւնը այրերուն, անոնց կամօվին եւ վճարելով անբարոյանալուն: Այդ դնահատումը կը սկսի մխիթարել զինք: Արժանապատուութիւնը անիմաստ բառ մը կը դառնայ հեղհեղ եւ իր նկարագիրը կրաւորական ու անտարբեր դիմադիժ մը կը ստանայ: Զէ՛!, աններելի մեղանշուժ մըն է խորհիլը թէ վաստակին դիւրութիւնն է զինք հոն պահողը...:

— Իմ կարծիքովս խնդիրը անլուծելի կը մնայ, որովհետեւ այդ կիներուն դոյութիւնը անհրաժեշտ է մարդկային յոռաջգիմութեան համար: Միայն կիսատուածներէ կարելի է յուսալ — եւ յուսալ միայն — որ լուսընեն բնութեան կանչը իրենց մէջ եւ ապրին անխոցելի ժուժկալութեամբ: Առանց անոնց ի՞նչ պիտի ըլլայ վիճակը բանակներով զինուորներուն. այն երիտասարդներուն, որոնք չեն կրնար ամուսնանալ մինչեւ չափահասութիւն, նիւթական միջոցներու պակասին պատճառով: Հապա անոնք որ երբե՞ք չեն կրնար ամուսնանալ: Մեր օրերուն, հանրատուններու քանակը չափանիշ եւ ապացոյց կը համարուի քաղաքակրթութեան յոռաջացման: Եւ յետոյ, անկախ այս բոլորէն, անհնար է կապանք դրնել կիներու եւ մարդոց մարմիններուն եւ ազատութեան:

Եւ յօրանջեց Տիրան, ձգտելով մարմինը եւ ապա թուրօրէն տարածուելով կռնակի վրայ, ձեռքերը հանդուցելով գլուխին տակ:

— Անիմաստ ու ծիծաղելի պատճառաբանութիւններ են ատոնք: Որովհետեւ մարդիկ անզօր կը զգան սանձահարելու իրենց անասնական հակումներն ու կեր-

քերը, շիներ են օրէնքներ կամ հաստատեր են աւանդութիւններ, որոնց համաձայն, անոնց տիրապետութիւնը հողին եւ բարոյականին վրայ՝ կը դառնայ զարգացման պայման: Կը մոռնա՞ն արդեօք, որ այդպէսով գերութիւններու ամէնէն անարդին կ'ենթարկեն կէնը, վերածելով դայն հաճոյքի սոսկական գործարանի մը, որուն գոյութիւնը ազազակող ապացոյց մըն է մարդոց վարակումին՝ ամէնէն գարշելիովը բոլոր անբարոյութիւններէն: Հին դարերէ ի վեր, նոր սերունդներ իրենց օրէնքադիրներով, փոխանակ փնտռելու հիմնական դարման մը, որով պիտի կարենան ամէն մարդու կին մը եւ զաւակներ ունենալու եւ սրահելու չափ դրամ շահեցնել եւ ապագայի ապահովութիւնը երաշխաւորել՝ պլլուեր են կարճ ու հարթ ճամբուն, — արտօներ են բողանոցներու հիմնադրութիւնը, դժգոհ եւ անզուսպ ախորժակները բաւարարելու, կաշառելու համար: Ի՞նչ փոյթ թէ այդպէսով նոր ու ախտավարակ դասակարգ մը կը փորուի ընկերութեան կողերուն եւ որ կ'անիրաւուի, կը կոխկըրտուի, կը կեղեքուի Ֆիդիքապէս թէ բարոյապէս: Յետոյ, ո՞վ կերտեց բանակներուն շքարձանը, ո՞վ քարոզեց անոնց անհրաժեշտութիւնը. եւ ո՞ր սրիկան կը պնդէ թէ պէտք է «քաղցրացնել» զինուորներու զիշերները անբարոյականութեան յաւերժացումով, մատաղ եւ նորահաս կեանքերու խորտակումով, անկումներու խորացումով: Հարցուցիր թէ ո՞վ է այս շարիքներուն պատասխանատուն: Լա՛ւ: Ե՛ս, դո՛ւն, եւ բոլոր մեզի պէսները: Չէ՞ որ ժողովուրդներ յաճախ կ'ըմբոստանան հինցած եւ անհանդուրժելի չափերու եւ կարգերու դէմ: Մարդկութիւնը կը ճեղքուի երկու ահարկու բանակներու: Մէկ կողմը կը մոնչէ հինին դէմ եւ միւս կողմը կը փաստաբանէ հինին համար: Յեղաշրջում կամ բարեշրջում կը ճշայ մէկը եւ տեղա՛յլ կը Ֆշայ միւսը: Ու վերջապէս՝ արմատական բարեփոխումներ կը ներմուծուին օրէնքներու մէջ: Բայց կրկին, երկու կողմերն ալ, զինաթափ, կը տապալակին արցունքով եւ արիւնով օծուած եւ անսահման տուայտանքով բեռնաւոր նոյն անկողին-

ներուն վրայ, փշուր-փշուր կողոպտելով անձնավաճառ այդ աղջիկները իրենց անփոխարինելի հոգեկան ուժերէն եւ առաքինութիւններէն: Ինչո՞ւ կարելի չըլլար բնաջնջել այն պատճառները, որոնք ծնունդ կուտան այդ վիճակին եւ կը սնուցանեն դայն: Ա՛յնքան ծուռ ու լարծուն են դէպի բարեկեցիկ կեանք մը բարձրացնող տնտեսական խարխուլ սանդուխին աստիճանները, մանաւանդ կիներու համար, որ անդամ մը սահողը, ինկողը, վերականգնելու իր ճիղերուն մէջ, դժուար թէ տեղ մը գտնէ ռոքերուն: Արդ, ընկերութիւնը ի՞նչ կ'ընէ այս աղջիկներուն օգնելու համար, որպէս զի անոնք կարենան այդ ճահիճէն ելլել եւ պարկեշտ ասպարէզ մը ընդգրկել, ինչպէս կ'ըսես: Ոչի՛նչ: Ընդհակառակը՝ ուրացեր եւ շարտեր է զանոնք իր գրկէն դուրս եւ ամէն առթիւ չի վարանիր անարգ հայհոյանք մը նետելու անոնց երեսին: Գիտենք թէ օրէնքներու բազմաձալ հատորներուն մէջ պատժական հաղարաւոր յօդուածներ կ'արածին, բայց դեռ չինուած չէ հատուած մը, որ պատժէ հանրատուն մտնող, պոռնիկ շատցնող այրը: Պատառ մը հացի դողը կը բանտարկուի... սակայն, մարդկային բարոյականի կուրծքին անդունդ պատուող բողանոցները կը բանին ազատ, դիշեր-ցերեկ կը բանին, բնական է՝ տարբեր շրջանակներու մէջ զանոնք խստօրէն դատապարտող եւ զրպարտող կեղծաւոր մաքրակրօններու մեղսակցութեամբ: Եւ մենք ենք այս բոլորին պատասխանատուները: Ե՛ս, դո՛ւն, բոլոր մեզի պէսները: Մենք ենք որ զրիչ եւ իրաւունք կ'երկարենք օրէնք դրողներուն եւ մենք խարազան ու դէնք կուտանք ռստիկանին: Մենք կը ձուլենք բանտերու վանդակները եւ սրահապանները մենք կը վարձատրենք: Իսկ ինչո՞ւ չկրցինք ստեղծել եւ գործադրել օրէնք մը, որ ազատագրեր սպիտակ գերութեան այդ զոհերը: Չկրցանք կամ չուզեցինք, որովհետեւ մեր մարմինները կը կշտացնեն անոնք եւ որովհետեւ մինչեւ մեր կոկորդները մենք ալ սուղուած ենք ամբարշտութեան ճահիճին մէջ... Ճիշտ է, որ կարելի չէ կապանքի տակ առնել մարդոց եւ կրկներու մարմիններն ու ազատութիւնները: Բայց

արդէն ես չեմ խօսիր «ընկերութեան» դայթակղեցուցիչ անառակութեանց մասին: Հոն սայթաքումները կը փնտռուին եւ պարկեշտութեան գանակոծումը՝ ըմբռնումը կը բերէ բոլոր արդիւրեւած վայելքներուն: Դերակատարները վաւերական քաճեր են հոն: Մինչ ասոնք գատապարտուած են յարաբերութիւններու՝ որոնք ահռելիօրէն կը տառապեցնեն զիրենք: Եւ ինչ որ մեղաւոր հաճոյք կը պարգեւէ «ընկերութեան» արկածախնդիրներուն, մարմնական եւ հոգեկան սպառիչ, սպաննիչ խոշտանգում մըն է ասոնց համար:

Ներդաշնակ, կշռաւոր, թեթեւ շնչառութեան մը երաժշտութենէն գրաւուեցաւ Յրանկիւլի ուշադրութիւնը: Եւ ունկնդրեց: Յետոյ դարձաւ Տիրանին: Պատուհանէն թափանցող աղօտ լոյսին մէջ հաղիւ կ'ուրուագծուէին իրենց դէմքերը: Բայց կարելի էր տեսնել երանաւէտ ժպիտի մը խոր ու շեշտուած գիծերը, որոնք այդ պահուն կը ծփային Տիրանի խաղաղ երեսին: Կը քնանար: «Անպիտան տղայ»: Եւ Յրանկիւլ դորովով նայեցաւ ընկերով ու տասնեակ մը փուշերու ցատկրտելը զգաց իր խղճին վրայ: «Մինչեւ քնացնել ձանձրացուցի զինք»: Ու կրկին աչքերը սեւեռեց անոր ճակտին, կոպերուն, կղաւկին եւ շրթներուն: Բարի ու պայծառ անդորրութիւն մը կը մնջէր անոնց բոլորին հետ: «Բախտաւոր Նաղենի»: Շատ երջանիկ պիտի ըլլար աղջիկը: Ինք վստահ էր ատոր: Իր ընկերով ընդունակութիւններն ու ստաքինութիւնները ունեցող մէկը միայն երջանկութիւն կրնար տալ տունին եւ շրջանակին: Անկե'ղծ, շէնչո'ղ, խանդավա'ռ տղայ: Կեանքին միայն այնքան ծանօթ, որ կրնայ վայելել զայն, առանց խռովելու անոր թունաւոր յատակէն ժայթքող կողկողազին կանչերէն: Կեանքին այս անբարադարձումը զինք վերստին կապեց հին խորհուրդներուն: Անհուն, անսահման դաշտ մը պարզուեցաւ իր երեւակայութեան եւ ինք կիսախուփ աչքերով մխրճուեցաւ անոր քարքարուտ եւ սրածայր սեպերով ժանկուած բաւիղներուն մէջ...:

Ե.

Աշխատանցի դահլիճին գեղահասակ հայելին մէջէն, Տիրան գոհունակ՝ ժպտեցաւ ինքզինքին: Ու հպանցիկ յարդարում մը դարնելով դիտարկին, շտապեց Գաննըպիէն: Իջաւ յարաշարժ, յարակենդան այս պողոտային հետ դարվար: Անոր մայթերուն երկայնքին, մարդոց աղմկայոյզ յորձանք մը կը թաւալէր միշտ մըջիւններու զօրաշարժին պէս ետուն ու հեւքոտ:

Բարխոյղ այդ հազարագոյն, բիւրաշառաչ շղթային օղակներէն սողոսկելով, Տիրան հասան Գաֆէ Օրիէնքալ: Բայց հոն, յուսարեկութիւնը մտրակի մը պէս դալարուեցաւ ցնծութենէն անհանգիստ իր տրամադրութեան: Յրանկիւլ չէր եկած տակաւին: Եւ ինչո՞ւ: Զարմանալի՛ բան: Վա'յ խայտառակ Յրանկ: Խոստմնադրութ ու խարդախ Յրանկ, ինչո՞ւ չէր եկած: Նստաւ եւ բարկացած՝ դարեջուրի ապսպրանք մը շարտեց սպասեակին: Ու անհամբեր՝ հարցուց ժամացոյցին թէ ինչո՞ւ չէր եկած ընկերադաւ իր ընկերը: «Լակո'տ, ասանկ այլանդակ պարտազանցութիւն կ'ըլլա՞յ, շատոնց պէտք էր հոս...»: Բայց անտարբեր հանդարտութեամբ՝ ժամացոյցը պատասխանեց իրեն թէ շատ կանուխ էր դեռ եւ հարկ էր ժամ ու կէս սպասել տակաւին:

«Ի՞նչ, խենթեցե՞ր ես, թուրքի՛ գլուխ. ի՞նչ ժամ ու կէս»:

Անա'նկ, ժամ ու կէս պիտի սպասես:

«Բայց ինչո՞ւ սպասել, որո՞ւն սպասել»:

Վա'յ ապուշ, Յրանկիւլի'ն, որո՞ւն:

Հա', իրա'ւ: Եւ մտածումով գրկեց ու համբուրեց ընկերը: Բերանը թաղեց դարեջուրի փրփուրին մէջ եւ ծծեց անյազօրէն: Ժամ ու կէս սպասել՝ դեռ: Դա՛ր ու կէս: Եւ այս անհանգիստ ջրղերով, մերձաւոր դալիքին

— իր Նազենիին հետ սիրատենչ դրկախառնումներու եւ տարփալառ համբոյրներու — տեսլապատկերէն խթանուած հոգեվիճակով, գերադրոուած երեւակայութեամբ:

Խորհուրդի յետադարձ ուտում մը ըրաւ դէպի նոյն օրուան առաւօտը: Մէսաժքրի Մարիթիմէն երկու նաւային տոմսներ գնեց եւ փոքր գումարով մը ու անցագիրով զանոնք դրկեց Պէյրուսթ: Տարիներու իրենց խնայողութիւնն էր, որ փլաւ, հալեցաւ, ձուլուեցաւ թուղթի այդ պատառներուն վրայ, անոնց հետ: Երկու տոմսակ, անցագիր, սմսարի վարձք: Ի՞նչ փոյթ իրենց պարտուած գրպանները: Պիտի դար Նազենին: Մոռցաւ որ ինք շատ քիչ բան ունէր ծախսուած այդ Փրանքներուն մէջ: Մոռցաւ որ Ֆրանկիւլի քրտինքի կաթիլներն էին հատ հատ հաւաքեր այդ Փրանքները: Չյիշեց ընկերը, որովհետեւ ինքզինք նոյնացած կը զգար անոր հետ, եւ որովհետեւ միտքը ցատկեց, այս անգամ, սրահին անկիւնը: Փորձեց ունկնդրել ջութակներու հեծեծուն լարերէն կաթկթող սիրավէպի մը ողբերգական վախճանին: Հա՛, յիմարներ, — կը թուէր իրեն թէ ամէն իր ու ամէն գաղափար ժպիտ էր, խինդ էր ու քրքիջ: Եւ սա խելագար ջութակներն ալ կը հեկեկային, կը հեծկտային յուսահատ, անբուժելի ցաւէ մը վարակուածի պէս, խորտակուած սէրի մը, աւերուած կեանքի մը եղերերգին պէս: Ու չկրցաւ հասկնալ ջութակներու լեզուն: Դարձաւ արեւին եւ զմայլեցաւ անոր քրքիջին պայծառութեան վրայ: Անոր յորդ ու կենեղուտ ճառագայթներու ոսկեզօծումին տակ, սրճարանին առջեւէն, դիտեց տողանցքը գունազեղ, խելագուարճ բաղմութեան, որ կը քրքար, կը պոռչտար դինով, անփոյթ, անզգայ...:

Գրաւուեցաւ ինք ալ այս բոլորէն, լեցուեցաւ այս բոլորով ու խնդաց:

— Այս ո՛րքան երջանկութիւն: Կ'ըլլա՞յ այսքան երջանկութիւն, շարունակեց տարակուսանքով իր խորհրդածութիւնը: Նազենի՛, իմ Նազենիս, իմ արեւս, պիտի դա՛ս, չո՛ւտ, չո՛ւտ պիտի դաս:

Ու կարծես տեսաւ Փիլէո Լօթին, որ դէր ու խոնջած կնոջ մը տատանումներով քարափին կը քսէր կողերը: Կարծես լսեց ցայտքն ու շաշիւնը շողիին, որով նաւը իր պնչածակերը ճղմեց կատաղօրէն եւ խարխիսները ծով հոսեցան վայրի շառաչիւնով: Կամբջակին վրայ ճանցաւ դեղեցկութիւն եւ կարօտ հազած իր Նազենին: Յորդեցաւ ինք ալ երանութեամբ եւ համբոյրով: Եւ ցնծութենէն արբշիտ՝ ձեռքը ուժգնօրէն զարկաւ Ֆրանկիւլի կունակին: Մոռցած ինքզինք, չըջապատը, ջութակներուն ողբը, սպասարկողներուն ստուերը՝ զարկաւ Ֆրանկիւլի կունակին: Բայց մարմարէ սեղան մըն էր այդ կըռնակը եւ գարեջուրի բաժակը սարսափահար՝ իրեն նայեցաւ ծուռ-ծուռ:

— Այո՛, պարոն: Բա՞ն մը կը խնդրէիք արդեօք: Խոնարհելով հարցուց համազգեստաւոր պատանին:

— Լա՛ւ, բա՛ն մը: Նայեցէք: Լա՛ւ, լա՛ւ, վէն պլան մը բերէք, թոթովեց Տիրան:

Եւ երկիւղած զգուշութեամբ, ակնարկը տարածեց իր շուրջ, ստուգելու համար թէ մէկը նշմարա՞ծ էր իր շուարումը, իր ապուշ ինքնամոռացումը:

— Աստուածամա՛ր... չչնջեց:

Տեսաւ Պէնեուառ փողոցի «արեւ աղջիկը», որ կը ժպտէր իրեն:

Ու հզօր, անդիմադրելի հոսանքի մը յորձանուտներէն կալանուածի պէս՝ Տիրանի բիբերը երկչոտ, դողահար, բայց յանդուզն ու յամառ՝ մխրճուեցան այդ ժպտին մէջ: Փորձեց նետել գլուխը աջ կամ ձախ, եւ յաջողեցաւ գրեթէ, սակայն գլուխը միայն: Որովհետեւ նայուածքը մնաց շղթայուած աղջկան աչքերուն: Որովհետեւ չկրցաւ բռնաբարուող իր բիբերը ազատել անոր ժպտին զգեստնող կապանքներէն: Եւ փոխարէն՝ մէկ ձեռքը տարաւ փողկապին: Եւ ապահովուեցաւ որ անոր մատները չէին զայն լարողը, իր վզին շուրջ զայն սեղմողը: Մինչ աղջիկը, անձայն, անաղմուկ ծիծաղի մը եղաւ անձնատուր, որ ծաւալեցաւ, գրաւեց այտերը եւ պատասպարուեցաւ անոր փոսիկներուն մէջ, կարծես հանդէլու հա-

մար հոն պահ մը: Յետոյ, թեթեւ ոստումներով, ուղեց սահել ստորին շուրթին վրայէն, որ թրթռաց, դողդղաց աղուական այդ գեղուանքի հպումէն, սակայն զայն կիսող խրամը կտրելու պահուն՝ ծիծաղին յառաջապահ գիծը զրկուեցաւ իր հաւասարակշուրութենէն, եւ գահավիժելով աղջկան ծնօտին՝ փոռուեցաւ հոն խոռվիչ, նուազկոտ ու դարպասող մեղկութեամբ...:

Տիրան նայուածքը անոր կզակէն վերցուց լայնեզր ճերմակ գլխարկին, որ դեղին եւ դոց մանիչակազոյն բիծեր ունէր, բոցեղէն կարմիր փետուրով մը: Ապա իջեցուց մարմինին, որ սեղմօրէն զրկուած վարդազոյն շրջագգեհատէ մը՝ հրապուրիչ կորուսիւններ կը ցայտեցնէր: Իսկ ծիրանեզոյն կէս վերարկուն, անոր ուսերուն բազմած՝ թեւերուն եւ պարանոցին բոլորտիքը շրջանակ կը ձեւէր սպիտակ ու գեփիւռէ իր մուշտակով:

Դանդաղօրէն՝ աղջիկը բաժնուեցաւ իր սեղանէն եւ յառաջացաւ դէպի Տիրանը: Զգուշութեամբ եւ քնքշօրէն տիրացաւ տղուն դէմի աթոռին եւ տեղաւորուեցաւ աղերսարկու, խոստմնալի ժպիտով մը: Նուրբ ու կաթնազոյն մատներով բռնեց վեց պլանի գաւաթը եւ շրթները սեղմեց անոր եզերքին եւ պտտցուց շուրջանակի, խմելով պուտ մը միայն: Ու հրեց գաւաթը Տիրանին: Թաթխեց ճկոյթը գինիին մէջ եւ մօտեցուց տղուն բերնին ու քրքշաց, բարի, խորամանկ, ազնիւ ու խարդախ՝ հնչուն ձայնով մը քրքշաց:

Տիրան անոր դէմքին՝ արեւին քիչ առաջուան ծիծաղը տեսաւ եւ աչքերուն մէջ՝ հաղար-հաղար աստղերու լուսեղէն, պայծառ քթթումը...:

Ու սարսափի եւ ցանկութեան տակաւ սաստկացող դող մը մրճահարել սկսաւ, շատ արագօրէն եւ անխնայ՝ իր սրտին դռնակը, որ կարծես բաց մնաց պահ մը ծխնիներուն վրայ եւ արիւնի զսպուած ալիք մը ցայտեց մինչեւ իր խռչափողը: Պիտի խեղդուէ՛ր, քիչ մնաց, հա՛, մա՛ղ մնաց որ պիտի խեղդուէր: Բայց գլուխը դարձուց անդին: Փորձեց բարձրանալ ու մեկնիլ: Փորձեց ըսել անոր որ հեռանա՛յ, կորսուի՛ հեռանայ: Սակայն մար-

մինի եւ համբոյրի թանձր հոտ մը գգուեց ու արբեցուց իր ունդերը: Ու մեղկօրէն բայց ծանրօրէն այդ հոտին կոհակը ինչաւ նաեւ իր կամքին վրայ եւ սարսեց եւ փրշրեց զայն հողի, գաճի դիւրաբեկութեամբ:

Զգաց Տիրան որ խախտուած է իր դիմադրականութիւնը եւ ինք պարտուած է ու վիրաւոր: Բայց չխուսափեցաւ վերջին ճիգէն: Ու դարձուց գլուխը աղջկան: Կ'ուզէին աչքերը աղաչել, կ'ուզէր պաղատիլ աչքերով, — «Մ'ըներ, քա՛, մեղք ենք, մ'ըներ, մեղքեր մեզի, մեղքեր իր նազենիխ»:

Աչքերը սակայն մոռցան ինքզինքնին եւ ըսելիքնին,

Որովհետեւ կուրծքը սեղանին էր կրթնցուցեր աղջիկը: Եւ մարմարին չափ սպիտակ լանջքը, ողորկ ու հստանի, քակուած կոճակով մուշտակի բացուածքէն՝ միս ու մարմինի վերածուած արեւի երկու բուռ ճառագայթները կը շողացնէր զաղտնի, կատարներուն՝ մարած լիալուսիններով...: Եւ խեղճ աչքերը Տիրանին, անտէր, անզօր եւ անօթի աչքերը Տիրանին՝ գայթեցա՛ն, ակամա՛յ, ակամա՛յ գայթեցան եւ գլորեցան իր արգելքին, իր սաստին հակառակ գլորեցան դանոնք բաժնող լուսայորդ ձորակին մէջ եւ սահեցան դարվար, եւ վազեցին դարվար եւ դարձա՛ն, եւ դարձա՛ն, եւ դարձա՛ն...:

— Կուգա՛ս, իմ խենթ սիրականս...:

Տիրան երեսները կղզեց ձեռքերով: Բայց մատուրներուն արանքէն՝ խուլ հեկեկանքի մը հեռաւոր, թեւաւոր արձագանգները ճողոպրեցան շնչասպառ եւ իյնալով սեղանին ու աղջկան մարմարներուն, թպրտացին, հեւացին ու մարեցան:

Սակայն չէ՛, չէ՛ր լար ան: Հծծիւն մըն էր միայն: Հրաւէրը, այսքան մօտ, մատչելի եւ հաճոյակատար, պաղ, շատ պաղ սարսուռով մը սողոսկեցաւ իր բոլոր ջիղերէն ներս եւ ցնցեց զինք, պրկեց ու թօթուեց զինք: Յնցումներու խորտակիչ այս հոսանքին դէմ, ջախջախուած իր կամքին տակաւին կիսակենդան, հողեկարք փշուրները պատնէչեց: Ասոնց փլուզման եղերերդն էր

որ հծծիւններով կը թափէր սեղանին եւ աղջկան մարմարներուն :

Մինչ կուրծքէն ներս կը հեւար վիրաւոր ռազմադաշտ մը, ուր հակամարտ զգացումներ, խռովայոյճ մակընթացութեան եւ տեղատուութեան մը լայն ու խորունկ թաւալումներով՝ մոլեգին մարտնչումի մը եղեր էին անձնատուր: Եւ «արեւ աղջիկը» չտեսաւ անոր դէմքին ցաւազին կծկումները, որոնք ներքին խօլ պայքարներու ուժգնութիւնը կը ցոլացնէին եւ տղուն անսովոր ընթացքը վերադրեց տարբեր մտահոգութեան:

— Երթա՛նք. ես քեզ պառաններուն քով չեմ տանիր. անանկ տեղ մը ունիմ, ուր առանձին պիտի ըլլանք մենք եւ ուր պիտի չամչնաս դուն... երթանք:

Տիրան այլեւս ի դուր զօրաշարժել կը փորձէր իր ուժերը, իր անցեալն ու ասպզան: Եւ ի դուր Ֆրանկիւլի ցասկոտ ձայնը կը շնչար, «ակոսներդ կը կտորտե՛մ...» այնքան հեռուէ՛ն կուզար ան եւ շա՛տ աղօտ եւ շատ ո՛ւշ, ո՛ւշ:

«Արեւ աղջիկը» արդէն իր աչքերուն, կուրծքին, մարմինի եւ համբոյրի գրգռիչ հոտին փաթթած տղուն բոլոր երակները՝ քաշեր եւ հանգուցեր էր իրեն ու կը լարէր, կը դալարէր, կը ճմրթիէր զանոնք:

Իր ամբողջ էութիւնը, բաղկացուցիչ բոլոր տարրերով, անցեալով եւ ասպզայով, Ֆրանկիւլով եւ Նազենիով՝ կարծես անջատուեր, ծածկուեր էր իրմէն մշուշի, մառախուղի անշարժ ու անթափանց վարագոյրով մը: Բոլոր անորոջ խորհուրդներուն մէջէն, բոլոր տարտամ ուրուաղէմներուն ետեւէն եւ անանուն երկիւղներուն դիմաց՝ «արեւ աղջիկը» կը շողար յստակ, համադրաւ, տարփալառ իրականութեամբ, արտասովորօրէն գեղեցիկ ու հմայիչ, իրեն մօտ, բերնին ու ակոսներուն դէմ, ընծայուելու, ուտուելու պատրաստ:

— Քալէ, երթանք, երթանք որ հանգչիս...:

Ու հին ծանօթի մը պէս մտերիմ՝ աղիճը սեղմեց Տիրանին թեւը իրենին տակ ու քաշեց տարաւ:

Տղան հետեւեցաւ անոր, գլխիկոր, գաղտադողի չորս բոլորը դիտելէն, գիտնալ ուղելով թէ՛ ո՛վ ականատես կ'ըլլար իր անկումին: Պահ մը ճակատը շիեց մատնելով, անոր ետեւէն վանելու համար ամօթի եւ մտածման այն բեկորները, որոնք տակաւին կը փորձէին կասեցնել զինք, համոզել, արգելել զինք: Եւ յաջողեցաւ խեղդել զանոնք: Յանկութիւնը յորդալառ հոսանք մըն էր դարձեր, որ քշեց տարաւ զանոնք յարդի դիւրարեկ ծղօտներու պէս: Եւ Տիրան շարունակեց հետեւիլ աղջկան, կլանուած՝ կիւնը ունենալու եւ ճանչնալու այլեւս անդիմադրելի մոլունքէն: Կը քալէր, անձնատուր խօլ ու սանձրածակ մտապատկերներու, որոնք մեղաւոր վայելքներու հեշտալուր մեղեդիներ էին դաշնակեր իրեն, խուլ ու մռայլ դիւերներու ծոցը: Երջուեր էր ինքն իր մէջ: Գիտակցութիւնը լքեր էր զինք: Եւ իր ենթագիտակցական էութեան բոլոր սանձուած, կաշկանդուած քմայքներն ու կիրքերը շղթայադերձ՝ հիմա կը գրոհէին իր վրայ եւ կամազուրկ ու բարոյազուրկ առարկայի մը նման՝ իրենց մարմնատենչ շունչով մահիճէ մահիճ եւ գիրկէ գիրկ կը շարտէին զինք:

Եւ ուղեց հասկնալ սահմանումը իբրութեան: Բազմաց գիտնալ թէ ինչո՞ւ բոլոր իր տարեկից ընկերները, գիրքերու անառակ հերոսներուն պէս, կը ձգտէին շատ կիներու, միշտ տարբեր կիներու: Ինչո՞ւ: Ի՞նչ պիտի ըլլայ տարբերութիւնը անսովոր հրապոյրով եւ գրաւչութեամբ սա աղջկան եւ իր համեստ, աղուոր Նազենիին: Ու ցանկաց ասլրիլ անգամ մը, միայն անգամ մը, կեանքը վէպերու այն հերոսներուն, որոնց մտածումին հորիզոնները սրունքներով, պորտերով եւ ծիծերով են գծուեր, որոնց երազները զառանցանքներ են, մարմիններու հրայրքոտ յաճախանքով քրտնած: Ի՞նչ կ'ըլլայ որ...:

— Մեղանչո՞ւմ մը, սայթաքո՞ւմ մը պիտի ըլլայ ասիկա:

Ի՞նչ կ'ըլլայ անգամ մը... ո՞վ չէ ունեցեր անգամ

մը, մանաւանդ մա'րդ պիտի չգիտնայ, ո՛չ ոք, ո՛չ ոք պիտի գիտնայ:

— Ի՞նչ կ'ըլլայ անգամ մը իյնալով:

Միջանցքի կիսաստուերին մէջ, երկիւղի եւ ընկըր-կումի շարժում մը ըրաւ տղան: Այլջիկը նշմարեց անոր վարանումը եւ քաջալերելու, գինովցնելու համար դայն, գրկեց անոր գլուխը, որ կ'այրէր ջերմէն եւ բարձրա-նալով ոտքի մատներուն վրայ՝ շրթներով մեղմօրէն շո-յեց անոր տենդավառ բերանը: Տիրան արբշիւ, խելա-կորոյս, բազուկներով ձմլեց աղջկան մէջքը իր մարմնին դէմ ու կատաղօրէն համբուրեց դայն:

Եւ լուռ, յանցաւոր, բարկացած՝ մտաւ սենեակ ա-նոր ետեւէն....:

Հեռաւոր եկեղեցիի մը կոչնակները կը զօղանջէին ծանրօրէն, կարծես կ'արտասուէին տխրօրէն, ներսը հանգչող թարմ գիւակի մը վրայ....:

Զ.

... Բորբոքած արիւնն ու սանձակոտոր երեւակա-յութիւնը հրաշալի երեւոյթ մը քանդակելով «արեւ աղ-ջիկ»էն, դայն ցոլարձակեր էին իր հմայուած աչքերուն գիմաց:

Կարծեր էր տեսնել առասպելական ապարանք մը, որուն սուկեծոյլ եւ նշուլագեղ կամարներուն տակէն, հէքեաթային լուսաբիր իշխանուհի մը, վարդաթոյր թեւերը իրեն պարզած՝ արծաթահունչ ձայնին կարօտա-հեծ նուազով գինք իր գրկին կը կանչէր...: Այդ գլեհա-կին փայլէն եւ արեւափառ աղջկան անմատչելի կախար-դանքէն շացած՝ ինք վազեր էր անոնց, կոխկրտելով, փչրելով ինչ որ կը ձգուէր իրենց միջեւ:

Հասաւ, գիտեց եւ պատկառանքով շօշափեց պալա-տին հոյակերտ շքեղութիւնն ու նազելաշուք իշխանու-հիին ծաղկարոյր մօրթը: Բայց այս աղէտալի հպումէն վերջ, ինչ որ մնաց իր ամբողջ մէջ, ճերմակ դանկ մըն

էր կմախքի, որդերով եւ դարչահոտութեամբ լեցուն: Զարմանալիօրէն ճկուն ու ծփուն՝ արագօրէն կ'անէա-նային, կը գոլորշիանային փլատակները հիմնայտակ կործանած լուսեղէն ապարանքին եւ անոր հեշտալի բնակչուհիի մարմնին: Եւ վերածուելով ամպերու վիթ-խարի դանդուածի մը, գաղբելի նոյն որդերն ու հեղձու-ցիչ նոյն դարչանքը կ'անձրեւէին իր վրայ ծանր ու յորդ հեղեղումով մը:

Եւ հիասթափ ու ամօթահար, փախչելու համար այդ խեղդող լողանքէն, շիթ աճապարանքով մը ան նետ-ուեցաւ անկողինէն դուրս: Կօշիկները անցուց ոտքե-րուն եւ բաճկոնը կոնակին ու կը շտապէր դէպի դուռ, երբ թանձրացած այն ամպերէն նուրբ ու շիկնոտ կայծակ մը սուլեց եւ բեւեռեց իր ոտքերը տախտակամածին:

— Հէ՛յ, իմ պղտի՛կ ասպետս, վա'րձքս մոռցար....:

Եւ «վարձքը» խոշորցաւ, տիրացաւ սենեակին եւ ուժգնօրէն փարեցաւ իր սրունքներուն, ծանրօրէն շո-քեցաւ կօշիկներուն, որոնք կարծես պիտի խրէին յա-տակին, կը դամուէին տախտակամածին: Դարձաւ ետ եւ յամբօրէն մօտենալով անկողինին՝ անոր վրայ շրջեց գրպանը եւ պարպեց ինչ որ կնք հոն: Ու պատահաբար՝ աչքերը ինկան «արեւ աղջկան» մերկ ու կիսածածկ մար-մինին: Ո՛րքան տժգոյն եւ անհրապօյր թուեցաւ ան ի-րեն: Արգահատանքի եւ զղուանքի եւ ամօթի խառն զգացումով մը գրաւուեցաւ աղջկան եւ ինքզինքին հան-դէպ:

Ու կը վազէր հիմա գրեթէ: Եւ սալարկուած մայ-թերը կ'երերային իր դանդաչող քայլերուն տակ: Ան-ցորդներու անտարբեր նայուածքները իրեն ուղղուած սպառնացալտ հրազններու բերաններ ենթադրեց յա-ճախ: Եւ շուրջը կը դիտէր ուշադիր, դադառադողի ու կը թուէր իրեն թէ բոլորը գիտեն իր ուրկէ՛՛ դալը, ին-չէ՛ն դալը, եւ կը ծածկէր դէմքը, որ շտեսնեն զինք, որ չճանչնան զինք:

Իր այս անդառնալի նուաստացման մտածումը, ա-նողքելի ոստիկանի մը համազգեստ հագած՝ խարազան

կը ճօճէր իր դէմ եւ ինք, խղճահար յանցագործի մը պէս կը փախչէր այն ճամբաներէն, որոնցմէ քիչ առաջ անցեր էր, գինո՞վ, ոտնահարելով, խորտակելով ամէն բան որ կը ձգուէր անոնց երկայնքին:

Եւ հանրային պարտէզ մտնելու համար փողոցը անցած պահուն, լսել կարծեց աղիողորմ հեծեծանքն ու ցասկոտ սաստը անոնց, որոնք կոխկրտուեր էին իր մոլեզին կիրքէն գերեվարուած ոտքերուն տակ:

Նաղենին ներկայ կը թուէր իր քով: Գլուխը ծռած ուսին, աղուոր թարթիչներուն վրայ սառած բիւրեղներով, սրսափացող բոսոր շրթներուն զսպուած դանդատ մը ունէր, որ ցատկեց դուրս ցաւազին եւ երկիւղած մըրմունջով մը, — «Ինչո՞ւ... ինչո՞ւ...»:

Ու Ֆրանկն ալ: Ահա Ֆրանկն ալ: Ատամները իրար խրած, կարծես մեղմելու, խածնելու համար ցաւը այտերուն, որոնք կը քած՝ կը դողդոջային այտուկներու ձգած ստուերներուն ներքեւ: Կծկուող կոպերուն արանքէն, շողացայտ բիբերը կը ճչային իրեն ծանօթ աղբարութիւնը, «— Ակուաներդ կը կտորտե՛մ, ըսի քեզի, չըսի՞ քեզի...»:

Բռնկած թեւերով թռչունի մը պէս, որ խելացնոր ճռուողիւններով կը սուրայ միջոցին մէջ եւ ճիւղէ ճիւղ կը զարնէ խանձուող ու ցաւատանջ իր մարմինը՝ Տիրանի խղճահար ու բորբոքած երեւակայութիւնը ուղեկորոյս կ'արշաւէր իր սրտին անհուն տարածութեան վրայ, զինք հալածող այս անողոք մտապատկերները նկարելով: Մինչեւ որ հասաւ խոշոր ծառի մը լուռ ու ամայի ստուերին տակ եւ յուսահատ, ուժասպառ փլաւ հանրապարտէզի նստարաններէն մէկուն երկայնքին:

Այս անգամ աւելի յստակ ու ցայտուն գիծերով երեւցան իրեն Նաղենիին եւ Ֆրանկիւլին ուրուանկարները: Այս անգամ անոնք կը դիտէին զինք անչչունչ, զէմքերնուն՝ ամօթի եւ մեղադրանքի ցաւազին ու տըրտում արտայայտութիւնը կրելով:

Չախ արմուկով կրթնած նստարանի յենակին, մատներով ճմրթկեց ճակատը, որ կը մըճահարուէր կարծես

ներսէն եւ աչքերը, որոնք կը կսկծային սաստկօրէն: Յուրտ սարսուռ մը անցաւ ամբողջ մարմնէն, պահ մը յամենալով սրտին մէջ: Ու փղձկող կոկորդէն երկչոտ մըմուկ մը սահելով դուրս՝ ինկաւ դողդոջուն շրթներէն վար:

— Իմ աղուոր Նաղենիա, իմ բարի, իմ աննման Ֆրանկս, ներողութի՛ւն, ներո՞ղութ...: Չկրցաւ աւարտել, որովհետեւ իր ամբողջ ուժերուն պէտք ունէր, զսպելու համար հեղեկանք մը, որ կը բարձրանար կուրծքէն վեր: Սանձեց, պատուտեց դայն ալուաներով, բայց փչուրները յաջողեցան փախչիլ դուրս, կցկտուր խօսքերու վերածուած:

— Ա՛հ, մարմին... դուն պժղալի մսակոյտ... դուն դարչահոտ... դուն շնացո՞ղ դիակ... դո՞ւն...:

... Ծառերու սօսափող տերեւներուն ընդմէջէն, պողտային հանդիպակաց կողմը, Տիրան կը տեսնէր կարմիր, ճերմակ, դեղին ու կանաչ լոյսերու հրաշագեղ ցայտատոն մը, սարքուած շարժանկարի նորակառոյց Քրիսթալ թատրոնի ճակատին: Գունաւառ, հրեղէն այդ աչքերուն կինասպարար բացխիւղած դիտեց սեւեռուն նայուածքով եւ տակաւին մտացիր: Ի՛նչ օրինակելի կարգաւորութիւն էր որ կ'իշխէր անոնց յաջորդական եւ արագ թարթումներէն կազմուող լոյսի ջրվէժին մէջ: Եթէ յաջողէր տիրե՛լ իր խորհուրդներու տենդին եւ զանոնք դասաւորել հետեւողութեամբ սա ելեքարական աստղերու օրինապահ քթթումին:

Երկու ժամեր սահեր էին, մինչեւ որ կրցաւ ազահովուել թէ միտքը սկսեր է սթափիլ տառապաղէն եւ անդիմադրելի թմբիւրէ մը, որ զինք ամբողջական անդամալուծման մը դատապարտեր էր այսքան ատեն: Հիմա ցուրտ, անխոով եւ ամէն զիջումի տրամադիր խաղաղութիւն մը կ'իջնէր ու կը ծաւալէր իր մէջ:

Ու փորձեց եզրակացութեան մը կապել մտածումները: Բայց այս ձեռնարկին համար նախապայման էր ընդունիլ թէ ինք դաւաճանած էր Նաղենիին, Ֆրանկիւ-

լին եւ ինքզինքին: Եւ արդէն կատարուած իրողութիւն մըն էր ատիկա: Անուրանալի, անսրբազրելի, անջնջելի: Ուրեմն իրեն ի՞նչ կը մնար ընել: Քառութեան միակ եղանակը, խորհեցաւ, դործուած յանցանքին արժանի հատուցում մը ընծայելն է, եւ առանց յետաձգումի, առանց տատանումի: Ու այնպիսի հատուցում մը, որ կարենար գէթ նուազագոյն չափով մեղմել, հաւասարակշռել իր վատութիւնը: Զայն գտնելու որոշումով դատաստանի նստաւ ինքն իր մէջ: Ինք նշանակուեցաւ դատաւոր իրմէ եւ ընտրեց զինք դատախազ պահանջատէրին համար՝ որ ինքն էր եւ փաստարան ամբաստանեալին համար՝ որ ինքն էր դարձեալ:

Նախ՝ անիրաւուած երբորդը, այսինքն «ինքզինք» ձեռք դուրս այս ընդհանուր հաշուեյարգարէն: Որովհետեւ յետոյ պիտի կրնար դոհացնել «ինքզինք», զայն պատուհասելով խոր ու անկեղծ ասպառէ մը բխելիք չարչարազին տուայտանքով: Պիտի հաշտուէր «ինքզինքին» հետ, համակերպելով անոր բոլոր պայմաններուն, խոնարհելով անոր բոլոր պահանջներուն առջեւ՝ որքան ալ նուաստացուցիչ, որքան ալ անհանդուրժելի ըլլային անոնք:

Յետոյ՝ ...: Նայեցաւ Քրիստոսի ցայդահանդէսին: Ելեքտրապատ անհամար բիրեր իրենց կարմիր, ճերմակ, դեղին ու կանաչ թափանցիկ կոպերուն տակէն՝ մանր բայց սրընթաց ստումներով դիրար հալածելու չարածճի խաղի մըն էին ելեր: Անոնց համաչափ, յարատեւ ու անձանձիր թարթումներէն կը ձեւուէր անաղմուկ սուղոսկումը բոցեղէն եւ երփներանգ շլթայի մը, որ ճապուկ դալարումներով կ'արչաւէր շէնքի ճակատի երկայնքին ու լայնքին, բազմադոյն ճառագայթներու այս շատրուանին լուսափրփուրը հոսեցնելով խաւարին սեւ ծոցը:

Բայց Տիրան իր յոգնարեկ եւ տխուր նայուածքը այս բոլորէն դարձուց Նազինիի եւ Ֆրանկիլի ստուերներուն, որոնք ուժգնօրէն ներկայ էին հոն: Անհանդիստ մասները դեռ ջղաձգօրէն կը ճմրթկէին իր դէմքը, ճա-

կատէն սահելով ձախ այտին եւ անկէ՝ կզակին: Մեկնակէտ մը կը փնտուէր: Ի՞նչպէս եւ ո՞ւր կէ պիտի սկսէր: Հարկաւ, ամէն բանէ առաջ, պէտք է անոնց խոստովանիլ իր մեղապարտ արարքը: Այո, անխուսափելի նախապայմանն է ատիկա: Եւ ինք հիմա կը զգար թէ անհրաժեշտ կորովն ու քաջութիւնը ունէր այդ խոստովանանքը ընելու եւ սիրայօժար անոնց վճիռին, անոնցմէ սահմանուելիք պատիժին ենթարկուելու համար: Իր յանցանքը քաւելու եւ ներման արժանանալու միակ տրամարանական ուղին թուեցաւ այս իրեն: Եւ, կարծես համոզելու համար ինքզինք, թէ այդ ընթացքէն տարբեր երկընտրանք չունի՝ իրեն լսելի ձայնով կրկնեց նոյն եզրակացութիւնը.

— Պէտք է այս պատահարը պատմեմ իրենց: Թող իրենք դատեն: Եթէ չեն կրնար ներել եւ պիտի մերժեն զիս, ըսել է որ անարժան եմ անոնց բարեկամութեան:

Անբացատրելի, անորոշ զգայնութիւն մը կ'ունենայ բանտարկեալը, որ երկար տարիներ, խաւարապատ ու մահահոտ զնտանին խորը շղթայակապ, իր անթիւ յոյսերուն եւ երազներուն խեղդուելը տեսնելէ յետոյ, օր մըն ալ երկաթէ դարպասներէն դուրս, իր մոռյալ դէմքը փայփայող մաքուր օդին եւ վերէն ժպտացող արեւին մէջ, կը լսէ օրէնքի դոնապանին ծանօթ ձայնը, — Ազատ ես հիմա, գնա՛...:

Նման հոգեվիճակէ մը կ'անցնէր Տիրան: Խոստովանելու որոշումը փայլակէ շեղբի մը պէս ինկաւ իր կուրծքը ճմլող, ամբաձոյլ շլթայի մէջքին, փշրելով զայն: Ու դով ու թեթեւ անդորրութիւն մը պարուրեց զինք: Անցուցած վերջին երկու ժամերը, երկու տասնամեակներու չափ երկար ու դաժան երեւցեր էին իրեն, զնտանի ցուրտ խաւարին նման՝ անյոյս առանձնութեան սարսափով պատելով զինք: Եւ այժմ կը զգար թէ իր խորհուրդները կաշկանդող եւ մթաղնող բոլոր կապանքները կ'անյայտանային տակաւ: Ու կ'անդնելով ոտքի, ներշնչեց զիշերային թարմ ու կաղզուրիչ օդը: Ի՞նչ հաճելի է շնչել այսպէս երկարօրէն, ուռեցնելով կուրծքը,

գլխանալով որ խիղճդ ազատագրուեք է յամառ յաճախանքներու խոչտանդումէն: Ու նայեցաւ լուսաշառայլ Գաննըպիէնին, ունկնդրեց անոր կենսախայտ, հեռաւոր հեւքին: Յետոյ աչքերը դարձուց Քրիստոսայի գեղազուարճ ցալդահանդէսին: Ո՛րքան հմայիչ է դոյներուն եւ լոյսին սա պարզ ու մանկամիտ խաղը: Մանաւանդ ի՞նչ քաղցր է սա օդը, որ մարդ կը շնչէ ծանր ճշնաժամէ մը վերահանդնած խղճով: Բայց հազիւ երկու քայլ փոխած՝ Տիրան ինկաւ նստարանի վարի ծայրին:

Չէ՛ր, չէր կրնար կառչիլ այս պատրանքին, այս ինքնախարէութեան չքմեղանքին: Սոստովանիլը նոր վատութեան մը համազօր թուեցաւ իրեն: Որովհետեւ խոստովանելով՝ հոգիի խաղաղութիւն պիտի գտնէր ինք ամբողջական ներումի հետ: Այո՛, պիտի ներէին իրեն երկուքն ալ, թէ՛ Պրանկիւլ եւ թէ՛ Նադենի: Ա՛յնքան անտանելիօրէն բարի էին անոնք եւ ա՛յնպիսի տարօրինակ զգացում մըն էր իրենց փոխադարձ սէրը: Անտարակո՛յս, պիտի ներէին իր կողմէն անոնց հասցուած այս անարդանքին եւ պիտի մոռնային շուտով եւ ինք պիտի ազատէր անպատի՛ժ... այս հաւանական արդիւնքին հեռապատկերն իսկ խորապէս կը վերաւորէր իր արժանապատուութիւնը:

Ուրեմն գաղտնիքի անթափանց քօղով մը ծածկելու է իր մեղանշումը, խորհեցաւ: Եւ ամէն անգամ որ Պրանկիւլ կամ Նադենի դորովի կամ վստահութեան ժպիտով մը երջանկացնեն զինք, իր այսօրուան արարքին վերջնաւոր տխրաշուք անդրադարձումով պիտի փռուի մտածումին վրայ, զղջումի եւ ցաւի տուայտանքներով թունաւորելով երանելի այդ սլահերը: Ու համոզուեցաւ, որ իր յանցանքին քաւութեան համար ամէնէն ազդու, ամէնէն անազորոյն եւ բարեբար հատուցում-պատիժը պիտի ըլլայ այս: Այո, նաեւ բարեբար, որովհետեւ անկաշառելի յուշարարի մը պէս, ան պիտի չչնջայ իր ականջներուն անցեալ սխալի մը պատճառած հոգեկան խռովքը, անխորտակելի պատուարի մը նման ցցուելով նոր սայթաքումներու, նոր փորձութիւններու դէմ:

Եւ յիշեց «արեւ աղջիկ»ն ու իր փախուստը անկէ: Թէեւ տարտամօրէն՝ բայց յիշեց նաեւ որ միջանցքի կիսաստուերին մէջ զարնուեցաւ հսկայ մարմինի մը, որ ալքօլ ու նկուղ կը հոսէր եւ հայհոյանք կ'արտաշնչէր: Անոր դիժերը պայծառացան, շեշտուեցան հետզհետէ: Գինով մըն էր, բիրտ երեւոյթով, որ լեզուին վրայ լըպիւրջ բառերու խուրճ մը խաղցնելէն՝ ներս կը խուժէր իր ելած դուռէն...: Երեւակայութիւնը ամփոփուեցաւ եւ նստաւ «արեւ աղջիկ» դալիհահար կուրծքին: Ի՞նչ տաժանելի սպասարկութիւն...: Եւ մինչեւ այն ատեն իրեն անծանօթ յուզում մը շարժեցաւ իր մէջ: Համակրանքի վերափոխուող այդ զգացումը իրապէս, խորապէս ցնցեց զինք: Այդ աղջիկն ու իր բախտակիցները կը սկսէին աւելի քնքոյշ ընդունելութիւն մը դանել իր հողիէն ներս: Եւ ինք, որ ա՛յնքան կը սիրէր հեղնել Պրանկիւլը այդ «տիկարութեան» համար՝ կը զգար թէ կը «կալուղնար» տակաւ: Եւ նողկանքը, որմէ մտրակուած փախեր էր «արեւ աղջիկ» սենեակէն, հիմա փշրուած՝ կը նահանջէր այս անծանօթ, նորօրինակ յուզումին յաղթական քայլերուն առջեւէն: Ու սլահ մը մրմնջեց, «— Խե՛ղճ քոյ...» բայց կտրեց: Չաւարտեց բառը: Հապա եթէ լսողներ ըլլային: Ու չորս բոլորը զիտեց զաղտազուղի: Չկա՛ր, մարդ չկար: Եւ փափսաց, «... ըիկս»: Ամչցաւ սակայն իր այս ամօթալի վախին համար ու մէկէն բարձրացուց ձայնը, «— Քոյրիկս — թո՛ղ լսեն, բոլո՛րը թող լսեն. «քոյրս, խե՛ղճ քոյրս...»:

Եւ մտածումը վաղեց ու տարածուեցաւ բոլոր բողբոջներուն, Պրանկիւլի «քոյրերուն» վրայ: Ու կառչեցաւ անոնց: Մերժելով բաժնուիլ՝ կառչեցաւ անոնց: Եւ թախանձեց, եւ պաղատեցաւ որ չարհամարհեն իր եղբայրութիւնը: Քանի որ ընդունեք են իր եղբոր — Պրանկիւլի — եղբայրութիւնը, աղաչեց որ չծաղրեն իրենը...:

Ուղղուեցաւ դէպի տուն:

Դուռը բացած պահուն՝ Պրանկիւլ սենեակը կը մաքրէր յիշոցներու խուրճ մը խածած:

— Հա՛, կեցցե՛ս, ճի՛շտ ասանկ. անտէր շան նման

փողոցները սըքտացուր զիս ժամերով՝ դուն ելիր թատրոն գնա. յետոյ տուն եկուր եւ ծեծուած ու ողորմելի կատուի մը պէս աչքերուս մէջ նայէ, նայէ'...

— Ես թատրոն...

— Գացած չէիր, հա՛րկաւ, կը գործէիր Նազենիդէ համար: Վարպետդ կատակ ըրաւ երբ հեռաձայնիս պատասխանեց թէ սովորականէն երկու ժամ կանուխ ձգեր ես աշխատանոցդ:

— Գիշ մը սպասեցի քեզի, բայց լաւ չէի զգար... տեսակ մըն էի... Ելայ...

— Լա՛ւ, լաւ, գիտեմ, տակդ փուշ կա՛յ. չես կրնար վայրկեան մը դամուիլ աթոռիդ. գիտե՛մ, Նազենի՛, գիշեր-ցերեկ Նազենի... հասկցա՛նք, լակո՛տ, հողի՞դ ելաւ, քանի մը շարաթէն կուգայ... հա՛, դրամ, անցազիրը, տոմսերը դրկեցիր անշուշտ: ... Ո՞ր սրահը պատուեցիր այսքան երկար:

— Դրկեցի բոլորն ալ:

— Ո՞ւր գացեր էիր այսքան երկար:

— Աղուոր զարդարեր էին Գրիսթալը: Տակաւին «Միշէլ Սթրոկօֆը» կը դառնար: ... Սքանչելի էր Իվան Մոստուկինի խաղարկութիւնը... Շահխաթունին իրապէս վարպետ դուրս եկաւ: ... Նաթալի Գօլմանքօն բարութիւնը մարմնաւորեց անօրինակ հարադատութեամբ... ա՛յնքան բարի... մարդ կ'ըլլա՞յ այդքան բարի...:

— Հա՛, հա՛, հա՛, սըւոր աչքերուն նայեցէք. մէյ մը նայեցէք, Աստուածնիդ սիրէք, նայեցէք: Ծօ լեցուեր են, աչքերդ լեցուեր են. ի՛նչ ալ աղուոր կ'երեւաս: Ծօ մենք այդ պատկերը անցեալ օր միասին տեսանք: Դուն խնդացիր այն ատեն: Հիմա լեցուեր են աչքերդ: Բան մը պատահեր է անպատճառ: Ես հոտ կ'առնեմ: Ո՞ւր հանդիպեցար սուրբ հողիին, ըսէ՛, ո՞ւր հանդիպեցար: Աստուածամար: Ծօ դուն ասկէ առաջ դերասանուհիի մը կորութիւններէն դատ՝ վարդ չէիր տաներ քթիդ: Հիմա «բարութիւնով» կը հետաքրքրուիս, «բարութեան» մասին կը խօսիս: Ծնորհաւոր ըլլա՛յ: Նորութիւն է, արտասովոր նորութիւն: Աֆէրիմ Նազենի, հրաշք է

գործեր վրադ: Բայց նայէ որքա՛ն անհաւատալի կուգայ ասիկա ինձի. ըսել է նորէ՞ն դացիր «Սթրոկօֆին»...:

— ... Չէ ... սարտէղը նստեր էի ... Գրիսթալի լոյսերը կը դիտէի... այնպէս, միտքս դնաց պատկերին եւ խորհեցայ... վերջիչեցի եւ ... խորհեցայ ...:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հա՛, հա՛, հա՛, Աստուածամայրը վրադ է նայեր, ծօ՛, իրա՛ւ կ'ըսեմ, վրադ է նայեր...:

— Անպատճառ պէ՞տք է ծաղրես...

— Չեմ ծաղրեր, եղբա՛յր, ճշմարիտ կ'ըսեմ որ չեմ ծաղրեր, ուրախութենէս է, չե՞ս տեսներ, երջանկութենէս է... հա՛, հա՛, հա՛...:

Եւ գրկելով Տիրանի մէջքէն՝ նետեց մահճակալին վրայ: Ու ծիծաղեցա՛ւ, առաջին անգամ ըլլալով՝ առանց ցաւի, անխառն ու յորդ: Եւ հեծնելով ընկերոջ կուրծքին՝ սկսաւ ձմրթկել դայն: — Լուրջ կուի է ասիկա, ինքզինքդ պաշտպանէ, քրքջաց: Ու փաթթուած իրարու՝ թաւալեցան մահիճի լայնքին զիրար չարչարելով կեղծ կատաղութեամբ մը: Մէկէն անչարժացան երես-երեսի: Պա՛հ մը միայն: Յետոյ՝ դարձան ճակատ ճակատի: Երկուքին ալ ստորին թարթիչներուն վրայ, մէկ-մէկ կաթիլ արծաթափայլ արցունք էր նստեր: Փրանկիւլին՝ խոր ու երանաւէտ ժպտէ մը գրկուած. Տիրանին՝ նայուածքի տրտում սեւեռումէ մը...:

Է.

Անխախտելի կանոն ըրած էին ամէն տարի այս ամսուն բժշկական քննութեան ենթարկուիլ: Լա՛ւ բան է առողջ ըլլալու ասպահովութիւնը ունենալ, կը խորհէին երկուքն ալ: Մարմինը, որուն մէջ կ'ապրինք մեր մըտքով եւ հողիով եւ որ ամբողջ տարին չարաչար կ'աշխատի մեր տարրական պահանջներու բաւարարման միջոցը, — դրամը հայթայթելու համար՝ արժանի է գէթ սահարեանցի հոգածութեան, կը մտածէր Փրանկիւլ,

մինչ անհանդիստ, խոնոված՝ կ'երթեւեկէր սպասման սրահի երկայնքին:

— Ի՞նչ կ'ընեն ասոնք ներսը:

Ինկաւ դիրկը թաւիչէ բազկաթոռին եւ հանդարտ խորասուզում մը կեղծեց: Բայց պատի ժամացոյցին աներես սլաքները լրենց անընդհատ, միօրինակ մըճահարումով խենթեցուցին կեղծիքը, որ բարկութենէն ճակատը զարկաւ Յ-ի ատամներուն եւ պատուտեց ինքզինք: Այդ ձեղքուածքէն մտահոգութիւնը նետուեցաւ դուրս սարսափին դատան ծպտումով:

— Կէս ժամ եղաւ սպասելս: Այս ասուշ բժիշկն ալ մա՞ղ կը համբէ, ի՞նչ կ'ընէ...

Ջղային շարժումով մը իր մարմինէն քակեց կիսաբոլորակը բազկաթոռի թաւիչէ թեւերուն եւ ցատկեց դէպի ժամացոյցը, կարծես լռեցնելու համար անոր մէջ պահուելու մունետիկը որ ժամանակը կը դանդահարէր ծաղրածուի անտարբերութեամբ. ո՞ւշ. ան լռեր էր արդէն երրորդ հնչիւնէն վերջ: Ժամը երե՞քն է...

— Նախորդ այցելութիւնները 10-ական վայրկեանէն կը լմննային: Ինչո՞ւ այսքան երկար կը տեւէ ասիկա:

«Թի՛ք-թա՛ք, թի՛ք-թա՛ք, հիւ-ւա՛նդ, հիւ-ւա՛նդ, յի՛ւ մար, հիւ-ւա՛նդ...»

Գէշ նախազգացումի մը փախուքը դաւաճանեց լրեն եւ միացաւ ժամացոյցի սպասանալիքին.

— Հա՛, ասուշնե՛ր, կրակի պէս մաքուր եւ առողջ է ան, փորձեց համոզել զանոնք: Կասկածը սակայն՝ տապալեց զինք բազմոցին: Առանց պատճառի ճմրթկեց հոն մոռցուած բժշկական հանդէսը եւ դարձեալ առանց պատճառի՝ սկսաւ թղթատել զայն, աստակելով էջերը:

Նայուածքը թուղթին դամուեցաւ յանկարծ:

Սիֆիլիսէն կրճուած երեք դէմքերու աւերակները ստուեր էին հոն: Մէկուն այտը, միւսին վերի շրթունքը, երրորդին ձախ կղակակողը հալեր թափեր էին կտուց-կտուց: Բացակայ միտի կաթիլներուն այդ պարպուած փոսիկները, այլանդակ ծամածոութեամբ սոսկալի ան-

դունդներ թուեցան Ֆրանկիւլի, որոնք ծանրօրէն, յամառօրէն կախուեցան իր աչքերէն:

«Պղտիկ եւ մեղաւոր հաճոյքներուն ահուկի եւ անբուժելի հետեւանքները» խորագրով յօդուած մըն էր, ստորագրուած՝ Տօքթ. Ժիւլիէն Տիւպուայէ:

«... Պէտք է զօրաւոր հակակշռի ենթարկել հանրատունները, հսկողութիւնը խստացնելով: Գլխաւոր վրտանդը կուզայ սակայն դադարի տուններու անվաւեր պոռնիկներէն...: Պարզապէս ահաւոր է անոնց տարածած աւերներուն չափը: ... Անոնք արդաւանդ հիւրընկալները եւ առատաձեռն մատակարարներն են վեներական բոլոր ախտերուն...: Եւ ի՞ժեքէն աւելի թունալի եւ անգութ են այդ թշուառական աղջիկները...»:

— Արդահատելի էք, պարոն բժիշկ, եւ ստախոս կամ տղէտ, եւ աւելի թշուառական քան ամէնէն թշուառականը անոնցմէ:

Եւ ցասումով արձանադրեց, պատճառ եւ ապացոյց՝ լուսանցքին եւ յօդուածին մնացեալ միջոցին վրայ:

— Monsieur Frank?

Կիսաբաց դուռէն բժիշկին ճերմակ կիսամօրուքը ժպտեցաւ Ֆրանկիւլի:

Գունատ ու շիթ՝ Տիրան դանդաղօրէն կը յառաջանար դէպի աթոռ մը, առանց իրեն նայելու:

— Բան մը ունի՞ս:

— Չեմ դիտեր... երկար-երկար քննեց բայց բառ մը անդամ չըսաւ:

— Monsieur...

— Ներեցէք, պարոն բժիշկ:

Յամբօրէն բազմոցին դիրկը ընկղմեցաւ Տիրան: Կասկածին սարսափը փաթթուեցաւ մատներուն եւ ուժգնօրէն դալարեց զանոնք իր քունքերուն եւ ճակատին վրայ:

— Հասպա եթէ հիւանդ եմ... հասպա եթէ վարակուած եմ...:

Տակաւին երբեք անդրադարձած չէր ատոր: Երբեք մտածած չէր այդպիսի հաւանականութեան մը մասին:

իր արարքին բարոյական թելադրանքը, յամառօրէն տարածեթ, տիրակալած էր իրեն այնպիսի խստութեամբ, որ Ֆրիդրիխական քայքայումի մը կարելիութեան երկիւղը չէր ժպրհած դարպասելու իրեն:

— Իսկ ինչո՞ւ բժիշկը այդպէս տխուր-տխուր դիտեց զիս...:

Գանկը վերածուած էր խառնարանի մը անդեկ ու մոլորած խորհուրդներու:

Եւ սարսափը ուռած՝ թանձր ու ցուրտ լաւայի արձիճէ ծալքերով կ'իջնէր իր վրայ ու կը ծածկէր զինք հետզհետէ:

Այդ պահուն էր որ Յրանկիւլի բաց ձգած պարբերաթերթին հանդիպեցան մատները, մինչ Ղրաճիզ շարժումներով բազմոցին թաւիշը կը ճանկրտէին: Բարձրացուց զայն շարտելու համար... ո՞ւր, եւ ինչո՞ւ, «—... եւ ինչո՞ւ», կարծես բացականչեց, թէեւ օտար լեզուով, ընկերով ձեռագիրը: Եւ տենդոտ փնտռուքէ մը վերջ, գտաւ լուսանցքին վրայ կտոր-կտոր տարտղնուած տողերուն ներքին կապերը եւ յաջողեցաւ ամբողջացնել անոնց իմաստը.

«— Բայց պարո՛ն բժիշկ, դիտէ՛ք անշուշտ թէ ախտաւոր չի ծնան այդ «թշուառական» աղջիկները: Գիտէ՛ք թէ հասարակ միջնորդներ են անոնք, կ'առնեն մեղմէ, կուտան մեղի: Եւ պարսաւել զանոնք, ուրիշներու փոխանցելուն համար ինչ որ ստացեր են ուրիշներէ՝ անխառնութիւն է, ստորնութիւն է, սիրելի պարոն բժիշկ...: Եւ դուք կամ ողորմելի տգէտ մըն էք եւ կամ զգուցելի ստախօս մը, որովհետեւ կամ անըմբռնելի գտած էք այդ ճշմարտութիւնը եւ կամ ծանօթ էք անոր՝ ու կը խօսիք այդպէ՛ս: Եւ երկու պարագային ալ կը մնաք աւելի թըշուառական քան ամէնէն թշուառականը այդ թշուառ աղջիկներէն... քանի որ աղաղակելու էիք երիտասարդութեան թէ եթէ չուզեր վարակուիլ՝ վարակելու չէ «լաւ հաղորդիչ» այդ միջնորդները, պատուհասելու չէ զանոնք այդ ազէտաւոր աւանդներով: Որովհետեւ՝ հաւատացէ՛ք, պարոն բժիշկ, որ անոնք հոգի չեն տար սիֆի-

լիսին համար եւ հաճոյքով չէ որ կ'ընդունին անոր, նաեւ ընտանեկան պարագաներուն այցելութիւնները...»:

Ներսը, բժիշկը քննութեան արդիւնքէն դո՛հ՝ Յրանկիւլի ձեռքը կը սեղմէր անկեղծ ուրախութեան փայլ մը դէմքին.

— Դուք շատ առողջ էք, սիրելի բարեկամս, կատարելապէս առողջ էք դուք եւ ես չափազանց երջանիկ եմ ատոր համար:

— Ի՞նչ ունի ընկերս, Տօքթօր:

— Ձեր ընկե՞րը... պա՛հ, ոչինչ. դրեթէ ոչինչ. թեթեւ խնամքի մը պէտք պիտի ունենայ հաւանաբար. բոլորը այդքան. հաճեցէք հաղորդել իր ծնողքին թէ պա՛րզ խորհրդակցութեան մը համար թող բարի ըլլան հոս հրամմել. ըսէք որ անհրաժեշտ է դալերնին. աւելցուցէք որ...:

— Ի՞նչ ունի ընկերս, Տօքթօր:

— Բայց ինչո՞ւ կը յուզուիք դուք, սիրելի բարեկամ, ձեզի ըսի թէ ձեր առողջութիւնը...:

— Խնդրեմ, պարոն բժիշկ, իմ մասին բաւական խօսեցանք, հիմա կ'ուզեմ անմիջապէս լսել թէ ի՛նչպէս է ընկերոջս վիճակը:

— Բայց ա՛հա դուք չէք ուզեր հասկնալ թէ իրաւունք չունիմ ամէն բան յայտնելու ձեզի եւ դժուար դրութեան մը մէջ կը դնէք զիս: Մանաւանդ, կարեւոր չէ ձեր դիտնալը: Եթէ կը փափաքիք օդնել ձեր բարեկամին եւ ինծի՛ հաճեցէք ժամ առաջ տեսնել իր ծնողքը եւ հրաւիրել զանոնք հոս, խորհրդակցութեան մը համար: Որովհետեւ, եղածը շատ ծանր բան մը չէ թէեւ... բայց ձեզ դու՛մը աղէտի կրնայ յանդիլ...:

Եւ կտարելու համար իր բառերուն կարծրութիւնը, երկչոտ, խեղանդամ ժպիտ մը անցուց դէմքին: Սակայն ան հաղիւ ժամանած՝ սառած՝ փլչեցաւ անշունչ, թերեւս ահարեկած Յրանկիւլի դէմքին արտայայտութեանէն, ուր վիշտ, ցասում եւ յուսահատութիւն իրար կը խառնուէին...:

— Կը ցաւիմ որ անկարելի է ձեր այդ բաղձանքը

կատարել, Տօքթօր: Անոր ծնողքին ոսկորները ապահովարար փոշի դարձեր են հիմա շատ հեռաւոր անապատի մը մէջ եւ ձուլուեր են հրաշքի աւազի հատիկներուն հետ...: Ձեր Ընդհանուր Պատերազմը իր ամէնէն կատարի ու մահաշունչ փոթորիկը արձակեց Հայաստան անուն փոքր երկրի մը վրայ... իր կայծակներէն ամէնէն բոցավառը պայթեցուց մեր ժողովուրդին ողնայարին դէմ... եւ հաստարուն դարաւոր կաղնիի մը նման ճարձատեցաւ ան իր խոշոր ճիւղերէն... եւ մենք, մատղաշ ու վերաւոր ոստերու պէս շարտուեցանք օտար ու անծանօթ հողերու: Այո՞, սիրելի Տօքթօր, մեր հայրերուն եւ մայրերուն մարմիններուն վերջին փշրանքն իսկ կարենալ դանելու համար, անհրաժեշտ պիտի ըլլայ ազահովել բարեացակամ դործակցութիւնը բազմաթիւ դետերու եւ դանոնք հիւրընկալող ծովերու եւ անոնց պարզեւնեցող անանող ձուկերուն...: Պէտք է հարցնել բոլոր հովերուն՝ որոնք անոնց չարչարուած հողիներուն գալարումները կրեցին իրենց թեւերով եւ անապատներու աւազներուն՝ որոնք անոնց հողեւարքը ծծեցին եւ ոսկորները գրկեցին յետոյ...: Դեռ պէտք է համոզել աղուները, դայլերը, արծիւները, բորենիները, բազէներն ու մըրջիւնները, որպէս զի բարեհաճին ցոյց տալ այն վայրերը, ուր լափելէ եւ կտցահարելէ վերջ մեր ծնողներուն սիրտերը, միտերն ու բերերը՝ ազբի կամ ծիրտի վերածեցին զանոնք...: Այսպէս, ներեցէք, պարոն բժիշկ, որ չկարենամ անկարելի խոստում մը ընել ձեզի...: Առ այժմ մենք միայն գիրար ունինք այս աշխարհիս վրայ... եւ ան իմ ամէն ինչս է...: Անշուշտ կը հասկնաք թէ ինչ կը նշանակէ «ամէն ինչ»: Կրնաք դուշակել նաեւ թէ մէկը մինչեւ ո՛ւր կրնայ երթալ զոհողութեան մէջ, իր «ամէն ինչ»ին համար:

— Կը խնդրեմ որ ներէք ինձի, սիրելի տղաս, հաւատացէք որ երբեք մտքէս չանցաւ նման հաւանականութիւն մը, հակառակ որ ծանօթ էի հայ ըլլալուը եւ քիչ մը գիտէի այդ պատմութիւնները...: Խորապէս կը ցաւիմ այդ տիւր եւ ողբերգական պարագաներուն վերջի-

շումը ձեզ հարկադրելու համար: Մարդիկ երբեմն այսպիսի կոպիտ եւ ապուշ սխալներ կը դործեն: Խնդրեմ, հաճեցէք նստիլ հոս, չէ, հոտ չէ, հաճեցէք առնել այս բազկաթոռը, աւելի հանգստաւէտ է ան...: Խօսինք այժմ: Ես վստահ եմ ձեր քաջութեան վրայ, գիտեմ որ պիտի չչլիթիք եղելութիւնը իմանալով: Արդէն շատ ծանրակշիռ չէ տակաւին եւ ուրախ ըլլանք որ զօրաւոր կազմուածք ունի ձեր ընկերը. ատիկա մեծապէս պիտի օժանդակէ իր արագ ապաքինումին: Եւ յետոյ, բարեբախտաբար վարակումը նոր տեղի ունեցած է եւ արմատաւոր վարակումը նոր տեղի ունեցած է եւ արմատական բուժումը յուսալի է կարճ ժամանակի մէջ: Բայց շտապելու ենք, շատ անողոք է անպիտան սիֆիլիսը եւ ա՛յնքան արագ կը վազէ, ա՛յնքան ազահօրէն կը ճարակի...:

Ը.

— Բժիշկը բան մը ըսա՞ւ իմ մասին:

Չլսեց Ֆրանկլիւ: Մահճակալին վրայ տարածուած՝ աչքերը կախեր էր ճանճերու թեւերէն, որոնք հարսնատան էին փոխարկեր առաստաղը: Անոնց մեղմ բզզիւնէն անջատուելով՝ հեռաւոր, ներդաշակ մեղեդիի մը յուսահատութիւնն ու պաղատանքը կը հոսէր դարձաւոր: Ծանծեմ միօրինակ բզզիւնին մէջէն՝ կարծես Նազենին կուլար առաստաղին աներեւոյթ խորութիւններէն, նորահարսերու սպիտակ զգեստաւորումով:

Խոսվայոյզ վիճակի մը մատնուած էր Տիրան: Սեւեռուն եւ երկշոտ նայուածքով կը գիտէր ընկերով դէմքը, ուր ցուրտ տեղունութիւն մը կը թանձրանար հիմա: Անոր խիստ ուշադրութեամբ գիծերը երբեք այսքան յստակօրէն չէին պատկերացուցեր ներքին պայքարներու արտացոլումը, այսպիսի ուժգնութեամբ: Պողպատէ կամքի մը վանդակործով՝ ան միշտ յաջողէր էր պարզապէս արտախուսումը իր հողեկան ընդդիմամարտ ուժեղուն, անոնց իշխելով միահեծան, անողոքելի խստութեամբ: Այժմ սակայն կը տեսնէր, որ ծանրանիստ մոռալ

մը զգեստներ էր Ֆրանկիւլն ու կեռ իր մազիւնները մխրը-
ճեր է անոր դէմքը ահօսող դժխեմ կնճիռներուն մէջ: Եւ
անոր շրթներուն ցաւագին դալարումները կը մատնէին
մոլեգին մարտնչումը այդ ապստամբ հոսանքներուն:

Եւ ահռելի այս լուսթեանէն խուլ բայց ահաբեկիչ
չլուծ մը կը բարձրանար ու կը զարնուէր իր ականջնե-
րուն: Գիտէր, որ ընկերոջ սա սրտակեղէք տառապանքին
ուղղակի պատասխանատուն էր ինք: Ու կը սոսկար մի-
այն մտածումէն իսկ այն հաւանականութեան, որ կրնար
զինք դուրս ձգել անոնց օրերէն: Որովհետեւ՝ կը զգար
ուժգնօրէն, թէ իր աններելի սայթաքումէն ծնած փո-
փոխութիւնն էր, որ դըրդագին յեղաշրջումով մը ահա
կը փլչէր իրենց կեանքերուն վրայ՝ որոնք կը ճարձա-
տէին, կը հեծեծէին կարծես: Մօտէն, շա՛տ մօտէն կը
լսէր իր դալիքին փուղման շառաչը: Նոյն իսկ նշմարեց
թուխ ու անթափանց մշուշ մը, որ կ'ասպատակէր իրենց
կեանքերէն ներս: Եւ պարուրած Ֆրանկիւլն ու Նազե-
նին՝ կը բաժնէր, կը հեռացնէր դանոնք իրմէ: Անոնք կը
դառնային յիշատակ, յաճախանք, ցերեկներու մղձա-
ւանջ եւ զիչերներու լուսատեսիլ իրեն համար:

Ու ինք առանց անոնց, — տունկ մը, ծաղիկ մը ա-
ռանց ճառագայթի դորովորտ փայլապանքին, առանց ջու-
րին գո՛ւ ու կենսաբեր համբոյրին: Երբե՛ք չէր անդրա-
դարձած այսպիսի կարելիութեան մը: Երբեք չէր փոր-
ձած ըմբռնել իր կեանքը առանձին ապրելու հաւանական
անհրաժեշտութիւն մը: Այնպէս թուած էր միշտ իրեն,
թէ ինք եւ Ֆրանկիւլն եւ յետոյ Նազենին՝ նոյն եւ միակ
մարմնին կամ էութեան տարբեր բայց անբաժանելի մաս-
նիկները կամ դործարանաւորութիւններն էին:

Այս խորհուրդներէն ցուրտ ու սաղնառող սարսափ մը
քամուելով՝ կ'իջնէր իր վրայ եւ կը մսեցնէր, կը սրսը-
փացնէր զինք: Այդ բռնակալ սարսափը կը նմանէր սո-
վահար գազանի մը, որ զրահուած սա անտանելի եւ
վայրագ լուսթեանէն, ծանր թաթերը նետած իր կուրծ-
քին՝ ժանիքները կը թաղէր իր պարանոցէն ներս: Շունչը
նախ բողբոցեց այս անակնկալ եւ դատան միջամտութեան

դէմ, բայց յետոյ՝ երկիւղէն՝ ծալապատիկ նստաւ անոր
կոկորդին մէջ ու հեւաց խօթիւնով: Թոքերն ու սիրտը
կարծես կը ճմլուէին բունն ու անծանօթ ցաւի մը ջղաճիգ
մատններուն մէջ: Մարմինը կը քրտնէր այրող ջերմու-
թենէ մը, բայց այդ քրտնէքին կայլակները իր ճակատին
կը շարուէին սառոյցի հատիկներու պէս, ցուրտ ու խած-
նող: Ափերը դիրար դրկեցին սերտօրէն եւ մատները ճար-
ճատեցան իրարու դէմ, ցաւաղին դալարումներով: Փոր-
ձեց գրեթէ զգայազիրկ թոքերը կենդանացնել թարմ օդի
երկար ու խոր ներշնչումով մը: Հզօր ճիւղ մը ըրաւ,
կուրծքին վրայէն թօթափելու համար յամառօրէն հոն
ծանրացող բեռը սա լուսթեան, որ քաշկրտուող անշուկ
ոտնաձայնով մը հետապնդած էր զիրենք բժիշկին ընդու-
նարանէն մինչեւ հոս, եւ որ գերեզմանատան մը գիշեր-
ուան պէս չարագոյժ՝ իր կործանումը հեղող բառերը կը
սուլէր ահաւոր եւ այլանդակ ծամածուծութիւններով: Ու
վերջապէս յաջողեցաւ թոթովել:

— Ի՞նչ ըսաւ բժիշկը...:

Շիտկուեցաւ Ֆրանկիւլն: Ոխակալ դայրոյթի եւ յու-
սարեկ տրտմութեան ընդելուզումը իր դէմքին վրայ՝
սոսկումի եւ արդահատանքի խառն դրացում մը կը թե-
լադրէր Տիրանի: Չոր, հատու եւ սպառնաղին շեշտ մը
իր խօսքերը կը մտրակէր կարծես, մինչ ինք կ'արտասա-
նէր դանոնք:

— Քանի մը օրէն պիտի մեկնիս Պէյրութ, Նազենիին
քով: Չէ՛, բան չեմ կրնար լսել: Դուն բարեհաճէ մտիկ
ընել քիչ մը: Բժիշկը ըսաւ թէ աւելի հանդարտ պիտի
ապրիս հոն: Ըսել է որ պէտք է երթաս: Անմիջապէս որ
արտօնէ այնտեղի բժիշկը, որուն պիտի յանձնարարուիս՝
կ'ամուսնանաք եւ կուգաք: Կերպով մը կը գտնենք...
հարկ եղած դրամը: Աւելի չեմ կրնար խօսիլ հիմա: Շատ
տաք է հոս: Շա՛տ տաք է: Ո՛ւժո՛ւֆ, մարդ կը խեղդուի:
Ելլենք քիչ մը դուրս: Ելլենք բաց օդին: Ելի՛ր, ելի՛ր.
ալ սասիէ դէշը չըլլար: Ալ վախնալու բան չունիս: Ալ աղ-
ջիկները չեն կրնար վնասել քեզի: Երանի քեզի, իրա՛ւ,

երնէկ քեզի, ալ վախ չունիս թէ կրնաս աւելի աղտոտիլ ... ելի՛ր...:

Եւ յառաջացաւ դէպի դուռը, ջլային շարժումով մը բացաւ դայն եւ սկսաւ իջնել սանդուխէն վար: Բայց կանգ առաւ յանկարծ, ստուգելու համար թէ անոր քայլերը կը հետեւէի՞ն իրեն: Իբր պատասխան իր վրայ ինկող յուսախարուժիւնը զայրոյթով լեցուց զինք: Ու դարձաւ ետ, պատրաստուեցաւ ոստում մը ընելու երեք աստիճաններէն վեր, սակայն ոտքերը բեւեռուեցան տախտակին: Սենեակէն՝ վերաւոր, դառնակոծ, սրտակեղէք հեկեկանք մը բարձրացաւ մէկէն եւ անզուսպ ալիքներով հոսեցաւ իր ականջներէն եւ սրտէն ներս: Երկու թոխէքով նետուեցաւ սենեակ եւ փակեց դուռը:

Ձոյք ավերով զրկած զուլսը եւ ծոած աթոռի յենարանին դէմ՝ Տիրան կ'արտասուէր հեծեծազին: Փրանկիւլ, աղչահար եւ յուզումէն այլափոխուած՝ հազիւ կրցաւ կանչել.

— Տիրան...:

— Ես ստորին արարած մըն եմ, Փրանկ... ես զղուելի անասուն մըն եմ... արժանի չեմ ձեզի... անարժան եմ ձեր ներողութեան... ես վատ ու անարդ թշուառական մըն եմ...:

Պիտի փղձկէր Փրանկիւլ: Բայց հզօր ճիւղով մը դայն փոխակերպեց դորովոտ ժպիտի մը եւ վազեց դէպի ընկերը.

— Ելի՛ր, Տիրան, ելի՛ր, ծօ՛, չե՞ս ամչնար. ելի՛ր, նայէ՛, ինձի նայէ. ծօ կուլա՞ս. Աստուածնիդ սիրէք, նայեցէ՛ք, նայեցէ՛ք սա խոշոր տղան ինչպէս կուլայ... կուլայ, չամչնար, կուլայ: Ելի՛ր, եւ լուէ՛, լուէ՛, մ'ըսեր ատանկ յիմար բաներ, մ'ըսեր կ'ըսեմ քեզի, եւ լուէ՛, լուէ՛... հա՛, հիմա նստէ՛ հոս, հո՛ս, հո՛ս... ատանկ... ի՞նչ է եզեր որ. ա՛ռ սա զլխարկդ. ի՞նչ ընենք որ եզեր է... ի՞նչ ընենք: Դի՛ր, զլխարկդ զլուխդ դի՛ր. այդպէս: Ամէն բան պիտի անցնի. բժիշկը ըսաւ թէ ամէն բան կ'անցնի 3000 ֆրանքով...: Առաջուան Տիրանը պիտի ըլլաս նորէն. կարծիք երեսներով, կրակէ աչքերով: Ի՞նչ

ընենք որ եզեր է... ելի՛ր, հա՛յտէ, ելի՛ր. վա՛յ անամօթ, ինտո՛ր ալ կուլար. եղած չեղածը 3000 ֆրանք պիտի գտնենք... եւ նստեր չօնուլսի պէս կուլար... միայն 3000 ֆրանք... մնացածը ոչինչ է... եւ ատոր համար դուն չի՛չ մի մտածեր. ես արդէն կարգադրեր եմ... դրեթէ. նայէ՞, սա՛նկ, մատս մատիս զարնեմ, եւ լմնցաւ, պատրաստ կ'ըլլայ...: Հիմա խնդա՛ նայիմ, չէ՛, չէ՛, պիտի խնդաս քիչ մը. խնդա՛ կ'ըսեմ քեզի, խնդա՛... տեսնենք կրնա՞ս, տեսնենք չե՞ս մոռցեր... խնդա՛. հա՛, այդպէս... բայց ինչո՞ւ կտրեցիր, ը՞, ինչո՞ւ կտրեցիր... կը բաւէ՞, կը բաւէ՞ ըսիր... լաւ, այս անգամ թող բաւէ: Քալէ՛ հիմա. բանալին իմ քովս է, քալէ՛, դուն իջի՛ր, ես կուզամ. ես դուռը կը դոցեմ եւ կուզամ:

Երբ ապահովուեցաւ որ կը պուրած է դուռը, դարձաւ Տիրանին: Հինգ աստիճան վարն էր ան: Նետուեցաւ անոր ուսերուն եւ սեղմօրէն դայն զրկած կոնակէն՝ մղեց սանդուխէն դարվար:

— Նազենին թող չըլտնայ պատահածները: Կը դրեմ իրեն թէ արձակուրդով կ'երթաս: Արդէն պէտք ունինք ատանկ բանի մը. քանի կը դորձենք՝ ցերեկի ազատութեան համը չենք առեր: Իսկ այս փորձառութիւնը օգտակար պիտի ըլլայ քեզի: ... Բայց չէ՛, լա՛յ չըսի, ծօ՛, խայտառակ, լա՛յ չըսի ես քեզի... իջի՛ր, վաղ անցանք, իջի՛ր, իջի՛ր, իջի՛ր...:

Թ.

Երբ երկաթէ վերջին պտուտակին զուլսը հարթուեցաւ իր խարտոցին նուրբ ատամներուն տակ՝ Փրանկիւլ՝ տաժանելի թափառումներէ վերջ հասեր էր դարձեալ այն եղրակացութեան, որ նախորդ ժամանումին անմարդկային թուած էր իրեն:

Անհրաժեշտ էր 3000 ֆրանք ճարել անմիջապէս: Իրենց բարեկամներուն մէջ ի զուր փնտուեց մէկը, որ ի վիճակի ըլլար այդքան խոշոր դումար մը հայթայթել: Իսկ մաս առ մաս հաւաքելը թանկազին ժամանակի կո-

րուստ կը նշանակէր, որ կրնար անդարմանելի դժբախտութեան ենթարկել Տիրանը: Եւ երկար, չարչարազին որոնումներէ յետոյ՝ ահա կրկին կանգ առաւ, որպէս միակ յոյսի եւ ապաւենի մը, Լիզէթի անունին դիմաց:

Իրենց դործատան դանձապետ-քարտուղարուհիի միացեալ պաշտօնները կը վարէր ան: Վարդով ջնարակուած կաթնագոյն մ'որթով աղջիկ մըն էր, որուն ժպիտը միշտ կ'անդամալուծուէր դէմքին եւ ազնուական արքամութիւն մը նստած կ'ըլլար աչքերուն, վսեմաշուք ծանրութեամբ:

Գեռ ոչ շատ հեռաւոր անցեալի մը սահայն, տարբեր եւ աւելի նախանձելի համբաւ մը կը վայելէր Լիզէթ: Գործարանին մէջ ան կը ճանչցուէր իբր «անվիշտ սոխակը»: Անոր ծիծաղազարդ խօսակցութեան մնացորդները, բանուորներու յիշողութեան կառչած՝ տակաւին կը ճըռուողէին անոնց ականջներուն շուրջ:

Հին օրերուն, երբ Լիզէթ կ'անցնէր դործաւորներու մօտերէն, աւարտած առարկայի մը մասին յաւելեալ ծանօթութիւն մը ուղեւու համար գայն շինողէն՝ իր բառերուն կարկաչը սրկող սանձի մը պէս կ'իյնար բարձրացող մուրճերուն եւ զանոնք կ'առկախէր պարապէն: Անոր շրջադեպտին հովը, քայլերուն դաշնաւոր շշուշին հետ երբ կը սահէր ազմկահար մեքենաներուն քովերէն՝ ասոնց խժալուր կռնիչը կը մեռնէր զսպուած ու ցասկոտ կազկանձիւններու մէջ: Դարբինը, բազուկը վեր բռնած, եւ երկաթագործը, մեքենան լուցուցած՝ պահ մը կանգ կ'առնէին զինք դիտելու համար եւ քանի մը չարածձի բառեր դլորելու քրքջալիբ, իր հասցէին:

Բայց չարաշուք օր մըն ալ, հեռաւոր երկիրներէ դաղթած «բազէ»ի մը թեւերուն մոայլ ստուերը կախուեցաւ «անվիշտ սոխակին» ժպտազեղ նայուածքին վրայ: Ու հիմա՝ մշուշոտ հորիզոններէ հալածական այդ «բազէ»ին մազերներէն իր կուրծքին բացուած անբուժելի վէրքը կը կարկանէր Լիզէթ, տխուր եւ անյոյս սպասման մը մէջ:

Իսկ «բազէ»ն, — որ Ֆրանկիւլ ալ կը կոչուէր —

ցուրտ եւ անզգայ անտարբերութեան մը պատնէշը կանգնեցուցեր էր աղջկան յայտնօրէն ալեկոծուող դաշտումներուն դէմ: Անոր այս վերաբերումը բիրտ ու վիրաւորական նկատուեցաւ շուրջիններէն եւ նախանձը կարծել տուաւ թէ «օտարականը» կ'արհամարհէր զիրենք: Ու հեղնեցին «տարօրինակ տղան»:

Առաջին շրջանին, իբեհ նետուած բոլոր դառն ու թշնամական ակնարկութիւնները անտեսեց ան: Եւ իրենց ծանօթութեան ամբողջ այս ժամանակամիջոցին՝ դործէն դուրս խօսեցաւ Լիզէթի հետ անդամ մը միայն, անցեալ Բարեկենդանին, երբ աղջիկը, ջղջիկի ծպտումով, յանկարծ դրկեց զինք եւ ուժգնօրէն համբուրեց իր այտերէն: Եւ ըսաւ ինք.

— Օրիորդ, հաւատացէք որ ձեզմէ խուսափելու պատճառը ձեզ երջանիկ տեսնելու խոր եւ անկեղծ բաղձանքս է: Այլապէս՝ ողորմելի եւ տխմար արարած մը ըլլալու եմ, չկարենալ տեսնելու եւ դնահատելու համար այն մեծ բախտաւորութիւնը, որ բնականօրէն պիտի դարձեղ նման բարի եւ հրապուրիչ աղջկայ մը բարեկամութեան: Հիմա, խնդրեմ, շիտակը ըսէք, իրապէս կը նմանի՞մ այդքան ապուշ մէկու մը: Գոնէ ես չեմ խորհիր: Կը խնդա՞ք. հարկաւ, իրաւունք ունիք. մեր ամբողջ դործարանը կը խնդայ վրաս, ձեզի հանդէպ ցոյց տուած անշնորհք վարմունքիս համար. եւ ես երբեք չեմ մեղադրած զանոնք...

— Բայց ես Լիզէթը չեմ...

— Բայց ինչո՞ւ կը մասնէք դուք ձեզ...:

... Խարտոցը փշուր-փշուր կերեր լմնցեր էր երկաթէ շրջանակին վերջին պտուտակին գլուխը: Ու Ֆրանկիւլ զբայ թէ էլքի մը յանդելու իր փորձած բոլոր ճամբաներէն՝ քայլերը կուզային կը միաձուլուէին նոյն անմարդկային եզրակացութեան գիրկը: Ընկերով սպաքինման, փրկութեան համար հարկ եղած դրամը ունենալու միակ եւ վերջնական հնարաւորութիւնը կը կապուէր Լիզէթի:

Իսկ աղջիկը նստած կիսովին ապակեպատ գրասենեակին մէջ, բանուորներու «Աշխատանքի Տետրակներէն» կատարուած դործերուն ամփոփ արձանագրութիւնները կը քաղէր, անոնց վրայէն արժէքները որոշելու համար: Ֆրանկիւլ յառաջացաւ դէպի դուռը եւ գարկաւ մեղմօրէն:

— Մտէ՛ք... եւ վարդադոյն այլայլում մը ծանօթ անդամալոյծ ժպիտը բերաւ աղջկան դէմքին:

— Կը հաճի՞ք տետրակս տալ ինձի վայրկեանի մը համար:

Նւ յուշագրեց այդ առտուան իր արտադրութիւնը:

“Un chassis en fer T, pour Mons. Lagrange. Poids 8 kilo 3 heures”.

Ու վերադարձուց տետրակը քարտուղարուհիին, քանի մը կցկտուր բառեր ալ փափսալով.

— Կէս օրուայ դադարին ձեզի պիտի սպասեմ «Նրեֆ Հրացանակիրներու» ճաշարանը: Մեծ բարիք մը պիտի խնդրեմ ձեզմէ: Շնորհակալ կ'ըլլամ եթէ դաք:

Նւ հեռացաւ շտապով:

Բայց անոր աճասպարանքին հակառակ՝ բառերը ժամանակ գտան թափանցելու Լիզէթի երակներէն ներս եւ հեշտագին դողով մը սողոսկեցան մինչեւ իր մարմնին ծայրամասերը: Կարծես զգայարանքները անձնատուր կ'ըլլային հաճոյական ընդարմացումի մը, որ հողեկան գինովութեան ալ կը նմանէր: Պահ մը ան մնաց անշարժ, յանձնուած նորօրինակ զգայնութեան մը, որուն մէջ կ'ողջագուրուէին տարիներու իր երազները, անոնց իրականացման յոյսին հետ: Ու շրթները կը չորնային կիսաբաց ու թրթռուն, անակնկալի եկած բացականչութեան մը յարձակումէն, որ սակայն նուազեր, անչնչացեր էր դեռ անոնց վրայ չհասած:

Յետոյ, բնազդական ոտտումով մը, նայուածքը թառեցաւ պատի ժամացոյցին. 11-ին 15 կ'անցնէր: Ա՛հ, տակաւին պիտի սպասէր 45 վայրկեան: Նւ ո՛րքան դանդաղ կը շարժէր վայրկեանները ժամերուն կարող հսկայ

ասեղը: Ու կը դդար թէ իրեն համար տաժանակիր աշխատանքի պէս բան մը պիտի ըլլար անոր այդ յամր ընթացքը գիտելը: Ու պաղատեցաւ ժամանակին, փորձելով համոզել, ողորջել դայն, որ սովորականէն քիչ մը արագ քալէ այսօր, ի՞նչ կ'ըլլայ, որ կէսօրը քիչ մը շուտ բերէ այսօր: Բայց յամառեցան ժամանակն ու ժամացոյցը:

Ս,յն ատեն Լիզէթ վերաւորուած, որ իրեն կը մերժուէր այսքան աննշան շնորհ մը, այսքան չնչին զիջում մը եւ ճղճիմ զոհողութիւն մը՝ զայրացաւ, սրտմտեցաւ անոնց դէմ եւ յանդիմանեց զանոնք: Նւ իր բիրեբրուն մեղամաղձոտ լուսարձակով խրամ առ խրամ հետապնդեց սլաքներուն նահանջը, մինչեւ յաղթութիւն, մինչեւ կէսօրուան դադար, մինչեւ «Նրեֆ Հրացանակիրներու» ճաշարանը, —

Որուն մուտքին առջեւ տատամեցաւ պահ մը: Յետոյ, դալիքին կասկածէն դեղեկուտ եւ դայն գիտնալու անհամբերութենէն շառագունած՝ քայեց ներս: Բնազդօրէն աչքերը սեւեռեց անկիւններէն ամէնէն մութին: Նւ հոն նշմարեց տղան, որ թեւերը ծալած սեղանին՝ գինիին շիշը կը դիտէր անթարթ:

— Բայց պարապ է այդ շիշը, ըսաւ աղջիկը մօտենալով:

— Հո՞ս էք արդէն: Ներեցէք անփութութեանս: Չտեսայ ձեր դալը, այնքան ասուշօրէն մտադրազ էի: Նրատեցէք, խնդրեմ: Նւ ըսէք թէ ի՞նչ կը փափաքեք առնել ճաշին:

— Կը նախընտրէի առաջ ձեզ լսել:

— Բայց կրնայ քիչ մը երկարել մեր խօսակցութիւնը եւ դուք անօթի ըլլալու էք հիմա:

— Կ'ուզեմ նախ ձեզ լսել, եթէ կը ներէք:

Ֆրանկիւլիւլ աջ ձեռքը տարածուեցաւ սեղանին: Ինք դանդաղօրէն ժողուեց պրկուած մատները եւ կարծես դարձացաւ, բարկացաւ որ ինքնաբերաբար բռունցք կազմեցին անոնք, առանց իր արտօնութեան: Նւ մարմարը ձեծեց մանր ու դուսպ հարուածներով:

— Կարծեմ պէտք է խօսիմ վերջ ի վերջոյ, ըսաւ, բարձրացնելով գլուխը եւ ժպտելով մեղմօրէն:

Ու կարճ դադարէ մը վերջ՝ շարունակեց.

— Խոշոր շնորհ մը խնդրելու եկած եմ ձեզմէ:

Բայց չունչը դարձեալ դաւաճանեց իրեն եւ նստաւ կոկորդին մէջ, խափանելով բառերուն ընթացքը: Ու լոեց ինք, գլուխը խոնարհած կուրծքին եւ արտօնելով որ մատները զիրար չարչարեն բրտօրէն:

— Իրա՞ւ այդքան կը նեղուիք ինձմէ բան մը ուղեւու համար: Իսկ ես կը խորհէի թէ շատ համարձակ կերպով պիտի արտայայտուէիք, գիտնալով որ որեւէ բան պիտի չկրնամ մերժել ձեզի... այնպէս չէ՞...:

— Այո՞, եւ ճիշտ այդ է որ տաժանք մը կը դարձնէ այս դիմումս:

— Բայց չէ՞, Ֆրանկ, մտիկ ըրէք, կ'աղաչեմ, այդպէս մի զգաք եւ մանաւանդ ըսէք անմիջապէս թէ ինչպէս կրնամ օգնել ձեզի:

— Օ՞, պիտի ըսեմ, պիտի ուղեմ, այդ մասին անհողեղէք: Երկար խորհած եմ վրան եւ խոստովանած ալ եմ ես ինձի թէ ամբարիշտ, դարչելի քայլ մըն է առնելիքս: Բայց ատով հանդերձ պիտի լսէք խնդրանքս... ինձի շատ սիրելի անձի մը երջանկութիւնը, ճակատագիրը կախում պիտի ունենայ անկէ, կամ մեր այս փոքր տեսակցութեան արդիւնքէն: Այո, վստահ եղէք թէ պիտի խօսիմ, միայն պիտի բաղձայի որ դուք...

— Ներէ, Ֆրանկ, բայց ես կը փորձուիմ բողոքել այս ցուրտ եւ պաշտօնական ձեւերուն դէմ: Նայէ, չե՞նք կրնար այդ բարբարոս դուք-էն եւ ձեր-էն հրաժարել. ըսէ, աւելի լաւ չըլլա՞ր որ սկսինք բարեկամներու պէս խօսիլ, չե՞ս խորհիր թէ աւելի լաւ կ'ըլլայ...:

Ֆրանկիւր զգաց թէ կը քրտնէին աջ ձեռքին մատները: Սակայն ի դուր ջանաց ճշդել թէ Լիդէթի խանդակաթ եւ պաղատագին նայուածքին ճնշումն էր պատճառը, թէ միայն սերտ ու գորովագին փայփայանքը առնոր ձեռքերուն, որոնք իր մատները կը սեղմէին հիմա:

— Լաւ ուրեմն. Լիդէթ... կը խնդա՞ս, եւ ինչո՞ւ, որովհետեւ յանդգնեցայ առաջին անունովդ կանչել քեզ, իրապէս տարօրինակ կը հնչէ քիչ մը, այնպէս չէ՞...:

— Ոչ, ոչ, ընդհակառակը, կ'աղաչեմ, շարունակէ:

— Այդպէս. բաղձանք կը յայտնէի որ հաւատաս սա ըսածիս:— Ամէն անգամ, որ մտածեցի քու օգնութիւնդ խնդրելու մասին, զգացի թէ ստորին եւ նուաստացուցիչ բան մը ունէր այդ խորհուրդը: Ատկէ դատ, զիս կը զրաւէր մեծ վախ մը, թէ քեզի հանդէպ ցուցադրած տարիներու իմ կոպիտ եւ յիմար վերաբերմունքէս վերջ, իրաւունք ունէի կասկածելու թէ քու ազնիւ զգացումներդ կը շահագործէի թերեւս...:

— Ա՛հ, բայց դուն կը ցաւցնես զիս, Ֆրանկ, դուն զիս կը վերաւորես այդ խենթ խօսքերովդ: Ինչո՞ւ նայել անցեալին, երբ տխուր եւ անհաճոյ յիշատակներ կ'արթննցնէ ան: Ինչո՞ւ չխօսիլ միայն ներկայի եւ ապագայի մասին:

— Իսկ ի՞նչպէս համոզեմ խիղճս, որ հանդարտի ու լռէ: Եւ յետոյ, ես վիշտ կամ զղջում չեմ զգար այդ անցեալին վերջիշումէն: Զիս չափազանց հպարտ մէկը նկատեր ես սկիզբէն, գիտեմ: Բայց ահա առանց ամչնալու, ես կը խոստովանիմ թէ երեւցածիս չափ անտարբեր չեմ յաջողած ըլլալ քեզի հանդէպ... եւ նոյն իսկ առաջին տեսնելու...:

— Զէ՛, չէ, չէ, պէտք չունիք ատոնք ըսելու. ճշմարիտ որ պէտք չունիք այդպէս խօսելու... ստիպուած չէք յայտարարելու թէ զիս սիրեր էք, ինձմէ բարիք մը ակնկալելու համար: Ես անկարող եմ հանդուրժելու համակրանքի այդ ձեւին: Ես ձեզի կ'աղաչեմ որ զիս եւ իմ զգացումներս չծաղրէք: Ի՞նչ պէտք կայ միխթարելու...:

— Կը անսնե՞ս որ երկիւղս, թէ պիտի կասկածիս անկեղծութեանս վրայ, արդէն կ'իրականանայ: Սակայն ես չեմ սպասեր որ անպայման հաւատաս բոլոր ըսածներուն: Գիտեմ թէ արժանի չեմ այդքան վստահութեան: Բունն ու անկապտելի փափաք մըն է, որ կը մղէ զիս քեզի յայտնելու կարգ մը բաներ, որոնք տարիներով զսպեր,

եւ պահեր եմ մէջս, բաւական յոգնեցուցիչ եւ դժուարին ճիգերով: Այսպէս, յաճախ ուղեր եմ քեզի ըսել թէ միշտ երանի տուեր եմ այն բախտաւոր տղուն, որ իր կեանքը քեզի ընծայելու երջանկութիւնը պիտի ունենար...

— Բայց չէ՞, ճշմարիտ չի կրնար ըլլալ ատիկա... եւ կը խնդրեմ որ չբարկանաս, երբ ըսեմ թէ ինծի համար պարզապէս անկարելի է հաւատալ այդ փառաքչիչ խօսքերուն: Ի՞նչպէս բացատրեմ: Եթէ ուրիշ որեւէ մէկէն լսուէին ատոնք, կրնային անկեղծ համարուել: Իսկ երբ քու բերնէդ կ'ելլեն... եւ ամբողջ աշխարհ գիտէ թէ ես ի՞նչ կը զգամ քեզի համար... եւ ընկերներդ երբեմն զիս կը հեղնեն ըսելով թէ ինքզինքս գիւրկդ կը նետեմ գրեթէ...: Ի՞նչպէս կարելի է հասկնալ: Ատիկա կը նմանի... կը նմանի բանի մը... չէ՛, ոչ մէկ բանի չի նմանիր ատիկա: Երեւակայէ մէկը, որ տարիներով ամէն գիշեր կ'երազէ մեծ երջանկութիւն մը եւ ցերեկները կը մտածէ անոր մասին եւ կը ձգտի անոր... բայց այդ ամբողջ ժամանակամիջոցին մէջ, իր երազին առարկան ամէն օր կ'երեւի աչքին, կը դարնուի իր քայլերուն, կը հետեւի իրեն ուր որ կարելի է, կը կարօտնայ, կ'ուզէ, կը կանչէ զինք... կուլայ իրեն... համար: Կը տատայ պի... իրեն համար: Եւ ինք... ինք չի գիշանիր անոր... նայելու...

Լիզէթ հանեց թաշկինակը եւ սեղմեց բերնին դէմ: Կը հեկեկար հազիւ լսելի հծծիւններով: Արտասուքի քանի մը կաթիլներ կ'իջնէին այտերէն դարվար, սրբելով բրնձափոշին եւ երկու ուղղաձիգ ու փայլուն ակօսներ ձգելով իրենց հետքերուն ետեւէն:

— Կ'աղաչեմ, Լիզէթ, հաւատայ որ երբեք մտքէս չէր անցներ քեզ վշտացնել... երբեք չխորհեցայ թէ պիտի նեղուիս:

— Ի՞նչ պէտք կար զիս համոզել փորձելու թէ միշտ... սիրած ես զիս: Ըսիր որ կրնամ ծառայութիւն մը ընել քեզի, ուղղակի ատոր մասին խօսելու էիր...:

— Այո, իրաւունք ունիս: Իսկ ես խորհեցայ որ եթէ կարենայիր հաւատալ զգացումներու անկեղծութեան՝

թերեւս աւելի վստահութեամբ լսէիր խնդրանքս. թերեւս չափազանց զուռելի չթուէր ան քեզի, եւ թերեւս քեզմէ նման խոշոր բարիք մը ընդունիլս շատ մեծ տառապանք մը չդառնար ինծի համար:

— Նայէ, Ֆրանկ, կը կարծե՞ս թէ ա'յնքան ապերախտ եւ ապուշ կրնամ ըլլալ, որ չուզեմ, որ բոլոր հոգիովս չցանկամ քեզմէ սիրուած ըլլալ: Բայց չեմ գիտեր: Ի՞նչպէս հաւատամ...: Կը տեսնես որ խօսքերդ զիս կը չարչարեն, առանց համոզիչ երեւալու...:

— Ուրեմն խոստովանի՞մ անդօրութիւնս: Իսկ հաւանաբար դուն այսքան խստօրէն չգատէիր այդ վարմունքս, եթէ ծանօթ ըլլայիր անոր շարժառիթներուն: Իրապէս, ինծի համար շատ դժուար է հաստատել ըրած յայտնութեանս ճշմարիտ ըլլալը: Եւ կը զգամ թէ ի վիճակի չեմ գտնելու միջոց մը, որ բաւական ազդու երեւի ինծի եւ քու կասկածներդ փարատելու յոյս ներշնչէ: Բայց մարդոց անցեալը, յաճախ, իրենց ներկան բացատրող ամէնէն զիւրբմբռնելի ու նաեւ աննենդ ապացոյցները կը հայթայթէ: Թերեւս իմ պարագաս ատոնցմէն իրենակ, երեւակայէ թէ կեանքս բացուեցաւ անըլայ: Օրինակ, երեւակայէ թէ կեանքս բացուեցաւ անձայրածիր եւ արեւակէզ անապատներ թափառող հալածական թշուառներու կարաւանի մը մէջ: Եւ մինչեւ այս տարիքս, ուրկէ որ քայլեր եմ, հրավառ աւազներու վրայէն կամ դովաշունչ ովասիաներու մէջէն, լերկ ու խոսպան լեռներէ կամ դալարազեղ եւ ծաղկաբոյր դաշտավայրերէ, գիւղերու փոշեթաթախ փողոցներէն կամ քաղաքներու լայն ու շքեղ պողոտաներէն՝ միշտ սարսափով զգացեր եմ ներկայութիւնը աներեւոյթ բայց թանձր ու ահարկու ստուերի մը, որուն մէջ միաձուլուած՝ մարդկային արհամարհանքը, քէնն ու ատելութիւնը կարծես հետապնդեր են զիս յամառ, կատաղի եւ վրէժխնդիր վճռակամութեամբ մը: Ի՞նչպէս այդ տեսակ արտառոց մտասեւեռում մը տարիներով իշխեր է ինծի, չեմ գիտեր. չեմ յիշեր անոր ծագումն ալ: Թերեւս նման մանկութենէ մը անցնողներ, առաւել կամ նուազ չափով կ'ենթարկուին այս ճակատագրին, զոհերը դառնալով

այդ չարաշուք յաճախանքներուն: Հոգեկան մշտական տաղնապէ մը կը տուալտին անոնք: Անոնց համար անքըննելի, կարծես նուիրական հաւատք մըն է դարձեր այն ենթադրութիւնը, թէ ամբողջ աշխարհ թշնամի է եւ կը ձգտի որեւէ կերպով չարիք հասցնել իրենց: Թէ ամէն մարդ կ'ատէ եւ կը հալածէ զիրենք եւ թէ իրենք բոլորէն լքուած ու առանձին, պէտք է պատերազմին աշխարհի օրէնքներուն եւ մարդոց դատաստաններուն դէմ, չջախջախուելու համար անոնց հարուածներէն:

— Բայց չե՞ս կարծեր թէ քիչ մը տարօրիակ է այդ մտածումը: Որեւէ մէկը չահնկալեր, որ ամէն մարդ համակրի կամ բարեկամանայ իրեն: Բայց ինչո՞ւ պիտի ենթադրես թէ ամէն մարդ վրէժ մը ունի քեզի դէմ եւ հետեւաբար կ'ուզէ վնասել քեզի:

— Ինձի համար ալ անբացատրելի մնացեր է ատիկա: Ես ալ հարցուցեր եմ այդ «ինչո՞ւն» ինքզինքիս, առանց անոր պատասխանել յաջողելու: Թերեւս այսպէս կը պատահի ամէն անոնց, որոնք իրենց հեռուոր մանկութենէն սկսեալ, միայն զրկանք, չարիք եւ ատելութիւն գըտած են զիրենք պատող միջավայրին մէջ: Կ'երեւի այս բոլորը կը միանան, ենթակային մէջ զարգացնելով մտավիճակ մը, որ աւելի տարօրինակ պիտի թուի եւ որ եղբրական է միաժամամակ: Ատիկա հոգիին ծարաւն է մարդկային բարութեան: Ես ճանչցեր եմ ծարաւներէն ամէնէն ահռելին: Մարդու շրթները կը չորնան եւ կը ճաթրտին, թոքերը կը խանձին եւ ատկէ դոյացող ջերմութենէն կը դալարուին եւ կը հեւան կոկորդն ու լեզուն: Նման պարագաներու մէջ՝ ափ մը անդին աշամանդներու փոխարէն ափ մը պղտոր ջուր գտնողը ուրախութենէն կընայ խենթենալ, կատարած շահաւէտ առուտուրին համար: Ես կը յիշեմ որ իմ քրտինքս եւ կենդանիներու շողիքը լիզեր եմ ծարաւէս...: Առանց խարուելու երկիւղ ունենալու՝ կընաս հաւատալ թէ զարհուրելի բան է ան: Այո, դժոխային է ուղղակի: Սակայն տարիներ վերջ աւելի ցաւառիթ ու տաժանելի ծարաւ մը ճանչցայ: Ասիկա՝ ինչպէս ըսի, հոգիի ծարաւն էր մարդկային

բարութեան: Ծարաւ մը որ անհուն է եւ անյագ: Զուրին պակասէն առաջացած ֆիզիքական չարչարանքը անտանելի է իրապէս, եւ հեկեկալ, ճշալ, ոռնալ, բառաչել կուտայ մարդուն: Բայց կը կրկնեմ, այս վերջին ծարաւը աննկարագրելի է պարզապէս: Կարծես կապար կը հալեցնեն սրտիդ մէջ, որ կ'այրէ, կը կրծէ քեզ, հոսելով երակներէդ դարվար, մի'շտ, երբ կ'աշխատիս կամ կը հանդէլիս, երբ կուշտ ես կամ երբ դով ու վճիտ ակի մը վրայ ծոած կը խմես անյագօրէն: Մի'շտ ներսդ է կապարը, եւ կ'այրէ, կը խոցոտէ քեզ, հետզհետէ ընդարպար, եւ կ'այրէ, կը խոցոտէ քեզ, հետզհետէ ընդարձակելով ներսդ տարածուող անսահման պարապութիւնը: Եւ երբ պատահի, որ որեւէ մէկը, անձանօթ կամ բարեկամ, դիպուածով քաղցր խօսք մը, կամ համակրական նայուածք մը ուղղէ քեզի՝ ինքզինքդ յաւիտեան երախտապարտ կը զգաս անոր, պատրաստ, ամբողջական նուիրումով ծառայելու անոր, բաղձալով որ առիթ մը ընծայուի քեզ, մէկ թեւը, մէկ սրունքդ կամ մէկ աչքդ անոր զոհարելու...: Այո, տարօրինակ հոգեվիճակ է արդարեւ: Եւ երբ առաջին անգամ տեսայ քեզ... եւ դուն նայեցար ինձի, դուն խօսեցար ինձի, եւ նայուածքիդ ու ձայնիդ մէջէն հոսելը զգացի խաղաղ, երկնային բարութեան մը, որ անդիմադրելի հրապոյրով մը կը ժպտէր... չեմ գիտեր թէ ալ բան մը մնաց աւելցնելիք:

— Օ՛, այո՛, այո՛, Ծրա'նկ, կը խնդրեմ, շարունակէ, դեռ պէտք է ըսես թէ ե'րբ եւ ինչպէս սկսար... տեսնել զիս: Ըսէ՛ ուրեմն Ծրանկ, կ'աղաչեմ...:

— Բայց կը վախնամ թէ նոր բաներ չկարենամ ըսել: Դուն արդէն գիտե'ս որ աղուոր հասակ մը ունիս: Շատեր յաճախ կրկնած ըլլալու են քեզի, հարկաւ աւելի փայլուն եւ պատկերաւոր բառերով, թէ գեղեցիկ ես, նոյն իսկ դեղապոչտ մը խոովելու չափ: Սակայն ես ինչ որ աւելի գրաւիչ եւ կախարդական գտայ աչքերէդ՝ անոնց անսովոր սեւին մէջէն արտացոլող եւ կարծես բարախող, խանդաղատող հոգին էր, ձիւնի ձերմակութեամբ, մաքուր ու տաք...:

— Ձոր սահայն դուն մերժեցիր այսքան ատեն, այնպէս չէ՞, Ֆրանկ, դոր դուն արհամարհեցիր: Ա՛հ, դուն... դուն խիստ ծանր, ամէնէն ծանր պատիժներուն արժանի ես: Ես դիտեմ, այո, դուն միշտ կրնայիր այսպէս քաղցր խօսիլ, միշտ կրնայիր զիս այսքան երջանկացնել, բայց խենթ ու անդուլտ պատճառներ հնարեցիր դուն քեզի եւ այսքան տարի, ամէն օր տառապելիս տեսնելով հանդերձ լռեցիր:

— Այո, ճիշդ է, տեսնելով հանդերձ ես ինձի կը ստիպէի լռել, որովհետեւ չկրցայ ներել ինքզինքիս, որ յուսախաբուածեան կսկիծն ալ աւելցնեմ ունեցած նեղութեանդ վրայ: Կը վախնայի որեւէ հիասթափութեան մատնելէ քեզ: Ինձի հանդէպ ունեցած համակրանքը...

— Ձէ՛, Ֆրանկ այդպէս մի՛ ըսեր, դիտես որ համակրանք չէ... դիտէք թէ... կը սիրեմ ձեզ... որքան կը սիրեմ ձեզ...

— Միտքս նոյնն էր մօտաւորապէս: Բայց երկիւղ մը ունէի եւ ունիմ տակաւին, թէ այն զգացումը որ դուն սէր կը կոչես, պատրանքներու վրայ հիմնուած վաղանցիկ յարեւոյտութիւն մը կրնայ ըլլալ: Յաճախ կը պատահի ասիկա եւ շատ դիւրին է դայն շփոթել ճշմարիտ սիրոյ հետ: Օրինակ. իմ կիսավայրի նկարագիրս, արտայայտութեան անձնակ եւ քիչ մը բիրտ ձեւերուս հետ՝ իրենց նորութեան հրապոյրով, կրնան քու ուշադրութիւնդ խաբած եւ գրաւած ըլլալ: Թերեւս ուրիշներէն քիչ մը տարբեր կ'երեւիմ առաջին հանդիպումներուն եւ ասիկա ի նշխար ինձի տպաւորած է քեզ: Բայց ամենօրեայ մտերմութեամբ երբ ընտելանաս անոնց, պիտի դատենես որ ձանձրոյթի եւ յուսախաբութեան անսպառ ազդեցութիւններ կը դառնան անոնք: Իսկ ես ինքզինքիս չթոյլատրեցի հիասթափութեան եւ տառապանքի որեւէ նոր խայթ պատճառել քեզ:

— Բայց դուն անիրաւ ես, Ֆրանկ, դուն չա՛տ, չա՛տ, չափազանց անիրաւ ես: Ահաւասիկ զիս կ'անարդես առանց խղճահարելու: Դուն իմ զգացումներս քրններ, դատեր ես, անոնց անուններ ալ դրեր ես, առանց

դոնէ իմ կարծիքս հարցնելու: Իսկ իմ ի՞նչ հոգս թէ դուն ուրիշներէն տարբեր ես, կամ կիսավայրի ես, կամ բիրտ ձեւեր ունիս: Ես նոյն իսկ նշմարած չեմ ատոնք: Ես սկիզբէն ի վեր միայն մէկ բան կը յիշեմ քու մասիդ եւ հիմա ալ միայն մէկ բան դիտեմ, որ քեզ... կը սիրեմ. որ քեզ ճանչնալէս ի վեր կեանքիս միակ նպատակը քեզի հասնիլ եղած է. որ երջանկութիւնս քեզի հետ նոյնացած երեւցեր է ինձի...: Թէ դուն ի՞նչպէս վաղանցիկ յարեւոյտութիւն կը կոչես այդ՝ չեմ կրնար հասկնալ. բայց ասիկա զիս վերաւորել, զիս անարդել է առանց խղճահարութեան...: Եւ դուն, դոնէ ասկէ վերջ, ինքզինքիդ իրաւունք տալու չես այդ չար ենթադրութեանդ մէջ յամուելու:

Բթամատին վրայի մազերը սկսաւ համբել Ֆրանկիւլ: Մէկ, երկու, չորս, եօթը... յանկարծ կաթիլ մը լճացաւ հոն եւ ստեւները շարժեցան իրենց տեղերէն ու փրթաւ իր հաշիւը: Եւ հասկնալու համար թէ ո՛ր մէկ աչքն էր պատասխանատուն այս խառնակիչ կաթիլի փախուստին՝ կոպերը հանեց ճակատ-ճակատի: Բայց անոնք միարանեցան իրարու եւ կատակի ելան իր հետ: Եւ երկու կաթիլ արցունք եւս թափեցին վար, բոլորովին չփոթեցնելով զինք:

Ու նայուածքը բարձրացուց եւ պտտցուց շուրջանակի, սպասարկող մը բռնելու համար: Բայց հանդիպեցաւ Լիլիթի աչքերուն, որոնց պայծառ փայլին մէջ խորունկ ու տրտում խանդաղատանքի մը ստուերը կը լայննար:

— Ժամանակը բաւական արագ կ'անցնի, կարծեմ ալ ապսպրելու ենք մեր ճաշերը. եւ Ֆրանկիւլ պատառաքաղով քանի մը հարուածներ տուաւ կիսովի դինիով լեցուն բաժակին:

— Իսկ տակաւին չխօսեցար մեր հոս դալու բուն պատճառին շուրջ. տես ո՛րքան շատախօսեցինք երկուքս ալ:

Եւ երբ սպասեակը հրահանգները առած մեկնեցաւ՝ Ֆրանկիւլ փոքր վարանումով մը պատասխանեց.

— Այո: Եւ ահա հասանք անոր: Շատ պարզ եւ ա-

րագ պիտի ջանամ ընել, որ երկուքս ալ ազատինք շուտով: Խնդիրը այս է, — կենսական եւ անյետաճդեղի պէտքեր մը համար 3000 Փրանք գտնելու եմ անմիջապէս:

— Բաւական խոշոր դումար մըն է ատիկա... Թէեւ ես քիչ մը ունիմ:

— Այդ քիչերը չեն օգներ: Ես կրնամ մաս մաս հաւաքել, բայց ատիկա քանի մը շարաթ ժամանակ պիտի առնէ: Իսկ այդ դումարը անհրաժեշտ է որ ձեռքս հասնի շատ շուտով, այսօր կամ վաղը:

— Ի՞նչ կարելի է ընել ուրեմն: Ձեմ գիտեր թէ իմ ունեցած 3-400 Փրանքս տալէ դատ, ուրիշ կերպով կըրնամ օգտակար ըլլալ քեզի:

— Այո, կրնաս, մանաւանդ միայն դո՛ւն կրնաս օգնել...: Անոր համար ստիպուած համարձակեցայ այս դիմումը ընել քեզի: Ճիշտ է որ, ինչպէս ըսի քիչ առաջ՝ անմարդկային եւ վիրաւորիչ բան մըն է այս ըրածս, բայց ինծի շատ սիրելի քանի մը անձերու երջանկութիւնը կախուած է անկէ: ... Կը խորհէի որ մեր գործարանին գանձապահի հանգամանքովդ...

— Ինչպէ՞ս, Ֆրանկ, դուն ինծի կ'առաջարկես...

— Ո՛չ, ո՛չ, ատիկա չէ՞, ատիկա ակնկալելը իրապէս զզուելի եւ աններելի ստորնութիւն մը պիտի ըլլար իմ կողմէս, այնպէս չէ՞, Լիդէթ...: Իմ միտքս դադանի փոխառութիւն մըն էր: Մինչեւ հաշուեքնութիւն, ասդիէն անդիէն քիչ քիչ հաւաքելով պիտի վերադարձնէինք առածնիս: Ժամանակ պիտի ունենայինք այդ փոքր փոխառութիւններն ընելու: Ես շատ խորհեցայ եւ շատ փնտռեցի եւ միակ տեղը որ դատայ, ուրկէ կարելի էր շուտով ստանալ 3000 Փրանքը, քեզի վստահուած գանձարկղն էր...:

— Ի՞նչպէս կ'ըլլայ, եթէ բաքթօնին երթանք եւ խնդրենք որ մեզի փոխ տայ այդքան դրամ եւ ամէն շարաթ մաս մը վար դնէ մեր առնելիքներէն, մինչեւ որ վճարուի պարտքերնիս:

— Օ՛, ո՛չ, բաքթօններուն բարութիւնը մինչեւ հող չի հասնիր: Ան պիտի ծիծաղի մեր վրայ եւ մեզ դուրս

պիտի վռնտէ ցաւ յայտնելով թէ իր սկզբունքին դէմ է գործաւորներուն փոխատուութիւն ընելը...: Լաւ ուրեմն, այլեւս ճաշենք. եւ մոռնանք այս դրամական հարցը: Ես երբեք պիտի չմեղադրեմ քեզ, այդքան վտանգաւոր գործ մը ընել վարանելու համար...:

Ամբողջ ճաշի ընթացքին լուռութիւն պահեցին երկուքն ալ: Եւ երբ Ֆրանկիւլ ճաշադինը վճարած կը պատրաստուէր կանգնիլ մեկնելու համար՝ Լիդէթ բռնեց անոր ձեռքերէն եւ յուզումէն դողացող ձայնով ու աւազօրէն թաւալող բառերով ըսաւ.

— Իրիկուան ժամը վեցուկէսին մեր տունը եկուր: Ես հետս կը տանիմ 3000 Փրանքը: Տե՛ս, չեմ հարցներ թէ ինչ բանի պիտի գործածես, այնքան անսահման է վստահութիւնս: Մինչեւ եռամսեայ հաշուեքնութիւնը վեց շարաթ կայ տակաւին եւ այս ժամանակուան մէջ առանց դժուարութեան պիտի կրնանք բարեկամներէ ճարել այդքան դրամ եւ տեղը դարձնել վերցուցած դումարնիս: Կ'ըլլայ, այնպէս չէ՞, կ'ըլլայ: Գու ուզածդ ալ այս էր, այնպէս չէ՞:

— Այո, պատասխանեց Ֆրանկիւլի դուրսը, մինչ ձեռքով աղջկան մատները կը սեղմէր իր շրթներուն դէմ, դէպի պատը դարձած:

— Ուրեմն իրիկունը կը սպասեմ քեզի: Մեզի կը ճաշենք: Յետոյ կը պտտինք, կը խօսինք: Ա՛յնքան ըսելիքներ ունիմ, այնքան շատ կարօտեմ եմ քեզ: Պիտի տեսնես թէ ի՞նչ պիտի ընեմ քեզի: Նայէ ո՛րքան պիտի շարչարեմ քու այդ կծծի հայու բերանդ... ինչպէ՞ս պիտի պատժեմ քու այդ անդամ բերանդ: Կը տեսնես այս իրիկուն...:

Երջանկութեանէն՝ անշուկ կ'արտասուէր Լիդէթ, մինչ Ֆրանկիւլ անոր թեւը գրկած՝ ճաշարանէն դուրս կ'առաջնորդէր դայն:

Գործարանին մէջ, բանուորներ դարմանքով նկատեցին որ Լիդէթ կը ճողողէր դարձեալ: Ու խորհրդաւոր ակնարկներ ու ժպիտներ փոխանակեցին անոնք: Իսկ մէկը, անոնցմէ ամէնէն անառակը դիտել տուաւ.

— Շատ զուարթ է մեր «սոխակը»: Կ'երեւի թէ վերջապէս յաջողեր է թառել իր «վայրի բազէին» թեւերուն տակ ու երգելէն քնանալ հոն, ընտանի բազէիկներ երազելով...:

... Այդ գիշեր, մինչեւ ո'ւշ ատեն, մինչեւ ճերմկիւր հիւսիսային Աստղին՝ Տիրան աստուած մը փնտուեց Պըրանկիւրին համար աղօթելու...:

Ժ.

Պրանկիւր ճմրթկուած պահարանէ մը հանեց քանածալ թուղթ մը եւ սկսաւ կարգալ վերստին, երրորդ թէ վեցերորդ անգամ ըլլալով:

«Սիրելի Պրանկ, սիրականս,

«Գիտեմ որ անհամբեր կը սպասես այս նամակիս: Ահա վերջապէս ան կը հասնի քեզի: Բայց մի՛ բարկանար, եթէ անկապ եւ անիմաստ խօսքերու խառնակոյտ մը երեւի ան: Որովհետեւ տրամադրութիւնս ալ, ճիշտ հիմա, գերի է ինկեր հակամարտ զգացումներու հոսանքին մէջ: Եւ խեղճը կորսնցուցեր է իր ուղին:

«Մարտիլիայէն ելլելէս վերջ ի՞նչպէս ինկայ Պէյրութի ցամաքը: Հաճելի եղա՞ւ ճամբորդութիւնս: Ժամ մը տեւեց ան թէ ամիս մը, կամ այլեկո՞ծ էր ծովը թէ խաղաղ...: Մի՛ հարցներ ասոնք: Ապագաս հոգեվարքի մէջ կը տեսնէի: Եւ անոր անստղութեան սարսափը անթափանց մառախուղի պէս չոքեր էր աչքերուս եւ մտքիս վրայ ու ես ոչինչ տեսայ եւ զգացի ոչինչ: Այդ անտանելի մշուշը փարատեցաւ այս առտու միայն, երբ բժիշկը յայտնեց թէ կրնայ երաշխաւորել, որ քանի մը ամիսէն ցաւս արմատներէն պիտի կտրտէ:

«Ու հիմա ուրախ եմ եւ երջանիկ, որովհետեւ կորուստի անդունդին մութէն վերջ՝ նոր կեանքի մը պայծառ առաւօտը կը շնորհուի ինծի, Նազենիին պէս երկնատուր պարգեւի մը հետ: Ի՞նչ փառաւոր բան է կեանքը

եւ ի՞նչ հրաշագոր ուժ է սէրը: Բայց տխուր եմ եւ թըշուառ միեւնոյն ժամանակ, երբ կը մտածեմ թէ ամօթալի արարքս էր այս նոր զղայութիւնն ու վիճակը ինծի ընծայողը:

«Բժիշկէն վերադարձիս՝ առաջին անգամ ըլլալով կրցայ նայել Նազենիին համարձակ կերպով եւ երկարօրէն: Արդիւնքը այն եղաւ որ այժմ կրնամ իր մասին խօսիլ անվերջ, առանց յոգնելու, առանց ձանձրոյթի. հո՞գս է թէ դուն պօշպօղազ պիտի կոչես զիս եւ կուշտ մը հայհոյես:

«Կը յիշե՞ս որ շաբաթ իրիկուն մը նստեր էինք Փրատոյի ծովեզերքի քարերուն վրայ: Առանձին էինք երկուքս: Կամարածեւ բարակ լուսին մը ալիքներու երկայնքին պառկեցուցեր էր ճերմակ ցոլքերու դերան մը, որ կը ծփար կտորտուելէն: Դուն ըսիր թէ լուսինը երբ լենայ, կլորնայ, իր լոյսն ու շնորհքը կը թափէ երկրի բարի աղջիկներուն վրայ, իրեն պահելով յօնքերու չափ նիհար մակարդ մը միայն:

«Լա՛ւ, Պրանկ: Լուսինի այդ որդեգիր աղջիկներէն է Նազենին: Աւելի դեղեցիկ քան իր վերջին լուսանկարը, որ ընդարձակեցի դունաւոր: Խորունկ ձորով մը պատուած երկու բրակներու պէս, մաղիւրը կը նստին ծոծրակին: Աչքերը վճիտ են ու ծիծղուն, Լիբանանի երկնքին եւ լեռնակողերուն նման ու սիրտը արեւէն փրցուած կըտոր է, տաք ու բարի: Բերանը աղբիւր է երգի եւ կարկաչի, եւ...»

Բանալի մը ճանկրտեց վանդակապատ զրան փականքը եւ իցիկը արթնցաւ ծխնիներու ճոխնէն: Պրանկիւր ընթերցումը ընդհատեց եւ դարձաւ մտնողին:

— Կէս օրուան ճաշք է, ըսաւ ան:

— Շնորհակալ եմ:

— Բայց միշտ գրեթէ բերածիս պէս կը տանիմ, ինչո՞ւ չես ուտեր:

— Չեմ ուղեր բեռ ըլլալ բանտի վարչութեան վրայ:

— Է լա՛ւ, շա՛տ լաւ, եթէ կրնաս կատակել հոս ալ:

Երկաթէ դուռը կրկին չոքեցաւ կղպանքին: Փրան-
կիւլ քրտինքը սրբեց ճակատէն եւ տենդէն կարմրած աչ-
քերը իջեցուց նամակի վերջարանին:

«... Բայց այս անհամ չաղակրատութիւնը ըրի,
խեղդելու համար ըմբոստութիւնը արցունքներուս, ու-
րոնք մասներուս վրայէն ահա կը կաթկթին թուղթին.
արցունքներ, սրոնք քեզի պիտի պատմեն իմ շնորհակա-
լութեանս, իմ սէրիս եւ կարօտիս մասին, Փրանի, իմ սի-
րահան եղբայրս... արցունքներ, սրոնք քեզի պիտի մըր-
մընջեն թէ առողջութիւնս, Նաղենիս, երջանկութիւնս
ամբողջ կը պարտիմ քեզի... թէ վերադարձէս յետոյ,
օրերուս մնացեալ մասը պիտի դործածեմ ասպացուցանե-
լու համար որ արժանի եմ քու բարեկամութեանդ. թէ
ըրած անփոխարինելի դոհողութիւններուդ շնորհիւ կաղ-
մուած է նոր մարդ մը, բոլորովին նոր Տիրան մը, որ...»

— Անպիտան տղայ, ա՞յս գնով պիտի ըլլար...: Եւ
տխուր ժպտի մը ստուերը դէմքին՝ Փրանիկիւլ ծալեց
նամակը եւ երկնցաւ անկողին վրայ:

Ու մտածումը տարածուեցաւ վերջին օրերու դէպ-
քերուն շուրջ: Ի՛նչպիսի դահալէժ ընթացքով մը անոնք
յաջորդէր էին իրարու, զինք իրը յանցազորժ մղելով քա-
ղաքային բանտին այն խուցը, որուն վանդակապատ դը-
րան երկաթէ ձողերէն մին նորոգած էր հազիւ երեք շա-
բաթ առաջ, իբր արհեստաւոր: Այն ատեն, դուարթօրէն
քրքշալով, հարցուցեր էր բանտապահին թէ ի՛նչպէս պի-
տի վարուէր իր հետ, եթէ օր մը բախտն ու պատիւը ունե-
նար հոգ չպրտուելու ինք: Իսկ հիմա՝ դեռ կը դժուարա-
նար սպասահարին հաւատալու, ա՛յնպիսի սրընթաց թա-
փով ան խուժեր էր իր վրայ, առանց ժամանակ ձգելու
իրեն, որ կշռէ խօսքերուն ու շարժումներուն հետեւանք-
ները: Բայց նոյն իսկ այժմ, երկար ու համբերատար
խորհրդածութեանց ենթարկելէ վերջ իր յախուսն վար-
մունքը, չէր զղար անոր համար: Որովհետեւ, հակա-
ռակ անվատ ու անձանձիր փնտտուքներուն՝ Լիլէթը
այդ առտուան անարգ ու թշուառ դրութենէն փրկելու
տարբեր միջոց չէր գտած տակաւին:

Ինչ որ զինք կը շարժէր անողորօքէն, ասպարիւն
մնալն էր իր ջանքերուն, սրոնցմով կը վտրձէր համոզել
ինքզինք, որ ա՛լ հրաժարի յամառելէ եւ հաշտուի կա-
տարուածին հետ: Գիտէր թէ շահ չունէր իրողութիւն-
ները մերժելուն մէջ: Սակայն կը շարունակէր մտքով
դարձնել, դաւարել, բղթաել նոյն հարցումը, — «Չէ՞ր
կրնար չըլլալ ինչ որ եղաւ: Եւ ինչո՞ւ պատահեցան այս
բոլորը որ: Ա՞նպատճառ պէտք էր բանտ նետուէր ինք:
Ատո՞ր համար հաշուեքներութիւնը 15 օր կանխուեցաւ
սովորական ժամանակէն: Չէ՞ որ մինչեւ այդ շարաշուք
պահը, իրենց ակնկալութիւնները քալեր էին ծրագ-
րուած ճամբով»:

Կարծես կուրծքին ծանրացող եւ թոքերը ճմլող ան-
տանելի բեռը թեթեւցնելու համար, խորունկ շունչ մը
առաւ Փրանիկիւլ: Բայց այդ շունչին ճնշումն էր, որ
սառն քրտինքի խոշոր կայլակներ ցայտեցուց մարմնէն
դուրս, սրունքներէն մինչեւ ճակատը: Կռնակին տակ
թաց էր շապիկը, իսկ տափառը կը փակէր ծունկին:
Մեղմ, անխելի հեւք մը հետզհետէ կը պլլուէր շունչին:
Ու յիշեց թէ ի՛նչպէս դիպումը դաւաճաններ էր իրենց:

Անցեալ Հինդաթի առաւօտուն էր, որ արթնցաւ
այլանդակ երազներէ: Անհանդիստ, տանջալից գիշեր մը
անցուցեր էր եւ կը մսէր ընդհանուր դողէ մը: Գլուխը
ծանրացած՝ կը դառնար եւ աչքերը կը ցաւէին: Կը չոր-
նային շրթները եւ նախաձաշին պատանները կոկորդէն
անցնելուն՝ հրաշէկ երկաթի պէս կ'այրէին կարծես:
Իր ոսկորներն ու ջիղերը, սրոնք դործարանին ամէնէն
ուժովի համբաւին բարձրացուցեր էին զինք՝ տարօրինակ
խոնջէնքէ մը թուլցած՝ կը թուէր թէ պիտի կքէին, պի-
տի քայքայուէին յանկարծ:

Անդրադարձեր էր անմիջապէս, որ այդ վիճակը ար-
դիւնքն էր նախորդ իրիկուան իր անխոհեմ անհող-
թեան: Հանրապարտէզին մէջ անձրեւի էր բռնուեր: Իր
յանցանքը չէր անշուշտ ատիկա, որովհետեւ չխորհեցաւ
անձրեւը արգիլելու մասին: Բայց փոխանակ տուն աճա-
պարելու, տեղատարափին տակէն քալեր էր դանդաղօ-

րէն եւ ձեռքերը տափատին զրպանները խրած, մտովի կրկնելով այն անունները, որոնցմէ, մինչեւ հաշուեքըն-նութիւն պիտի կրնային պակասող 1000 Փրանքը հաւա-քել: Սենեակը հասնելուն, թրջած հագուստներով նեւ-ուեր էր մահճակալին, եւ յողնած ըլլալուն՝ քնացեր էր շուտով: Կէս դիշերէն վերջ միայն, սաստիկ դողէ մը ար-թընցած՝ հանուեր ու պառկեր էր անկողնին մէջ, վեր-մակին վրայ վերարկուն ալ փոելով:

Եւ յաջորդ առաւօտ թոյլ ու քրտնոյ մարմնով դործի ուղղուեցաւ, դարձեալ յիշելով թէ մինչեւ հաշուեքըն-նութիւն 15 օր կար դեռ եւ այդ ժամանակամիջոցին մէջ իրենց ունեցած 2000 Փրանքը հասցնելով 3000-ի, վերա-դարձնելու էին դործարանի գանձին: Վստահ էր, որ դժուար պիտի չըլլար ասիկա, ամենեւին: Արդէն գրե-թէ կէսին խոստումները ապահոված էին եւ դանձում-ները պիտի ընէին քանի մը օրէն: Բայց պահ մը դէշ նա-խազդացումներ պաշարեցին զինք: «—Ի՞նչ պիտի ըլլար, եթէ բան մը պատահէր յանկարծ եւ յեղաշրջէր իրենց ամբողջ ծրագիրը: — Եթէ հնարաւոր չըլլար դրամը հայ-թայթել որոշեալ ժամանակին»: Բայց վերջին անկիւնը դառնալուն, երբ երեցաւ դործարանին հնամենի շէնքը, ուժգին ճիգով մը ան յաջողեցաւ ծիծաղել իր երկիւղնե-րուն վրայ եւ համողել ինքզինք, թէ ամէն բան պիտի քա-լէր իրենց նախադած ուղիէն, անխուսափելիօրէն, պար-զապէս անոր համար, որ «ուրիշ ճամբայ չկար»:

Բայց դիպուածը եղերական քմահաճոյք մը ունեցաւ կ'երեւի. եւ դաժան քմայքով մը յարդարեց այդ «ուրիշ ճամբան», որ մոլորեցաւ անել փողոցի մը մէջ, որուն վախճանին, միջնադարեան այս բանտին երկաթէ դար-պասները կը բացուէին:

Այն անսպասելի տեսարանը, որ պարզուեցաւ իր աչ-քերուն դործարանի դուռէն ներս՝ անդիմադրելի կաթ-ուածի մը ուժգնութեամբ զարկաւ ու հաշմեց իր դատո-ղութեան հետ՝ ամէնէն յոռի նախազգացումներն ալ:

Հոն, ապշութիւն եւ տարակոյս հազած դէմքերով դործաւորներու շրջանակին մէջ կանգնած, Վիդէթ կ'ար-

տասուէր դուրսը կախ եւ թաշկինակը ճմրթկելով: Անոր նուրբ իրանը կը դողար հեկեկանքին փոքր ցնցումներէն եւ նայուածքը, ահաբեկ, կծկտեր էր դեմնին, վախնա-լով շարժիլ վեր: Իսկ բաքթօնը, երկու մոայլ անձանութ-ներ երկու կողմերուն, դայրացած, ինքնիրմէ ելած կը յանդիմանէր, կը նախատէր զայն հայհոյալից կանչերով:

Պահ մը զանոնք դիտեց եւ ունկնդրեց Ֆրանկիւլ: Ու-ղեղը կը տապալակէր գանկին մէջ, կարծես զղայաղիրկ այս անսպասելի անակնկալին հարուածէն: Բայց յան-կարծ սթափեցաւ ճաթրտող ճիշէ մը, որ յայտնօրէն բաքթօնին կոկորդէն կը ցայտէր Լիդէթի երեսին. — «Դուն դող աւազակ մըն ես, դուն իմ վստահութիւնս բռնաբարող վարնոց աղջիկ մըն ես...»:

Գունատած դէմքէն քրտնքը սրբելով, Ֆրանկիւլ բանուորներու շրթայէն անցաւ ներս եւ ըսաւ վճռական չոր ձայնով մը.

— Օրիորդ Լիդէթը յանցաւոր չէ, Պարոն Ժիւար, այդ դրամը ես վերցուցի... պէտք ունէի 3000 Փրանքի... սպանոնացի Օր. Լիդէթին եւ... բռնութեամբ առի...

— Դո՞ւն, պա՛հ, ի՞նչպէս, խենթեցա՞ր... հէ՛յ, դուք երկուքդ ի՞նչ կը փորձէք խաղալ մեր գլխուն: Նա-յի՛նք, երիտասա՛րդ, եթէ Լիդէթը պաշտպանելու համար ասպետութիւն կը ծախես, պիտի զղջաս, որովհետեւ շատ խոշոր ամբաստանութեան մը կ'ենթարկես ինքզինքդ: Ի՞նչ կ'ըսես հիմա...

— Կը կրկնեմ թէ պարզ ճշմարտութիւնն է յայտ-նածս: Դուք երկար տարիներէ ի վեր կը ճանչնաք Օր. Լիդէթը, որ ձեզ ծառայեր է հաւատարմօրէն: Դուք դե-տէք թէ ան ընդունակ չէ այսպիսի... արարելի մը:

— Ատիկա ճիշտ է... բայց տակաւին հոս բան մը կ'անցնի կը դառնայ, որ դուրսա չի մտներ: Զեղմէ ո՞վ կրնայ հասկնալ այս եղածը, պոտոց ան ակնարկը զիրենք չըջապատող դործաւորներուն շրջելով: Ու առանց պա-տասխանի սպասելու՝ դարձեալ ուղղուեցաւ Ֆրանկիւլի եւ Լիդէթի.

— Հիմա ինձի նայեցէք, հոս դադութիւն մը կա-

տարուեր է եւ ձեր երկուքէն մէկը հաշիւ պիտի տայ ատոր համար: Բայց չեմ հանդուրժեր որ քթիս խնդաք, զիրար արդարացնելով: Կ'ուզեմ անմիջապէս եւ վերջնական կերպով զիտնալ թէ ո՞վ է բուն յանցաւորը, որ պէս զի...

— Արդէն ըսի ձեզի թէ Օր. Լիզթ զո՞ւ մըն է պարզապէս... սլատասխանեց Ֆրանկիւլ:

Ու յանկարծ դէպի աղջիկը դառնալով՝ բաքթօնը սո՞ռաց իր թաւ ձայնով:

— Այն ատեն, ապ'ուչ արարած, ինչո՞ւ սկիզբէն չյայտնեցիր թէ դարչելի օտարական մը ահաբեկեր եւ կողոպտեր էր քեզ:

— Որովհետեւ չէր կրնար, միջամտեց Ֆրանկիւլ. ազդարարեր էի իրեն որ բերանը չբանայ որեւէ պարագայի... եւ գիտէք թէ դժուար չէ աղջիկ մը սարսափեցընելը:

... Հիմա, բանտի այս տխուր առանձնութեան մէջ կը դարձանար ինք ալ, թէ ինչպէ՛ս յաջողեր էր նման մեքենական խօսակցութիւն մը վարել, պահելով իր հաւասարակչութիւնը: Այո, փորձիչ պահ էր արդարեւ ու տակաւին իրեն անըմբռնելի կը մնար պատահարը: Ահա շարաթ մըն էր սահեր արդէն, իսկ ինք կը հարցնէր դեռ. «—Բայց ինչո՞ւ այդպէս եղաւ, ինչո՞ւ այդպէս պիտի ըլլար որ...»: Սակայն անմիջապէս որ կը մտարեւէր Լիզթի այդ առտուան խղճալի երեւոյթը, անոր կրած վիրաւորանքն ու թափած արտասուքը, կը համողուէր թէ իրեն անկարելի էր տարբեր վարմունք կամ տարբեր ընթացք ընտրել եւ ազատել աղջիկը այն ճախճախուտէն, ուր ան խրած էր անմեղ բարեարտութեամբ, իր յանցապարտ ստիպումներուն ենթարկուելով:

Իրիկուան ժամը վեցին բանտապահը իմացուց թէ այցելու մը ընդունարանը իրեն կը սպասէր: Հոն մտնելուն՝ Լիզթ վազեց իր դէմ ցնծութեամբ ճառագայթող դէմքով եւ խանդազին գրկելով իր զլուխը, համբուրեց աչքերէն ու շրթներէն:

— Ֆրանկ, իմ սիրելի Ֆրանկս, ի՞նչպէս ես: Ա՛յն-

քան շատ կարօտեցեր եմ քեզ: Լա՞ւ ես, լա՞ւ ես, այնպէս չէ՞: Բայց դէմքդ ինչո՞ւ կը փայլի: Քրտնե՞ր ես: Կը քրտնի՛ս, ինչո՞ւ կը քրտնիս, ըսէ՛, ի՞նչ ունիս, անհանգի՞ստ ես...:

— Հանդարտէ՛ նայինք, իրար մի անցնիր, միասին ունեցած քանի մը վայրկեաննիս չվատենք աննշան, թեթեւ ջերմի մը վրայ: Պաղ առնելու չափ բնական բան կա՞յ: Ինծի ըսէ թէ դո՛ւն ի՞նչպէս ես: Զիս ապահովցուր թէ այդ պզտիկ ուղեղդ շատ չես չարչարեր աւելորդ մտատանջութիւններով. կ'ընե՞ս ինծի այդ շնորհը:

— Կը ներեմ չարութեանդ, այնքա՛ն ուրախ եմ: Տես ինչ աւետիս կը բերեմ քեզի: Բայց նախ ինծի խոստացիր, որ աւելի զգոյշ պիտի ըլլաս եւ ինքզինքդ լաւ հոգ պիտի տանիս, հոս արդէն խոնաւ է, գիտե՞ս: Լաւ, հիմա մտիկ ըրէ, կը հաւատա՞ս, քանի մը օրէն ազատ պիտի արձակուիս, աղուոր չէ՞, հրաշալի չէ՞: Այո՛, հարկա՛ւ, կարգադրեցի: Թէեւ շատ դժուար եղաւ քու այն առտուան ըրած խենթ յայտարարութեանդ պատճառով: Հա՛, ինչո՞ւ ըրիր, հը՞, ինչո՞ւ այդ խենթ բաները ըսիր, հաշի՛ւ տուր նայիմ...:

— Իսկ դուն վստա՞հ ես որ զիս արհամարհելի թըլուառական մը պիտի չնկատէիր, եթէ քեզ այդ վիճակին մէջ տեսնելէ վերջ լռէի եւ հրապարակաւ անարգուելիք գիտէի առանց բան մը ընել փորձելու: Եւ դարձանալին գիտե՞ս ինչ է, ինքզինքս բնաւ չկորսնցուցի այդ առաւօտ եւ ըսածներս շուարումի արդիւնք չէին: Ահա ութը օր է կը խորհիմ, միշտ ալ նոյն եզրակացութեան հասնելով, — որ դուն քեզ այդ վստանդին ենթարկեցիր իմ պատճառովս, ուրեմն իմ պարտքս էր կրել պատիժը, ճշմարտութիւնը խոստովանելով: Չեմ կարծեր թէ դուն տարբեր ընթացք մը ուղէիք թելադրել:

— Ինչպէս է որ չկրնայի իմ պղտլի՛կ ուղեղովս... բայց քու խոշոր խելքովդ դուն ի՞նչպէս չխորհեցար որ մեր բաղդատարար թեթեւ մեղքը ահազին համեմատութեամբ կը մեծցնէիր եւ քրէական յանցանքի աստիճանին կը հանէիր. ըսէ՛ նայիմ, ի՞նչպէս չխորհեցար, հը՞,

«գարշէլի՛ օտարական» քեզի... եւ չարածճիօրէն քրքջաց
Լիզէթ:

— Այդ պահուն միայն մէկ մտածում, միայն մէկ
մտահողութիւն կը շարժէր դիւ, եւ ատիկա Լիզէթը ան-
տանելի կացութենէ մը ազատելու խորհուրդն էր:

— Լա՛ւ, լա՛ւ, կը բաւէ, հիմա յուզումէս նորէն պի-
տի լամ: Գիտե՞ս այդ պահուն ի՞նչպէս կ'երեւայիր աչ-
քերուս, գեղեցիկ իշխանի մը նման հրաշալի էիր: Ճիշտ
այն իշխանին կը նմանէիր, որ իր հրեղէն ձերմակ ձիով
ամպերէն կը թռչի վար եւ տունէն վոնտուած ու ան-
տառներուն մէջ մոլորած որբ աղջիկը կ'ազատէ չար վի-
շապի մը ճանկերէն...: Օ՛, նայէ ինչ ապուշ բաներ կ'ե-
րաղեմ: Բայց բարեբախտաբար քաթրօնը հաւատաց ան-
կեղծութեանս, արցունքիս եւ պաղատանքներուս: Ամէն
բան մանրամասնօրէն պատմեցի իրեն: Ըսի թէ դուն
այդպէս վարուեցար, դիւ սաշտպանելու համար միայն:
Թէ երկուքս ալ նոյնքան յանցաւոր էինք, բայց թէ ը-
րածնիս դադանի փոխառութիւն մըն էր եւ ոչ թէ դողու-
թիւն: Եւ զինք համոզելու համար, հաւաքած 2000 Փը-
րանքնիս յանձնեցի իրեն, ապահովցնելով որ շաբաթէ մը
մնացեալ հազար Փրանքը անպատճառ կը լրացնենք: Վեր-
ջապէս, չեմ ուզեր երկարել, շաբաթէ մը ազատ պիտի
ձգուիս, առանց դատ ու դատաստանի: Յետոյ ուրիշ տեղ
մը դործ կը գտնենք... եւ կը տեսնես թէ որքան երջա-
նիկ պիտի ընեմ քեզ:

Տակաւին համաձայնած չէին իրենց ամուսնութեան
թուականին եւ ձեւին շուրջ, երբ բանտապահին ձայնը
ծանուցանեց թէ լրացած է տեսակցութեան ժամանակը
եւ թէ «տիկին»ը պէտք է մեկնի:

Լիզէթ խանդադատանքով գրկեց Փրանկիւլի գլուխը,
համբուրեց գայն, յետոյ աջ ձեռքով սրբեց անոր ձակ-
տին քրտինքը, յանդիմանեց գայն իր անհողութեան հա-
մար, պատուիրեց որ շատ զլոյճ մնայ եւ առողջանայ
չուառով ու պատուոյ խօսք տուաւ, որ ասկէ ելլելէն վերջ,
ինք երբե՛ք, երբեք թոյլ պիտի չտայ որ մսի իր սիրա-
կան Փրանկը:

ԺԱ.

Յաջորդ օրը տաժանելիօրէն երկար թուեցաւ Փրան-
կիւլի: Կը դողար ու կը քրտնէր փոխն ի փոխ եւ կը ձանձ-
րանար միշտ: Անօթութենէն կը նուազէր սիրտը եւ կար-
ծես կը ճմրթկուէին աղիքները, բայց ոչինչ կրնար ու-
տել, որովհետեւ մեղի խոնջէնք մը ընդարմացուցեր էր
իր ջիզերն ու ոսկորները մանաւանդ եւ տրամադրու-
թիւնը անդամալոյժ ու անկենդան մարմնի մըն էր վե-
րածեր: Եւ թողքերուն տակ կը դէար բռնկուած խոնաւ
հրդեհի մը, որուն հրաշունչ լեզուները կը փռուէին մին-
չեւ իր սրունքները, կոկորդն ու ճակատը եւ կը խանձէին
միսերն ու մորթը:

Կէսօրին, համարձակեցաւ բանտապահին յայտնել թէ
քիչ մը անհանդիստ ըլլալուն, ախորժակը դաւաթ մը պաղ
ջուր կ'ուզէր եւ թէ շատ ուրախ եւ երախտապարտ պիտի
ըլլար, եթէ այդ շնորհը չզլացուէր իրեն: Պաշտօնեան
պատասխանեց հեզնախառն շեշտով մը, թէ օրէնքը հոս
չի բերեր մարդիկ, անոնց ախորժակին դոհացում, եւ
իրենց ուրախութիւն հայթայթելու համար:

Մինչ իր խցիկին վանդակապատ փոքրիկ լուսամու-
տէն, մութը յամբօրէն կը սողար ներս եւ կը թանձրանար
դանդաղօրէն ու դադադողի՛ իրերն ու դէպքերը կը սկը-
սէին ազօտանալ, ստուերոտիլ իր դիտակցութեան մէջ:
Կիսանուաղ ու կիսարթուն էր թէեւ՝ բայց հեռաւոր, ծը-
փուն իր գրգայնութեամբն իսկ հեղձուցիչ հոտ մը եւ
դառն ու մահաշունչ համ մը կ'առնէր այս թշնամի գիշե-
րէն: Այսքան ժանտանիստ, այսքան նենգաւոր ու սպառ-
նացայտ խաւար տակաւին չէր կլանած իր մարմինն ու
չէր պաշարած իր հողին:

Եւ յանկարծ, ու բնազդօրէն, մտածեց մահուն
մասին: Նախ փորձեց համոզել ինքզինք թէ այսպիսի հա-
սարակ ջերմ մը չէր կրնար մարդ սպաննել: Բայց փախա-
քեցաւ դիտնալ նաեւ թէ ո՛րքան կորովով ինք պիտի
դիմադրաւէր այդ դադափարը: Թէ հաւանական մահուն

մը խորհուրդը պիտի ահաբեկէ՞ր զինք: Այս ստուգումին քմայքէն մղուած հարցուց ինքնիրեն.— «Հապա եթէ մեռնի՞մ...»: Եւ տեսաւ որ ոչ մաղերը ցցուեցան սարսափէն եւ ոչ ալ սրտին տրոփիւնը շուարեցաւ յուզումէն: — Չէ՞ որ շատ բնական եւ անխուսափելի պատահար մըն է այդ, բոլոր մահկանացուներուն համար, խորհրդածեց: Ինչո՞ւ վախնալ ուրեմն: Մանաւանդ, որ այս աշխարհը սիրելու շատ առիթներ չէին տրուած իրեն: Չէր յիշեր երբեւէիցէ ապրած ըլլալը անխառն ուրախութեան եւ երջանկութեան միակ պահ մը նոյն իսկ: Այսինքն, չէր եղեր օր մը, որ իր մարմինը չգալարուէր կամ հոգին չտուալտէր նւթական կամ աննիւթ կարօտներէ, խեղճամահ եղած համեստ երազներու, հրկիզուած աժան բաղձանքներու հոգեվարքի աղիողորմ հեծեծանքներէն: — «Պահ, իսե՛րն անիծեմ ասանկ կեանքին», մրմնջեց: Եւ կիսանուաղ ու կիսարթուն ժպիտէ մը շարժեցան իր շրթները:

Սակայն անդրադարձաւ անմիջապէս, որ եսասիրութիւն էր մնացողները մոռնալը: — Մնացողները: Իսկ ո՞վ մնաց որ: Հապա Տիրա՞նը...: Այո, Տիրանը... Բայց ան հիմա երջանկութիւնը գրկած՝ անցած օրերու երազներուն ու կարօտներուն եւ երանաւէտ նոր յոյսերու խըռովքը կը խմէ ո՞վ գիտէ ինչպիսի՞ անյագութեամբ, ու այժմ գինով է անտարակոյս: Երբ այսպէս ապահովուեցաւ Տիրանի մասին՝ սայրասուր շեղբի մը ցաւաղին մը խըրճումով իր մտածումին մէջ խրիլը դրաց Լիզէթի սիրապէս ու քթթող նայուածքին: Նոյն իսկ կարծեց նչմարեւ սէրէն թրթուացող աղջկան պատկերը, որ կուրուսուրծուէր երեքուն ու մեղմ լուսաստուերներով եւ կը ծըվար թանձրանխտ խաւարին մէջ:

Ա՛հ, իսե՛ղճ աղջիկ...: Անձնուէր եւ աղնիւ համակերպութեամբ ան հնազանդեցաւ իրեն, գործադրելով վտանգաւոր ծրարիւր մը, որ ազատագրեց Տիրանը խուժգուժ ճակատագրի մը ճիրաններէն: Ան յանձնառու եղաւ նման ամօթալի արարքի մը, որովհետեւ կը սիրէր զինք: Եւ ահա ինք աղջիկը կը վարձատրէր վատօրէն ասերախտ

վարմունքով մը.— լքելով զայն ընդմիշտ, տակաւին պատան մը երջանկութեամբ չփոխարինած անոր անսահման բարութիւնը: Խեղճ Լիզէթ, այսքան երկար յուսաց եւ տառապելէն սպասեց՝ իր տարաբախտ սէրը որդերուն եւ ճճիներուն մատուցանող անտէր դադաղին ետեւէն քալելու, անոր վրայ արտասուելու դաժան շնորհին համար միայն: ... Թէեւ, անըմբռնելի տարրերու զարմանահրաշխարհին: ... Թէեւ, անըմբռնելի տարրերու զարմանահրաշխարհին է մարդկային արարածը, որ գերբնական ընդունակութիւնն ունի յաղթականօրէն կրելու ամէնէն եղերական վիշտերը եւ հաշտուելու բախտի ամէնէն դառնաղէտ հարուածներուն հետ, անոնց թողած տրտում յիշատակներուն եւ հոգեկան չէնքի մը մոռալ աւերներուն վրայ իսկ՝ հետզհետէ ձեւաւորուող նոր կեանքի մը հիմերը ձգելով:

«—Ա՛խ, բայց ի՛նչ ապուշ կատակ է ըրածս... Ի՞նչ մեռնիլ է, այն ալ այսքան աննշան բանէ մը», պոռաց մտովի:

Յաջորդ սոսուօտ Ծրանկիւլ աչքերը բացաւ, բիրտ ու ցուրտ մարմնի մը դալարութիւլը զգալով իրենին շուրջ: Ան միեւնոյն ժամանակ կ'իջնէր իր սրունքներուն, սուր ատամներով կը խածնէր իր ոտքերուն մատները, կը բարձրանար իրանին ու կը տարածուէր անկէ վեր: Ան ցրտաչունչ հով մըն էր, որ կը փաթթուէր իր բազուկներուն եւ կը սեղմուէր տենդալառ գլուխին շուրջ, ի դուր փորձելով մեղմել հոն բոնկող կրակին ջերմութիւնը: Մինչ քրտինքը, որ կայլակ կատար իր ճակատին եւ մաղերու արմատներուն՝ այտերէն եւ քունքերէն կը սահէր դարձար՝ կաթիլ-կաթիլ կը սատէր անոր դով շունչէն:

Ծրանկիւլի այնպէս կը թուէր, թէ սառուցէ անհամար կոտուցներ միաժամանակ կը մխրճուէին իր մարմնին բոլոր կողմերէն ներս, եւ անոնց պատուած ձեղքերէն դողէ եւ սարսուռի շէթեր կը հոսէին իր մէջ: Դողի եւ սարսուռի այս կաթիլները կարծես հետզհետէ կը լճանային իր սրտին եւ լանջքին տակ: Ու պահ մը ենթագրեց թէ խուլ դղրդիւններու հեռաւոր արձագանդներ կուրային իր աղիքներէն եւ կուրծքէն: Անոնք երկու խուլած

աւաղաններու կը նմանէին հիմա, որոնց մէջ ինկող կաթիլ մը դողը լայն ու կտարտող ալիքներով կը ծաւալէր ու կը նուաճէր իր մարմնին ամէնէն խոր անկիւններն ալ: Եւ որքան սեղմօրէն իրեն կը պլլուէր բիրտ ու ցուրտ այդ օտար մարմինը՝ այնքան կը թանձրանար դողը, որ ամէնով տակաւ՝ կը վերածուէր մանր ցնցումներու: Ու թէեւ ճակատը կ'այրէր դեռ եւ տենդը կը լիզէր իր շքրթները եւ կը շորցնէր ու կ'ուռեցնէր դանոնք՝ բայց ինք կը սրտփար, կը մսէր իր բոլոր ջիզերով մինչեւ սկզբներուն ծուծը:

Փրանկիւլ նայեցաւ նախ սնարին եւ յետոյ խցիկին բոլորովը: Յոգնած ու տրտում՝ անակնկալ օգնութիւն մը կը փնտռէին աչքերը: Ի՞նչպէս ցուրտ էր հոս եւ որքա՞ն առանձին էր ինք: Այո, բոլորովին առանձին էր խցիկին մէջ եւ ուժասպառ ու լքուած: Ու միայն լոյսի վեց թելեր նշմարեց քիչ անդին: Ճառագայթի վեց մատներ, որոնք արեւէն կախուած՝ կը թափանցէին դէմի պատին լուսամուտէն ներս: Ա՛հ, արեւի շողեր, ջերմութեամբ եւ կեանքով լեցուն: Կենսարաշխ վեց աղբիւրներ, որոնք առաստաղին դպող վանդակապատ լուսանցքէն ներս հոսելով, իրենց հրաշագործ արիւնը կը թափէին յատակի խոնաւ սալերուն վրայ ի դո՛ւր: Այնպէս խոժոռ, այնպէս ցուրտ ու այլամերժ էր այդ սալարկը: Փրանկիւլ փորձեց շարժիլ դէպի կենսատու թելերը եւ ամփոփուել անոնց փայփայանքին տակ: Սակայն անդամները մերժեցին երեքալ իրենց տեղերէն եւ յամառեցան կառչած մնալ անկողնին: Այն ատեն, առանց քրթմընջելու, առանց բողբոլի, ձախ ձեռքը երկարեց արեւի վեց մատներուն, կարծես դանոնք բռնելու եւ անոնց մէջ դրկուելու համար: Բայց թեւը մսեցաւ տեղ չհասած եւ վաղեց վերմակի ապաստանին:

Թեթեւ եւ զիշերուան սաստիկ տենդէն ու քրտինքէն խոնաւ ծածկոցին տակ՝ ա՛լ կը խոչորնային ցնցումները: Անդոր ու պարտուած, ան յանձնուեցաւ անոնց անկարեկիր հարուածներուն: Սրունքները, մէջքն ու իրանը կը դողային ուժգնօրէն եւ ինք հազիւ կը լսէր ակօսներուն

անկանոն կափկափումը: Ա՛հ, վատ ու վայրագ սա դողը, որ այսպէս առանձին գտնելով զինք, կը բզբտէր իր ջիզերը: Այս բարբարոս ցնցումներուն դէմ զինք պիտի պաշտպանէին Տիրանն ու Լիզէթը, եթէ իր մօտ ըլլային հիմա: Բայց չկային: Բայց բացակայ էին անոնք: Ու խորհեցաւ միւս բացականերուն: Խորհեցաւ անոնց՝ որոնք իրն էին ու չկային. որոնք իրենց անսահման նուիրումին, անհուն սէրին եւ դարմանալի կորովին ուժով պիտի կրնային զինք փրկել այս ջերմին մարդասպան ճանկերէն: Խորհեցաւ Սառային, Վարդանոյշին, Ղազարոսին...

«— Իմ աննմա՞ն անաւ, իմ աղուոր ու բարի քոյրիկս, իմ բարի ու քաջ մեծ-եղբայրս...»:

Ա՛հ, անոնց ուրուաղիծերը ինչպիսի անաղարտ պայծառութեամբ կը ծփային իր բիրերուն յիշողութեան մէջ: Եւ կարօտով, եւ թախիծով ու արցունքով յառեցաւ, երկարօրէն նայեցաւ անոնց մեղամաղձոտ աչքերուն եւ ժպտող դիմադիծերուն...:

Կէսօրուան ճաշը բերելուն՝ պահապանը դայն գտաւ տարօրինակ դիրքով: Ան պառկած էր կոնակի վրայ, նայուածքը որոշ, շատ որոշ կէտի մը դէմի պատին վերայ: Դէմքը հանդարտ էր ու անխռով, առանց կնճիռի, առանց ստուերի: Միայն՝ բաց մոոցուած ծորակներէ կարծես՝ աչքերէն երկու բարակ հեղասահ առուակներ քակուելով, կ'երերային անսովորօրէն խաղաղ երեսն ի վար: Պահապանը դարմանքով շարժեց գլուխը եւ դնաց:

Փրանկիւլ ոչ անոր գալը նշմարեց եւ ոչ ալ մեկնիլը: Այնպէս կը թուէր, թէ սառույցէ հովին զայրոյթը կոտրեր եւ սպառեր էր, զինք զգեսներէ վերջ: Հիմա ցուրտ էր իր մարմինը եւ անզգայ: Պաղ թմրութիւն մը կ'անդամալուծէր ոտքերը, ծունկերէն վար: Երբեմն միայն, կարճատեւ դող մը կը յարձակէր իր վրայ, քանի մը լայն ցնցումներով կը թօթուէր զինք ու կը փախէր անմիջապէս: Եւ կը վերահաստատուէր խաղաղութիւնը: Եւ իր մտածումին քանդակած երեք սիրելի պատկերները կը վերերեւէին իրեն, բայց հեռզհեռէ աւելի աղօտանա-

լով, աւելի հեռանալով, աւելի մթնելով...

Երբ բացուեցան աչքերը, երբ գիտակցութիւնը վերստին գտաւ զինք, առաջին զլացումը սուղութիւն մը եղաւ, տեսնելուն համար մաքուր ու լուսաւոր սրահ մը, ուր հեռաւոր բղղիւնի նմանող աղմուկ մը կը խլրտար եւ ուր սպիտակ ժպիտներով ձերմակ հագած աղջիկներ կ'երթեւեկէին անդադար: Ահա անոնցմէ մին կ'ուղղուէր իրեն, եւ քաղցր մտերմութիւն մը կը թրթուար անոր ձայնին մէջ, երբ հարցուց.

— Իսկ դուք ի՞նչպէս կը դպար հիմա:

— Գիտեմ որ այլեւս չեմ մտիւր, պատասխանեց ինք:

— Իսկ զիտէ՞ք նաեւ որ չափազանց անհոգ դտնուեր էք, բանտապահին չիմացնելով ձեր վիճակին մասին:

— Անշուշտ իրաւունք ունիք: Բայց խորհեցայ թէ սովորական սղաղաութիւն մըն է եւ շուտով կ'անցնի, հեռեւարար շարժեր սրեւէ մէկը յոգնեցնել: Արդեօք... շատ անյոյս է դրութիւնս:

— Յ, հիւանդ մը երբէք այդպէս խօսելու չէ: Մանաւանդ, որ քիչ առաջ դուք ըսիք թէ ունեցածնիդ հասարակ սղաղ մըն էր:

— Ճիշտ է, միայն թէ կուղայ ատեն մը, երբ անհամբեր աճադարանքով շապիկ կը փոխէ այդ անպիտան կենդանին եւ առանց մարդու լուր տալու կը դառնայ թուքատապ, եւ...

— Աւելի լաւ որ ծանօթ էք ձեր կացութեան: Ատիկա ուրիշ պատճառ մըն է, որ փորձէք պահել ձեր ամբողջ կորովը: Ամէն պարագայի, յոյսերնիս կտրելու չենք մեղմէ, որքան ատեն որ կ'ապրինք, այնպէս չէ՞: Յետոյ, միշտ յիշեցէ՛ք որ բարի ու ճարտար բժիշկ մը ունինք հոս, որ ամէն բան պիտի ընէ ձեզի համար: Քիչ վերջ ան տեսութեան պիտի դայ ձեզի:

— Այո... շնորհակալ եմ: Բայց դարմանալի չէ՞ որ տակաւին ուր գտնուելիս չեմ գիտեր: Կը հաճի՞ք ըսել թէ ճիշտ հիմա ի՞նչ հաստատութիւն է զիս հիւրընկալողը:

— Անշո՛ւշտ: Ատիկա քաղաքային հիւանդանոց մըն է: Հոս մեր զբաղումն է հիւանդներ խնամել, բուժել եւ

իրենց ընտանիքներուն դարձնել: Ա՛խ, այո, տեսէ՞ք, քիչ մնաց պիտի մոռնայի: Ձեր տիկինը եկաւ այս ատու կանուխ, բայց դեռ արթնցած չէիք դուք եւ չկըրցինք արտօնել որ ձեզ տեսնէ: Երէկ բանտ այցելէր է եւ անկէ լմացեր է հոս փոխադրուելնիդ: Ինձի յանձնարարեց ըսել ձեզ, թէ դործարանի դանձային թիւրիմացութիւնը պարզուեր է ամբողջովին եւ դուք անպարտ արձակուեր էք: Եւ... խնդրեց որ, շուտով... առողջանաք ու տուն դառնաք...:

Յրանկիւր զգաց թէ այս վերջին բառերուն հետ դողդղաց հիւանդապահուհին ձայնը: Եւ հազիւ խօսքը աւարտած, առանց ակնարկը բարձրացնելու իրեն, անմեկնեցաւ շտապով: Բայց ինք անակնկալի չեկաւ այս լուս յայտնութենէն: Իր մէջ, վերջին քանի մը օրերու ընթացքին, անբացատրելի, անսովոր մերձաւորութիւն մը կայացեր էր կեանքի ու մահուան զաղափարներուն միջեւ: Այս հաշտութեան դարգացման ընթացքին վրայ, անցեալի սղեկոչումները եւ ներկայի խորհրդածութիւնները դարմանալի ներդործութիւն մը ունեցան: Անոնք զրեթէ վարեցին զինք հոն, առանց առիթ տալու իրեն որ զիմադրութիւն մը փորձէ:

Ու հիմա, կեանքի եւ մահուան շունչին հետ տարուրեր՝ խորունկ խաղաղութիւն մը կը տիրէր իրեն: Կորսուելու երկիւղը չէր վրդովեր զինք: Նոյն իսկ այնպէս կը թուէր թէ ինք հեռոցհեռէ կ'օտարանար կեանքէն եւ եթէ պատահէր որ վերադառնար անոր՝ խորթ ու անծանօթ աշխարհ մը նետուած մենակեացի մը պիտի նմանէր այլեւս: Մինչ, պատառ-պատառ իր ականջներուն դէմ կ'արձագանգէին մրմունջները հարապատ ու քաղցրորէն սիրազեղ ձայներու, անդիմադրելի, կախարդական հրաւերներու պէս քակուելով զինք պարադրկող միջոցին խորերէն:

Եւ անխօսով ու անյոյզ, այժմ ան կրնար խոստովանիլ ինքզինքին, թէ պատրաստ էր հետեւելու այդ մտերի մրմունջներուն: Իր անցեալն ալ զինք կը մղէր դէպի զանոնք: Մանկութենէն ի վեր կրած զրկանքներն ու տա-

ուսպանքները նորէն ապրելու դաղալարին դէմ կը ցըցուէին անյաղթելի նախապաշարումներու նման եւ նորօրինակ երկիւղով մը կը համակէին զինք դէպի կեանքը:

Բայց ամչցաւ իր նահանջին, իր պարտութեան, աշխարհի հանդէպ իր այդ վախին համար: Եւ ուժգին ճիւղով մը փորձեց պարզաբանել իր արամադրութիւնը:

«— Պա՛հ, ո՞վ է որ չի սիրեր կեանքը, որքան ալ դառն ու տաժանագին ըլլայ ան: Եւ ես ոչ ալ կը վախնամ անկէ: Իրողութիւնը այն է, որ կ'երեւի թէ ալ դունչս պիտի չհասնի անոր: Այո, պարզապէս ալ պիտի չհասնիմ կեանքի խաղողին... այդ է ճշմարտութիւնը եւ այդ կը բացատրէ կացութիւնը...»:

Եւ ինք դո՛հ մնաց այս լուծումէն: Բայց կարծես ասեղ մը խածաւ սիրտը: Յաւ մըն էր, որ վերածուեցաւ տխրութեան, լիզէթէն, արեւէն, Տիրանէն ընդմիջութեան, զրկուիլ հարկադրուելուն համար: Այդ պահուն էր, որ յիշեց թէ դեռ չէր պատասխանած Տիրանի նամակին: Մտերիմի մը կարենալ խօսելու այս առիթը անակնկալ բախտաւորութիւն մը թուեցաւ իրեն, որ բաւական միտիթարեց զինք: Մանաւանդ անհրաժեշտ գրելիքներ ունէր ընկերոջ, կարեւոր, անյետաձգելի տեղեկութիւններ կային տալիք: Այո՛, անպաշտօն կտակ մը ունէր ձգելիք: Եւ ստուգելէ յետոյ թէ կրնա՛ր ազատօրէն շարժել թեւերը՝ անցնող հիւանդապահուհիէ մը թուղթ, պահարան եւ գրիչ ու մեղան խնդրեց եւ սկսաւ գրել անմիջապէս:

«Սիրելի Տիրանս,

«Ահա վերջապէս կը պատասխանեմ նամակիդ, որ զիս մեծապէս ուրախացուցեր էր: Վստահ եմ թէ երջանկութիւնդ անխառն է հիմա, քանի որ շուտով պիտի առողջանաս բոլորովին եւ պիտի կրնաս ամուսնանալ Նազենիիդ հետ: Ուրեմն մեր կրած պղտիկ նեղութիւնները իրենց նպատակին հասած կրնանք համարել եւ ատով իսկ վարձատրուած: Այժմ կը ճանչնաս թէ ինչ ա-

նուչ եւ անփոխարինելի վայելք է, այնպէս չէ՞, սիրելի Տիրանս, բահաստեղծելը ներշնչուած սէրէն՝ որուն մէջէն ամէն բան կ'երեւի գեղեցիկ, պայծառ, մաքուր եւ կեանքով լեցուն: Միակ բաղձանքս այն է, որ կեանքիդ բոլոր օրերուն մէջ դուն եւ «նոր ու լաւագոյն մարդու» ըմբռնումդ փոխադարձաբար հաւատարիմ մնաք իրարու:

«Ես ալ անսովոր պարագաներու տակ կը գրեմ այս տողերը: Երազ մը... այո, պարզ երազ մը հիմնական փոփոխութեան ենթարկեց իմ կեանքս: Կը խնդրեմ որ չխնդաս այս խօսքերուս վրայ:

«Անցեալ օր մեծ մայրս, քոյրս եւ եղբայրս եկան երազիս: Ես տեսայ զանոնք դարմանալիօրէն հարազատ, լոյսով եւ ստուերով, փոսերով եւ դիժերով քանդակուած պատի մը վրայ: «Անա»ս նստեր էր, ձեռքերը ծունկերուն: Անսահման բարութիւն մը, անկանոն կուտակումով կը փոռէր անոր դէմքը զեղազարդող խորունկ կուրծքներուն մէջ: Իսկ ձախ աչքը, այտին հետ կը խախորչումներուն մէջ: Իսկ ձախ աչքը, այտին հետ կը խաղար... պատմեր եմ քեզի այդ խաղին ողբերգութիւնը: Մեծ եւ հնօրեայ եւ բարգաւաճ օճախի մը փլուզումին եղբերգին է ան: Վարդանոյն ու Ղադարոսը կանգներ էին անոր լայն ուսերուն ետեւ: Քոյրս նիհար էր, վշտահար ու ասկրջանիկ... եղբայրս առօրյ, յաղթակազմ, բայց աչքերուն մէջ տրտում ու ցաւազին ցոլքերով...»:

«Լա՛ւ, սիրելի Տիրան, այս երազը յոյս մը արթնցուց մէջս, յոյս մը, թէ թերեւս կարենամ գտնել զանոնք եւ վերստին միանալ անոնց: Եւ խոշոր վճիռ մը տուի:— Որոշեցի ելլել անոնց փնտռուելին: Ուրեմն ճամբորդ եմ մօտ օրէն, պիտի թափառիմ հին ու նոր աշխարհները. կ'երթամ հեռո՛ւն, շատ հեռուները, ուր որ զիս տանի աստղս,— կ'ըսեն թէ ամէն մարդ աստղ մը ունի, որ իր ճակատագրին կ'առաջնորդէ զինք: Ըսել է, որ վերադարձիդ զիս հոս պիտի չգտնես ալ եւ թերեւս... թերեւս ալ երբե՛ք չհանդիպինք իրարու: Բայց ի՞նչ թերեւս ալ երբե՛ք չհանդիպինք իրարու: Բայց ի՞նչ փոյթ ատիկա, այնպէս չէ՞ սիրելի Տիրան, ի՞նչ հողերնիս ատիկա, քանի որ մենք միշտ լեցուն պիտի ըլլանք

իրարմով, միշտ ներկայ պիտի ըլլանք իրարու քով, այնպէս չէ՞, Տիրան...:

«Կը դժաօ թէ զօրաւոր ճիւղ ի դործ կը դնեմ, որպէս զի դրացական չդառնայ նամակս: Չափահաս մարդիկ ենք արդէն երկուքս ալ եւ բարեկամութիւնն ու կարօտը, որքան ալ ուժգնօրէն տիրապետած ըլլան մեզի՝ պէտք չէ որ կեանքի բնականոն ուղիէն շեղեցնելու չափ ազդեն մեր ջիւղերուն եւ տեսողութեան:

«Վստահ եմ, որ «նոր Տիրան»ը, որուն ծնունդը կ'աւետես մէջդ՝ հետզհետէ պիտի աճի եւ զարգանայ ու ի վերջոյ տիրէ քեզի: Ատիկա կեանքիդ մեծագոյն յաղթանակը պիտի ըլլայ իմ կարծիքովս: Գիտեմ նաեւ, որ զանազան ընդունակութիւններուդ շնորհիւ, պիտի յաջողիս բարեկեցիկ ապագայ մը ապահովել ընտանիքիդ: Այդպէսով, առանց դժուարութեան, պիտի կրնաս պարկեշտ եւ առաքինի կեանք մը վարել: Այս բոլորը, կասկած չունիմ որ պիտի իրականանան: Միակ խնդրանք մը, — վերջին խնդրանք մը կը յամառի դալ դրչիս տակ, — որ քու հայեացքդ ալ կրէ նման պատուաւոր բարեշրջում մը, — որ համակրութիւններդ շրջադարձ մը կատարեն, հոգ չէ թէ որքան դանդաղ, եւ բախտաւորներէն, գեղեցիկներէն, համբաւեալներէն, բարձր դասերու առանձնաշնորհեալներէն դառնան դէպի խոնարհները, դէպի զրկուածներն ու թշուառները, որոնք, փոյթ չէ թէ ուղղակի կամ անուղղակի՝ բայց դո՛հերն են միւսներուն:

«Յետոյ, ուրիշ խնդրանք մըն ալ: Կը վախնամ թէ այս տարօրինակ ճամբորդութիւնս չարտօնէ ինձի որ կարենամ մասնակցիլ մեր պարտքի հաշուեյարգարին: Եւ խղճիս վրայ չեմ ուզեր կրել պարտական մնալու բեռը: Ուստի յոյսս կը կապեմ քեզի, սիրելի՛ Տիրան: Մի՛ ըսեր թէ այդ դրամը դորձածուեցաւ քու առողջանալուդ համար միայն, հեռեւարար արդէն քեզի կ'իյնայ անոր ամբողջական հատուցման պարտքը: Ատիկա զիս պիտի զըրկէր այն մեծ մխիթարութենէն զոր ունիմ հիմա, խորհելով թէ քու աղաքինմանդ համար ես ալ սղոթիկ ջանք մը

ըրի: Ուրեմն ընդունէ զայն որպէս երկուքիս պարտքը, որ մի՛նակդ հատուցանել կը ստիպուիս դժբախտաբար:

«Մեր պարտքին 3000 Փրանքն ալ, կամաց-կամաց եւ նամակով կը դրկես Օր. Լիդէթին, որուն բնակարանի հասցէն պիտի դտնես ներփակուած թղթիկին վրայ: Ան կը ճանչնայ մեր բոլոր պարտատէրները եւ հետզհետէ կը վճարէ անոնց բաժինները: Օր. Լիդէթին գրէ «Ֆրանկի մէկ բարեկամին կողմէ»... շնորհակալութիւն յայտնելով իրեն երկուքիս անունով, իր ազնիւ եւ անձնուէր վարմունքին համար, բայց առանց քու հասցէդ տալու: Շնորհակալ կը մնամ, եթէ այս վերջին բաղձանքս նոյնութեամբ կատարես:

«Եւ ուրեմն... մնաս բարով, Տիրանս, կարօտով կը համբուրեմ քեզ. կը համբուրեմ Նազենիիդ այտերը եւ մօրը, քու նոր մայրիկիդ ձեռքերը:

«Հաճէ միշտ քու բարեկամդ, ընկերդ, եղբայրդ նկատել

ՅՐԱՆԿԻՒԼԸ»

Անգամ մը կարգալէ վերջ ծաւեց նամակը եւ պահարանը հասցէագրելով փակեց, գրեթէ մեքենական շարժումներով: Յանկարծ զգաց թէ գլուխը ծանրացեր էր անտանելիօրէն եւ լանջքին տակ՝ սիրտը կը չորնար ու կը կոտտար: Զիդերու եւ մտածման երկարատեւ պրկում մը պարտադրեր էր իրեն նամակը եւ հիմա, որ աւարտած էր զայն՝ ցաւառիթ խոնջէնք մը կը պատէր զինք: Եւ այս եղբրական սպասումէն կը ձանձրանար, կը դառնանար, կը վրդովէր: Ու երբ այցելուներու պահուն, Լիդէթի մօտենալը նշմարեց հեռուէն՝ հազիւ յաջողեցաւ ժպիտի ստուեր մը բերել իր դէմքին:

— Եկա՞ր, սիրելի օրիորդս, բայց չէ՞, «տիկինս» պիտի ըսէի: Ի՞նչպէս ալ յարմարցուցեր ես, որ հաւատացեր են խեղճերը...:

— Ի՞նչ ընեմ, այլապէս պիտի չարտօնէին որ քեզ տեսնեմ: Բայց ուրախ եմ որ քեզ հոս փոխադրեր են: Վերջապէս աղատեցար այն դժոխքէն: Հոս քանի մը օրէն

կ'առողջանաս եւ տուն կուզաս, մե'ր տունը, քու եւ իմ տունս: Գիտե՞ս, ես ամբողջ դրամը դարձուցի ետ, ա'լ բան չենք սլարտիր բաքրօնիմ... Հիմա դուն ի՞նչպէս կը զդաս:

— Ե՞ս, ես ոչ լաւ եմ ոչ դէշ: Բանտին մէջ քիչ մը մսեցայ: Թերեւս հիւանդութիւնս ծանրանայ, թերեւս...

— Ա՛խ, դուն նորէն սկսար անգութ ըլլալ...: Բայց ո՞րքան ապուշ էի ես, ա՛հ, ի՛նչ անխելք անասուն էի ես, որ չհասկցայ բանտին մէջ, երբ ա'յնքան տաք էիր դուն եւ կը քրտնէիր, այնքա՛ն կը քրտնէիր... Ինչքա՛ն յիմար էի ես, որ չհասկցա՛յ...

— Կուլա՞ս, բայց ինչո՞ւ կուլաս, Լիդէթ, ինծի՞ համար կուլաս: Ըսէ՛ նայիմ, կ'արժե՞մ ես քու արցունքդ: Ծա՛տ-չատ, շատ-չատ... սլտի... մեռնիմ, հիմա ըսէ նայիմ, կ'արժե՞ լալ, նոյն իսկ տիրիլ ծերացած եւ խարխուլ տղու մը համար, որ չդիմացաւ հասարակ ջերմի մը եւ մեռաւ, որ անձնասիրաբար, պարտքը չտուած՝ մեռա՞ւ անամօթը...

Լիդէթ փղձկեցաւ խուլ հեկեկանքներով եւ ձայնը յանդիմանական շեշտ մը ունէր, երբ ըսաւ.

— Դուն անգութ ես, դուն չար ու անզղամ ես, իմ պղտիկ ամուսինս, խնդացնելու համար ըրած կատակներդ անզղամ մարդու սիրտ կը ճանկրտեն, մարդ կը լացնեն...:

ԺԲ.

Տարտամօրէն կը յիշէ Ծրանիլիւ, որ Լիդէթի տուած իր վերջին պատասխանները կցկտուր էին ու ցամաք: Կը յիշէ որ իր բոլոր ճիգերուն հակառակ, չէր կրցած լրացնել «վաղը կը տեսնուինք» նախադասութիւնը, երբ աղջիկը դինք համբուրելէ վերջ կը մեկնէր, կրկին եւ կրկին պատուիրելով իրեն որ հող տանի ինքզինքին, որպէս զի շուտով առողջանայ եւ տուն դառնայ:

Տրտում ու խոնաւ աչքերը սեւեռեց դէմի պատուհանին: Անկէ դուրս անհուն եւ անթափանց խաւար մը կը տիրապետէր, մինչ ներսը, ելեքտրական լամբարներ,

լուսավառ շատրուաններու բռնկումով կարծես՝ կաթնագոյն պայծառութեամբ կ'ողողէին ամբողջ սրահը:

«— Վաղը սլտի արթննա՞մ արդեօք», շնչաց յանկարծ:

Ու բնազդօրէն մտածումը երկնցաւ վաղուան արշալոյսին: Աչքերը յառած պահեց պատուհանին եւ փորձեց հորիզոնի մը վրայ երեւակայել իր տեսած ամենաչքեղ արշալոյսներէն մին: Եւ չասլշեցաւ, դիշերային այդ սեւ մթութեան մէջէն, հրաշագեղ արեւածագի մը ուրուազըծուիլը նշմարել կարծելով: Ահա վարդագոյն կամ մաշտակազոյն մշուշ մը, որ տակաւ կը պարագրկէր հաննիշակազոյն մշուշ մը, որ տակաւ կը պարագրկէր հաննիշակազոյն մշուշ մը, որ տակաւ կը պարագրկէր հաննիշակազոյն մշուշ մը: Եւ անոնց ողորկ բուններուն արանքէն, ոսկեկարմիր հորիզոնը կը բոսորէր հետզհետէ, մինչեւ որ արեւը, արիւնէ հսկայ աչքի մը պէս բացուեր աշխարհի վրայ: Այո, դեղեցիկ եւ հրապուրիչ էր իր մըտածման կրկներեւոյթը եզոզ այս պատկերը, եւ ինք, կարծես շլացած անոր դրաւշութենէն, թարթեց աչքերը անզամ մը: Ու երբ բացաւ դանոնք, պատուհանէն դուրս՝ խաւարին սեւ վարդոյրը դարձեալ կը ծածկէր հրեղէն ու դունավառ արշալոյսը: Աւլուեր, սրբուեր էր հրաշալի կրկներեւոյթը:

Բայց ինք այլեւս չէր լսեր շուրջի հիւանդներուն հծծիւնները եւ չէր տեսներ սալտակ հագած ճերմակ աղջիկներուն անշուղի երթեւեկը: Իրեն այնպէս թուեցաւ թէ հարթ անապատի մը կամ մթապատ անտառի մը ամալութեան մէջ, ինք կը պառկէր առանձին, անհասանելիօրէն հեռու մարդկային որեւէ ստուերէ եւ կենդանական որեւէ շունչէ: Միայն, ճիշտ իր դէմ, կը յամառէր մնալ լուսամուտի մը մտերիմ ուրուաղիծը, որուն վրայ կ'արտացոլային կենդանի պատկերները Սառային, Վարդանոյշին եւ Դադարոսին: Անոնց դէմքերը կ'ապրէին կարծես, անոնց շրթները կը թրթռային եւ աչքերը կուլային իր վրայ: Ու ինք անթարթ նայեցաւ անոնց, առանց կարենալ անոնցմէ բաժնելու, դարձնելու իր աչքերը,

մինչև որ անոնք լեցուեցան արցունքով՝ եւ նայուածքը սուղուեցաւ, խեղդուեցաւ այդ աղի ու սղտոր կաթիլնե-
րուն տակ: Եւ խուլ ու խորունկ ու անզուսպ հեծկլտուք
մը փրթաւ թոքերէն ու խուժեց դէպի կոկորդը: Կապ-
տած եւ քիչ մը ուռած շրթունքները սարսուացին ցուրտ
դողէ մը: Յանկարծ, վիթխարի ալիքի մը շառաչը կար-
ծեց լսել: Կարծեց տեսնել անոր կուտակուելը արագո-
րէն իրեն մօտեցող հորիզոնին վրայ եւ անկէ շղթայա-
դերձուելը կարմրափրփուր յորձանքներու՝ որոնք անկող
մոլեղնութեամբ կը խուժէին ամէն ուղղութենէ եւ դէ-
պի զինք: Անոնց հրաշքի փրփուրին մէջ մարդկային մար-
միններ եւ անդամներ կը թաւալէին եւ խեղդուողներու
ճիշերը կը թաղուէին: Ֆրանկիւլ իր երկու ձեռքերով
սաւանը ճանկրտեց, բայց մեղմօրէն: Այդ անարկու կո-
հակին մէկ թեւը յանկարծ նետուեցաւ իր հարազատնե-
րուն խանդն ու գորովը, անոնց սլափերներուն միջոցով
իրեն մատուցանող սլափահանին վրայ: Եւ միջոցը, կամ
թերեւս իր ահանջները միայն, լեցուեցան ջախջախուող
սպակիներու ժխորով:

Այս սլահուն էր որ, քիչ անդին, սնարի մը վրայ ջեր-
մաչափ մը ցնցող հիւանդասլահունէին գլուխը դարձուց,
անհասկնալի բայց ցաւազին բացազանչութիւն մը լսե-
լով: Ֆրանկիւլի դէմքը խաղաղ էր եւ ինք անշարժ: Այդ-
ջիկը մօտեցաւ նախ վարանումով, յետոյ աճաղարելով:
Եւ տղուն բազկերակը փնտուեց անմիջապէս: Անոր ձեռքը
սաւանը կը սեղմէր տակաւին: Ու երբ վերցուց զայն՝
բնականէն աւելի ծանր ու ցուրտ թուեցաւ ան իրեն:
Բայց իր կասկածը փարատեցաւ միայն այն ատեն, երբ
ձախ ահանջին տակ՝ տղուն սիրտը խօսեցաւ իր վեհա-
չուք եւ չարագոյժ լուրթեամբ:

Այն ատեն, ձերմակ հագած աղջիկը սպիտակ սաւանը
քաշելով վեր, ծածկեց Ֆրանկիւլի գլուխը եւ գաղտնո-
րէն խաչակնքելով, սաքի մատներուն վրայ հեռացաւ,
բժիշկին տեղեկացնելու մահիճի մը պարպուելը, որ, ա-
զատ անկողին մը կը նշանակէր յաջորդ հիւանդին հա-
մար...:

ՍՊԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

THE LYNCHING

Day dawned, and soon the mixed crowds came
to view

The ghostly body swaying in the sun:
The women thronged to look, but never a one
Showed sorrow in her eyes of steely blue;
And little lads, lynchers that were to be,
Danced round the dreadful thing in fiendish glee.

CLAUDE McKAY

1933

ՍՊԻՏԱԿ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ամառնային ճերմակ օր մըն էր : Կապտաւուն-ճերմակ երկնքին խորը ճերմակ-ոսկեգոյն արեւ մը կը բռնկէր դեղնավառ բոցեղէն ժանիքներով : Այդ հրաշքի ճառագայթներէն յորդ ու բարբարոս ջերմութիւն մը հեղեղուելով տանիքներուն վրայ եւ հոսելով ասֆալտուած կամ սալարկուած փողոցներուն մէջ, կը վերածուէր հրաշունչ ծանրաքարչ հոսանքի եւ թափանցելով մարդոց հանդերձներէն ներս, կը կաշէր անոնց մարմիններուն : Եւ անցորդներուն հետ ու անոնց շուրջ կը քրտնէր ու կը հեւար կարծես միջոցն ալ, խոնա՛ւ, տա՛ք, թանձր արտաշնչումով :

Այդ կրակէ շունչին հեղձուցիչ յորձանքին տակէն կը քալէի առանձին, Լընոքս պողոտայէն դարվար, խանութներու առջեւ խմբուած եւ աղմուկով ու քրքիջով խօսակցող սեւամորթներու անտարբեր ակնարկներուն մէջէն : Եւ ի վուր կը փորձէի յարակցութիւն մը յայտնաբերել անոնց գրեթէ համանման եւ արտայայտութենէ գուրկի գէմքերուն եւ վճիտ աչքերուն, յարաշարժ, կենսաշող բիբերուն եւ պայծառ ու տրամօրէն թախճոտ նայուածքներուն միջեւ : Մինչ պարտասած արեւին հրաբորբոք, կը քոտ փայլալայանքէն՝ միջոցը կ'իջնէր փողոց եւ կը փռուէր մարդոց ճակատներուն ու կը չոքէր անոնց թոքերուն : Խոնջէնքը կը սողոսկէր մարդոց քրտինքէն թուլացած մորթէն ներս եւ կը հարուածէր, կը հաշմէր անոնց անդամները մեղկութեամբ, ծուլութեամբ :

Միջոցի այս հեւքին եւ մարդոց անձանձիր տրտունջներուն մէջէն, յանկարծ, պղինձէ թաւ ու խորունկ ձայն

մը ալիք-ալիք երկնցաւ, ծաւալեցաւ լայն ոստումներով ու դրաւեց չըջապատը: Հեռուն դղրդացող, ճարձատող լերան մը աղիքներէն խուսափած աղաղակ մըն էր կարծես, անդնդային եւ յուզուած ու խռովիչ:

Երբեմն կը խոնարհէր ձայնը հեղ ու բարի մրմունջներով: Նիհար եւ յոգնաբեկ ուռնիի մը տրտմասիւզ տատանումներով կը հեծէր այն ատեն, երկչոտ ու վշտահար: Յետոյ կը բարձրանար, կը կարծրանար դանդաղորէն: Կ'ուռէր ու կը վայրանար հետզհետէ, բայց միշտ զուսպ, միշտ շղթայուած: Մինչեւ որ իր թաւալումը հեծեծելէն, գոռալէն, մոնչելէն հասնէր որոտման: Հեռուէ՛ն, շատ հեռուէն եկող որոտումի մը գոռ արձագանդին, եւ անդնդայի՛ն, եւ յուզուած ու խռովիչ:

— Եոքանա՛ան, Եոքանա՛ան...:

Ուրիշ՝ աստուածային Մկրտիչին աւանդաշուք պատկերը ցցուեցաւ երեւակայութեանս մէջ, վազրի բծաւոր մորթով իր մերկութեան ամօթը պատած եւ իբր առաքեալի գաւազան՝ անտաշ ոստերով ծառի հաստ ճիւղ մը սեղմած ձախ ձեռքին մէջ: Սակայն անդրադարձայ անմիջապէս, թէ նմանութիւն պիտի չզտնուէր մարդարէաշունչ խիզախ անաստականին ահեղ եւ անկաշառելի Ձայնին եւ այս խոնարհ երգիչին միջեւ: Թուեցաւ ինծի, թէ նոյն իսկ Ուալտի Սալամէին արծաթէ ափսէին վրայ հանդէտը անոր կարուած գլուխին արիւնթաթախ կոկորդէն՝ մեղքը նզովող եւ ոճիրը նշաւակող այդ մարտազու Ձայնը պիտի թնդար հրաբուխի ահարկու ուժղնութեամբ եւ մոլեգին մրրկին անսանձ զայրոյթով: Եւ անոր խօսքերը պիտի պայթէին Սինայի կայծակներուն ցատումով ու պիտի ըլլային անոնց չափ զալարուն եւ վայրի ու հրեղէն:

Իսկ տարօրէն հանդարտ էր ասիկա: Թէեւ բողոքի եւ պարսաւանքի նուաղուն երանդներ ունէր այս ձայնը եւ իր թրթուումներով չարչարուած մարմինի մը տաժանքը եւ արիւնլուայ հողի մը եղերեղը կը բերէր՝ բայց ա՛յնքան հանդարտ էր ան, այնքան աղնուօրէն խոնարհ,

որ դժուար էր ճանչնալ ու սահմանել այդ անյողդողդէշտին տարողութիւնը: Եւ քմահաճօրէն, խօսքերը կը պարէին անսովոր երգին զուսպ ելեւէջներուն վրայ:

«Մանկահասակ, լայնիրան
Կոնդ մը կար ծեր կաղնիի,
Գետին եզերքը դեղին...:
Օր մը մանուկ մը բերին
Գեղին եզերքը գետին.
Կոնդին վրայ կաղնիին
Այն մանուկը կը դողար,
Այն մանուկը կը հեծէր...»:

Ու տակաւ կը մօտենար ձայնը: Եւ երբ յաջորդ անկիւնէն դարձայ դէպի կողմնակի փողոց մը, բախեցանք իրարու, ես եւ այս երգին վերջին տողերը:

Անոնք երկուք էին:

Գոց պղնձագոյն մորթը իր սեւ խորշոմներուն եւ ծալքերուն տակ կը թաղէր մեծին տարիքը: Մութ մանիշակագոյն հաստ չրթներ ունէր ան, իրենց միտերէն պարսպուած: Այտոսկրները կը յիշեցնէին ծովեղերեայ այն լերկ հրուանդանները, որոնք ծեծուած եւ հալած կ'երեւին յորձանքներու հարուածներէն: Իսկ աչքերը կը նմանէին մուսլ լճակներու, ուր լուսնին ցլքերը կը թափին դորշ, կիսաթափանց ապակորմի մը կոնակին փշրուելէ վերջ, հատնող մոմի վերջին առկայծման նմանող մեղամաղձոտ նայուածք մը տալով անոր: Ակուաներուն սպիտակ պարբսպը փլիլած, խորտակուած էր տեղ-տեղ, եւ դեղնաշաղ թախիծ մը իր մաղիլները մը-խըրճած էր անոր դէմքին, խորո՛ւնկ, մինչեւ երակները կարծես, մինչեւ վերջին օղակը իր ողնասիւնին: Արմատէն կացինով կարուած վիրաւոր ոստ մըն էր ձախ ուսը: Եւ բազուկին տեղ՝ թանձրացած ստուերի պէս երերուն՝ կը տատանէր բաճկոնին կարկտնուած պարսպ թեւը,

պարտուած դրօշակի մը ամօթահար, անկենդան ծածա-
նումով...:

Անոր աջ ձեռքէն բռնած, փոքրը տասնամեայ մանուկ
մը կ'երեւէր, ցնցոտիներու տակ թրթռացող պատառ մը
մարմինով: Նեղ եւ ցից ու ողորկ ճակատ մը ունէր ան:
Սորը սուզուած աչքերուն պսպղուն սպիտակուցին մէջ
անանուն, անորոշ սարսափ մը թառած կը ծփար եւ զար-
նող դաշոյնի մը պէս կը փայլէր ամէն թարթելու: Գորշ-
պղնձադոյն շրթները նուրբ էին ու լեցուն եւ ատամները
ձիւնի սառած կաթիլներու կը նմանէին, կարծես կըզ-
պուած աներեւոյթ գազանի մը կոկորդին շուրջ: Նայ-
ուածքէ նայուածք եւ մայթէ մայթ փախչող անհան-
գիստ, պճլտուն, վախկոտ բիբերը, անթարթ, մեռած
իրեր կը փնտռէին, անոնց վրայ հանդէսէլու համար պահ
մը:

Այդպէս հանդիպեցան անոնք ինծի, երբ ես դարձայ
անկիւնը: Եւ բարեկամօրէն ժպտելով, փայլալայնքի մը
հետ արծաթ դրամ մը ուղեցի ձգել տղուն բռնած թիթե-
ղէ գաւաթին մէջ: Բայց ան ապաստանելով մեծին սը-
բունքներուն ետեւ, փարեցաւ անոնց եւ ճչաց դողահար
սուր ձայնով մշ.

— Չէ', չէ', չէ'մ առներ, պիտի չառնե'մ...:

Եւ աչքերուն ջինջ ճերմակին մէջ ծուարած սոսկու-
մը հալեցաւ քինախնդիր կայծի մը կրակէն: Յանկարծօ-
րէն ան դարձաւ թշնամական եւ նայուածքը խոժոռ ու
ոխակալ ստուեր մը հազաւ:

— Մի' վախնար, պղտիկ տղաս, մի' վախնար, այս
աղնիւ պարոնը քեզի պիտի չվնասէ: Սօսեցաւ մեծը եւ
մատներով գգուեց փոքրիկին նորաբոյս դանդուրները:

— Կը վախնա՞յ, բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառ կայ
վախնալու որ... հարցուցի, միեւնոյն ժամանակ ժպտիլ
փորձելով պղտիկին:

— Օ', ոչինչ, գրեթէ ոչինչ, եղբայր. երախայ է
տակաւին եւ կը վախնայ ճերմակներէն: Զարմանալի է,

չէ՞, որ ճերմակներու այս երկրին մէջ ան կը վախնայ
ճերմակ մարդոցմէն, աւելցուց ան դադարի պահէ մը
վերջ դառնօրէն, բռնօրէն ծիծաղելով:

Կ'երեւի ապշութիւնս մատնուեցաւ նայուածքէս եւ
ան լրջացաւ անմիջապէս: Եւ տարտամ, ստուերային
տրտմութիւն մը իջաւ ու տարածուեցաւ անոր մթապատ
գէմքին վրայ, երբ ինքնագուսպ ճիգով մը շարունակեց.

— Ճերմակները շատ անդութ եղան մեզի հանդէպ,
եղբայր... ճերմակները շատ գէշ վարուեցան այս պըզ-
տիկին հետ, մեզ բոլորիս հետ...: Բայց ներեցէք, պա-
րոն, մենք երթալու ենք ալ: Եւ շնորհակալ եմ, մեծա-
պէս շնորհակալ եմ ձեր բարութեան համար:

Ու հեռացան անոնք, ձեռք ձեռքի: Ու հեկեկալէն կը
հեռանար անոր երզն ալ, մինչ բառերը դեռ կը հասնէին
ինծի հատ-հատ, անոր թաւ ու պղնձային ձայնին քմա-
հած ելեւէջներուն վրայ:

«Եւ խեղճ մանուկը քոքովեց.—

«Էլի, էլի, լամա, սաքագտանի»...

Բայց շարժեցան եօքը մեծ բիրերը.

Մայրը նուաղեցաւ ցաւէն պոռալով.

Իսկ անոնք իրենց խոշոր բիրերով

Շաղեցին տղուն մատղաշ միսերը

Խմորի պէս, անոր անմեղ արիւնին մէջ...:

Օ', այո', եղբայրներ,

Մանուկին մաքուր եւ տափ արիւնին մէջ,

Անոնք շաղեցին անոր անմեղ միսերը

Խմորի պէս, իրենց հաստ բիրերով,

Եղբայրներ...»:

Անկէ վերջ, սեւամորթներու այդ ծանօթ թաղին մէջ, մենք յաճախ հանդիպեցանք իրարու:

Անոնց օտարոտի երեւոյթը եւ անսովոր վարմունքը նոյն իսկ իրենց ցեղակիցներուն շրջապատին մէջ, խորհեցայ թէ կրնային արդիւնքն ըլլալ թաքուն ու անաւոր ողբերգութեան մը, որուն տարբեր դրուագները անցեալէն սաւառնելով դէպի ներկան՝ դաժան մղձաւանջի մը բերած տուայտանքով կը թունաւորէին անոնց օրերը: Ի՞նչպէս, առանց ճանչնալու զանոնք, յաջողեցայ համոզել ինքզինքս, թէ մեր ճակատագիրները երկուորեակ եզրայրներու հարադատութիւնը ունենալու էին զրկանքներու, հալածանքներու եւ թշուառութեան իրենց մասնայատուկ նկարագրով: Անձ զիտեր իրապէս: Միայն կը յիշեմ թէ անկեղծ բարեկամութիւն մը ծլեցաւ մեր միջեւ հետզհետէ եւ զօրացաւ, եւ խորացաւ ամէն յաջորդ հանդիպումի: Մինչեւ որ յստակօրէն տեսայ եւ ուժգնօրէն զգացի անոնց հոգիներուն սպիտակ մաքրութիւնը, որ անդրադարձ ցոլացումներով կը պատէր, կը սրբէր զանոնք, եւ անոնք կ'ըլլային՝ ճերմա՞ղ, հրեշտակներու թեւերուն պէս, առաջին ու չիրականացած սէրերուն պէս ճերմակ...:

Իսկ հօր երգին տխուր կարկաչը կը լռէր շրթներուն եւ անբացատրելի երանութեամբ մը կ'սղողուէր դէմքը երբ հեռուէն կը նշմարէին զիս: Եւ դաւելին նայուածքին փաթթուած մթին սարսափը կը քակուէր ու կը հալէր, պրկուած զիմազիծերը կը պայծառանային ու կը թաղուէին լայն ու խորունկ ժպիտի մը գիրկը:

Այսպէս դիմաւորեցինք զիրար աշնանամուտի այդ արեւոտ յետմիջօրէին: Պահ մը խօսակցելէ վերջ, առաջարկեցի որ միասին քալէինք քիչ մը, եթէ որեւէ արդէլը չկար:

— Այսինքն, եթէ ժամանակնիդ կը ներէ, պե՛տցուցի:

— Ա՛խ, ինչ ալ ընենք, չենք կրնար ուրանալ որ իրապէս հարուստ ենք այդ կողմէն, չենք կրնար ուրանալ, կրնա՞նք, տղա՛ս, շիտակը ըսէ, եւ ան ծռեցաւ դէպի փոքրիկը իր հնչեղ քրքիջով եւ դէմքը ծամածռելով: Պատմէ՛ եղբայր ինտիին թէ մեր ժամանակը սարսափելիօրէն ներողամիտ է, հա՛յտէ, սկսէ՛ նայիմ տղաս, — ու ան խոնարհեցաւ պղտիկին վրայ հաւանութիւն հայցող պաղատական ակնարկով մը:

— Հա՛րկաւ, հա՛րկաւ, կրնանք ընկերակցել իրեն. պարոնին խորհիլ տալու չենք որ ինք գունաւոր*) է, եւ չարածճիօրէն խնդաց տղան:

Մտանք Սէնթրըլ Փարք: Հիւսիսային մասին մէջ, լճակի մը կտրատուած եւ անհաւասար անդամները կը փռուին ցանուցիւր: Եւ զոյգերով, — սէրով ու ցանկութեամբ բեռնաւոր նաւակներ, անոնց ծիփուն ու կանաչաւուն մորթը կը ձեղքեն հարբած դեկերով: Արեւը հոն կը թօթուէ ճառագայթէ իր վարսերը, ու փրթած լոյսէ մազեր, կտարած ասեղներու պէս թափելով վար՝ կ'ոտոտեն ալիքներու կոնակին, դազաթէ դազաթ կը թըռչին ակնթարթներու վրայ թառած: Երբեմն, շուարած խուրճ մը անոնցմէ, մարդին կամ ծառի մը տերեւներուն վրայ ճերմակ կարկտան մը կը կարէ: Ուրիշներ, յիմար աճապարանքով գիրար կը ծակծկեն մեր աչքերուն մէջ:

Անխօս նստած ենք կողք կողքի: Վարը, կարծես զազանօրէն ժամադրուած, սիրոյ եւ կարօտի խանդոտ փարումներով մեղմօրէն կը հծծէին եւ կը քոտ տարփանքով կը համբուրուէին ջուրն ու ցամաքը:

Միրարանութեան այս քմահաճ պատկերս զուարճալի մանրադէպ մը յիշեցուց ինձի, զոր պատմելու համար դարձայ տարէց բարեկամիս: Բայց կաթուածէ դարնուածի պէս փլչեցան տրամադրութիւնս ու բռտերս:

*) Սեւամորթի հոմանիշ աւելի փափկանկատ բառ մը:

ինչո՞ւ այդպէս էր ան, լարուած իր բոլոր ջիղերով եւ աչքերը սեւեռած ջուրին, աչքերը մխրճած ջուրին: Ի՞նչ կար հոն: Եւ ինչո՞ւ կուլար ան: Կուլա՞ր, ձեռքով սեղմած գլխատուած ուսը, գալարելով, ճմրթկելով դայն ինքնամոռաց, անբացատրելի եւ անզուժ ոխակալութեամբ մը:

Եւ վայրի խտուրթիւն մը կ'արտայայտէին դէմքին սառած կնճիռներն ու երակները, որոնք ոչ իսկ աննշմարելի կծկումէ մը կամ դողէ մը կը շարժէին: Կարծես ան արձանացած, մարմարացած մարմնացումն էր Սոսկումին: Ահաւոր ողբերգութեան մը խաղարկման եւ ասլրումի տառապալին պահու մը՝ կախարդական ճպտտով քար կտրած անդրի մըն էր կարծես, տակաւին կենդանի բարախումով:

Ու թերեւս երկիւղէս, կամ յուզումէս, կամ թերեւս սարսափէս պիտի պոռայի, պիտի ճչայի եթէ դեռ յամառէր, դեռ ահաբեկէր զիս այս անօրինակ եւ անմրմունջ եղերերզը: Բայց կարծես ան զգաց տաղնապս եւ շրջեցաւ իմ կողմս: Միակ ձեռքը հանդէսեցուց ուսիս եւ պահ մը անխօս նայեցաւ ինձի: Վերին շրթունքով սեղմեց հեկեկանքը, մինչ բերնին երկու անկիւնները ցաւով կը կախուէին վար: Յայտնօրէն, կը փորձէր իշխել ինքզինքին եւ կը ջանար խօսիլ: Այդ ցաւաղին պայքարին մէջ իր յողթանակը ամէնէն առաջ աւետեցին աչքերը, որոնք նախ թարթեցին եւ ասպ կծկուեցան շատ մեղմ ժպիտով մը: Յետոյ շարժեցան շրթները: Եւ յղկուած աղամանդի ձողերու պէս՝ իր այտերէն վար երեքացող եւ շնչող արցունքի տակ ու փայլուն դիծերը կտարտեցան, երբ վերջապէս ան յաջողեցաւ տրտում ժպիտով մը փշրել ճակատին եւ երեսներուն վրայ սառած սոսկումը:

— Հաճէ ներել ինձի, եղբայր էնտի: Բան մը չուներիմ, իրա՛ւ որ բան մը չունիմ: Միայն քիչ մնաց ինքզինքս պիտի մոռնայի: Արդէն մոռցայ թէ դուն քովս էիր: Ներէ որ մոռցայ թէ դուն քովս էիր: Ճշմարիտ կ'ըսեմ որ չափազանց պիտի ցաւիմ եւ ինքզինքիս բնաւ պիտի չներեմ, եթէ առանց դիտնալու վախցուցի իմ միակ

ճերմակ բարեկամս: Եւ շիտակը ըսէ, չա՞տ տարօրինակ կ'երեւէի:

— Ատոր նման բան մը: Վստահ եմ թէ սարսափը երբեք այդքան որոշ կերպով չեմ տեսած որեւէ մէկուն վրայ: Եւ հաւատա որ ցաւը եւ զարհուրանքը ճանչցեր եմ իրենց ամէնէն ահուկի ձեւերուն մէջ: Իրապէս զարմանալի վիճակ մըն էր:

— Կը խորհիմ թէ ճիշտ ես, եւ մանաւանդ, զարմանալին կամ դժբախտութիւնը այն է, որ չեմ զգար թէ ե՛րբ եւ ո՛րեկէ կուգայ ան:

— Թերեւս մեր շուրջը բան մը պատահեցաւ, որ քեզ յուզեց կամ գրգռեց կամ վերջապէս հին յիշատակ մը արթնցուց մէջդ:

— Ոչ, մեր շուրջը չէ... այլ սա ջուրին խորէն տեսնուեցան պատկերները: Անշուշտ միշտ կամ ամէն տեղ չըլլար. երբեմն կը պատահի եւ անահնկալ կերպով, երբ ջուրի մը եզերքը գտնուիմ: Հիմա ալ չգիտցայ թէ ինչպէ՞ս սա պզտիկ ալիքները զիս տարին հեռո՛ւն, մութ ու խորունկ գետերէ, բարձր լեռներէ, խոշոր եւ անձնասէր քաղաքներէ անդին, ուրիշ ջուրի մը եզերքը, ուր կըտրուած մեծ ծառի մը հաստ կոճղը կը ցցուի մերկ ու չոր եւ արիւնով պատած...:

Այդ պահուն, փոքրիկին սեղմօրէն փակ շրթներէն խուլ բայց լսելի հծծիւն մը սահեցաւ դուրս: Նայեցանք անոր երկուքս ալ: Անոր աչքերը կծկուեց, մանրացեր էին, իրենց կիսախուփ կոպերուն մէջէն հաղիւ երկու կաթիլ արցունքի նեղ անցք մը ձգելով: Անոր խորհուրդն ալ, լճակի սողոսկող ալիքներուն հեծած՝ վազեր էր հեռո՛ւն, որովհետեւ ան չճնչաց բարձր. եւ գողգոջուն ձայնը մսեցաւ կարծես ու սրսփաց բռուրուն հետ.

«Մանկահասակ, լայնիրան

Կոնդ մը կար ծեր կաղնիի...

Կոնդ մը կար ծեր կաղնիի...

Գետին եզերքը դեղին

Կոնդ մը կար ծեր կաղնիի...»

Ու լայն-լայն բացաւ աչքերը: Եւ յառեցաւ կէտի մը, անձանօթ սոսկումէ մը ուռած, դուրս ինկած բիբերով: Հոն, կարծես իր մտապատկերը կոճղացեր էր յանկարծ: Մենք նոյն իսկ ժամանակ չունեցանք երեւակայելու թէ ի՛նչ կը տեսնէր ան հոն, որ այդքան ահաբեկեց, այդքան զարհուրեցուց զինք: Որովհետեւ ան մէկէն իր երկու դողդղացող ձեռքերով ամբօրէն կըլսէր դէմքը եւ փղձկեցաւ անսանձ եւ կտոր-կտոր ինկող հեծկլաւքով մը.

— Հայրիկ, սոսկալի է, հայրիկ, ա՛յնքան սարսափելի է, ա՛յնքան...

Հայրը իր գիրկը առաւ որդին.

— Ձէ՛, չէ՛, իմ քա՛ջ տղաս, իմ ազու՛որ տղաս... չէ՛, նայէ՛, ինձի՛ նայէ, իմ քա՛ջ, իմ հերո՛ւս տղաս...

Եւ վշտահար ժպիտը, որուն փայլով ան փորձեց զբաւել մանուկը՝ տակաւ հաշմուեցաւ, ընկղմեցաւ ցաւի նոր սահանքի մը թաւալումին տակ: Դողը որ ուժգնօրէն կը թօթուէր անոր ցամքած շրթունքները՝ խոշորցաւ ու լայնցաւ, հասաւ ու զարկաւ կզակին, կոխկրտեց խորշոմապատ այտերուն ղիտկնացած կաշին, որ կեանք առած՝ թրթռաց ու ցնցուեցաւ քանի մը անգամ:

— Ահաւոր պատմութիւն մը կապուած ըլլալու է այդ կոճղին, համարձակեցայ թոթովել հազիւ լսելի մըմունջով մը:

— Ահաւոր եւ անմարդկային, եղբա՛յր կնտի, այո՞... ահուկի եւ դազանային...: Այդպէս եղաւ ճերմակներուն դատաստանը... այդպէս եղաւ անոնց արդարութիւնը... Սպիտա՛կ Արդարութիւնը...: Եւ երբ լսես ամէն բան, վստահ եմ թէ սիտի համոզուիս որ ճերմակներուն հանդէպ այս սլոտիկիս ունեցած ատելութիւնը եւ իմ... դառնութիւնս, դէպի կեանքէն աւելի բախտաւորուածները տածուած քէն կամ նախանձ չեն, ճշմարիտ...:

Ձայնը խեղդուեցաւ կոկորդին մէջ, անգոր շշուէջի վերածուած: Բայց ան շարունակեց, մանր դադարներ առնելով բտերուն մէջ, որոնք տրորուած, չարչարուած, խոշտանդուած հետզհետէ թանձրացող յուզումի

մը ճմլումէն՝ կը դանդաղէին շրթներուն վրայ, կը տատամէին իյնալ անոնցմէ վար:

— Գիտե՞ս, ես միշտ մուրացկան չեմ եղած: Կար ժամանակ, որ սլոտիկ տնակ մը ունէինք մենք, ցանկապատուած սլարտիզակի մը հետ: Բայց օր մը, Աստուած գիտէ թէ ի՛նչպէս, ամէնէն կատաղի, ամէնէն վայրագ գազանները նստեցան մեր սլոտի ճերմակ ժողովուրդին հողիներուն մէջ: Անոնք կրակի տուին մեր տունը...: Եւ նայեցան թէ բոցերը ինչպէս խորովեցին կինս եւ իր նորածինը...: Կ'ըսեն թէ վագրերն ու վարազներն անգամ կը վախնան եւ կը փախչին կրակէն...: Իսկ մեր գլուխն ճերմակները մեր այրող տան շուրջ կը ցատկըրտէին ցնծութեան աղաղակներ արձակելով, ծիծաղելով եւ ծափահարելով: Անոնց հանած խելագար աղմուկին մէջ կը նուաղէին եւ կը խեղդուէին կնոջ սրտապատառ կանչերն ու նորածին գաւկիս սուր ճիչերը: Երբ անոնց հողինները տառապանքին գրկած երկինք բարձրացան եւ տուներնիս բուռ մը մոխիր դարձաւ՝ ճերմակները իրենց ուրախութիւնը շարունակեցին, իմ եւ այս սլոտիկիս շարշարանքները վայելելով:

Խնդրեցի իրմէն, որ կարելի եղածին չափ մանրամասն եւ ամբողջ ընէ պատմութիւնը: Եւ ան սկսաւ պատմել: Մինչ լճին մակերեսը կը խոժոռէր հետզհետէ: Կ'ուսէին ու կը բարկանային ալիքներուն հեղամբունջ ու նազելաչուք ծախանքները: Հովը, լեզուն դուրս ձգած եւ հերարձակ՝ կը սուլէր ու կը հեւար ցատկոտ: Արեւը կը մերկանար իր հրեղէն պատմութեանէն եւ կը հազնէր կարմիր, կրակի եւ արիւնի դոյն կարմիր գիշերազգեստը: Եւ մինչ պատմութիւնը կ'իջնէր հարաւ՝ ամպերու մոխրագոյն կտորներ հալածելու կ'ելլէին արեւը, անոր դաղջ ու դուլ ճառագայթները խածած...:

Հեռաւոր, ծայրագոյն հարաւին դիրկը, Մայր Միսիսիփի եւ Մեքսիկեան ծոցին գրկախառնման անկիւնը կը տարածուի Լուիզիանա նահանգը, իր դետերուն ոլորապտոյտ ցանցով եւ իր բաղմաթիւ լիճերուն եւ ճահիճներուն խորհրդաւոր ու դարանող մթութիւններով:

Լա Սալի հետախոյզ կրունկներէն նուաճուած եւ անոր մատներով 1682-ին Լուի Մեծի անունին նուիրուած բամպակի եւ ծխախոտի անծայրածիր անդաստան մըն էր ան, զոր Պօնաբարդ 121 տարի վերջ վաճառեց Միացեալ Նահանգներուն 15 միլիոն տոլարի, Աւստերլիցի խրամները խորացնելու համար:

Լուիզիանա նահանգի, Կրէնթ դաւառի աւաններէն մէկն է Բօշէլ, կձկուած արեւմտեան եզրերուն Փոքրիկ դետակին, որ աւելի վար խառնուելով Կարմիր եւ Սև գետերուն՝ կը հոսի դէպի արեւմուտք, մինչև Նաբոլի օդակուղ Մայր Միսիսիփի մէկ երակին մէջ:

Եւ Բօշէլի պորտին կը նստի վայտակերտ բաց միսրագոյն շէնք մը, որ լայնանիստ պատշգամներ ունի ու կոխկրտուած թուփեր ու ծաղիկներ բոլորալիքը: Տեղտեղ դեռ կանգուն մնացող ցիցերը բեկորներն են հնամեայ եւ ամբաշէն վանդակապատի մը, որ ատենօք չըջափակեր է երբեմնի այդ ճոխ, պճնազարդ ու շոայլ ապարանքը, որուն ճակատի երկու փոշեծածկ պատուհաններէն, հիմա, պայթած ու թափած բիբերով աղդադիրներ անցորդներու կը նային պաղատադին:

«Վարձու կամ ծախու տուն

դիրամատչելի պայմաններով»

Տակաւին ոչ շատ հեռաւոր անցեալի մը, երեք սերունդներ առաջ՝ այդ եռյարկանի շէնքը հիմնուեցաւ բամպակի մեծահարուստ վաճառական եւ սեղանաւոր Ուիլիլմ Ճանսընի կողմէ:

Այն օրերուն՝ սեւամորթներու սիրտերը մորթուած հաւերու գլուխներ էին, ճմլուած եւ արիւնլուայ: Անոնց վերատեսուչները իրենց լեզուներուն պաշտօնը վստահեր էին դալարուն մտրակներու, որոնք կը շաչէին եւ կը շառաչէին անխնայ, անողոք ու անձանձիր: Այն օրերուն՝ մասնաւոր հրապարակներու կամ շուկաներու վրայ աճուրդով կը ծախուէին սեւամորթները եւ անոնց մայրերը ծանր հակերու տակ փլած կամ արտերու ածուներուն մէջ ողբելար ու հեւատդառ կը ծնէին իրենց դաւակները:

Երբ 1861-ի Ապրիլին, Քաղաքային Պատերազմը հարաւի եւ հիւսիսի բանակները կոյր, խուլ ու մոլեգնած երկու ցուլերու պէս եղջիւր եղջիւրի նետեց՝ Ուիլիլմ Ճանսըն մեռեր էր արդէն, ամբողջ հարստութիւնը կտակած իր միակ դուկին, Մըսթը Ուայթի:

Իսկ սերունդներէ ի վեր անոնց տնական դործերը կատարող դերիներու ընտանիքին, թամարններու այն չըջանի զլխաւորը կը կոչուէր Թամ, յաղթակազմ եւ անհանդարտ, քիչ մը ըմբոստ երիտասարդ մը, որ անզաւակ կը մնար: Տէրը ամլութեամբ յանցաւոր կը նկատէր կինը եւ կը սնդէր որ երկրորդ ամուսնութիւն մը կնքէ տղան:

Ի այց այդ տարին, հակառակ Թամի բոլոր ջանքերուն, լոյսին վազեց դաւակը: Եւ հայրը խոնարհած իր զգայազիրի կնոջ վրայ, զգուելով, փայտայելով զայն մէկ ձեռքով՝ միւսին ջղածիդ եւ դողդոջուն մատներով խեղդեց տակաւին ծիծ ու օրօրոց չտեսած իր մանուկը, աչքերը արցունքով լեցուն եւ գլուխը բարձին մէջ թաղած: Ու յետոյ աղօթեց երկարօրէն եւ լացաւ սրտաբեկ ու յուսահատ:

Մը. Ուայթ զայրացաւ կղպուած աչքերով եւ կապոյտ ու ճմլուած վզով այս մսակոյտին առջև: Եւ վայրագօրէն խարաղանկ տուաւ երիտասարդ Թամը: Ու ինք, իր արեւոտ ու ծաղկաբոյր պատշգամէն այդ բարբարոս մարդանքը զեկալարեց հեթանոսական հրճուանքով մը: Յաջորդ օրը կրկնել տալէ վերջ պատիժը՝ ան աղդարաբեց դերիին:

— Սատկեցնել կուտամ քեզ, եթէ դալ տարի տղայ մը չունենաս :

— Տէր, պատասխանեց թամ երկիւղած բայց անյող-դողդէ ճայնով մը, դուք դնած էք զիս եւ իրաւ է որ ես ձեզի կը պատկանիմ : Դուք կրնաք ծախել իմ մարմինս եւ կամ կտոր-կտոր ընել զիս, եթէ ատիկա հաճելի է ձեզի . . . : Օրէնքը թոյլ կուտայ որ դուք ընէք այդ բոլորը : Բայց իմ զաւակներուս համար դուք որեւէ բան վճարած չէք եւ օրէնքը կամ Աստուած իմ վրայ պարտք չեն դնել զաւակներ ունենալու, որպէս զի դուք զանոնք ծախէք օր մը . . . : Այո, իմ շատ յարգելի տէրս, կը համարձակիմ երդում ընել թէ մարդ հաճոյք չղբար ցաւով ու տանջանքով զաւակներ ծնելէն ու մեծցնելէն եւ օր մը, հրապարակի մը վրայ, ցաւով ու տանջանքով անոնց վաճառուիլը տեսնելէն . . . : Ոչ, իմ մեծապատիւ տէրս, ես երբեք պիտի չօղբեմ զաւակներ ունենալ . . . եւ եթէ ըլլան . . . պիտի խեղդեմ զանոնք այս ձեռքերովս . եւ թող Աստուած ողորմի ինձի . . . :

Թամ կանգնած էր զինուորի մը պէս անշարժ, թեւերը երկու քովերէն կախ եւ ձեռքերը աղբերուն դէմ սեղմած : Ու մինչ կը խօսէր, շրթները կը դողդղային, ակոսները կը կարկափէին եւ աչքերէն արցունքը կը հոսէր լեցուն ու փայլուն այտերէն դարձար եւ պարզ ու անկնճիւղ դէմքին վրայ ինքնավստահ, անվրդով խաղաղութիւն մը կը ծփար :

Մը. Ուայթ որեւէ ճիգ չըրաւ իր ցատումը սանձելու : Նախ բարկացայտ ճայնով մը հարցուց թամին թէ լմնցո՞ւց ըսելիքը : Եւ երբ գերին իր վճռական եւ անխռով «այո»ն արտասանեց՝ բռունցքի ուժովին հարուածով մը ան գետին տապալեց թամը եւ գաւաղանը քանի մը անգամ իջեցնելէ վերջ անոր մէջքին, մոնչեց աստաներուն մէջէն .

— Դուն պիտի զղջաս այդպէս խօսելուդ համար : Այո՞, երբ ես իմ հաշիւս փակած ըլլամ քեզի հետ, դուն պիտի զղջաս նոյն իսկ ծնած ըլլալուդ համար : Եւ ես ասանկ բաները գիւրութեամբ չեմ մոռնար . . . : Այդ քու

զարչելի սեւ կաշիէդ աւելի սեւ օրեր պիտի ցուցնեմ քեզի, սպասէ՛ . . . : Եւ կարծես գիշատիչ կատաղութեան մը թոյնով կը փրփրէին իր բառերը :

Եւ սեւամորթներու հանդէպ անոր տածած խորհաշնքն ու առելութիւնը դոհացում պահանջող անզուսպ կիրքի մը վերածուեցան հեղհեռէ : Եւ երբ սեւամորթներու աղատաղութեան հրովարտակը արձակուեցաւ 1863-ի Նոր Տարիին՝ Մը. Ուայթ արդէն նախագահն էր հակահիկրօ «Սպիտակ Եղբայրութիւն» Միութեան իր շրջանի մասնաճիւղին :

Իսկ երկու տարի վերջ, երբ ստրկատէրերու եւ աւատապետներու հարաւը վերջնապէս խորտակուեցաւ հիւսիսի յեղափոխական բանակներէն եւ դերեվաճառութիւնը խափանուեցաւ ամբողջ երկրին համար՝ Թէննըսի նահանգի Պուլասկի գիւղաքաղաքին մէջ հիմը դրուեցաւ Քու-Քլուքս-Քլաններու հօգը եւ ահաւոր կազմակերպութեան : Իրենց պարտութիւնը մերժող պարտուածներուն զաղտնի բանակն էր ան, որ ահարկու եւ անթափանցելի, քանի որ աներեւոյթ պարիսպի մը նման կը ձգտէր ցցուիլ հիւսիսէն փչող աղատութեան եւ յառաջդիմութեան զո՞ւղ ու կենսանորոգ հովերու հոսանքներուն դէմ : Իրենց պայքարին իբր միջոց, Քլանները ընտրած էին հակառակորդները շարժարեւն ու սպաննելը անմարդկային եւ ամէնէն խուժուժ եղանակներով, յաճախ՝ անոնց տուներուն հրդեհումը եւ երբեմն ամբողջ գերդաստանին բնաջնջումը : Այս ոճիրները անոնք կը ծրագրէին եւ կը դործարէին որպէս տօնական հանդիսութիւններ, մասնաւոր համազգեստով եւ արարողութիւններով :

Եւ Քու-Քլուքս-Քլաններու Լուիզիանայի «Քաղաւորութեան» վարիչ «վիշապ» ընտրուեցաւ Մը. Ուայթ, դէպի սեւամորթները սնուցած իր անհաշտ ու կատաղի առելութեան եւ խոշոր հողատէրի գիրքին համար : Այսպէս, Բօչէլի «արջ»ին անդամները սպիտակազգեստ, սրածայր գտակներով դահլիճներ դարձան, անոր քմահաճոյքին ենթակայ : Եւ առաջին նիստին մէջ իսկ, հին, անմարելի ոխով լեցուն, Մը. Ուայթ ամբաստանեց եւ դա-

տապարտել տուաւ Թամի եղբորորդին, տասնեւութամեայ Պապը :

Այդ ատենները, Բօչէլի սեւամորթները իրենց նախկին տէրերու վրէժխնդիր ատելութեան երկիւղէն նահանջեր էին աւանին դէպի արեւմտեան ծայրամասերը, ուր իրենց շինած վայտէ եւ թիթեղէ խրճիթները անկանոն բոլորակ մը կը կազմէին, ճակատնին շրջապատի սպառազէն պարասլին պարզած :

Աջ կողմը Բօչէլի դարձուցած էր Թամսըններու տընակը : Մամուռ կապած անոր վայտեայ դուռը անախորժ ճօննչներ կ'արձակէր ամէն բացուիլ-դոցուելու : Անոր արտաքին անշուք երեւոյթը կը շեշտուէր երկու փոքր ու քառակուսի լուսամուտներով, որոնց ներսէն իբր վարագոյր կախուած թանձր լաթի կտորները, երբ կը փակուէին զիշերը, տնակին կը մօտեցնէին անթափանց, չօշափելի ըլլալու աստիճան սեւ ու խիտ խաւար մը, որ բարկութեամբ եւ թշնամանքով ուռած աչքեր ունէր կարծես . . . :

Ճեղքրտած, ծակծկած տախտակորմով մը երկու «սենեակներու» բաժնուած էր հիւղը ներսէն, ուր խոնարհ, կարկտնուած, քիչ մը ցնցոտի կահաւորումը տըխուր համադրութիւն մը կը կազմէր հին լրագիրներով թերթուած պատերուն, կարծրացած հողէ յատակին եւ հովին ցուրտ քղանցքներու շաշիւնէն հեծեծող խարխուղ տանիքէն անցնող աղքատ ու ցաւադին օրերու թշուառութեան հետ : Նախասենեակին մէկ անկիւնը, ամենաթեթեւ հպումներէն իսկ դժգոհ եւ դայրացող սեղան մը, սպղած երեք ազազուն սրունքներուն վրայ՝ կարծես կը տքար քրքրուած հսկայ Աստուածաշունչի մը ծանրութեան տակ : Անոր կողքին, Պիչըր Սթոյի Աղբար Թոմասը, գըրքին առաջին երեսին վրայ, իր քրտինքը կը սրբէր խոնջէնքէն, դաւադանի մը յենած միւս ձեռքով եւ դէմքէն տրտում ժպիտ մը կախած :

Այդ օրերէն զիշեր մըն էր :

Սեւ ու թանձր ամպերով ծանրացած, երկինքը իջեր, կախուէր էր վար եւ կրթներ էր Բօչէլի ծխնելոյգներուն :

Իրիկնային ցուրտ ու չարաչուէ հով մը, Թամսըններու կիսաբաց դուռէն սողոսկելով ներս, դեղնած պատերուն վրայ տատանող Աղբար Թոմասի դունաթափ ու տանջահար պատկերները կը ծեծէր : Բայց յարաճուն, ծանրանիստ յուզում մը տիրապետած էր բոլորին եւ անհաղորդ կը դարձնէր զանոնք այդ սառնաշունչ զովութեան : Անօրինակ անձկութիւն մը կը ճնշէր Թամի ընտանիքը :— Անոր կինը երկունքի ցաւերով կը դալարուէր քովի սենեակին մէջ, եւ Պապ, որ կարեւոր յանձնարարութիւն մը կատարելու համար տունէն մեկնած էր չորս ժամ առաջ՝ կ'ուշանար, չէր վերադառնար տակաւին, չարագոյտ ենթադրութիւններու տառապանքին մատնելով զիրենք :

Անհամբեր ու ջղագրգիռ, Թամ կ'երթեւեկէր փոքրիկ նախասենեակին մէջ, երբեմն կանգնելով սեմին վրայ, նայուածքը սեւ ու նենդաւոր խաւարին թշնամի գիրկը մխրճած : Եւ շուրջիներու աչքերէն արտահոսող երկիւղախառն սարսափը միաձուլուելով ձեղունէն, թղթածածկ պատերէն եւ դուրսի անթափանց մութէն ցայտող արտառոց, ուրուային երեւոյթներու այլանդակ պարին՝ կը խուժէին իր վրայ, կը զանակոծէին իր երեւակայութիւնը, որ ուղեկորոյս, սանձարձակ կը խարխափէր ժանտաստուէր նախազացումներու անսահման ճախճախուտին մէջ : Պահ մը, մոռնալով թէ միւսները իրենց պաղատադին ակնարկները իրեն սեւեռած, մխիթարութեան եւ կորովի փշրանք մը կը մուրային իրմէ՝ Թամ յուսահատ ինկաւ սեղանին առջեւ եւ ճակատը սեղմելով Աւետարանին դէմ, աղաղակեց արտասուահեղձ ձայնով մը .

— Ա՛խ, Աստուած իմ, մեղի դարձուր Պապը, ի՞նչ կ'ըլլայ, Տէ՛ր Աստուած, մեղի վերադարձուր սպաննուած եղբորս կենդանի եւ միակ յիշատակը, կ'աղաչենք, Տէ՛ր Յիսուս, կը պաղատինք, զթա մեղի, ետ դարձուր Պապը . . . :

Գուրսէն սրտակեղէք հեծկլտուք մը եկաւ որպէս արձագանգ : Պապի մայրը նստած բանջարի ածուներէն մէկուն մէջ, հողը կ'ոռոզէր իր արցունքով : Զարհուրելի

պատահարի մը աղէտալի նախադրացումով, անոնք չըզ-
 թայուեր էին տունին, եղերական սպասումներու տուայ-
 տանքին կսկիծով, գիտնալով թէ որեւէ փնտոտուք, ամ-
 պածածկ ու փոթորկաւար երկնքի մը վրայ աստղ մը
 բռնելու փորձ պիտի ըլլար: Ու կը սպասէին բոլորը: Եւ
 կը սպասէր մայրը իր մէկ հատիկ զաւկին, որ օր մը ծը-
 նաւ վերակացուին խարաղանի հարուածներուն տակ,
 բամպակի արտին վրայ, արիւնի մութ յորձանքի մը մէ-
 ջէն...:

Յանկարծ, հեռուէն արշաւասոյր մօտեցող ամբակնե-
 րու դոփիւնները հասան իրենց: Իր ուժերը հաւաքելով,
 Պապի մայրը կանգնեցաւ ոտքի եւ հազիւ աղնարկը յա-
 ուած աղմուկին ուղղութեամբ՝ սարսափահար ճիչ մը ար-
 ձակելով վազեց դէպի տուն ու սուտաց:

— Գառլնե՛րը, գառլնե՛րը...:

Դուրս սուրացին բոլորը:

Քլաններու ծպտեալ տասնեակ մըն էր, որ եկաւ քա-
 ոսամբակ ու անցաւ, խաւարին միապաղաղ սեւութիւնը
 ճեղքելով ծխացող ջահերու ծածանող, դեղնաւուն շեղ-
 բերով: Անոնցմէ մէկը միայն, իր ձիուն սանձը պրկեց
 Թամի առջեւ. կենդանին խրխնջաց ու ցցուեցաւ ետեւի
 սրունքներուն վրայ, ուժգնօրէն թօթուելով գլուխը:
 Ձիաւորը ջահը բռնեց իր դէմ եւ ձիուն թամբին կապուած
 ծրար մը սկսաւ քակել: Սրածայր ճերմակ դտակ մը ու-
 նէր ան եւ ճերմակ պաստառէ պարկածեւ շրջադետ մը
 մինչեւ սրունքները կախուող եւ լայն ու երկար թեւե-
 րով: Բարակ պարանէ գօտի մը կը գրկէր անոր մէջքը:
 Եւ ամբողջ մարմնին սպիտակին վրայ, որպէս սեւ կէ-
 տեր՝ զլանածեւ գտակին երկու նեղ ճեղքերը կը կաղ-
 մէին միայն, բացուած իր երկու աչքերուն համար: Իսկ
 կուրծքին, այլանդակօրէն դժուած կմախք մը կը քրքջար
 ահարկու ախոսները ցցած, եւ ոսկրուտ ձեռքին մանգաղ
 մը բռնած:

Ան կրկին քաշեց ձիուն սանձը. կենդանին վրնջեց ու
 զայրոյթով ծառացաւ կրկին. յետոյ ան արիւնահոտ ծը-

րար մը նետեց Թամին եւ ոնդային ու ատելաւառ ձայնով
 մուտաց:

«—Մը՛ս—թըր Թա՛մ, ա՛ն ասիկա...»:

Եւ ուժգնօրէն խածաւ «առ»ը եւ խթանեց ձիուն կո-
 դերը, որ գլուխը ձգեց դէպի մեղսակից խաւարը եւ հե-
 աացաւ քառատրոփ, սմրակներուն խուլ ու համաչափ
 դոփիւններով ահամրմունջ յանկերդ մը յօրինելով:

Քստմնելի սարսուռ մը զգաց Թամ, երբ դողահար
 մատներով շօշափեց ծրարը. եւ ի զուր փորձեց խեղդել
 հեկեկանք մը, որ վիրաւոր պատառներով կաթկթեց իր
 անդալայացած շրթներէն դարովար:

— Ա՛խ, բայց Աստուած իմ, ասիկա սոսկալի է, ա-
 սիկա Պապն է, աս Պապի կտրուած գլուխն է, ո՛վ Աստ-
 ուած, ո՛վ Յիսուս, ասիկա անդամութիւն է, ա՛հ, սի-
 բելի Պապս, իմ խե՛ղճ Պապս...:

Տղուն մայրը սառն այլայլումով պահ մը նայեցաւ
 Թամին եւ անոր բռնած մահահոտ ծրարին, անխօս, գրե-
 թէ անտարբեր: Բայց խելացիոր ճիչով մը ան յանկարծ
 նետուեցաւ ասաջ, յախտակեց զաւկին գլուխը եւ սեղ-
 մեց բերնին, երկար, կերկերուն ու աղետար ճեճեճան-
 քով մը: Յետոյ փոուեցաւ գետին, ամբօրէն գրկած ծը-
 րարը եւ ալ չկանդնեցաւ երբեք, ալ չարթնցաւ երբեք:

Կղպուած դուռէն ներս, հիմա ցուրտ էր տունը: Այդ
 ցուրտը կը թափանցէր դուրսէն, հերարձակ սուրող հո-
 վին շունչն քակուելով: Այդ ցուրտը կը թանձրանար մա-
 նաւանդ ներսէն, անհոգի վրակէ մը եւ անմարմին գլու-
 խէ մը ծաւալող անհուն եւ անմխիթար կսկիծէն եւ ա-
 ճող ու փրփրող վրէժինդիւր ցասումէն:

Ընտանեկան Աստուածաշունչին վրայ եւ կարմիր-
 րոտոր լաթին մէջ, Պապի արիւնաթաթաւ գլուխը կը
 հանգէր փչրուած գանկով: Անոր աչքերը փորուած էին
 եւ պայծառ ու սիրազեղ նայուածքին փոխարէն՝ երկու
 նեղ ու անյատակ անդունդներ կը սեւնային այժմ: Թամ
 չլսեց մերձակայ սենեակէն լացող նուազուն կանչերը նոր
 ժամանող իր զաւկին: Անդիմադրելի սեւեռումով, աղ-
 նապիչ, ան կը նայէր Պապի պատուած եւ արիւնաշաղ

գլուխին, որ կարծես կը խօսէր իրեն մեղմաշշունջ փրս-
 փրսուքով մը: Եւ այնպէս թուեցաւ իրեն թէ ինք կը հաս-
 կընար, գրեթէ կը հասկնար անոր լեզուն: Երեւակայու-
 թեամբ ան փորձեց պատկերացնել իր սիրելի եղբոր միակ
 գաւակին, հեղահամբոյր Պապլի կրած չարչարանքներուն
 եւ դլխատման մանրամասնութիւնները, հարադատ գոյ-
 ներով: Եւ ինչ որ կըրցաւ ուրուագծել՝ այնքան անուշիկ,
 այնքան դարձուրելի եւ հրէշային երեցաւ իրեն, որ հա-
 մոզեց զինք թէ անկարելի էր որ Աստուծոյ գլխութեամբ
 եւ հաճութեամբ կատարուած ըլլար այդ ոճիրը: Եւ քա-
 նի որ Աստուած կամ շատ զբաղած ըլլալուն եւ կամ սե-
 ւամորթներու դէմ խորութիւն զնելուն, ջանք չըրաւ կամ
 չյաջողեցաւ Պապլը Բլաններուն ճանկերէն աղատել՝
 տրամաբանեց թամ՝ ուրեմն իրեն կը մնար արդար հա-
 տուցում մը ընելու պարտքը:

Այդ պահուն էր որ վերլիչեց այն սնդային ձայնը, որ
 «Մըթըր Թա'մ» մունչեր էր ակոսներուն տակէն եւ որ
 ծպտուած հի'ն ծանօթի մը պէս կը յայտնուէր հիմա: Եւ
 երբ զգաց թէ իրենց տունը հարուածող վշտին ծանրու-
 թեան եւ զինք ոտնահարող վրէժխնդիր ցասումին ուժգ-
 նութեան տակ իր կըող միտքը վերջնապէս կը կեդրոնա-
 նար անաւոր որոշումի մը վրայ՝ դարձեալ նետուեցաւ
 ծունկի եւ ջերմեռանդօրէն աղօթեց իր եղբոր եղերական
 յիշատակին, Պապլի մարտիրոս գլուխին եւ քրքրուած
 հսկայ Աստուածաշունչին առջեւ, իր մեղքերուն թողու-
 թեան եւ հոգիին փրկութեան համար...:

Եւ յաջորդ առաւօտուն կայծակէ լուր մը Բօշէլը
 դարկաւ:

Ճանաւններու երէց աղջիկը, կենսուրախ եւ դեղանի
 Փէկին, նախորդ իրիկուն անմեղ ու չարածճի ճոռո-
 զիւններով իր ապագայ երազներն ու յոյսերը պատմելէ
 վերջ մօրը՝ հմայուած ու երջանիկ, գրկեր էր զանոնք ու
 ննջեր: Իսկ այդ առտու, բաւական ուշ, երբ արեւին ճա-
 ուղայթները հալած ոսկիի նման կը մաղուէին վար՝
 մայրը բարձրացաւ Փէկիի ննջարանը, յայտնելու անոր
 թէ նշանածը իրեն կը սպասէր դահլիճը:

Բայց յանկարծ, պատուտած, խեղացնոր ու անաբեկ
 ճիւղ մը աստիճաններէն թաւալեցաւ դարվար, խուժեց
 ընդունարանէն ներս եւ զարնուելով Մը. Ուայթի ձեռքե-
 րուն՝ շարտեց թէյի բաժակը գետին ու փշրեց: Հայր,
 դաւակներ եւ նշանած սուրացին երկրորդ յարկ մագլցող
 սանդուխէն վեր եւ երբ թափեցան ննջասենեակէն ներս՝
 տեսան Տիկ. Ճանսընը ուշափորոյս փռուած Փէկիի մահ-
 ճակալին ոտքերուն քով: Ու երբ, սարսափած բնագրով
 մը, տակաւին առանց անոր դպչելու, աչքերնին փութով
 դարձուցին աղջիկը վնասուելու՝ այնպիսի սոսկալի, այն-
 պիսի կողկողազին ժխոր մը պայթեցաւ անոնցմէ իւրա-
 քանչիւրին արձակած աղաղակէն, որ ձեղունէն, երկա-
 թէ խողովակէ մը կախուած Փէկիի կիսամերկ մարմինը
 սկսաւ երերալ կարեկցութեամբ:

Այդ գիշեր խեղդեր էին դայն, յետոյ թեւերը կոնա-
 կին կապած, պարանով վզէն կախեր էին վերեւի ձողէն:

Պարտէզին մէջ, դաշունահար սպանուներ էր նաեւ
 պահապան շունը, որուն Լինքըն անունը տուեր էին ան-
 դօր կատաղութեան պահու մը, սեւամորթներու աղա-
 տաղրումին պատասխանատու մեծ նախագահէն առնե-
 լով:

Եւ լուրը կայծակի պէս ինկաւ Բօշէլի կուրծքին:

Գ.

Իր խռովայոյց սրտին վրայ հազարաւոր դադաղնե-
 րու ծանրանալը զգաց թամ, երբ հեռուէն նշմարեց յու-
 դարկաւորներու անծայր թափօրը: Յանցապարտի ցա-
 ւազին խղճահարութիւն մը, անդուսպ եւ անհաւասար
 դողի մը վերածուած, կը դաւարէր իր անդամները եւ կը
 քաշէր, կը պրկէր եւ յետոյ յանկարծ կ'արձակէր իր
 պարտասած ջիղերը: «Բարի աղջիկ մըն էր» շնջաց մեղ-
 մօրէն եւ արցունքի երկու կայծեր նստան իր թարթիչնե-
 րուն եւ սկսան կրծոտել կոպերը: Ճգմեց ու մարեց այդ
 հեղուկ կայծերը, բայց աւելի ծանրերն ու կիզիչները

յաջորդեցին անոնց : «Աղուոր աղջիկ էր՝ բարի աղջիկ էր» : Դադադները դեռ կը բաղմանային իր կուրծքին, կոկորդը կը նեղնար կարծես եւ շունչը կը չարչարուէր կոկորդին մէջ : Ինչպէ՞ս անմեղօրէն կը քնանար Միս Փէկին, դուրսը թաղած փետուրէ բարձին փափկութեան մէջ եւ սպիտակ ու հոլանի թեւերը տարածած սաւանի անբերձ ձերմակին վրայ : Վարդաթոյր շրթները երատային համբոյրի՞ մը պատրաստուեր էին արդեօք : Եւ այնքա՞ն ողորկ էր անոր պարանոցը եւ անպաշտպան, երբ իր պողպատէ մատները սեղմեցին դայն : Ու աղջիկը հազիւ ժամանակ ունեցաւ թոթովելու :

«Ա՛խ, կ'աղաչեմ, մի՛ ցաւցնէք վիզս, կը խնդրեմ...» : Բայց խեղճ Միս Փէկին երբեք չկրցաւ բանալ իր աչքերը, չկրցաւ ճանչնալ իր սպաննիչը :

Թամ դդաց թէ պիտի փշուկէր եւ հեռացաւ իրեններէն, վախնալով թէ իր տարօրինակ, անբարոնելի յուզումը կրնար կասկածներ ներշնչել անոնց : Եւ մինչ յուզարկաւորներու թափօրը կ'աներեւութանար հեռուն, «Ի՛նչ լաւ աղջիկ էր, ի՛նչ բարի աղջիկ էր Փէկին», դարձեալ մտածեց Թամ եւ արցունքի հրաշէկ կայլակներ դերար կլլեցին իր կոպերուն վրայ : «— Ա՛հ, ոճրադործ մըն եմ ես, ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի խուէր ու կոխկրտուէր վարդի մը չափ բուրումնաւէտ, անմեղ ու թարմատի այդ վարդ-աղջիկը...» : Ու վերջիչեց այն պահը, երբ տատամսած եւ ընկրկած էր վայրկենական ահարեկումէ մը, որ ցայտեր էր բարձին, սաւանին եւ Փէկիին մաքուր ու անարատ ձերմակութենէն : Բայց նոյն ատեն, ախանջներուն մէջ որոտացեր էր ոնդային ձայնը մարդասպան ձիւռորին, որ Պապի արինոտ գլուխը շարտեր էր իրեն : «Մըս-թըր Թա՛մ» : Ու անոր թանձր ծպտումին մէջէն, զարմանալիօրէն յտակ կերպով տեսեր ու ճանչցեր էր երանութենէն ծամածուռ եւ արբշիռ դէմքը Մր. Ուայթի... : Եւ լսել կարծեր էր նորէն այն հզօր փափսուքը, որ Պապի պարպուած աչքերուն մահահոտ անդունդներէն էր արձագանդեր եւ ահաւոր անարդարութեան մը արժանի հատուցումին մասին էր խօսեր իրեն... : Եւ իր

տատամսումը նահանջեր էր անողոք եւ անտեղիտալի վճռակամութեան մը յարձակումին առջեւէն եւ մատները երկաթէ օղակի պէս սեղմուեր էին աղջկան քնքուշ ու դիւրարեկ պարանոցին շուրջ :

Ու նայեցաւ սաստկօրէն դողդուցող իր ձեռքերուն, Ձանոնց բուռնցը շինած՝ խրեց տափառին պատուած, լայն դրպաններուն մէջ, խեղդելու համար դողը : Բայց ի դուր : Խիղճը կարծես ահոայ կը կծրտէր իր դէմ : Հեռուէն սեղմուէր կը համողուէր թէ Պապի դէմ գործուած ահաբեկի ոճիրին չափ անքաւելի եւ դարձելի էր իր մեղքն ալ : Ու ալ չկրցաւ ապաւինիլ որեւէ չքմեղանքի, չկրցաւ կտոճել ինքնարդարացման որեւէ յոյսի : Եւ պարտուած, եւ խորտակուած ինքն իր մէջ, հազիւ կրցաւ հօծել :

— Ա՛հ, Տէ՛ր Աստուած իմ, ի՛նչ ըրի... ի՛նչ կրնայի ընել... Պապի վերջին կամքն էր ատիկա... եւ մեռելներուն չեն մերժեր... ես կը կարծէի թէ մեռելներուն չեն մերժեր... : Այս խեղճ ձեռքերս, ա՛խ, այս մեղաւոր ձեռքերս իմ հարազատ զաւակս անգամ խեղդեցի՞ն, ի՛նչ կրնայի ընել, Տէ՛ր Աստուած իմ... :

... Այս դէպքէն վերջ՝ Բօշէլի բնակիչները, գալիք սարսափելի պատահարներու յամառ նախադրացումներով դրաւուեցան : Եւ շատ ժամանակ շանցած, այդ երկրագալի կասկածները հաստատուեցան անպարտկելի եւ եղերական ապացոյցներով : Մր. Ուայթի պահանջին իրր պատասխան, Քու-Քլուքս-Քլաններու շրջանային կեդրոնը բացարձակ լիազօրութիւն տուած էր անոր, Բօշէլի շրջանակին համար : Եւ իր «արջ»ին անդամները գործեցին այնպիսի բժախնդիր ու վայրագ եռանդով ու կիրքով, որ դաւառի ձերմակ բնակիչներն անգամ սրտմտեցան, ցնցուեցան եւ անոնց գիշերները ահատեսիլ մղձաւանջներով լեցուեցան : Վեց տարուան մէջ, անոնք մօտ երեք հարիւր դիակ այրեցին, մորթագերծեցին կամ կացինահար կտրատեցին, ամէնէն հրէշային եւ զարհուրելի շարձարաններով դանոնք սպաննելէ վերջ :

Այդ թիւին մէջ էին նաեւ Թամի հինգ զաւակներէն

չորսը, մորթոտուած Մր. Ուայթի ցուցմունքով, իբր փոխվրէժ Փէկիի կորուստին:

Եւ 1872-ին, պետական մասնաւոր օրէնքով սաստուեցան Քլանները եւ ձերբակալուեցան անոնց վարիչներէն շատեր, որովհետեւ այդ տխրահամբաւ կաղմակերպութեան բարբարոսական սանձարձակ շահատակութիւններէն եւ ոճիրներու քանակէն ցնցուեցաւ ամբողջ երկրին խղճմտանքը եւ ընդվիցեցաւ բողոքով եւ դայրոյթով:

Բօչէլի մէջ ալ դատուեցաւ եւ ծանրօրէն դատապարտուեցաւ Մր. Ուայթ, բոլորին ծանօթ իր խուժուժ եւ անմարդկային արարքներուն համար:

Սակայն քանի մը ամիս յետոյ, ան յաջողեցաւ գնել իր դատավճիռը բամպակի հակերով եւ չքեղ ու բազմածախս երեկոյթներով եւ աղատ արձակուեցաւ, շատեր դարձանքի մատնելով...:

Ե.

Աւելի քան յիսուն երկարածիգ տարիներ, յամբ ու ճնշող քայլերով եկեր ու անցեր են Բօչէլի փողոցներէն, տուներու եւ խրճիթներու տանիքներէն, մահիճներէն եւ օրբաններէն եւ սերունդներու հետ՝ հետզհետէ վերափոխեր են նաեւ չրջապատն ու կենցաղային հնամեայ սլայմանները եւ վերամշակեր կամ նորակերտեր են բազմաթիւ սովորոյթներ: Անցնող ժամանակը սակայն, չէ յաջողեր ամենամեղմ հպումով անդամ զարնուիլ ընկերային եւ տնտեսական կարգ մը հաստատուած ըմբռնումներու՝ որոնք նուիրական, անբռնաբարելի աւանդութիւններ են դարձեր հարաւային նահանգներուն համար:

Այդ ընդհանուր եւ խորանիստ համոզումներուն մէջ, այն որ մասնաւանդ անփոփոխելի դաւանանքի մը վերածուեր է կարծես՝ ազատազրուած սեւամորթներու հանդէպ ձերմակներու սնուցած անհաշտ դարչանքէն եւ ոխակալ թշնամանքէն ներշնչուող վերաբերմունքն է:

Արդարեւ, հակառակ որ վեց տասնամեակներ են սահեր այն օրէն, երբ դերեվաճառութիւնը ջնջուեցաւ եւ լիակատար ազատութեան հետ, քաղաքացիական հաւասար իրաւունքներ շնորհուեցան երբեմնի ստրուկներուն՝ անոնք տակաւին կը նկատուին անդամները ստորադաս, կիսավայրի ու անարգ ցեղի մը, որ միշտ դատապարտուած մնալու է որեւէ տեսակի դերութեան եւ ենթարկուելու է սպիտակներու միահեծան տիրակալութեան:

Հիմա, անցած դարերու ծոցը խարսխուած զրուանքի այդ տրամադրութեան կը խառնուի վրէժխնդիր ատելութիւն մըն ալ, որ միշտ արթուն ու վայրադ կը մնայ սեւամորթները որպէս շահաւէտ ստացուածք կորսնցուցած ըլլալու ձերմակներու անմխիթար կսկիճէն եւ յարարորբօք ցասումէն: Այդ ատելավառ թշնամութիւնը երբեմն կ'արտայայտուի այնպիսի դաժան ու եղբրական հալածանքներով, որոնց նմաններուն հազիւ թէ ենթարկուեր էին անոնց նախահայրերը, արիւն արցունքի հին օրերուն:

Եւ յիսուն ծանրաթաւ տարիները, որոնք երբեմն մեղմ, երբեմն բիրտ իրենց վաղքին հետ փշրեր տարեր են հնարոյր ու ժամանակավրէպ շարք մը նախապաշարումներ եւ յետամնաց դաղափարներ՝ դարձանալի յարատեւութեամբ եւ ուժգնութեամբ հարուածեր եւ կրծեր են ձերմակներու եւ սեւերու փոխյարարերութեան արիւնաշաղք քարածայուն ալ, բայց կեդրոնէն միայն: Ու փոխանակ հալեցնելու եւ աւաղի վերածելու դայն՝ ճեղքեր են երկուքի, մահահոտ անդունդ մը փորելով անոնց միջեւ՝ ուր հիմա կը հոսին ու կը թանձրանան երկու կողմերու դառն, թունալի եւ մոլեգնախանձ զգացումները:

Իսկ Քու-Քլուքս-Քլաններու կաղմակերպութիւնը, թէեւ այժմ մղուած ընդյատակեայ դադտնի դործունէութեան, սակայն տակաւին կը մնայ հարադատ ժառանգորդը երբեմնի ահաւոր աւանդութեան եւ արիւնարբու համբաւին: Ձերմակներու ոխերուն եւ վրէժներուն յազեցման յանձնառութիւնը ստանձնող դործադիր մարմին մը դարձեր է ան, որպէս փոփոխութիւն կրած ըլլալով

միայն հետեւեալ դիմաշրջումը:— Ծագում առած էր, իբր ներշնչում եւ շարժառիթ ունենալով ցեղային հրաբորբոք եւ սանձակոտոր ատելութեան մոլուցքն ու անոր յափրացումը առաւելապէս: Հիմա՝ ան վերածուեր է հրէշային մեքենայի մը, հականիկրօ, հակասեմական եւ հակակաթոլիկ եռադէմ ծպտումով, որուն շնորհիւ մեծ հողատէրներն ու դրամատէրները իրենց գործաւորներուն հետ ունեցած վէճերնին կը «յարգարեն», ահաբեկելով դժգոհ եւ վտանգաւոր նկատուածները, չխնայելով նաեւ իրենց դաւանակից բողոքական ազատականներուն:

Խորասուզուած այս մոռյլ խորհրդածութեանց տաժանածիւղ բաւիղներուն մէջ՝ Սէմ Թամսըն կը յառաջանար Բօշչլի գլխաւոր փողոցէն: Յանկարծ, բնագոյրէն, մտածումին հետ բարձրացուց նայուածքը: Աջ կողմին վրայ, սէգ ու հպարտ պերճանքով կը բազմէր ճանսըններու հիմնովին վերանորոգուած եռյարկանի ճերմակմոխրագոյն տունը, իր լայնադիր ծաղկազարդ պատըզամներով: Մայթէն մինչեւ բնակարանին մուտքը սալարկուած նեղ ճամբայ մը կ'երկարէր: Անոր երկու քովերուն, մարզահասակ ծառուղիներ, իրենց մշտադալար տերեւներուն հմայիչ կանանչով բոլորածեւ կամարներ կը հիւսէին, որոնց արանքէն կը պարզուէր անդիմադրելի ու թովիչ հրապոյրը բազմատեսակ ու գունագեղ ծաղիկներուն, որոնք կը ծածկէին տան առաջամասի երկուքի ճեղքուած մարգերը եւ եռեակ ածուներով բնակարանին երկու կողմերէն կը հասնէին մինչեւ ետեւի բակը: Իսկ ամբողջ շէնքն ու զայն իր բուրումնաւէտ թեւերով դըրկող ծաղկաստանը կը շրջափակուէին փայտաշէն խիտ ցանկապատով մը:

Սէմ Թամսըն բարեխառնել փորձեց իր խորհուրդները, որոնք դառնութեամբ կը ծանրանային արագօրէն: Բայց այս շքեղ ապարանքին քով՝ չկրցաւ չերեւակայել իր անշուք եւ խարխուլ սնակը, որ իր ժառանգազուրկ բնակիչներուն հետ կը սրսիար ձմեռուան ցուրտին դէմ եւ կը քրտնէր ամառուան այրող ջերմութենէն:

— Տարակոյս չկայ թէ արքայական շտալութեան մէջ կը լողան այս ընտանիքին բախտաւոր անդամները: Թո՛ղ բարով վայելեն: Եթէ միայն բաւական բարի ըլլային թոյլ տալու մեզի, որ օրական պատառ մը չոր հաց ունենայինք ծամելու:

Քիչ մը վար, ճամբուն ձախ եզերքին, նորակառոյց դրամատուն մը իր ճակատի սպիտակ մարմարները կը պսպղացնէր արեւին շէկ ճառագայթներուն դէմ, որոնց տաք զգուանքին տակ՝ կարծես կը ծփային ու կը դալարուէին մարմարին գորշ-պղնձագոյն երակները: Իսկ ծեծուած պողպատէ ծանրաքարչ դրան կամարին վրայ, արծաթեայ կիսաբոլորձեւ ցուցատախտակը կը փալիւղէր «Ուլլաքըր շանսըն եւ Որդիք» մակագրութեամբ:

Այս նորաշէն դրամատան հանդիպակաց անկիւնագարձին կը տարածուէր երկյարկանի ընդարձակ վաճառատուն մը, ճակատին հսկայ ցուցանակով՝ որուն կարմիր, խոշոր ու պոռոտ դերերը կը կարգացուէին, — «Ուլլաքըր շանսըն եւ Բնկ»: Զարմանալիօրէն ճոխ եւ արտակարգօրէն հարուստ այս վաճառանոցը, օտարական այցելուի մը վրայ այն տպաւորութիւնը կը ձգէր, թէ հիմնուած է բարեգործական կազմակերպութեան մը կողմէ, միմիայն ժողովուրդին ծառայելու անհասանելի նպատակով: Այս թելադրութիւնը կը ցայտէր ու կը շէշտուէր այն բազմաթիւ նշանախօսքերէն, որոնք վարդազրերով տպուած եւ փակցուած էին պատերուն, մարդասիրական վսեմ զգացումներ եւ սկզբունքներ կրելով, որոնք կամ վերցուած էին Աստուածաշունչէն եւ կամ բանաձեւուած էին ճանսըններու դրասենեակին մէջ: Հաստատութիւնը կ'երաշխաւորէր նաեւ, թէ Բօշչլի բոլոր բնակիչները, մարդ թէ կենդանի, առանց սեռի կամ տարիքի, գոյնի կամ դաւանանքի խտրութեան՝ իրենց բոլոր պիտոյքները կրնային հոգալ իր երկու յարկերէն:

Հոն, առանձին եւ ցուցանակուած բաժանմունքներ յատկացուած էին նպարեղէնի, հանդերձներու, կերպասեղէնի, դեղարանի, կօշիկի եւ նորոգութեան, հողագործական առարկաներու, քաղցրաւնիքի, ատաղձներու եւ

բնակարանաչինութեան այլ նիւթերու, խաղալիքներու, երկաթեղէնի, կահ կարասիի, ոսկերչեղէնի, ինքնաշարժի մասերու, գրքերու եւ դպրոցական իրերու, որսորդական գործիքներու եւ զէնքերու, կանացի զարդեղէններու, եւ այլ բազմապիսի կենսական եւ պերճանքի մըթերքներու համար: Հոն կը ծախուէին կենդանիներու սլալտեր, սանձեր, թամբեր, կաշիէ թոկեր, սլաղ կամ սղնձազոյն եւ արծաթուած փայլուն զարդակոճակներով պճնուած:

«Ընկերութեան խանութը» տակաւին կը ծառայէր որպէս կայան երթեւեկող մարդատար ինքնաշարժ կառքերուն եւ հանրութեան կը հայթայթէր նօտար մը եւ ձիու բժիշկ մը: Ան ունէր նաեւ դրամական փոխատուութեան մասնաւոր բաժին մը, որուն առաջին ու վերջին բաղձանքն էր, համաձայն իր ծանուցումներուն՝ օգնել Բօչլի քաղաքացիներուն անոնց նիւթական տաղանապներուն մէջ, ընթացիկ ծախքերու համար 30 առ հարիւրի «չնչին» տոկոս մը միայն դանձելով:

Դրամատէր, վաճառական եւ վաշխառու էր Մր. Ուոլթըրը: Իր շնորհիւ, ձանձրները իրենց փառքի եւ զօրութեան բարձրագոյն կատարներուն էին հասեր այդ շրջանին: Առեւտուրի մէջ, բարեկամ եւ մրցակից հաւասարապէս ու անխնայ շահագործելու ահարկու համբաւին տիրացած էր շատ կանուխէն: Միաձուլուած, մէկ անբաժան մարմին դարձած երկու խոշոր փառասիրութիւններ կը վարէին իր կեանքն ու կ'իշխէին իր գործունէութեան, — անդուսպ ձգտումը ընկերային անմատչելի դիրքի մը, որուն մեծ շուքին առջեւ նախանձով ու պատկառանքով խոնարհէին բոլորը, եւ տիրացումը քաղաքական ամենալայն ազդեցութեան: Եւ գիտէր թէ յաղթութեան այս կամարը կրնար կանգնել միայն ոսկիով եւ արծաթով կառուցուած սիւներու վրայ: Իսկ ամէն միջոց, որքան ալ անողոր կամ նենգ ըլլար ան, ընդունելի էր իրեն, եթէ բան մը կ'աւելցնէր այդ դէպերուն: Ու հիմա, ինքնաբաւ հպարտութեամբ եւ փառքէն զինով՝ ան կը խոստովանէր ինքզինքին, թէ տակաւ կ'ի-

րականանային իր նպատակները: Արդէն դաւառին ամէնէն հարուստ մարդն էր ինք: Եւ հեզնոտ արհամարհանքով մը կը խօսէր իր այն նախկին բարեկամներուն եւ գործակիցներուն մասին՝ որոնք այժմ թշնամացեր էին իրեն, առեւտրական գործառնութեանց մէջ իր կիրարկած ծայրայեղօրէն խիստ ու անխիղճ «սկզբունքներուն» համար, որոնք միշտ անփոփոխելի կը յայտարարուէին իր կողմէ:

Եւ Սէմ Թամսըն, մինչ կը շրջէր վաճառատան զանազան մասերը, վերակացուին յանձնարարութիւնները կատարելու՝ կը մտածէր այսպիսի հզօր ու անողորմ հակաակորդ մը գրգռելու հաւանական վտանգներուն: Յաճախորդներ կը վխտային ամէն կողմ եւ արծաթ մանրուքներու հնչիւնը կը բարձրանար բոլոր դրամարկղներէն: Բայց ան անզգայ շուրջի աղմուկին եւ եռուզեռին, կը մտահոգուէր այդ իրիկուան իրենց ժողովով, ուր պիտի որոշէին դիմել Մր. Ձանսընի, պահանջելով որ բարեփոխէ գործաւորները վարձատրելու այն կերպը, որ քիչ մը ընդհանուր էր թէեւ, բայց որ ան կը գործարկէր ինքնայատուկ եւ չարաչահ ճարտարութեամբ մը:

Այսպէս, այն հարիւրաւոր սեւամորթները, որոնք անոր բամպակի անծայրածիր արտերը կ'ոռոզէին իրենց քրտինքով եւ տուայտանքով, արեւածագէն մինչեւ արեւմուտ՝ կը վճարուէին վարկային քմահաճ եղանակով մը: — Անոնք իրենց բոլոր գնումները պէտք էր կատարէին «Ընկերութեան խանութէն», ուր, ապառիկներու մասնաւոր հաշուետետրերու մէջ կ'արձանագրուէին անոնց արժէքները: Այս դրութեամբ՝ անոնք միշտ պարտապան կը մնային գործատիրոջ: Որովհետեւ այնպէս կը պատահէր որ, բանուորներու վատակը, ամսէ ամիս, հազիւ կը փակէր անոնց պարտքերը եւ յաջորդ օրունէ սկսեալ, անոնք հարկադրուած կ'ըլլային դարձեալ դիմել «սպառիկին», որ սովամահութենէ փրկուելու միակ միջոցը կը մնար:

Այսպէսով անկարելի կը դառնար որեւէ խնայողութիւն, եւ տնտեսական անկախութեան հեռաւորագոյն

յոյսն անդամ կախարդական եւ անկարելի երազի մը հրապոյրով կը յայտնուէր: Եւ տակաւ կ'աճէր այն կասկածն ալ, թէ հաշուապահներ, հպատակելով վերին հրամանի մը, կրնային թուանշանները յարդարել դադարնի կանոնի մը համաձայն, քանի որ ոչ մէկ պարտապան իրաւունք ունէր տարակուսելու իրեն ներկայացուած հաշիւին ճշտութեան մասին: Ու այնքան ծաւալեր ու խորացեր էր դժգոհութիւնը այս աւանդական դրութեան դէմ, որ անոր ջնջումին պահանջը անխուսափելի դարձաւ, նոյն խի գործադուլի դնով:

Սորապէս դառնացեր եւ սրտմտեր էր Սէմ, այս բոլոր ընդվզեցուցիչ իրողութեանց վերջիչումէն: Բայց տակաւին անբացատրելի թուացող մտածում մը կ'ապշեցնէր զինք: Կը դժուարանար ընդունիլ թէ մէկը, օրինակ, Մր. Ճանսըն, գաւառին ամէնէն մեծահարուստ մարդը, կրնար այնքան յիմար եւ կուրօրէն անձնասէր ըլլալ որ, այդ խոշոր հարստութիւնը իրեն համար դիպող չքաւոր աշխատաւորներուն զլանար անոնց ամէնէն տարրական եւ նուիրական իրաւունքը, որ անոնց քրտինքին վարձքն էր պարզապէս: Չէ՞ որ խարուողներ վերջապէս օր մը պիտի հասկնային իրենց անիրաւուած ըլլալը, եւ այդ դիտակցութենէն վերաբրուած արժանապատուութեամբ, անոնք պիտի ցցուէին իր դէմ աւելի անխնայ ու անհաշտ...:

— Իրապէս դարձանալի է թէ Աստուծոյ արարած մը ի՞նչպէս կրնայ այսքան անարդար դտնուիլ իր նմաններուն հանդէպ, եթէ նոյն խի ստորին սեւ կաշիէ ըլլան անոնց մորթերը: Կ'երեւի թէ անկարելի է շատ հարստանալ, առանց ուրիշներ իրենց արդար իրաւունքներէն զրկելու: Ծճմարիտ է որ վնասակար եւ տխուր պարագայ մըն է ասիկա...:

Սուոված էր Սէմ, որովհետեւ զիտէր թէ, մանաւանդ այդ շրջաններուն համար՝ ինչպիսի յանդուգն եւ վտանգաւոր ձեռնարկ մըն էր գործադուլը: Եւ կը զգար թէ, որպէս բամպակաքաղ գործաւորներու միութեան ատենապետի՝ ահաւոր պատասխանատուութիւն մը կը

ծանրանար իր վրայ: Թէեւ ծածուկ կը մնային անդամներուն ինքնութիւնները եւ ժողովները դադարնի կը գունդուէին, սակայն անհրաժեշտ էր, որ յանձնախումբ մը ներկայանար Մր. Ճանսընի, իրենց պահանջներուն մասին սակարկելու համար, եւ այդ խիղախ անձերը ամէնէն վայրագ հալածանքներուն եւ ահուկի պատիժներուն յանձնառու ըլլալու էին: Վարչական վերջին հաւաքոյթին մէջ, ինք համաձայնած էր պաշտօնական պատգամախօսի դերը ստանձնելու: Գիտէր թէ իր դերդաստանին եւ Ճանսըններու միջեւ հին եւ արիւնոտ ռիսկալութեան մը անջնջելի յիշատակները կը քրքրուէին դեռ: Բայց դարձեալ իրեն վերապահեց այդ պաշտօնը, խորհելով թէ ժամանակները փոխուած են քիչ մը եւ թէ անցած տասնամեակները մեղմացուցեր են երբեմնի ատելութիւնը: Եւ յետոյ, կը վախնար թէ իր ընկերները, խօսակցելու նուազ ճկուն ձեւերով, Մր. Ճանսընի կատաղութիւնը կրնային հրաւիրել իրենց վրայ:

* * *

Մինչեւ ընթրիք, Սէմ Թամսընի միտքը իր աշխատանքէն աւելի՝ կեդրոնացաւ Միութեան որդեգրելիք գործելակերպին շուրջ, փնտռելով մերձեցման ռազմավարութիւն մը, որ Մր. Ճանսընէն զիջում մը կորզելու յաջողութեան առաւելագոյն յոյսը ներշնչէր:

Իսկ ճաշէն յետոյ, կարգի դնելով տան դործերը, ան մօտեցաւ անկողնին, ուր տարածուած կը հանդէպ իր կիներ, մերձաւոր մայրութեան մեծ յողովութիւնը կրելու համար: Սմուսնին սիրաղեղ պարտադրանքով ակամայ կազդուրում մը, որ ժպիտով ու երանութեամբ կը լեցնէր կնոջ այտերը, եւ անսովոր ճերմակ գորով մը կը հազցնէր անոր ախոսներուն: Պահ մը անբարբառ եւ խանդաղին յուզումով Սէմ նայեցաւ անոր, յետոյ նստաւ քովը եւ զուարթ ու սրամիտ ընդմիջումներով պատմեց օրուան անցուդարձերը, լաւատես շունչով մը օծելով զանոնք:

Եւ երբ պատանի Երեմիա եւ մանուկ Յովհաննէս-Մկրտիչ զաւակները դասերնին աւարտեցին, անկողիննին փոելով պահկեցուց զանոնք եւ հարցուց թէ Աստուածա-շունչի ո՞ր դուռը կ'ուզէին լսել այս իրիկուն:

— Հաճիր խաչելութիւնը կարգաւ, հայրիկ, խնդրեց Երեմիան:

Քանի՞երորդ անգամն էր: Եւ քանի՞երորդ անգամն էր, որ պատանին հեծեծաղին կ'արտասուէր, Քրիստոսի հեղամբմունջ պաղատանքին ղիմաց:

«էլի, էլի, լամա, սապագտանի...»:

— Լամա սապագտանի՞... հեկեկաց Երեմիա ակ-ռաներուն եւ արցունքներուն մէջէն: Ինչո՞ւ Աստուած իր մէկ հատիկ տղան անօրէններուն ձեռքը մատնեց եւ լքեց ու մոռցաւ զայն, հայրիկ, ի՞նչպէս մոռցաւ իր անուշ զաւակը եւ թոյլ տուաւ որ անարդեն, չարչարեն եւ խա-չելով մեռցնեն զայն...:

— «Ձէ՛ աստ, քանզի յարեալ», տղա՛ս. Աստուած եր-բեք չմոռցաւ իր որդին: Տե՛ս, հոս կ'ըսէ որ յետոյ իր քով տարաւ զայն եւ աջ կողմը նստեցուց: Ան իր սիրելի զաւակը զրկեց աշխարհ, որ չարերը դարձի բերէ, հի-ւանդները բժշկէ, եւ թշուառները մխիթարէ: Չարերը սարսափեցան Յիսուսի բարութենէն եւ խաչեցին զայն, անկէ ազատելու համար: Աստուած տեսաւ եւ թողուց որ չարչարեն եւ մեռցնեն իր մէկ հատիկ տղան, յուսալով որ յանցաւորները յետոյ կը զղջան իրենց սոսկալի ոճի-րին համար, կ'ապաշխարեն եւ կը սկսին զիրար սիրել: Բայց ի դուր սպասեց: Ա՛հ, այո, տղա՛քս, Աստուած ի դուր սպասեց: Որովհետեւ, մարդոց հանդէպ իր ունե-ցած անսահման սէրէն մղուած, իր զաւակը թէեւ նուիրեց աշխարհին, եւ տեսնելով հանդերձ թէ մարդիկ որքան անխիղճ վարուեցան անոր հետ, ինք ներեց անոնց այդ մեղքն ալ՝ բայց մարդիկ դարձեալ չզգաստացան, դէպի բարին չդարձան: Եւ Աստուած ի դո՛ւր սպասեց որ դարձի դան անոնք: Իսկ մարդիկ աւելի յամառեցան, եւ սկսան աւելի շատ մեղանչել, իրարու դէմ դաւել եւ զի-

րար սպաննել: Հիմա, յայտնի չէ թէ Աստուած քէ՞ն ը-րեր է մարդոց հետ, զգուեր կամ յուսահատե՞ր է անոնց-մէ, թէ՞ կը սպասէ տակաւին, որ իրենք իրենց դորձած չարութիւններէն ամշնալով եւ խորշելով դէպի զինք դառնան: Թերեւս օր մը նորէն վար զրկէ իր որդին, այս անգամ փոխանակ ձիթենիի ճիւղին՝ սուր մը տալով ձեռ-քը, որպէս զի անով արմատէն կտրէ մեր երկիրը դժոխ-քի վերածող չարիքը: Անշուշտ կը հասկնաք թէ ո՛չ ոք որոշ կերպով զիտէ այս բաները: Բայց յայտնի կ'երեւի որ, Աստուած ա'լ չուզեր միջամտել այս աշխարհի վրայ կատարուած դորձերուն: Անոր համար ամէն մարդ պէտք է ինքզինքին հոգ տանի: Պէտք է աշխատի որ թէ առա-քինի մնայ եւ թէ անօթի չմեռնի: Եւ ատիկա չափազանց դժուար խնդիր մըն է, մանաւանդ աղքատներուն համար: Իսկ շատ աւելի դժուար է մեզի համար, որովհետեւ Աս-տուած մեզի սեւ մորթով է ստեղծեր, թերեւս մեր վրայ զիչերով աշխատած ըլլալուն պատճառով: Եւ ճերմակ-ները մեզ շատ չեն սիրեր հոս, տղա՛քս, ամէն բանի մէջ խտրութիւն կը դնեն մեզի դէմ՝ եւ միշտ պատրաստ են մեզ պատժել մեր չգործած յանցանքներուն համար ալ: Անոր համար, իմ պղտիկ մեծ տղա՛քս, պէտք է դուք զգոյշ ըլլաք միշտ, քաջ եւ համբերող ըլլաք եւ չյուսա-հատիք որեւէ դժուարութենէ: Եւ եթէ ձեր Քրիստոսը շատ կը սիրէք, պէտք է ամէն արդար եւ ճշմարիտ դա-տի համար կռուելէ եւ մեռնելէ չվախնաք: Որովհետեւ Յիսուս ալ մեռաւ ուրիշներու դատին համար, այնպէս չէ՞, տղա՛քս... Ես վստահ եմ որ դուք զիտէք թէ արքա-յութիւն երթա՞ն աւելի լաւ է թէ դժոխք երթալը, եւ զի-տէք նաեւ թէ ո՛ր ճամբաները դէպի այդ վերջին կա-յաններուն կը տանին: Տէ՛ հիմա ալ քնացէք, զրկեցէք զիրար եւ քնացէք, հա՛յտէ, զաւակներս եւ անուշ երազ-ներ տեսէք, որ վաղը ինձի ալ պատմէք...:

Թէեւ կը ժպտէր Սէմ՝ բայց աչքերը լեցուեր էին ար-ցունքով եւ սիրտը կը ցաւէր սէրին եւ վշտին ծանրու-թենէն:

... Անկողնին մէջ, մինչ անհանդիստ հեւքով մը կը ննջէր կրնը, ան նայուածքը յառած թանձր խաւարէն կլանուած ցած առաստաղի թիթեղէ կարկտաններուն՝ կը չարչարուէր իր ցեղային խոցոտուած ինքնասիրութեան մէջ: Քիչ առաջ վերջացաւ բամպակաքաղներու Միութեան ժողովը, որ նոյնութեամբ վաւերացուցած էր վարչութեան առաջարկը, Մր. Ճանսընի պահանջներ ներկայացնելու մասին, որոնց գլխաւորը՝ «սպառիկ» ի դրութեան վերացումը եւ շարժառարձերը դրամով վճարելու ձեւին որդեգրումը պիտի ըլլար: Եւ որոշուած էր որ յաջորդ օրը, Սէմ Թամսըն, երեք ընկերներով երթար եւ բանակցէր գործատիրոջ հետ:

Սակայն ներկայ այս խուլ պայքարին դրոհներն ու ընկրկումները չէին այլեւս զինք խռովողը: Հիմա, մեծագոյն ողբերգութեան մը երկրորդական մանրամասնութիւնները կը թուէին, կամ խոշտանդուած, վերախոց ու ոգեվար մարմնի մը վրայ շարտուած կայծերու անվնաս ու աննշան այրուցքներուն կը նմանէին անոնք: Այդ ժողովն ուժգնօրէն ներկայ էր իր մէջ: Անոր ցաւազին միջնորդը, ահեղի եւ խուժուժ մղձաւանջի մը նման՝ կը հալածէր ու կը դանակոծէր իր երեւակայութիւնը: Ի՞նչպիսի եղկելի եւ յուսահատական հակադրութիւն էր հոն պարզուածը: Մէկ կողմէն՝ անասելի դրկանքներով քաշկրտուող թշուառ եւ կիսաքաղց կեանքի մը եղբերգը կը հնչէր բոլոր տուններէն, զիրենք այդ դաժան ճակատագրին շղթայող կապանքները կտրտելու վճռականութեան մրմունջներուն հետ: Միւս կողմէն անոնց շուրջ իր ցուրտ ստուերով կը սաւառնէր ճերմակ գործատէրներուն սարսափը, որ անդամալուծող կաթուածի մը անվրէպ եւ անխնայ ուժգնութեամբ կ'իյնար բոլորին վրայ, հեղզ ու կորովազուրկ էակներու վերածելով զանոնք...:

Տարիներու համբերատար եւ յողնատանջ որոնումներով՝ Սէմ փորձեր էր բացատրել զիրենք կեանքի ամէնէն ստորին աստիճանին դատապարտող այս դրութիւնը: Գերեվաճառութեան վերացումէն յետոյ, ի՞նչպէս պա-

տահեցաւ, որ սեւերը մատնուեցան աւելի դաժան ու կեղեքիչ ստրկութեան մը, կը հարցնէր ինքնիրեն: Ինչո՞ւ որպէս ցեղ մնացին դարձեալ ճնշուած ու դերի, ազատ քաղաքացիներ դառնալէ վերջն ալ: Ի՞նչպէս ծագում առաւ այս վիճակը եւ զարգանալով հասաւ ներկայ համեմատութեան: Այս հարցումները յաճախ կը վրդովէին զինք: Եւ անոնց դէմ իր դատած կիսկատար պատասխաններէն թէեւ կը դրաւուէին աշխատանքի իր ընկերները, բայց միշտ դժգոհ կը մնար ինք: Բաղմաթիւ հետեւորդներ ունէր ան, որոնք վարժուած էին նոր ճշմարտուներ ունէր ան, որոնք վարժուած էին նոր ճշմարտութիւններ եւ յայտնութիւններ լսել իր բերնէն, երբ ինք, բնազդական խորունկ եւ անսասան հաւատքով մը խանդավառ, կը յայտնէր թէ անշուշտ պիտի դար այս նոր գերութեանն ազատագրուելու օրն ալ: Բայց այդ պապասխաններու շղթայէն տակաւին կը պակսէին քանի մը օղակներ, որոնք կը խափանէին անոնց իմաստին ամբողջացումը: Չէ՞ որ արդիւնք մը ճանչնալու համար՝ անոր պատճառները փնտռել եւ հասկնալու է նախ, ինչպէս կը կրկնէր ինք:

Ու հիմա, Սէմ կը կարծէր վերջապէս նշմարած ըլլալ այն անխարդախ լոյսը, որուն թափանցող ճառագայթներուն տակ՝ սեւերու եւ ճերմակներու փոխյարաբերութեան բարդ խնդիրը կը յայտնուէր զայն պարուրող խորհուրդի եւ զաղտնիքի մշուշէն կողոպտուած ու բրտօրէն մերկ: Եւ աչքերը սեւեռած ցած ու խաւարէն կլանուած առաստաղին՝ ան լծուեցաւ իր դատած հին ու նոր պատասխաններուն փշրանքները դասաւորելու, համադրելու տխուր ու հերոսական աշխատանքին:

Իր մտքին եւ հոգիին այդ չարչարազին երկունքէն ծնած պատկերը կը նմանէր չբրուած կենդանի ողբերգութեան մը, եղբրական ու ցաւատանջ, որուն մէջ սըրտատուչ խոնարհութեամբ մը սերտօրէն կը միաձուլուէին ողբերգական, եղեռնական եւ դիւցազնական տեսիլները իրարու, եւ որուն վերջնագոյն արարուածը պիտի ապրուէր տակաւին...:

ւարար կապուած անոնց : Այս կերպով, հետզհետէ կը հիւսուէին եւ կը զօրանային անտեսական ստրկութեան կապանքները, որոնք անողոք ու վայրագ կաշկանդումներու եւ կեղեքումներու կ'ենթարկէին զիրենք :

Եւ սեւամորթ «ազատ քաղաքացին», իր ընտանիքին լաւագոյն կենցաղ մը ապահովել փորձելու համար, իրաւունք չունէր իր գործը ձգելու, մինչեւ որ տէրը չարձակէր զինք իր «պարտքերէն», այսինքն, մինչեւ որ անոնք հատուցուած չըլլային լիովին : Իսկ հաշուետետրերը խոնարհարար կը հնազանդէին տէրերու չարաչահ քմահաճոյքներուն, միշտ «պարտք» մը ցոյց տալով ամէն անունի դէմ : Անշուշտ գործաւորը կրնար մտածել այս անտանելի վիճակէն փախչելով ազատելու մասին : Բայց այդ պարագային, պէտք է յանձնառու ըլլար տարիներով շղթայակիր եւ բոլորովին անվարձ աշխատելու պատիժին, եթէ չյաջողէր ճողոպրել օրէնքի ծանր ու ժանտ թաթէն, որ կառաջօրէն պիտի հետապնդէր զինք որպէս փախստական : Որովհետեւ ընդհանրապէս, դաւառական ոստիկանութիւնները արդէն պարզ գործակատարները կը հանդիսանային խոշոր հողատէրներու, քանի որ տեղական իշխանութեանց պետերը կա՛մ կ'ընտրուէին անոնց դրամին զօրութեամբ եւ կամ ուղղակի գործի բաժնեկիցներ էին անոնց հետ :

Հիմա կը խոստովանէր Սէմ ինքնիրեն, թէ տիրողներու դասը լաւագոյն կերպով օգտագործած էր անցնող կէս դարու ժամանակամիջոցը, հաստատելով եւ օրինականացնելով ամբողջ ցեղ մը ստրկացնող այս դըրութիւնը, որ կը հիմնուէր անտեսական ազատ մրցակցութեան խարխուլ ու գիւրբարեկ եւ խարդախուած դաւանանքին վրայ :

Բայց սեւամորթներու հանդէպ ճերմակներու սնուցած ներքին անշէջ եւ դրեթէ ընդհանուր արհամարհանքին եւ խորջանքին քով՝ որպէս անանցանելի պատնէջ անոնց դէմ կառուցուած եւ զանոնք խաւարի եւ թշուառութեան դատապարտող բիրտ խտրականութիւնը տա-

կաւ կը մեղմանար եւ կը տարբերէր նահանգէ նահանգ, նոյն իսկ դաւառէ դաւառ :

Ասիկա արդիւնքն էր մասամբ՝ հիւսիսային նահանգներու ազատական մտաւորականութեան մղած յամառ պայքարին, անմեղ սեւերու վրայ գործադրուած անիրաւ պատիժներուն եւ ընդվզեցուցիչ բռնամահերուն (լինչինկ) առթիւ : Եւ մասամբ՝ սեւամորթներու մէջ արթընցող ընկերային եւ քաղաքական գիտակցութեան ճնշումին :

Սակայն այդ խտրականութեան ողբին տակաւին ուժղնօրէն կը տիրապետէր հանրային հաստատութիւններու, — թատրոններու, գրադարաններու, եկեղեցիներու, հիւանդանոցներու եւ դպրոցներու մէջ, թէեւ տարբեր չափերով :

Օրինակ, եթէ տեղ մը հանրակարգեր բացարձակապէս կը մերժէին ընդունիլ սեւամորթ ճամբորդներ, ուրիշ տեղ մը կը թոյլատրուէին անոնք, բայց անշատուած բաժանմունքի մը մէջ միայն : Նոյնպէս, կային քաղաքներ, ուր սեւ մանուկներուն կը յատկացուէին խեղճուկ հիւղեր որպէս դպրոց, ուսման անհամեմատօրէն ցած մակարդակով եւ տարին միայն 100-150 օրերու համար, — քանի որ բերքերու եղանակներուն, մանուկներ դաշտերու վրայ պէտք է աշխատէին իրենց ծնողներուն հետ, դրեթէ ձրի : Կային նաեւ ուրիշ քաղաքներ, որոնք իրենց շքեղ վարժարաններէն ներս կ'արտօնէին դանոնք, բայց տարբեր դասարաններ կամ նոյն դասարաններուն մէջ առանձին նստարաններ նշանակելով անոնց համար :

Տնտեսական այս նորօրինակ ստրկութիւնը, որուն ընթացքաց եւ գիշատիչ մագիլներուն մէջ կը դալարուէին հարաւի սեւամորթները, իր դարգացման եւ տեւականացման ճիգերուն միացած կը դառնէր քաղաքային օրէնքներու անվերապահ օժանդակութիւնն ալ : Չէ՞ որ վնասակար եւ անբաղձալի դըրութիւն մը ջնջելու կամ բարեշըջելու ընդունուած կերպը, ըստ երկրի Սահմանադրութեան՝ մեծամասնութեան բաղձանքին ուժն էր, որ

իր կարգին կ'արտայայտուէր քաղաքացիներու քուէներով: Ուրեմն անհրաժեշտ էր որեւէ միջոցով այդ ամենազօր զէնքը խլել անոնց ձեռքերէն: Եւ կարգ մը նահանգներ, օրէնքի վերածուած արգելքներով զանոնք կը զրկէին քաղաքացիի մը ամէնէն տարրական բայց եւ ամէնէն նուիրական այդ իրաւունքէն, — քուէարկելէ:

Ատոնցմէ մէկն էր «քուէի տուրքը», զոր պէտք էր վճարէին բոլորը, կարենալ ընտրութեանց մասնակցելու համար: Այս տուրքը պարտադիր էր թէ ճերմակներուն եւ թէ սեւերուն եւ երեւութապէս զերծ էր ցեղային խտրականութեան դրոշմէն: Բայց իրապէս, ան թելադրուած էր այդ շունչէն եւ ծրագրուած էր այդ նպատակով: Որովհետեւ գրեթէ միայն սեւերն էին, որ իրենց ծայրայեղ աղքատութեան հետեւանքով, անկարելի կը գտնէին հայթայթել «տուրքին» չնչին դումարը: Միւս կողմէ՝ սպիտակի մը քուէն ալ նոյնքան վտանգաւոր նկատուելու էր անշուշտ, երբ կուգար թշուառութեամբ դառնացած եւ յուսահատ գոխներէն:

Այո, անտարակոյս որ ճարտար եւ անարգօրէն շահախնդիր մտքերու յղացումներ էին զիրար ամբողջացնող այս պայմանները, որոնք զարմանալի ներդաշնակութեամբ կ'ընդելուզուէին իրարու եւ անխորտակելի պատուարի մը պէս կը ցցուէին իր ցեղին քայլերուն առջեւ՝ զայն տեւական տգիտութեան եւ չքաւորութեան մէջ պահելու սեւեռուն ձգտումով: Եւ արտում նայուածքը պղտորող խոր վշտի ու երանաւէտ երազի երկու տաք կաթիլներ թարթելով աչքերէն դուրս՝ Սէմ Թամսըն իր մտածումը ճմլեց անշուշտ ու պաղատազին մրմունջի մը մէջ:

— Ա՛խ, ե՞րբ տասնեւերեք միլիոն սեւամորթներ պիտի արթնան կեանքին եւ իրենց տառապանքն ու բողոքը միաձոյլ աղաղակի մը վերածած՝ պիտի դռան զիրենք իրաւազրկողներու երեսին, իրենց նուիրական եւ արդար իրաւունքները պահանջելով: Ա՛հ, այդ անհրաժեշտ կանչէն պիտի ահարեկէին, պիտի զգաստանային եւ հեղահամբոյր «բարեկամներ» պիտի դառնային այսօր—

ուն անդիդը ու բռնաւոր տէրերը:

Եւ խոնջէնքէն ծանրացող իր կոպերուն տակ՝ Սէմ կը զղար թէ յոյսի ջինջ ու քնքուշ շող մը կը պլպլար: Ծըրթները յուզումէն կը թրթռային, երբ յիշեց թէ դաժան գերութեան մը արխնաղանդ շղթաներուն զարհուրանքը կրեր էին դարերով իրենց հայրերը եւ օր մը վերջապէս ողջուներ էին ազատութեան հրաշափառ արշալոյսը: Եթէ անոնք ասլրեցան այդ պողպատեայ անուրներուն մէջ ու յաջողեցան փշրել զանոնք, իրենք անոնց անարժան դաւակները պիտի ըլլան, եթէ յուսալքուին եւ համակերպելով այլասերին այս նոր գերութեան ոսկեձոյլ ձեռնակապերուն մէջ:

Եւ յոգնութենէն իջնող ու փակուող իր կոպերուն ներքեւ՝ Սէմ Թամսըն զգաց թէ հզօր ու աներեր հաւատքի մը ձերմկող ալիքը կը խաղար...:

2.

Յաջորդ օրը, որսչեալ ժամուն, Սէմ Թամսըն եւ իր ընկերները ուղղուեցան դէպի Մր. Ճանսընի դրասենեակը: Պահ մը վերջ, քարտուղարը վերադարձաւ նախագաւիթ, յայտնելով թէ Մր. Ճանսըն կրնար քանի մը վայրկեան տրամադրել իրենց եւ զիրենք առաջնորդեց ներս, ուր իր գրասենեանին վրայ չոքած՝ գործատէրը հին մուրհակներու թուանշանները կը համրէր՝ սրբագրումներ եւ յաւելումներ կատարելով:

— Բարի լոյս, Մր. Ճանսըն, ըսաւ Սէմ թեթեւ խոնարհումով մը:

— Լա՛ւ: Նայի՛նք, ի՞նչ կ'ուզէք: Սրտեղ ու կշտամբող ձայնով խօսեցաւ ան եւ խոժոռ նայուածքը յառեց Սէմի, որ շիտթեցաւ եւ աչքերը լիջեցուց իր կօշիկներուն, որոնց ծակերէն երկու բթամատները կլսողին կը ցցուէին դուրս:

— Մր. Ճանսըն... կը յուսանք թէ չէք բարկանար ձեզ խանդարելնու համար... շատ կարեւոր բան մը

չկայ, ասիկա պարզ տեսակցութիւն մըն է: Մեր բարեկամները մեզի զրկեցին որ ձեր եւ ձեր գործերուն որսով տալով անոր բերնին:

— Հայտէ նայիմ, մի՛ քաշքշեր, ես ժամանակ չունիմ ասուշութիւններ մտիկ ընելու: Լեզուիդ տակ ինչ որ կայ դուրս թափէ վերջացուր, եւ աճասպարէ:

— Շատ լաւ, Մր. ճանսըն: Ամբողջ պատմութիւնը ասիկա է: Մենք բոլորս ալ գիտենք թէ մեծ կամ փոքր դումարներ կը պարտինք ձեզի, բայց մեզմէ որեւէ մէկը պարտական մնալ չի սիրեր: Եւ խորհեցանք որ եթէ դուք բարի գտնուիք եւ հաճիք մեր շարաթականները կանխիկ դրամով վճարել, թերեւս մենք կարենանք զանազան միջոցներով քիչ մը խնայողութիւն ընել եւ...

— Բաւակա՛ն է, այդ մասին աւելի լսել չեմ ուզեր: Հիմա հո՛ս նայեցէք, այս քաղաքին մէջ մեր «ընկերութեան խանութ»էն աւելի աժան ապրանք ծախող չկայ, այնպէս որ, եթէ բան մը պիտի խնայէք, հոն ալ կրնաք փորձել, ո՞վ կ'արգիլէ ձեզ: Եւ լա՛ւ հասկցէք ասիկա, ես չեմ կրնար թոյլատրել որ ի՛մ գործաւորներս, ի՛մ դրամովս ուրիշ տեղերէ առուտուր ընեն: Ես պարզապէս չեմ կրնար հանդուրժել ատոր: Ատիկա իմ վերջնական եւ անփոփոխելի պայմանս է, համաձայնողը կը մնայ, չուզողը իր գլխուն ճարը թող նայի...:

— Բայց Մր. ճանսըն, կը տեսնէ՞ք, շիտակ չէ այդ... օրինակ, ես պիտի փափաքէի իմ վաստկած դրամս իմ յարմար սեպած ձեւովս ծախսել: Այդ չի նշանակեր թէ մեր առուտուրը սուրիշ տեղերէ պիտի ընենք... այլ, բոլորս ալ կը սիրենք որ երբ բան մը գնենք, անոր արժէքը անմիջապէս վճարենք, փոխանակ պարտական մնալու եւ ատոր համար անշուշտ դրամ պէտք է...

Սէմ Թամսըն լուց յանկարծ: Ակնարկը հանդիպած էր Մր. ճանսընի դէմքին, որ այդ պահուն ահարկու արտայայտութիւն մը առած էր: Անոր կողմերը հաւաքուած էին բոլորաձեւ եւ կլորցած աչքերէն կարմրող ցասում կը ժայթքէր դուրս: Կզակը կարճցած կ'երեւէր հիմա,

յայտնօրէն՝ ահուաներուն տակ իր կատաղութիւնը կը ծամէր ուժգնօրէն: Իսկ ստորին շուրթը ցցուեր էր վեր, կլանելով միւս շուրթը ամբողջովին եւ ժանտ երեւոյթ մը տալով անոր բերնին:

— Դուն աշխարհի վրայ ամենավերջին մարդը պիտի ըլլաս, որ ինծի ըսես թէ ի՛նչը շիտակ է եւ ի՛նչը չէ...: Անոր ձայնը հնչեց խապոտ մոնչիւնի մը պէս:

— Հո՛ն նայէ դուն, Մըսթը՛ր Սէմ, աւելցուց ճանսըն, դուն գիտես այդ պատկերին պատմութիւնը, անանկ չէ՞: Պէ՛տք է որ գիտնաս կարծեմ...: Եւ յուզումէն դուրացող ցուցամատը բարձրացուց դէպի գիմացի պատը: Հոն՝ ապակեպատ եւ ոսկեփայլ շրջանակի մը մէջէն, Միս Փէլին կը ժպտէր շնորհալի ու շողջողուն: Անոր վարդաթոյր այտերու ստորոտներուն, երկու լուսեղէն բայց խորունկ փոսիկներ կը ծիծաղէին վճիռ ու հնչուն, կարծես հնչո՛ւն քրքիջներով: Այդ փոսերը ամբարտաւոյ պայծառ երանութեան պոկունքներէն կը յորդէր անմեղ, վէրք չտեսած երջանկութիւն մը եւ կը ցողուէր զինք դրկող պարարտ շրջանակին վրայ ու կ'օժէր զայն ժպիտով, արեւով եւ կենդանութեամբ:

— Ա՛հ, այո, գիտեմ... մեղմօրէն կը թրթռային բառերը Սէմի թանձր շրթներուն մէջ... գիտեմ, մեր տան պատերուն վրայ ալ ասանկ պատկերներ կան, սեււով ծածկուած բոլորն ալ...: Բայց այն ժամանակները անցած են այլեւս, Մր. ճանսըն... ձեր եւ մեր հայրերը զիրար չհասկցան եւ շատ դէշ գործեր տեսան, շատ գէշ...

— Հայտէ՛, այդ շան քարողդ քու սեւերուդ պահէ եւ եթէ կ'ուզես ինքզինքդ փորձանքէ ազատել, ըսէ ինծի թէ որո՞նք են դժգոհները, միայն այդքանը ըսէ:

— Ուրեմն չէ՞ք բարեհաճիր վայրկեան մը լսել մեզ: Ատիկա շատ ցաւալի պարադայ մըն է, Մր. ճանսըն, որովհետեւ մենք բոլորս ալ անկեղծօրէն կը փափաքինք խաղաղութեամբ աշխատիլ ձեզի համար: Բայց այս դժուարին պայմաններուն մէջ...

— Չլսեցի՞ք երբ ազդարարեցի ձեզի թէ ուղողը կը մնայ, իսկ չսիրողը կը կորսուի դժոխք կ'երթայ, իր պարտքը տալէ վերջ. թէ ո՞չ՝ կը սպասէք որ ոստիկաններովս ձեզ դուրս նետել տամ :

— Շատ լաւ, Մր. Ճանսըն, կը մեկնինք ահա : Ներեցէք որ անհանգստացուցինք ձեզ : Մենք խորհեցանք թէ դուք բարեացակամօրէն պիտի մօտենայիք մեր խնդրանքին, որովհետեւ այդպէսով դուք մեզ պիտի ուրախացնէիք եւ մենք աւելի եռանդով պիտի աշխատէինք եւ դուք աւելի պիտի օգտուէիք ատկէ : Շաւ լաւ : Բիչ առաջ դուք յայտնեցիք թէ ո՞վ որ ձեր պայմաններով չգործէ՝ պիտի վճռուի . . . : Իսկ մեր բարեկամները, այսինքն ձեր դործաւորները մեզմէ խնդրեցին իմացնել ձեզ, թէ իրենք բոլորն ալ կ'ուզեն վճռուիլ, եթէ շարժալարներնին կանխիկ դրամով ստանալու իրենց համեստ խնդրանքը դոհացում չդունէ ձեզմէ . . . թէ, խորունկ ցաւով կը յայտնեն որ այլեւս պիտի չկրնան ձեզի համար աշխատիլ, եթէ . . .

— Օ՛, ատա՛նկ, հա՞ : Ազդարարութի՛ւն, սպառնալիք կ'ընէք : Կազմակերպուեք էք, դադարի միութիւն կազմեք էք եւ դործել չէք ուզեր, հա՞ : Ձիս պիտի լքէք, երբ ամէնէն աւելի պէտք ունիմ ձեզի եւ անկարելի է դուրսերը մարդ ճարել : Սպասեցիք որ քաղելու եղանակը դայ, որպէս զի զիս վախցնէք թէ ալ պիտի չգործէք եւ զիս իմ իրաւունքներէս կողոպտէք հա՞, անա՞նկ է . . . լա՛ւ, լա՛ւ, նայի՛նք . . . : Նայեցէ՛ք ինտոր դործել կուտամ ձեզի . . . եղերո՛ւ, ստրուկներո՛ւ, սեւերո՛ւ, հա՞, այո՞, սեւերո՛ւ, սեւերո՛ւ պէս դործել պիտի տամ ձեզի, նայեցէ՛ք դուք . . . :

— Բայց դուք կը յուզուիք, Մր. Ճանսըն, դուք չափազանց կը յուզուիք եւ ատիկա կրնայ վնասել ձեր ջիւղերուն . . . : Ուրեմն, Մր. Ճանսըն, մենք որոշած ենք դործադուլ ընել վաղը առտուընէ սկսեալ . . . եւ դուք գիտէք թէ ո՞չ եղերու, ո՞չ ստրուկներու եւ ո՞չ ալ սեւերու պէս կրնաք աշխատցնել մեզ, եթէ մենք չուզենք . . .

դուք գիտէք որ այն ժամանակները ալ փոխուած են, Մր. Ճանսըն . . . :

— Կը կարծե՛ս թէ ժամանակները փոխուած են, յիմա՛ր քեզի, դուն կը կարծե՛ս թէ փոխուած են . . . Լա՛ւ, այնպէս խորհէ : Բայց խրատ մը տամ քեզի, — հեռո՛ւ կեցիր այս միամիտ մարդոցմէն եւ հանդիստ ձդէ դանոնք, եթէ կ'ուզես հանդիստ եւ ամբողջ մնալ դուն . . . ասիկա քեզի խրա՛տ ինձմէ, հիմա կորսուէ՛, կորսուեցէ՛ք սրկէ բոլորդ ալ, «դունաւոր» անասուններ ձեզի . . . :

— Շնորհակալ ենք, Մր. Ճանսըն, եւ մնաք բարով . . . մնաք բարով : Երթանք հաղորդենք մեր բարեկամներուն թէ ձեր եւ ձեր դործերուն վիճակը շատ լաւ է : Երթամ յորդորելու դանոնք, որ աւելի մեծ թափով աշխատին Մր. Ճանսընին համար, որպէս զի ան ճոխ սեղաններէ ճաշակէ եւ շքեղօրէն կահաւորուած տուներու մէջ բնակի : Երթամ համոզեմ դանոնք, որ իրենց դառն քրքրտինքին վերջին պտղուցներն ալ քամած իրենց հացի վերջին պատտօններուն վրայ՝ մատուցանեն Մր. Ուոլթրերին, որ կշտանայ եւ առողջ մնայ անոր վեհափառ մարմինը . . . երթամ այսպէս թելադրեմ իմ բարեկամներուս, ուրեմն մնա՛ք բարով . . . :

Եւ հանդարտ ու անխռով, Սէմ դարձաւ իր ընկերներուն եւ ըսաւ .

— Կարծեմ ալ երթանք, տղաք :

Անոնք անաղմուկ բացին դուռը, դուրս ելան անշըշուկ եւ դարձեալ անաղմուկ փակեցին դուռը իրենց ետեւէն :

* * *

Սանճակոտոր եւ մոլեգնած երկու ամեհի երիւարներու պէս՝ զայրոյթն ու կատաղութիւնը քառատրոփ կ'արշաւէին անպաշտպանօրէն փոռուած եւ տարադնուած իր մտքին վրայ եւ անոնց սմբակներու մըճահարումին տակ՝ կը ճարճատէր Ուոլթրըր Ճանսընի հաւասարակըշուութիւնը : «Վա՛յ, հոտած, դարչելի աւազակներ,

վա՛յ», պոռաց մեկնողներուն ետեւէն: Եւ ինքնազսպումի քրտնող ճիգով մը փորձեց կեղբորնանալ: Բայց ի զո՛ւր: Դաւադիր եւ աներեւոյթ ձեռքեր կարծես երկաթէ հրա- չէկ շերտփնէր երկարեցին իր դանկին մէջ եւ սկսան իր ուղեղը խառնել: Շահու կամ կորուստի որեւէ անմիջա- կան նկատումէ աւելի՝ միշտ փայփայուած եւ շողոման- քով ու քծնանքով սնած եւ ուռճացած իր հպարտութեան կրած հարուածն էր, որ կը տանջէր ու կը զայրացնէր զինք: Իր ամբողջ կեանքին մէջ, տակաւին երբեք այսքան անարդուած չէր ինք, երբեք այսքան բրտորէն ոտնա- հարուած չէր իր արժանապատուութիւնը: Սեւամորթ- ներ համարձակեցան պայմաններ առաջարկել իրեն, ազ- դարարել, սպառնալ: Շրջուե՞ր է աշխարհը: «Վա՛յ, ա- նամօթ սրիկաներ, այսքան անպատկառ յանդգնութիւն կ'ըլլա՞յ, երեսնուն գոյներուն ալ չեն նայիր...»:

Երբեմնի ստրուկներու դաւակներուն այս արարքը ահաւոր ազէտի մը համեմատութիւնը կ'առնէր տա- կաւ: Եթէ այսպէս սկսելով գոհացում գտնեն, հասա- ո՞ւր պիտի հասնին մինչեւ, ի՞նչ պահանջներով պիտի դան յետոյ: Բայց անմիջապէս իր վիրաւորուած ինքնա- սիրութիւնը կը ցցուէր վեր: Ինչո՞ւ իրե՛ն պիտի պատա- հէր ասիկա: Ընդհանուր դաւադրութի՞ւն մըն էր, դա- ւառին մէջ զինք խայտառակելու նպատակով նիւթուած: Ի՞նչպէս չսարսափեցան իրեն դալէ: «Ա՛հ, սեւ շուներ, ես անոնց կը սորվեցնեմ թէ ո՛վ է ձանսընը»:

Ուղեղը մարտադաշտի մըն էր վերածուեր, ուր ան- համար խրամներու մէջ ամբացած անիմաստ, մշուշա- պատ եւ շարժարող մտածումներ զիրար կը պայթեցնէին անհասկնալի սուլոցներով: Խորհուրդներու եւ կիրքե- րու այս ընդհարումէն բարկութեան եւ ցասումի կայծեր կը ցայտէին եւ կը բռնկէին աչքերուն մէջ: Յանկարծ ոտ- քի կանգնեցաւ եւ շտապեց դուրս, վճռականութիւն ար- տայայտող դէմքով: Եւ բեւեռի մը դադաթին մոռցուած գլխարկը ապշանքով իր տիրոջ նայեցաւ, երբ ան շառա- չիւնով քաշեց դուռը կոնակէն: Իսկ գրասենեակէն մին- չեւ տուն այնքան կարճ էր ճամբան, որ ան ժամանակ

չունեցաւ իր ներսը իջնելու եւ իր զգացումներուն շղթա- յաղերձ ալեկոծումները անդորրելու:

Յուլօրէն անձնատուր հուժկու բազկաթողի մը թա- ւիչէ թեւերուն, Տիկին ձանսըն ամսագիր մը կը թեր- թէր, երբ շտապով սանդուխներէն մագլցեցաւ եւ ընթեր- ցատան կիսաբաց դուռէն ներս խուժեց ամուսնոյն բար- կացայտ ձայնը.

— Անոնք անպատճառ պիտի զղջան իրենց այս գար- չելի արարքին համար, բայց շատ ուշ պիտի ըլլայ: Ես անոնց սորվեցնեմ որ ձանսընին հետ կատակ չըլլար...:

Կարկաչելէն թաւալող ծիծաղի մը երգող ալիքները դիմաւորեցին Մր. Ուոլթըրը եւ փայփայանքով զար- նուեցան «կատակ չըլլար»ին: Յետոյ կնոջ սիրազեղ եւ հեղնոտ նայուածքը երկարեցաւ իրեն, քաղցրանուագ ձայնին հնչիւններուն հետ.

— Ի՞նչ է պատահեր նորէն. բամպակ է գողցուեր... վա՛խ, վա՛խ, վա՛խ... բայց հոգ մի՛ ըներ, շատ հոգ մի՛ ըներ, ես աղամանդներէս մէկը կը ծախեմ եւ այդ կո- րուստը կը գոցեմ, իրա՛ւ կ'ըսեմ, հոգ մի՛ ըներ:

Եւ Տիկ. ձանսըն ծիծաղեցաւ երջանիկ ու շարածճի քրքիջով եւ բազուկները հանգչեցուց ամուսնոյն ուսե- րուն վրայ: Մարդը սրտմտած, կոպտօրէն մէկ կողմ հրեց տիկնոջ ձեռքերը եւ զայրոյթէն կոտրտող ձայնով մը պոռաց.

— Խնդա՛, խնդա՛ հիմա, որովհետեւ թերեւս վերջը չկարենաս խնդալ... պիտի չխնդաս այդքան ախորժա- կով, երբ իմանաս թէ մեր հարստութեան մեծ մասը այս տարուան բամպակին վրայ շահարկած ենք եւ եթէ այդ սեւ շուները յամառին չգործել եւ շարունակեն մեզ սպան- նող նոր պահանջներ ներկայացնել, քանի մը տարիէն թե- րեւս սեւցած պղինձի կտոր մըն ալ պիտի չունենաս ա- դամանդներուդ տեղ վղէղ կախելու... Լա՛ւ, հիմա՛ խնդա, հիմա խնդա՛ նայիմ...:

— Ներէ՛ եթէ նեղացուցի քեզ, ներողութիւն. չէի դիտեր թէ այդքան լուրջ էր խնդիրը: Իրապէս այդքան լո՞ւրջ է, չեմ կարծեր. առաջին անգամ չէ որ անոնք կը

դանդատին իրենց վիճակէն, բայց միշտ ալ տեղի տուեր են, աղաչելով եւ սրադատելով, որ ներեա իրենց:

— Չէ՛, չէ՛, դուն չես հասկնար, քու խելքդ չի հասնիր այս բաներուն...: Այս մէկը տարբեր է, միւսներուն չի նմանիր ասիկա: Այն ատենները առաջնորդներն կը կաշառէի կամ կը վախցնէի՝ կը լմննար... բայց հիմա ուրիշ է, կազմակերպուեր են, միութիւն կազմեր են եւ այդ անիծեալ Թամսընը չես ճանչնար դուն: Անոր նման ապերախտ սրիկայի մը տակաւին չեմ հանդիպած ես, ո՛չ կը վախնայ, ո՛չ կը կաշառուի շան ձողը. կարծես թէ իր ընտանիքին հին վրէժները կ'ուզէ լուծել: Չէ՛, տարբեր է ասիկա, գիւրին գիւրին տեղի պիտի չտան այս անգամ... բայց կ'երեւի դեռ Ուոլթըր ձանսընը չեն ճանչցեր այդ գլուխը անասունները, թող սպասեն քիչ մը, ես կը ցուցնեմ իրենց...:

— Ես՞ տ պահանջկոտ են արդեօք. կարելի չէ՞ մասամբ գոհացնել զիրենք. ի՞րապէս անկարելի է ընդունիլ անոնց պայմանները...:

— Ի՞նչ, ինչ պատգամեցի՞ր, անոնց պայմանները ընդունիմ, խենթեցա՞ր դուն: Կ'առաջարկես որ ես անոնց պայմանները ընդունիմ, է՛ս, Ուոլթըր ձանսընը, գաւառին ամէնէն հարուստը եւ աղքեցիկը, որմէն ճերմակներն անգամ կը պատկառին, ծովի այդ սեւ շան որդիներուն առջեւ... դուն խենթեցեր ես, սիրելի տիկին, խենթեցեր ես դուն: Ես կը սորվեցնեմ անոնց եւ քեզի ալ թէ ո՛վ պիտի խոնարհի... ես անօթի պիտի սատկեցնեմ զանոնք... ես անոնց ոսկորները պիտի կոտրեմ, ջախջախեմ, որ գիտնան թէ ո՛վ է ձանսընը, հասկնան թէ անոր հետ երբեք կատակի ելլելու չափ յիմարանալու չէ...:

— Այդ որքան կ'ատես «գունաւորները»:

— Կ'ատե՞մ, ի՞նչ կ'ատեմ: Ես կը սիրե՞մ զանոնք, ա՛յնքան ուժգնօրէն, ա՛յնքան կատաղօրէն կը սիրեմ զանոնք, որ կրնամ ամբողջ հարստութիւնս փճացնել, հասկցնելու համար անոնց թէ սեւերը միայն որպէս ստրուկ ծառայելու են ճերմակներուն, թէ երբեք համարձակելու չեն իրենց հստած մորթելով եւ ասուշ

դուլներով հաւասար աստիճանի վրայ կանգնելու ճերմակներուն հետ եւ... ա՛հ, ի՞նչպէս թէ չէ, հա՛րկաւ կը սիրեմ զանոնք, հա՛րկաւ...: Ու առանց պատասխանի սպասելու, ձանսըն դուրս նետուեցաւ ընթերցատունէն եւ գրեթէ վաղելէն իջաւ սանդուխներէն վար եւ ելաւ փողոց:

Երկաթէ հրաշէկ շերեփները հիմա խանձած անձկութիւն կը հոսեցնէին ձանսընի դէմքին կնճիռներուն մէջ: Ան կ'աճապարէր: «Ես այդ անիծեալները այնպէս մը խորտակեմ որ մինչեւ սատկելու օրերնին ալ չմտածեն դրասնեակս ոտք կոխելու մասին»: Եւ զարկաւ դուռը: Իր բարեկամ ոստիկանապետը զինք այդպէս շիթած տեսնելուն ապշեցաւ եւ փորձեց սրախօսել, — Մը. ձանսըն, ի՞նչ է այս, կարծես կաթուածէ զարնուեր էք կամ ուղիներու եւ կմախքներու գումարտակէ մը հալածուեր էք մինչեւ հոս... թէ ո՞չ, աշխարհը շրջուեր է եւ ձեր սեւամորթ բարեկամները խարաղաներ են ձեզ...:

— Ատկէ շատ աւելի գէշին հասանք, — սեւերը յանդերձնեցան գործադուլով սպառնալ ինձի, եկայ քեզի ըսելու թէ կեանքիդ ամէնէն շահաւէտ գործը ըրած պիտի ըլլաս զանոնք խելքի բերելով...: Ու ներս մտան միասին:

* * *

Նոյն իրիկուան ժողովին մէջ, Սէմ Թամսըն, վճռականութիւն եւ դառնութիւն արտայայտող ձայնով եւ զուսպ խօսքերով իր առաքելութեան արդիւնքը հաղորդելէ վերջ ներկաներուն՝ եզրակացուց այսպէս.

— Ուրեմն, սիրելի ընկերներ, մենք ձախողեցանք մեր բարեկամական դիմումին մէջ եւ վճռուեցանք: Մեր ներկայացուցած այնքան չնչին եւ արդար խնդրանքը մերժուեցաւ շատ բիրտ կերպով: Մեր գործատէրը կ'ուզէ մեզի հետ վարուել այնպէս՝ ինչպէս իր պապերը կը վարուէին մեր նախահայրերուն հետ: Եւ դուք զիտէք թէ ի՛նչ կը նշանակէ ատիկա: Հիմա մեր պարտքն է անոր յիշեցնել, թէ այն ժամանակները անդառնալիօրէն

անցեր են ալ: Թէ մենք թոյլ պիտի չտանք որ վերադառնան այն ժամանակները: Ուրեմն վաղուքնէ սկսեալ՝ մեզմէ ոչ ոք պիտի աշխատի Մր. Ճանսընին համար: Այս եղանակին շատ դժուար ըլլալու չէ ուրիշ արտերու մէջ գործ ճարելը: Հաւանական է որ մեր այս պայքարին մէջ քիչ մը աւելի նոր զրկանքներու ենթարկուինք: Բայց դուք պէտք չունիք ինձմէն լսելու, թէ առանց դժուարութեան եւ ցաւի որեւէ նպատակ չիրագործուիր: Եւ ես խորունկ վստահութեամբ կը յայտարարեմ ձեզի, թէ եթէ մենք հաւատարիմ մնանք մեր որոշումին, պահենք մեր կորովն ու միասնականութիւնը՝ անպայման յաղթական դուրս կուգանք ի վերջոյ...:

Է.

Ոռոգման գլխաւոր առուն կ'երկարէր անոր ընդարձակ արտերուն լայնքին: Այդ անծայրածիր դաշտերը քառանկիւն լայնարձակ շերտերու կը բաժնուէին փոշեպատ ճամբաներու ցանցով մը, որոնցմէ ոմանք ջրուղին կը խաչաձեւէին փայտաշէն կամ քարակերտ կամրջակներու վրայէն: Մր. Ուոլթըրը կը թնամ այդ փոքր կամուրջներէն մէկուն եզերքի կիսորմին՝ դէմը տարածուող բամպակի անսահման ճերմակ ծաղկաստանը կը դիտէր յուսահատ խռովքով: Թուփերը կը չորնային արդէն գորշ դեղնագոյն շապիկներ հագնելով: Եւ ձմեռնամուտի ցուրտ ու անզգամ հովը, անտարբեր ճանսընի տառապանքին եւ արհամարհելով անոր ցաւը՝ իր աներեւոյթ ու մահահոտ մատներով կը քաղէր, կը խլէր բամպակի սպիտակ փնջիկներն ու կը տարտղնէր դանոնք հողի թուխ մակերեսին, կարծես քաղցրացնելու համար անձրեւներուն անկումը: Զիւնի լայնածիր փերթերու պէս գետնին կառչող կամ ճերմակ ամպի պատառիկներու պէս ածուներուն միջեւ հովին քմահաճոյքէն մտրակուող բամպակի խոշոր կաթիլները, մեծահարուստ հողատէրին կը թուէին ըլլալ օսկեգրամներու կարմրաչող սիւներ, որոնք կը փլչէին իր ափերուն մէջ եւ հեշտալուր հնչիւններով

կ'ոստոստէին, կը թաւալէին իր հասողութեան սահմաններէն դուրս, օտար եւ թշնամի ափերու վրայ վերադիզուելու համար:

Արգաւանդ եւ բեղմնաւոր եղած էին միշտ իր արտերը: Անոնց խոնարհ, բայց բարի եւ առատաձեռն թուփերուն փոքրիկ կոկոններուն մէջէն էին ծաղկեր ու բարձրացեր իր դրամատունն ու մեծ վաճառանոցը: Ճանսըններու անմրցելի համբաւն ու նախանձելի դիրքը այս ահօսներուն բարեացակամութեան էին վստահեր իրենց հիմերը: Եւ ի՞նչպիսի սրտառուչ հաւատարմութեամբ արտերը միշտ վարձատրեր էին Մր. Ուոլթըրի յոյսերը, ոռոգուելով սա կամրջակին տակէն անձայն սահող ջուրէն եւ գործաւորներու արգասաւորող քրտինքէն, աշխատանքէն ու տուեայտանքէն:

Իսկ հիմա՞: Իր աչքերուն դէմ պարզուող տեսարանին երեւոյթէն ուժգնօրէն կը ճմլուէր իր սիրտը: Երկար տարիներէ ի վեր, իր զգայարանքները ընդարմացեր էին նիւթի եւ ստացուածքի շրջադիժէն դուրսի ազդեցութեանց հանդէպ: Իր զգացումները, ուրախութիւններն ու յուզումները կը ներշնչուէին կամ կը պարտադրուէին իր առեւտրական ձեռնարկներուն վիճակէն: Եւ դրամատէրի իր ամբողջ ասպարէզի ընթացքին, երբեք այսքան սպառնալի, այսքան վիրաւորական եւ անյոյս տաղնապ չէր հարուածեր իրենց գանձարկղն ու անունը:

Ու հիմա՝ անցեալ տարիներուն այս դաշտերուն վերայ ծփացող անհուն ու անարատ ճերմակը, զայն բծաւորող բամպակաքաղներու սեւ դէմքերուն հետ վերստին տեսնելու անզուսպ կարօտը կախուեցաւ իր սրտէն եւ սկսաւ օրօրուիլ յուսահատ հծծիւններով: Ցաւը նստեցաւ նաեւ անոր կոպերուն, երկու կաթիլ արցունքի վերածուած, որոնց մէջէն, թէեւ աղօտ եւ անորոշ կերպով՝ բայց կարծեց տեսնել բամպակի լայնարձակ արտերը փոխուած հանգիլի ճակատամարտէ մը վերջ խաղաղած ռազմադաշտի մը, ուր անհամար դիակներու շեղջեր կը ծածկէին կիսափուլ խրամները, բղքտուած փշաթելերը, լճքուած ռազմանիւթերն ու կիսակենդան, հեծեծող վիրա-

ւորեալները: Այդ գիւղերը շարքին՝ ան ճանչցաւ դայրոյթէ պայթած աչքերը իր մէկ զաւակին: միւսին շիկահարմիր գլուխը նշմարեց հրանօթի մը բերանին մէջ. երրորդին ճակատի սպին կարծեց տեսնել փշրուած կիսադէմքի մը վրայ. չորրորդին... բայց սարսափով պատուեց արցունքին վարագոյրը: Դէմը, մինչեւ հորիզոն, մինչեւ կապտաւուն գիրկը հեռուն խոնարհող երկրներն՝ արեւէն խանձած բամպակին սպիտակ սաւանը կը ծածանէր, կը թօթուէր ձմեռնային հովին բիրտ մատներուն մէջ:

Եւ կը զգար ձանսըն, որ իր նիւթական կորուստին կսկիծը աւելի տաթանելի կը դառնար իր խոցուած հըպարտութեան եւ համբաւին ցաւէն: Սեւամորթները չէին պարտուած, ընդհակառակը, սա արտերուն աւերն ու ողբերգութիւնը անոնց յաղթանակը փառաւորող դարհուրելի քայլերդի մը պէս կը դոռար իր ականջներուն մէջ: Ինք, Ուոլթըր ձանսըն, իր ամբողջ դրամով, վարկով եւ ազդեցութեամբ չէր յաջողեր ճզմել «գարշելի սեւերուն յեղափոխութիւնը»: Ասիկա ճակատագրական, աղէտալի պարտութիւն մը կը նկատէր իրենց համար: Մանաւանդ որ, դատախազ եւ ոստիկանապետ համեստօրէն խոստովանած էին թէ օրէնքը բռնաբարելու խղճահարութիւնը չէր գիրենք կասեցնողը, որ ծայրայեղ միջոցներ ձեռք առնեն սեւերու դէմ, բայց... բացարձակապէս իրենց ուժէն վեր էր բռնութեամբ դանոնք գործի մղելը...: Կրնային անոնց վարիչները եւ ուրիշներ ալ ձերբակալել, պատժել, բանտարկել զանազան մեղադրանքներով, սակայն դժուար թէ անոնց արդելափակումն ու դանակոծումը օղնէր որ Մր. ձանսընի արտերուն բամպակը քաղուէր եւ հակերու վերածուէր: Ուրեմն ինք պարտուեր էր սեւերէն:

Մերձաւոր անցեալի այս ցաւազին վերյիշումները դանոնութեան նոր ալիք մը շարունակին վշտով եւ կատաղութեամբ ողորուած իր էութեան վրայ: Յիշեց թէ ինչպէս ընդունեցին զինք իր ցեղակից բարեկամներն ու նախկին գործակիցները, երբ իր դէմ կզպուած դտնելով

յոյսի բոլոր դուռերը՝ ինք խոնարհեր էր անոնց օժանդակութիւնը խնդրելու: Անոնք նախ մերժեցին իրենց գործաւորներէն մաս մը նոյն իսկ շահով վարձու տալ իրեն, քանի մը շարաթուան համար: Յետոյ երբ առաջարկեց անոնց որ գնեն իր հունձքը՝ այնպիսի ճղճիմ եւ անխիղճ արժէք «չնորհեցին» իրեն, որ զայրացաւ այս անըսքօղ կողոպուտին դէմ եւ նախընտրեց փճացած տեսնել իր բամպակը:

Անոնցմէ մէկը հեգնական ժպտով մը պատասխանեց իր բարկացայտ բողոքին եւ անտարբեր երեւոյթով մը ըսաւ.

— Բայց ինչո՞ւ կը նեղուիք, Մր. ձանսըն, մենք ձեր սկզբունքն է որ որդեգրեր ենք: Դուք կը պնդէիք ամէն առիթով թէ բարեկամութիւնը տարբեր բան է եւ առեւտուրը տարբեր բան եւ թէ պէտք չէ զանոնք շիտթել իրաչափուելու: Ես դեռ պիտի կրնամ ձեզ ցուցնել թէ ինչ-

Չէ՛, մոլտաց հիմա ձանսըն իր ակոսներուն մէջէն, նայուածքը դաշտերուն յառած եւ աւելի յուլօրէն յենելով կամրջակի կիսորմին:

— Ես տակաւին պատեհութիւն կ'ունենամ ձեզի հետ չափուելու: Ես դեռ պիտի կրնամ ձեզ ցուցնել թէ ինչպէս կը կործանեն հակառակորդները...:

Եւ յիշեց անմիջապէս, թէ իր հարստութիւնն ու ընտանեկան պատիւը հարուածող այս աղէտը յարգարուեցաւ եւ իր դէմ արձակուեցաւ «այն աղտոտ սեւերուն» կողմէ: Չանդրադարձաւ անոնց թշուառութեան, չմտաբերեց թէ անոնք շիտթի մը կամ հողի բունծի մը սեփականութեան երանութիւնը չէին վայելած երբեք: Որ նոյն իսկ ինք անոնց կը զլանար սեփականութիւնը իրենց աշխատավարձերուն...: Վրէժխնդիր ատելութիւն մը կը փոթորկէր իր ներքին խռովքը եւ կը մոլեղնէր հիմա, եւ ձայնը հնչեց կատաղի մոնչիւնի մը պէս, երբ ըսաւ.

— Թող սպասե՛ն բոլորն ալ: Թող սպասեն եւ տեսնեն թէ ինչպէ՛ս բոլորին ուրախութիւններն ալ խեղդել տամ իրենց կողորդներուն մէջ...:

Ը.

Ջանք չէին խնայած ձանսընները: Բժախնդիր էին գտնուեր, որ բնակարանի յարդարանքն ու իրենց զգեստաւորումը արտակարգ եւ աննախընթաց շքեղութեան մը փայլով շողշողար: Մանրակրկիտ եւ կատարեալ ճաշակ մը քրտներ էր վայելչօրէն զարդարուած հիւրանոցի բոլոր իրերուն վրայ: Գաւիթներուն, ընդունարանին եւ սրահներուն գունազեղ լուսավառութիւնը թովիչ երանգաւորումով պիտի պարուրէր հիւրերը, պիտի հրապուրէր անոնց նայուածքները եւ նախանձով ու հիացումով պիտի լեցնէր զանոնք: Սեղաններու պէսպիսուն ճոխութիւնը պիտի ապշեցնէր բոլոր անոնք, որոնք փափսացեր էին դուրսը, թէ ձանսըններու աստղը իր վայրէջքի եւ շիջման շրջանը կ'ապրի: Վերջապէս՝ շուք եւ փառք պիտի ունենար այդ օրը: Կոչնականներ, երկար ժամանակ, նախանձով եւ զմայլանքով պիտի յիշէին հանդիսաւոր եւ անմոռանալի այս տօնակատարութիւնը: Բօշէլի ընտրանին, որ հրաւիրուած էր այս տօնին՝ յաջորդող բոլոր երեկոյթներուն եւ խրատմանքներուն մէջ՝ պիտի խօսէր ձանսըններու փարթամ հանդէսին մասին, որպէս յաջողութեան անդերազանցելի տիպարի:

Իզգայէլ ձանսընի ծննդեան տասներորդ տարեդարձն էր առիթը, բայց իրապէս՝ այս կոչուենքը առաջին փորձ մը պիտի ըլլար անոնց խարխլած համբաւին վերականգնումին նուիրուած:

Հրաւիրեալներ կը հասնէին հետզհետէ եւ փոքր խմբակներ կազմած՝ կ'ըրօսնէին թղթախաղի բոլորածեւ սեղաններու շուրջ, կամ կը խօսակցէին անկիւններու մէջ առանձնացած: Սեւամորթ սպասեակներ, արծաթեայ պսպղուն ափսէներու վրայ, գեղաձուլ բաժակներով խըմիչքներ կը հրամցնէին ցիրուցան հիւրերուն:

Տանտիրուհին, երջանիկ ու շնորհալի, խումբէ խումբ կը սահէր հեշտալի բուրում մը ցանցնելով բաց կապոյտ թաւիչէ շրջազգեստին լայնածիր ծալքերէն եւ

նորահարսի ամօթխած ու պայծառ ժպիտ մը ծաղկեցնելով իր նրբօրէն շարուած շրթներու անկիւններուն: Անոր կուրծքին կարուած մետաքսէ վարդը, իր կարմրավառ ու կիսաբաց փերթերով, տարփատենչ համբոյրի մը պատրաստուած բերանի մը կը նմանէր: Անոր հուանի թեւերուն ճերմակը ակնապարար հրապոյր մը ստացեր էր, շրջադեստին թեղանիքները երիզող մուգ-կարմիր ժանեակներուն ձգած վարդաթոյր ստուերին տակ: Նոյն դոյնէն լայն ժապաւէն մը կ'եղերէր մինչեւ ստքերը ծածկող բազմածալ քղանցքը:

Տիկ. ձանսըն երբեմն զուարթ, երբեմն խայթող խօսք մը կը նետէր վիճողներու շրջանակէ մը ներս, յաճախ բախտը վճռելով վիճող կողմերուն: Ապա կ'անցնէր յաջորդ խումբին, ուր ծիծաղն էր տիրական եւ ուր դարձեալ իր վճիտ ձայնին կարկաչուն դիւթանքը, իր հեղասահ ընթացքին մէջ կը լուծէր բոլոր միւս կայլակումները:

Յանկարծ, հիւրանոցի պատէն կախուած փայտեայ տուփի մը դռնակները բացուեցան եւ բու մը վայեց երեք անգամ: Ժամը երեք արդէն: Տիկին ձանսըն ամուսինը փնտուեց եւ զայն դտաւ պատշգամին վրայ, հին օրերու բարեկամի մը հետ՝ որ ցաւ կը յայտնէր իրենց կրած նիւթական կորուստներուն համար, եւ վստահօրէն կը դուշակէր թէ աւելի բախտաւոր սպառանքեր պիտի ունենային իրենց զաւակները, որոնք չափահաս էին արդէն:

— Լիովին համաձայն եմ ձեզի, Մր. Բաճըրդ, յարեց Տիկ. ձանսըն: Աւելցուցէք նաեւ թէ, մեր զաւակները աւելի հեռատես եւ խմաստուն պիտի ըլլան եւ իրենց շահերը զանազան կիրքերու ստորադասելու անխոհեմութիւնը կը յուսամ թէ չգործեն: Ուրիշըր շատ բան կորսնցուց, բացի սեւամորթները ատելու իր ազատութենէն՝ որ հիմա իր մեծագոյն միտթարութիւնը կը թուի ըլլալ, եւ որ եթէ իրմէն խլուէր՝ յուսահատութենէն անպայման, բայց ա՛նպայման անձնասպան կ'ըլլար ան...:

Եւ կոկորդալիւր խնդացին բոլորը:

— Խօսքը մէջերնիս, ճանսըն, այդ ի՞նչպէս պատահեցաւ որ քեզի դիմող չորս սեւերէն, — անցեալ օր ի՞նչ կոչեցիր զանոնք, «Դատապարտուածներու յանձնախօսմբ» էր արդեօք, այո, ի՞նչպէս եղաւ որ անոնցմէ երկուքը բանտարկուեցան եւ երրորդը սատկելու չափ ծեծուեցաւ, լսածիս համաձայն՝ մէկ աչքն ալ կորսնցնելով... Իրասպէս, ես կը հիանամ քու կորովիդ եւ հնարամբտութեանդ վրայ, ըսաւ Բաճըրդ շողոմոսը ձայնով մը եւ սեղմելով ճանսընի բաղուկը:

— Ա՛հ, սիրելի բարեկամս, այդ բոլորը դիպուածին դործն են պարզապէս: Երկուքը զողութեան մէջ բռնուեցան... Իսկ, երրորդը, անշուշտ լսեցիր, մէկ քանի ճերմակներու կիներուն աչք տնկած էր եւ բնականաբար այդ պատուախնդիր անձերը սաստիկ կերպով բարկացան եւ... մնացեալը գիտես արդէն: Բայց հաւատա որ այդ երեքին վրայ ծախսածիս քանի մը անդամը որոշած եմ վատնել, այս բոլորին պատասխանատուն եղող այն դարձելի սրիկան, Սէժ Թամսընը ճանկերուս մէջ ունենալու համար: Բայց անհող եղիր, սպասէ եւ պիտի տեսնես...:

Տիկ. Ճանսըն միջամտեց, փոքր վրդովում մը զսպելով:

— Ներեցէք որ ձեր հետաքրքրական, պիտի ըսէի այրական խօսակցութիւնը ընդմիջեմ: Բայց Ուսլթըր, չե՞ս խորհիր թէ Իդապէլ ուշացաւ քիչ մը:

— Ձեմ կարծեր, պատասխանեց ամուսինը եւ նայեցաւ իր ժամացոյցին: Ժամը նոր երեք կ'ըլլայ, հիմա ան ուր որ է կուգայ:

— Բայց ես իրեն պատուիրեր էի որ այսօր դպրոցը սովորականէն քիչ մը կանուխ ձգէ:

— Մտահոգուելու պատճառ չկայ, մէջ մտաւ Բաճըրդ, կ'երեւի ընկերուհիները զինք կ'ուշացնեն իրենց բարեմաղթութիւններով:

Այդ պահուն փոզոցին ստորտը կենդանացաւ դպրոցականներու աղմկայոյզ խօսակցութիւններով:

— Ու՛սլթըր, թերեւս Մր. Բաճըրդը հոս առանձին ձանձրացաւ, զինք հիւրերուն մօտ առաջնորդէ եւ զանոնք

զբաղեցուր մինչեւ Իդապէլին ժամանումը, ես հոս քիչ մը կը սպասեմ դեռ:

Հանդէսին պաշտօնական բացումին համար անհրաժեշտ էր աղջկան ներկայութիւնը: Չա՛ր աղջիկ, ինչո՞ւ կ'ուշանար այսքան:

— Դժբախտութիւնները չակնկալուած ատենները կուգան միշտ, Տիկ. Ճանսընի ականջին փսփսաց դէշ նախազգացում մը: Բայց ան յանդիմանեց այդ անպիտան մտածումը: Պա՛հ, ի՛նչ կրնայ ըլլալ որ: Բայց ինչո՞ւ սա մօտեցող աղջիկներուն մէջ չէ իրը:

Իդապէլի խաղընկերներէն 5-6 աղջնակներ ցանկորմի ձողերուն քսքսուելով եւ անլսելի քրթմնջիւններով պարտէզ մտան եւ սկսան դիրար առաջ մղել առանց պատըզգամ նայելու:

— Ի՞նչ կ'ընէք, աղջիկներ, ո՞ւր է Իդապէլը:

— Տիկ. Ճանսըն... Տիկ. Ճանսըն... Տիկ. Ճանսըն... կանչեցին աղջիկները իրարու ետեւէ, բայց շփոթեցան անմիջապէս եւ երկչոտ ակնարկներ փոխանակեցին իրարու հետ:

— Բայց ըսէ՛ք, ո՞ւր է Իդապէլը... Տիկ. Ճանսընի ձայնին մէջ՝ նախազգացումին կասկածը ճշացող երկիւղի վերածուեր էր արդէն:

Գլուխնին կախ՝ մանուկները բոլորովին լռեցին այս անգամ: Տիկ. Ճանսըն շփոթահար նետուեցաւ ներս եւ շրջադեատին փէշերը վեր հաւաքած՝ առաջին յարկի աստիճաններէն շտապեց պարտէզ: Անոր անսովոր յուզումն ու աճապարանքը նշմարող քանի մը հիւրեր հետեւեցան իրենց վրդոված հիւրընկալուհիին:

— Ո՞ւր է Իդապէլը, հարցուց դարձեալ Տիկ. Ճանսըն:

Իրենց վախէն կարծես հաշմուած էին փոքրիկները: Ոմանք շուարած՝ շտապուեցան, մէկը հեկեկաց եւ բոլորը պահեցին իրենց շարագոյժ լուծիւնը:

— Բայց խօսեցէ՛ք, ձեզի՛ կ'ըսեմ, չէ՞ք լսեր, ո՞ւր է իմ Իդապէլս, չո՛ւտ ըսէք, ո՞ւր է Իդապէլ աղջիկս...: Սարսափէ զարնուած, գրեթէ շնչախտուր ձիւ մըն էր ա-

սրկա, որ կը թուէր թէ ցաւէն պատուած սիրտէ մը կը խուժէր դուրս:

— Դպրոցէն ելանք, թոթովելէն սկսաւ անոնց կըրտսերադոյնը, եւ քիչ մը պտտելով կուգայինք: Սեւ տղաքներ կը խաղային ճամբուն վրայ: Այն ատեն սոսկալի բան մը պատահեցաւ... Իդապէլ սեւերուն մէջ մնաց: Եւ հազիւ խօսքը աւարտած՝ աղջնակը փախաւ հեծկլտալէն, միւսները հետեւեցան անոր:

Տիկին ճանսըն, շանթահարուածի պէս՝ պահ մը բեւեռուած մնաց անշարժ եւ կարծես անղգայ, ապահար նայուածքը խուճապով հեռացող աղջիկներուն սեւեռած: Բայց սթափեցաւ յանկարծ, երբ ականջներուն մէջ կըրկնուեցաւ զարհուրելի յայտնութիւնը: «—Սեւերուն մէջ մնաց, սեւերուն մէջ մնաց»...: Եւ խելակորոյս՝ մայրը վազեց դէպի փողոց, ճչալէն:

— Իդապէ՛լ...
— Իդապէ՛լ, Իդապէ՛լ...:

Կարօտով, խանդով, սոսկումով աղաղակուած այս անունին պատասխանները սուրացին հիւրասրահներէն ներս եւ հեծեծելէն փշրուեցան պատերուն դէմ: Երբ Մր. ճանսըն եւ իր ընկերակիցները այս ահարեկ կանչերէն հոսող անձանօթ երկիւղով համակուած դուրս փութացին՝ տեսան Տիկին ճանսընը, որ բաց երկնքի դոյն իր թաւիչէ թանկարժէք շրջաղգեստին ծալքերը ձեռքերով երկու ծունկերուն ճմրթկած՝ դէպի սեւամորթներուն թաղը կ'արշաւէր հերարձակ ու հեւասպառ, անտարբեր իր յուսահատ կանչերուն ու հեկեկանքին ունկնդիր կամ հետեւող բաղմութեան: Ճանսըն հասաւ իր կնոջ եւ թեւը տուաւ անոր:

— Իդապէ՛լ, Իդապէ՛լ...:

Արցունքներու մէջ խեղդուող իր վշտարեկ նայուածքը յառած հեռուն, միջոցի անորոջ մէկ կէտին՝ Տիկին ճանսըն կը յառաջանար արագ ու դանդաջուն քայլերով, աղջկան անունը հեծկլտալով յաճախ, երբեմն խուլ ու արտասուահեղձ, երբեմն բարձրաձիչ ու սրտապատառ: Օձի բծաւոր մորթի շինուած թանկարժէք կօշիկը կը ճան-

կըրտուէր եւ կը ձեղքրաէր փողոցի կոշտ ու անհարթ սալարկին եւ խճաքարերուն դարնուելով: Ինք անփոյթ, գրեթէ անղգայ, կը շտապէր միշտ, ի դո՛ւր ջանալով լայնցնել քայլերը: Աջ ձեռքով ջղաձգօրէն տակաւին կը ճմրթկէր շրջաղգեստին երկնադոյն թաւիչը եւ ձախ ձեռքով կը սեղմէր ամուսնին թեւը:

Իսկ բաղմութիւնը կ'աճէր հետզհետէ եւ կը մոլեղնէր, անձնատուր իր մէջ գարթնող ատելալաւ կիրքերու խլրտումին: Եւ ճանսըններուն ու անոնց քանի մը հիւրերուն հետեւող մարդոց արեւակէզ, մոռայ դէմքերը կը ծամածռէին դաժան ու վայրագ խոժոռումներով: Մր. Բաճըրզ կը գլխաւորէր այս ամբօխը, խտտասիրտ հրամանատարի մը դայրազնած դէմքով: Եւ մահարշաւ ժանտ համաճարակի մը պէս, կամ անսանձօրէն մոնչող հրդեհի մը բոցավառ լեզուներուն նման՝ կատաղութիւնը կը ծաւալէր ու կը վարակէր զանոնք, արշաւելով բերնէ բերան եւ թոչելով աչքէ աչք, բարկացայտ քրթմնջիւններու եւ ատելախանձ նայուածքներու վրայէն: Ու անոնք որ պարզ հետաքրքրութենէ մղուած կը մօտենային այս դարմանալի թափօրին՝ հազիւ քանի մը վայրկեան անցած՝ կը զգային թէ սպառազինուելը են արդէն մինչեւ իրենց երակներուն եւ ջիղերուն նրբադոյն թելերը, մինչեւ իրենց սիրտերն ու եղունգները...:

Ու մայթերէն իսկ լսելի բարձրագոռ ու յանդուգն մարտահրաւէրներու կը վերածուէին տակաւ այս չարագոյժ քրթմնջիւնները:

— Ի՞նչպէս ալ չօրնալիք ձեռքերնին տասը տարեկան անմեղ ու անղօր աղջնակի մը երկնցաւ... չեմ հասկնար թէ Աստուած ինչո՞ւ այդ անիծեալներուն ցեղը ստեղծեց:

— Անոնք անասուններէն ալ վարնոց են, անոնք ամէն բան կրնան ընել, պէտք է գիտնանք ասիկա...:

— Սրիկանե՛ր, կարծես թէ համ չեն առներ սեւ աղջիկներէն...:

— Իրե՛ն ալ անանկ ընելու է, այն ատեն կը հասկընայ, իրեն ալ անանկ ընելու ենք, որ...:

— Ողջ-ողջ սատկեցնելու է այդ դարչելին...:

— Այո՞, ըսի՛ր շիտակ բան մը, եւ այն յիմարանոցի մարդասէրները, որոնք կը պոռչտան անդադար թէ լինէ՞նք անգութ եւ անմարդկային արարք մըն է, թող հաճին մեզի սորվեցնել թէ որքան մարդկային է տասը տարեկան աղջիկ մը բռնաբարելը... :

— Իդայէ՛լ, Իդայէ՛լ, իմ սիրելի աղջիկս... :

Ուսլթըր ձանսըն ի զուր կը փորձէր սրտապնդել իր կինը: Ան կը հեկեկար յուսահատօրէն: Եւ ինք, եղունգները աչքերուն մէջ խրած, ա՛յնքան ուժգնօրէն կը սեղմէր ձեռքերը՝ կառափնատի յարմար վայր մը կը փնտռէր մտովի, անծանօթ եւ անուպայ ոճրագործին համար: Մինչ բազմութիւնը կ'ուռէր ամէն նոր անկիւնադարձի եւ անոնց մէջ վանդակուած դազաններ իրենց քաղցած երախները կը թօթուէին կարծես ու ճիրաններնին կը դալարէին, մօտեցող զոհէն ծաւալող հեշտանքը հոտուրտալով... :

Թ.

Ու յանկարծ, մերձաւորադոյն անկիւնը դառնալնուն՝ կանգ առին բոլորը մէկ, հրեղէն տեսիլքէ մը զարնուելով քարացածի նման: Քակուեցան պրկուած ու թշնամի բրուունցքները եւ դէմքերը պարզուեցան, ձերբազատուեցան զիրենց այլանդակող ժանտաշունչ խոթոռումներէն: Սուր փղձկումով մը Տիկին ձանսըն բարձրացուց թեւերը եւ երկարեցաւ առաջ: Միւսները, անբացատրելի ասլանքէ մը կլանուած՝ բեւեռուած մնացին իրենց տեղերուն, արշաւասոյր ու փրփրերախ իրենց վազքին մէջ՝ սանձերնին յանկարծօրէն եւ ուժգնօրէն քաշուած երիւարներու պէս... :

Դէմէն՝ յոգնած քայլերով սեւամորթ պատանի մը կը յառաջանար դանդաղօրէն, մութ պղնձադոյն թեւերուն վրայ կրելով սպիտակ զգեստաւոր՝ սպիտակ մարմինը զգայազիրկ Իդայէլի: Հանդարտ ու անխուփ կ'ընթանար ան, մանկունակ դէմքը դոհացած երանութեամբ մը թաթառուն: Ծերմակ երազ զրկած հրեշտակի մը նման երեւ-

ցաւ իրենց պատանին, որ երկնքէն իջեր էր ծխնելոյղէ մը անցնելով: Այնքան բարի, այնքան միամիտ ու անմեղ ստուեր մը կը տարածուէր անոր վրայ, որ ցատումնաւառ ամբոխը համակուեցաւ ընկրկումի, նահանջի դողով մը: Յանցագործի չէ՛ր նմանէր այս տղան: Եւ իրենց մէջ, շատ խորունկէն, կարծեցին լսել ձայնը մարդկային արթնցող բնազդի մը, որ կը փսփսար թէ այս պատանին չէր կրնար դորձած ըլլալ ենթադրուած անարդ մեղքը:

Բայց նոյնքան յանկարծօրէն՝ իր բոլոր սահմանները պատուեց ձանսընի կատաղութիւնը: Երեմիան ճանչցաւ ան, դաւակը Սէմ Թամսընի՝ որ իր դէմ կազմակերպուած դորձադուրը յաջողուցեր էր, որուն հետեւանքով փճացեր էր այս տարուան բամպակի բերքը եւ խոր ցնցում մը կրեր էր իրենց պատկառելի համբաւը: Ու հիմա ինչպիսի երկնապարզեւ պատեհութիւն մը կ'ընծայուէր իրեն, ա՛նոր զղջալ տալու իր ծնո՛ւնդն անդամ: Ահա փոխվրէժի հրաշալի առիթ մը, որ պիտի ջախջախէր այդ «զգուելի սեւուկը» եւ պիտի դաստիարակէր բոլոր միւսները: «Լա՛ւ, լա՛ւ, հիմա ես կը սորվեցնեմ քեզի, Մըթըրթամ, ա՛հ, հիմա ես կը սորվեցնեմ քեզի», մտածեց ձանսըն ցնծութենէն զրեթէ արբչիւ: Եւ խոյանալով պատանին վրայ՝ խլեց աղջկան մարմինը եւ պարզելով դէպի բազմութիւնը՝ բացականչեց, ջանալով յուզումի երանգ մը խառնել իր ձայնին.

— Բարեկամներ՝, նայեցէ՛ք իմ մէկ հատիկ աղջըկանս, հրեշտականման Իդայէլիս վիճակին, նայեցէ՛ք եւ դատեցէ՛ք... :

Մինչ Երեմիա Տիկ. ձանսընի մօտենալով՝ երկիւղէն չփոթած կ'ըսէր անոր, ձեռքը երկարելով իր եկած ուղղութեամբ.

— Իդայէլ իր ընկերուհիներուն հետ կը խաղար այն կողմերը, երբ կատղած շուն մը... :

Բայց չկրցաւ աւարտել: ձանսըն պատանին դարձաւ մէկէն եւ իր խոչոր ձեռքով ծանր եւ ուժգին աստակ մը չպրտեց անոր: Երեմիա փոռուեցաւ դեպիւն եւ բերնին երկու անկիւններէն դարվար ու մութ մօրթին վրայէն՝

վարդաթոյր արեան քանի մը կաթիլներ հոսեցան ցած, իրարու մէջ լճանալէ յետոյ:

— Լսեցի՞ք, տակաւին կը փորձէ բացատրել աս պոստիկի կտորը:

Եւ որպէս զի տղուն յանցազորութեան մասին կասկածի որեւէ նշոյլ չկարենայ նուազեցնել ու հաշմել բաղմուտեան մոլեգնած եռանդը՝ ծանսըն անպատկառօրէն վերցուց ազջկան զգեստը եւ նայեցաւ, բոլորին առջեւ իբր թէ նայեցաւ, հաստատելու համար ոճիր մը, որ ատելութեամբ գերազրդէր իր այդ վիճակին մէջ կ'ուզէր գործուած տեսնել իրապէս, կարենալ խարոյկի կամ պարանի յանձնելու համար պատանի Երեմիան, կարենալ մարելու համար ռիսի ու վրէժի այն բոցերը, որոնք վայրի բռնկումով մը կը ճարճատէին իր ներսը, լափլիզելով եւ խանձելով իր հոգին:

Յետոյ մօրը յանձնելով Իզապէլի տակաւին անդա՛յ մարմինը՝

— Անմիջապէս տուն տարէ՛ք ասիկա, պոռաց ծանսըն, եւ դուք ալ քաղաք վերադարձէ՛ք, աւելցուց ան, խօսքը ուղղելով կիներու եւ անչափահասներու բաղմութեան:

Ապա կրկին դառնալով զինք շրջապատող խումբին, ըսաւ զայրոյթէն կոտորտող ձայնով.

— Բարեկամներ, խորապէս անպատուուած եմ ես եւ արդարութիւն կը պահանջեմ: Դուք դատաւոր եղէ՛ք եւ ըրէ՛ք ձեր դատաստանը: Ե՛ս, բարեկամներ, որպէս անպատուուած ամերիկեան քաղաքացի՝ կ'ուզեմ որ այս շան ձողր սատկի... կը պահանջեմ որ իր կատարած անքաւելի ոճիրին համար այս շան ձողը շունի պէս սատկի...:

Գիշակեր զազանը նորէն ոռնաց անոնց մէջ, ցցելով ժանիքներն ու բարձրացնելով թաթերը: Եւ Երեմիա սարսուց ամբողջ մարմնով, տեսնելով իրեն ուղղուած նայուածքները, որոնք սայրասուր եւ արիւնթաթախ նիզակներու նման կը ճօճէին սպառնազին: Եւ սրունքներու վանդակորմին մէջէն ձեզք մը փնտուց, անոնց մահացու մխրճումէն խուսափելու համար: Ու մէկէն նետուեցաւ

դէպի բացուածք մը: Բայց քանի մը հզօր բազուկներ խուժեցին իր վրայ եւ վայրադ հարուածներու տարափով մը տապալելով զինք գետին, սկսան կոխկրտել անխնայ: Յաւան կը ճշար ու կը հեծեծէր Երեմիա եւ հայրն ու Աստուած կը կանչէր օգնութեան: Պահ մը յաջողեցաւ քաշուած կը կանչէր օգնութեան: Պահ մը յաջողեցաւ քաշուած կը կանչէր օգնութեան: Պահ մը յաջողեցաւ քաշուած կը կանչէր օգնութեան: Պահ մը յաջողեցաւ քաշուած կը կանչէր օգնութեան: Պահ մը յաջողեցաւ քաշուած կը կանչէր օգնութեան: Պահ մը յաջողեցաւ քաշուած կը կանչէր օգնութեան:

— Մը. ծանսըն, ըսէ՛ք որ ալ չծեծեն զիս, Աստուած սիրոյն, թող ալ չդարնեն ինձի, կը խոստանամ որ չեմ փախչիր, ճշմարիտ կ'ըսեմ, ալ չեմ փորձեր փախչիլ... Մը. ծանսըն, կ'սողա՞լէ՛մ...:

— Հեռացուցէ՛ք սա լակոտին աղտոտ երեսը, քանի չեմ սպաններ զինք, պոռաց ծանսըն ակառներուն մէջէն, ոտքի հարուածով մը ետ մղելով անոր գլուխը:

Այն ատեն, որպէս ինքնակոչ դատախազ Մը. Բաճըրզ կանգնեցաւ բոլորակին մէջտեղը եւ ըսաւ.

— Ծատ լաւ ուրեմն, տղա՛ք, հիմա պէտք է ճճապարենք: Այս գործը լմնցնելու ենք, օրէնքը միջամտելու ժամանակ չունեցած: Արդ, խնդիրը շատ պարզ է: Որպէս պատուախնդիր երդուեալներ, դուք դատաւիճիւր մը պիտի տաք սեւամորթի այս ձողին սոսկալի ոճիրին համար: Դուք լսեցի՛ք Մը. ծանսընի պահանջը: Ձեմ ուղեր հոս յիշեցնել ձեզ թէ մենք բոլորս ալ բարիք տեսած ենք անկէ եւ թէ անոր անունը պատիւ կը բերէ մեր ամբողջ ազգութիւնը: Այժմ՝ օրէնքը դուք էք, ի՞նչ վիճիւր կուտաք...:

Ծանրանիստ լուծիւն մը ծաւալեցաւ հոն՝ որ կը սարսուար միայն Երեմիայի ցաւագին հոնքներէն: Խուժեղ ասփունն ու տարտամ ակնարկներ զիրար կը հարցապնդէին երկիւղած: Իւրաքանչիւրը կը սպասէր վարսնումով, յուրակալով որ միւսը կ'արտասանէ չարագոյթ եւ ճակատագրական խօսքը: Այն ատեն Բաճըրզ դարձաւ անոնցմէ ամէնէն տարեցին, եւ

— Լա՛ւ, ձէսի, ի՞նչ կ'ըսես, հարցուց:

— Ինձի այնպէս կ'երեւի թէ շատ ըսելիք չկայ, պատասխանեց ձէսի, նայուածքը շրջելով դէպի ընկերները:

Իմ կարծիքովս մեր հայրերը մեզմէ աւելի խելացի ու փորձառու էին եւ այս տեսակ պարագաներու մէջ մենք բոլորս ալ գիտենք թէ անոնք ի՛նչ կ'ընէին: Ես հիմա պատճառ չեմ տեսներ որ չհետեւինք անոնց հաստատած աւանդութեան: Ուրիշներու դաս եւ օրինակ տալու համար, մեր հայրերը այս յանցաւորները սրտով տառնաւոր ձեւ մը ունէին եւ զայն կը կոչէին լիւնչիկ... Ես կը խորհիմ թէ շատ սղոյն եւ օգտակար եղանակ մըն է այդ, մանաւանդ որ եթէ օրէնքին եւ դատարանին ձգենք այդ խնդիրները, 5—10 կամ 15 տարուան բանտարկութեան թեթեւ պատիժով մը սեւերը կ'ազատին...: Ի՞նչ կ'ըսէք, աղա՛ք...:

— Ճիշտ է, այո, այո, ճիշտ է, մուտացին բոլորը:

Եւ քաչկրտելէն ու ծեծելէն Երեմիան տարին Փոքրիկ գետակին եղերքը, ուր կտրուած կաղնիի մը հնամեայ կոճղը կը ցցուէր հողէն երեք ոտք վեր, հարթ ու բոլորածեւ սեղան մը կազմելով: Բայց հողիւ ուժասպառ տըղան նետեր էին անոր վրայ եւ շրջապատեր էին զայն՝ երբ Սէմ Թամսըն, ծանր բիր մը սեղմած ձեռքին մէջ, խելահորոյս վաղըով մը հասաւ ու խոյացաւ դաժան ու դահճային դէմքերու այս շղթային վրայ եւ փորձեց ճեղքել զայն: Սակայն բազմաթիւ հուժկու բազուկներ կաշկանդեցին զինք:

Այն ատեն, արտասուքով ողողուած եւ մարմնին տեղացող հարուածներուն ցաւէն ծամածոռող իր դէմքը դէպի ձանսընը կարկառած՝ Սէմ Թամսըն ինկաւ ծունկի եւ պաղատեցաւ վշտէն պատուող ձայնով մը.

— Մը. ձանսըն, կ'աղաչեմ, խնայեցէք զաւակիս... ձգեցէք որ ասլրի դաւակս... Մը. ձանսըն... ան յանցանք չունի, դառնուկի պէս անմեղ եւ խոնարհ տղայ մըն է ան, հաւատացէք, Մը. ձանսըն, հաւատացէք եւ խնայեցէք իմ պղտիկ-մեծ տղուս... եւ մինչեւ կեանքիս վերջը ձեզի կը ծառայեմ... ձեր գերին կ'ըլլամ ես...

— Ա՛հ, բայց այս խաղը կատարեալ կը դառնայ հետեւեալ, Բաճըրդ, քրքշայ ձանսըն ցնծութենէն արբ-

չիւ, ես քեզի ըսի այսօր թէ համբերէ եւ պիտի տեսնես թէ ի՛նչպէս Թամսընը կը խորտակեմ: Եւ ահա ան ինքնաբերաբար կուզայ մեր ծրարին իրականացման օգնելու: Այո՛, Մը'սթը'ր Սէ՛մ, հիմա դուն քու տղուդ սատկիլը պիտի տեսնես այդ աչքերովդ եւ պիտի սորվիս թէ քեզի պէս դարչելի սեւերուն չիյնար չափուիլ ճերմակներու հետ... Բաճըրդ, ըսէ մէկուն որ կացին մը բերէ սա մօտերէն...

— Մը. ձանսըն, մի՛ ընէք ատիկա, Աստու սիրոյն, ձեր մեռելներուն եւ ձեր զաւակներուն սիրոյն մի՛ ընէք ատիկա... զի՛ս սպաննեցէք այս անմեղ տղուս փոխարէն... ի՛նչ կ'ըլլայ, Մը. ձանսըն, զիս մեռցուցէք այս խեղճ տղուս տեղը, Մը. ձանսըն...

— Հայրի՛կ, կը խնդրեմ, մի՛ չարչարեր ինքզինքդ, դուն չես կրնար ազատել զիս, Աստուած ալ պիտի չազատէ զիս, դուն անանկ ըսիր, մոռցա՞ր, հայրիկ...

Բայց պատանի Երեմիան սոսկաց, տեսնելով նայուածքներու այն վայրագ ու չարախինդ շուրջապարը, որ կարծես մահացու օղակի մը վերածուած՝ կը դառնար իր բոլորտիքն ու կը սեղմէր, կը ճզմէր զինք հետզհետէ: Ու կարծես կը լսէր կճրտիւնը անոնց ահուաներուն, որոնք իրեն կ'երեւէին կիսովին ընկղմած կատաղութեան փրփուրին մէջ, որ կը կարմրէր լինտերնուն վրայ:

Այդ պահուն էր, որ հեռուէն արձակուած աղեխարչ, սրտապատառ եւ երկարաձիգ կանացի ճիչի մը ցաւատանջ արձագանդները հոսեցան այս բոլորակէն ներս: Ու նուազեցան կերկերուն հծծիւնով մը: Երեմիա լայնօրէն բացաւ աչքերը եւ ոլոռաց.

— Հայրի՛կ, ատիկա մայրիկն էր, անպատճառ կուլայ հիմա...

Երկուական հողի ուժգնօրէն կը գրկէին Թամսընի իւրաքանչիւր թեւը: Եւ Սէմ ի դուր փորձեց զանոնք քաշելով մօտենալ ձանսընի: Այն ատեն դարձեալ գլուխը երկարեց առաջ եւ ըսաւ պաղատաբին ձայնով մը, որուն մէջ դանակոծուող հողի մը եղերական փլուզումին անհուն տառապանքը կը թրթռար.

— Կ'աղաչեմ, լսեցէք ինձի, Մր. ձանսըն... մեր ամբողջ ընտանիքով ձեզի կը ծառայենք որքան ատեն որ ուզէք... մինչեւ մեր կեանքին վերջը... երդում կ'ընեմ, Մր. ձանսըն, եւ ինչ թուղթ որ փափաքիք կը ստորագրեմ... մեր ամբողջ ընտանիքով... մինչեւ մեր կեանքին վերջը...

— Ի դուր է, հայրիկ, ինչո՞ւ կը չարչարուիս պարապ տեղը... դուն չես կրնար աղատել զիս... դուն չըսի՞ր թէ ճերմակները մեզ չեն սիրեր... Աստուած անդամ իր մէկ հատիկ տղան չազատեց, երբ ան օգնութիւն խնդրեց... էլի, էլի, լամա սասլագտանի, լամա սասլագտանի, էլի, էլի, լամա...

— Լռէ՛, լռէ՛, շո՛ւն շան որդի քեզի...

Եւ ձանսըն խելացնոր, մոլեգնած, նետուեցաւ Սէմի ոտքերուն տակ ինկած խոշոր բիրին վրայ, յափշտակեց զայն ու խոյանալով դէպի Երեմիան՝ իր բոլոր զօրութեամբ ծանր խարաղանը իջեցուց պատանիին բերանին, յետոյ դանկին, ուսերուն, գլուխին, պարանոցին, արագօրէն, ուժգնօրէն, կատաղօրէն, մինչեւ որ անձանաչելի ու անկենդան մասկոյտ մը դարձաւ Երեմիայի մարմինը: Կոյր եւ անիմաստ սալչանք մը թառեր էր բոլոր դէմքերուն: Եւ ձանսըն, հեւասպառ, քրտնաթաթախ ճակատով եւ քունքերով՝ կոծող կը դիտէր, տարօրինակ, անձանօթ դողով մը համակուած:

Սէմ պահ մը արիւնաշաղ կոծողին եւ անոր դարհուրելի բեռին յառեց իր սառած բիրերը: Յետոյ, ծանրօրէն, դանդաղօրէն նայուածքը դարձուց ձանսընի եւ անոր սեւեռեց իր ակնարկը, որ պարպուած կը թուէր կեանքի ադօտագոյն նշոյլէն: Ու թարթեց աչքերը: Եւ բացուող կողմերուն ընդմէջէն, իր դակիին գլխկոյտը տեսաւ մեծցած, ընդլայնած եւ վիթխարի ու ահարկու գանդուածի մը վերածուած: Անոր կողքին դահիճը կը կանգնէր տակաւին, գլուխը խոնարհած խոնջէնքէն եւ մէկ ձեռքով խարաղանին յենած: Կարծես Երեմիայի արիւնը կոծողէն կը հոսէր իր գլուխին վրայ եւ անկէ վար ու կը լճանար

բերնին մէջ եւ կը խուժէր կոկորդէն վար ու կ'ողողէր իր սիրտը, ա՛հ, այո՛, կը խեղդէր զինք: Ու թօթուեցաւ յանկարծ, ցնցեց ու մէկդի շարտեց զինք կալանաւորողները եւ խոյանալով ձանսընի վրայ՝ տապալեց զայն կոծանքը եւ սողալատէ մագիլներու պէս՝ մատները մխրձեց զին եւ սողալատէ մխրձուց մէջ, եւ չթուլցան, չքականոր վզին պարարտ մխրձուն մէջ, եւ չթուլցան, չքակուեցան անոնք, մինչեւ որ նուաղեցաւ ձանսընի վերջին ուեցան անոնք, մինչեւ որ նուաղեցաւ ձանսընի վերջին հոնդիւնը եւ անոր մարմինը թուլօրէն թաւալեցաւ իր ոտքերուն քով:

Այն ատեն ուժասպառ իր վրայ տեղացող բոունցքի հարուածներէն՝ Սէմ երեբալէն կանգնեցաւ ոտքի եւ թոթովեց.

— Սպաննեցէք հիմա զիս ալ, եւ ինկաւ:

Բաճըրդ իր գլուխը սեղմեց ձանսընի կուրծքին եւ ունկնդրեց: Ապա բռնեց անոր բազկերակը եւ նայեցաւ դետին հեղասահ ջուրերուն ու մէկէն ցատկելով ոտքի.

— Կարձեմ լմնցեր է, մրմնջեց, յետոյ չորս անուններ կանչելով պատուիրեց որ տուն տանին զայն: Ու պուռաց, բոլորին վրայ ծանրացող խռովքը թօթափելու համար.

— Երեք հոգի թող վազեն այս մարդասպանին տունէն կրակ շինելու, ա՛հ, օդը կը ցրտէ եւ մենք կը սկսինք մտիլ, այնպէս չէ՞, տղա՛ք, եւ այնպէս մը այրելու է, որ մոխիր անգամ չմնայ տեղը, այո՛, փոշի անգամ չմնայ եւ առանց թոյլ տալու որ նոյն իսկ առնէտ մը փախչի դուրս, կը հասկնա՞ք, նոյն իսկ ոջիլ մը փախչի դուրս... դո՛ւք, Ծրէ՛տ, ձէ՛Ք, Պո՛լտի...

— Ահա՛, Բաճըրդ, այս կացինը Մր. ձանսընը ուզած էր:

— Լա՛ւ, հիմա մենք դաշտահանդէս պիտի ունենանք հոս, տղա՛ք, այս սրիկան կամաց-կամաց, կտոր-կտոր սատկեցնենք որ մէկ կողմէն դժոխք հասնի եւ միւս կողմէն քիչ մը բան սորվի... բայց առաջ թեւերը կտրենք որ ուրիշ մէկն ալ չխեղդէ...

Կիսանուաղ՝ Սէմ հազիւ դաց թէ, զինք կը վերցընէին եւ ձախ ձեռքն ու ուսը կը տարածէին կոծողին վրայ:

Յաղթանդամ եւ փորձառու փայտահատ մըն էր կացինի մէկ հարուածով բազուկը ուսէն անջատողը: Խուլ ու խուպոտ կանչ մը արձակեց Սէմ եւ տապալակեցաւ դետնին վրայ, ցաւագինօրէն հռնդալով: Արիւնը կամարածեւ ժայթքեց հեռուն եւ կարմիր ջերմութիւն մը կաթկթեց ու այրեց ձէսի ձեռքերը:

— Նայեցէք սա դարչելի սեւին, հողի տուած ատենն անդամ հանդիստ չկրնար կենալ եւ աղտոտ խաղ մը կ'ուղէ խաղալ խեղճ դուլխիս: Եւ արագ ոստումով մը ետ ցատկելէ վերջ՝ զզուանքով ծամածոկելով դէմքը՝ ձէսի սկսաւ արեան տաք արատները սրբել ձեռքերէն եւ յուսահատօրէն նայեցաւ կարկանդակ տափատին:

Այլեւս բոլորովին զգայազիրկ՝ Սէմ չլսեց Բաճըրզի ցնծալի կանչը:

— Բերէք նայի՛նք, հիմա միւս թեւը բերէք:

Ու կացինը բարձրացաւ նորէն: Բայց անոր անկումին խուլ դիւլխիսն փոխարէն՝ արագօրէն մօտեցող եւ հեւացող աղաղակ մը պատուեց միջոցը:

— Մի՛ ընէք, կեցէ՛ք, սպասեցէ՛ք... Եւ սարսուացին բոլորը, այս ծանօթ ձայնէն հեղեղուող անանուն սարսափէն: Ու կացինը հեղօրէն հանգչեցաւ դետնին, մինչ ձանսընի երէց որդին շնչասպառ հասնելով դիմեց Բաճըրզի եւ հարցուց:

— Ո՞ւր է հայրս:

— Մենք... տուն զրկեցինք զայն... անոնց չհանդիպեցա՞ր ճամբան...

— Ո՛չ, ես չուտ գալու համար կտրուկ փողոցներէ անցայ... բայց ուշ մնացեր եմ դարձեալ, ա՛հ, ի՛նչ սոսկալի տեսարան, բացականչեց ան, Երեմիայի ջախջախուած մարմինն եւ Սէմի գլխատուած թեւին ու արիւնթաթախ գլուխին նայելով...

— Ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեր է որ այդքան յուղուած կ'երեւիս, ըսաւ Բաճըրզ քիչ մը շփոթած:

— Այն, որ թշուառական մարդասպաններ էք դուք... ի՛նչ ահուելի, ի՛նչ դժոխային, ի՛նչ դարհուրելի բան է ա-

սիկա, ինչպիսի՛ վարձատրութիւն... որովհետեւ չկրցաք քիչ մը սպասել, այնպէս չէ՞, այնքան որ անհամբեր էիք... իսկ հիմա քոյրս սթափեցաւ եւ պատմեց ամէն բան... այս տղան որ պատառ-պատառ ըրիք դուք, այս հերոս տղան քրոջս կեանքը ազատեր է կատղած շան մը ակոսներէն, անոր երախին մէջ իր մէկ թեւը խօթելով... այս անմեղ եւ քաջ տղան իդապէլին կեանքը փրկեր է եւ դուք ըզբտեցիք զայն... հայրս սպաննեց զայն այսպէս...

Խուլութեամբ, յուղումով եւ բարկութեամբ արտասանուած այս խօսքերը պայթեցան անհամար ուժերով ուրտագոռ համադարկի մը նման եւ այդ մարդոց մէջ՝ դազանները կաղկանձեցին պարտուած ու վիրաւոր: Վախկոտ եւ յանցաւոր եւ խուսափուն ակնարկներ նետեցին իրարու եւ կցկուր քրթմնջիւններ փսփսեցին որպէս չըմբեղանք: Եւ ընկրկեցան, նահանջեցին անկարգ փախուստով մը, կարծես աներեւոյթ սպառնալիք մը զիրենք կը հալածէր կրնկակոխ: Կապարէին հեռանալ անոնք: Բայց ժամանակ կը գտնէին երբեմն դառնալու ետ եւ նայելու կոճղին, որ անորոշ ու չարաչուք ստուերի մը կը վերածուէր տակաւ: Անոնք ահամայ կը նայէին ետեւ, ստուգելու համար թէ դեռ իրենց կը հետեւէ՞ր այն աներեւոյթ եւ անողոք սպառնալիքը, որ իրենց խիղճերէն կը բարձրանար եւ որուն ոտնաձայնէն կ'ահաբեկէին իրենց խիղճերը...:

Կրտսեր ձանսըն, ինքնամոռաց, անոնց կը հետեւէր իր աչքերով: Եւ մտածումը մըմունջի փոխուեցաւ ինքնիրեն:

— Ես կը ճանչնամ ձեզ, դուք վաղը նոյնքան հաճոյքով եւ կատաղութեամբ կրնաք ուրիշներ սպաննել...:

Ու յանկարծ դարձաւ դէպի կոճղը: Երկիւղէն եւ սոսկումէն սաստկօրէն կը ցնցուէին ջրղբը: Շարժում մը ըրաւ փախչելու, բայց աչքին զարկաւ Սէմի կտրուած ուսը, ուրկէ արիւնը կը ծորէր դեռ: Բնազդօրէն քաշեց շասը, ուրկէ արիւնը կը ծորէր դեռ: Թուփերն ու մացառները կը կառչէին իր սրունքներուն եւ կը ճանկրտէին իր մորթը:

կողմնակի ճամբաները ընտրեց, ուր քարեր ու փոսեր անխնայ չարչարեցին իր ոտքերը: Բայց ինք կը վազէր անդգայ, աչքերուն մէջ մէյ-մէկ արիւնաշաղ կոծող թաղած...:

* * *

Երբ սթափեցաւ Սէմ՝ դուր ու քնքոյշ զեփիւռ մը, մանրիկ ու փափուկ թաթիկներու պլլուած՝ իր դէմքն ու ճակատը կը շոյէր: Եւ երբ բացաւ աչքերը, գլխուն վըրայ խոնարհած տեսաւ իր պղտիկ տղան, որուն կողերուն աղամանդ կապած էին արցունքի երկու վճիտ կաթիլներ:

— Ի՞նչ կ'ընես հոս, փոքրիկս, մաման ի՞նչպէս է:

— Մաման չկայ... հեկեկաց մանուկը, եւ մատը երկարեց իրենց տանը ուղղութեամբ ու փղձկեցաւ... Նայէ՛...:

Սէմ փորձեց բարձրանալ ու նստիլ, աջ ձեռքին կըրթընելով: Բիրտ ու վայրագ ցաւ մը անդադար եւ ուժգնօրէն կը մըճահարէր իր կտրուած ուսը: Եւ դանդիւնները կարծես կը սողային մինչեւ սիրտը, դալարուելով ու կոտտալով: Բայց յաջողեցաւ դառնալ եւ նայիլ իրենց տան կողմը: Հեռուն՝ սեւ ծուխի նուրբ դիծ մը սողոսկելէն կ'ելլէր վեր ու կը լուծուէր միջոցին մէջ: Աւելի հեռուն, որպէս խորք, հորիզոնը կը փուռէր շառագոյն եւ անոր ետեւ կ'աճապարէր պահուրտիլ արեւը, կարմրած թերեւս ամօթէն, թերեւս ցատումէն, թերեւս սոսկումէն...:

— Այրեցին մեր տունը, հայրիկ, եւ մաման ներսը մնաց պղտիկ աղբարին հետ: Ես դուրսը կը խաղայի, մաման մէկէն սկսաւ լալ եւ պոռալ, այս կողմ կը վազէր եւ մարեցաւ... դրացիները անոր ներս տարին: Վերջը քանի մը ճերմակներ եկան եւ մեր տունը կրակի տուին... եւ մեր ազոտոտ դրացիները չձգեցին որ երթամ եւ մայրիկը եւ եղբայրը աղատեմ... ըսին թէ եթէ ճերմակ մարդիկը գիտ բռնեն, ինծի ալ կրակին մէջ կը նետեն... Իրա՞ւ է, հայրիկ... ինչո՞ւ այդքան չարասիրտ են ճերմակները... իրա՞ւ այդքան գէշ են անոնք, հայրիկ... կարծեմ իրաւ

ըլլալու է, հը՞, քանի որ այսչափ շատ անդուժ եղան եւ ձեզի ասանկ ըրին... գիտե՞ս, հայրիկ, մեր դրացիները շատ կը վախնան ճերմակներէն... անոնք չէին թողուր որ ես հոս գայի, բայց ես փախայ, ես ըսի թէ ես չեմ վախնար ճերմակներէն, ես ըսի՝ ես հայրիկիս քով կ'ուղեմ երթալ եւ փախայ եկայ... եւ եկայ...:

Իսկ ծուխի բարակ դիծը դեռ դալարուելէն կը բարձրանար ու կը հալէր շառագոյն միջոցին մէջ: Հանդարտօրէն, հեղօրէն կը սահէին գետին մոխրագոյն-կանանչ ջուրերը, հազիւ լսելի մրմունջ մը արձակելով, որ ողբերգի մը տխուր ու եղբրական արձագանգներով կը մաղուէր Սէմի ցաւատանջ ու վերաւոր հոգիին վրայ: Եւ Սէմի կը թուէր թէ վարդագոյն ամպերու թափանցիկ շղարչին ետեւէն՝ արեւը ողորկ ու վիթխարի կոծողի մը կը նմանի ահա, որ իր վրայ ջախջախուած անմեղ պատանիի մը բոցավառ արեան շիկակարմիր ճաճանչներով կ'ողողէ ամբողջ հորիզոնը եւ...:

— Անոնք չձգեցին... բայց ես փախայ եւ եկայ, հայրիկ...:

Սէմ ահնարկը դարձուց իր որբացած դաւկին եւ միակ ձեռքովը դրկելով վայն...:

— Այո, հարկաւ, եկար, իմ աղուոր տղաս, իմ պըղտիկ-մեծ տղաս, դուն եկար, ըսաւ:

— Երթանք, հայրիկ, ասկէ հեռանանք, ես կը վախնամ, հայրիկ, երթանք, աղերսեց տղան հօր ձեռքը սեղմելով եւ բերնին մէջ հեկեկանք մը դսպելով:

— Պիտի երթանք, տղաս, հիմա պիտի հեռանանք այս տեղէն, բայց առաջ մնաս բարով մը քսենք մեծ եղբորդ...:

Եւ ծնրադրեցին երկուքն ալ կոծողին առջեւ: Սէմ ձեռքը դրաւ կոծողին դէմ, պահ մը նայեցաւ հոն անշարժօրէն հանդուող արիւնաշաղ գիւղկոյտին, յետոյ փակեց աչքերը, մինչ արցունքի քանի մը կաթիլներ թաւալեցան այտերէն դարվար եւ շրթները թրթռացին ու պրկուեցան խուլ հծծիւնի մը վրայ...:

— Վա՛խ, վա՛խ, իմ հերո՛ս տղաս, իմ քա՛ջ տղաս, իմ պղտրիկ-մեծ տղաս...

— Ա՛լ երթանք, հայրի՛կ, երթանք, ես կը վախնամ, ասիկա սոսկալի է, սոսկալի է, սոսկալի... երթա՛նք, հայրիկ, կը վախնամ... կը վախնամ... ասիկա սոսկալի է...

* * *

Յաջորդ օրը, բարեկամներու օգնութեամբ, Սէմ Թամսըն հողին յանձնեց իր երեք հարազատներուն մարմինները, կամ ինչ որ կը մնար անոնցմէ: Անմիջապէս յետոյ համոզեցին զինք որ պահուելու թագստոցի մը մէջ, որովհետեւ զրոյց կը շրջէր թէ ոստիկանութիւնը արդէն Ուոլթըր ճանսընի սպաննիչը կը հետապնդէ, բողմաթիւ վկաներու ցուցմունքներէն առաջնորդուած: Այդ թագստոցը բարեկամի մը տունն էր, եւ Սէմ չէր ուզեր որեւէ մէկուն վրայ չարիք կամ վտանգ հրաւիրել: Ու որոշեց գիշերով մը մեկնիլ գէպի հիւսիս, ուր ցեղային ատելութեան թոյնը հեղձուցիչ ըլլալու չափ չէր թանձրանար միջոցին մէջ:

Ու քանի մը օր յետոյ հայր եւ որդի Թամսըններ վերջնականապէս կը ձգէին Րօչը: Իր ծննդավայրին արշալոյսը պիտի չտեսնէր այլեւս: Բայց լուսինը ամբողջ էր եւ երկինքը պայծառօրէն կապոյտ եւ աստեղազարդ: Եւ ամայի եւ մտերիմ ու տրտում էին փողոցները: Սէմ բուն փափաք մը ունէր վերջին անգամ տեսնելու ճանսըններու տունը: Եւ քայլերը, բնազդօրէն զինք կ'առաջնորդէին այդ ծանօթ ու լուսաւոր ճամբաներէն: Բայց անակնկալ մը չեղաւ իրեն համար ինչ որ տեսաւ: Ընդհակառակը: Կարծես բնական էր եւ անխուսափելի: Կարծես ներքին խորունկ եւ անբացատրելի զգացում մը նախապատրաստեր էր իր մտածումը այս իրողութեան:— Ծանսըններու բնակարանին պատուհաններուն վրայ, պայթած եւ թափած բիբերով ազդագիրներ իրեն կը նայէին պաղատողին:

Վարձու կամ ծախու տուն
Դիւրամատչելի պայմաններով

— Այո, տղաս, նայէ... վա՛յ անոր որ կը խորհի թէ կրնայ հարստանալ եւ իր ընտանիքը երջանկացնել ուրիշները զրկելով եւ չարիք գործելով...:

Եւ Սէմ, աշխատանքէն կոշտացած իր խոշոր ափին մէջ սեղմեց տղուն փոքրիկ ձեռքը: Եւ լուսինը, բարի, պայծառ եւ արծաթալոյս լուսինը իր ճերմակ ժպիտը կը փոխէր անոնց պանդխտացող թշուառ քայլերուն տակ:

Ճ.

Աւարտեցաւ պատմութիւնը:

Գորշ-մանիշակագոյն ամպերու այն ծանրաթաւ կունդերը, որոնք վիշապային վիթխարի կլափներով կարծես հալածելու ելեր էին արեւը՝ դայն բռներ եւ կըլտեր էին անաղմուկ:

Իսկ լիճը յափրացած ցամաքին միօրինակ եւ անձանձիր գգուանքներէն, անոր բերտ ու անզգայ լանջքի գրգանքէն՝ դայն հեռու կը վանէր իր ալիքներով: Անձնասէր եւ ասպերա՛խտ ջուր, ո՛րքան շուտ կշտացաւ: Մինչ ցամաքը կը մերժէր համակերպիլ այս անիրաւ դրժումին եւ կը յամառէր տակաւին: Աներե՛ս, անդո՛ւթ ցամաք: Լքուածի իր վշտէն սրտմտած՝ կը բռնէր ջուրին նուրբ ու դիւրաբեկ մատները, կ'ոլորէր, կը ճմլէր զանոնք եւ զարնելով իր կողերուն՝ կը փշրէր անոնց ոսկորները եւ սպիտակ փրփուրներու վերածած զանոնք՝ կը շարտէր անդին: Անպիտա՛ն եւ անսի՛րտ ցամաք: Ու կը տրտնջար, կը հեծեծէր ջուրը անոր կոշտ վարմունքին իրեն պատճառած սաստիկ ցաւէն:

Մեր շուրջ հասուն, դեղնաւուն անհամար եւ կարգապահ լուսիններ, ելեքորասիւններու կատարներուն թառած՝ վարէն ու դէմէն, փողոցներէն, ահարկու ժխորեր ու անբոյթ սեւեռումով: Եւ սա լուսկեաց ու մենարով վազվզող խենթեցած աստղերը կը դիտէին անտար-

սէր լուսիններէն եւ այն շուայտ ու հարրած աստղերէն փախչող ու պահոււրտող խաւարի պատառներ՝, ծառերու սաղարթախիտ ճիւղերու ստուերներուն մէջ ծուարած՝ պուտ մը անվրդով խաղաղութիւն կ'երագէին, եւ մանուկ Յովհաննէս-Մկրտիչ կը քնանար անմեղ նինջով մը, դըռ- խը հօր աղբիւն հանգչեցուցած,

Երբ Սէմ Թամսըն աւարտեց իր պատմութիւնը:

— Այո, եղբայր էնտի, մեր բախտը մեր մորթերէն աւելի սեւ եղաւ... Բայց դիտեմ որ դժուար է հաւատալ բոլոր ըսածներուն եւ քեզ բնաւ պիտի չմեղադրեմ, եթէ խորհիս թէ պարզապէս այլանդակ առասպել մըն է ամբողջը...:

— Ձէ, Սէմ, անհաւատալի չեմ դտներ ձեր կեանքին պատմութիւնը... ընդհակառակը՝ ես որ շատ մը սարսափներ ապրած եմ, եւ լսած եմ իմ բաղմաթիւ ազգակիցներուն կրած սոսկալի չարչարանքները եւ հետեւաբար վարժուած եմ ամէնէն ահուկի եւ հրէշային պատահարներու իրողութեան՝ կը խոստովանիմ թէ իրապէս ահաւոր եւ ողբերգական է եղեր ձեր կեանքը... Բայց ներէ որ ճիշտ հիմա շատ անդօր կը զգամ ինքզինքս ցաւի եւ համակրանքի քանի մը խօսքեր ըսելու... պատասխանեցի դողացող ձայնով մը եւ քնացող մանուկին դըռխը փայփայելով:

— Մեծապէս, խորապէս շնորհակալ եմ այդպէս զգալուդ համար, եղբայր էնտի, ճշմարիտ կ'ըսեմ... եւ շատ կը ցաւիմ քեզ տխրեցնելու համար... իրաւ որ բընաւ պիտի չպատմէի այս բաները, եթէ դուն չպնդէիր...:

— Շնորհակալ եմ, Սէմ, եւ մի՛ մտահոգուիր իմ մասին... եւ մէկէն ցատկելով ոտքի՝ երթա՛նք, աւելցուցի, օդը կը գովանայ եւ պզտիկը կրնայ պաղ առնել...:

Եւ ջերմ հրաժեշտով մը բաժնուեցանք իրարմէ, մօտօրէն կրկին հանդիպելու ապահովութեամբ:

Հիմա, Հինգերորդ Պողոտայէն կը քալէինք դէպի վեր, ես եւ կոճղը, ան՝ առջեւէս: Խոնաւ եւ պղտոր նայուածքս յառած անոր, որ կը թաւալէր ոտքերուն տակէն եւ ձեռքերովս տափատիս զրպանները ճմրթկելով, ծանր

քայլերով կը դիմէի դէպի ենթուղիին կայարանը: Եւ սաստիկօրէն կը ցաւէին կոպերս, ամէն թարթելու. կարծես սուր փուշերու վերածուած՝ կոճղը կը մխրճուէր աչքերուս մէջ եւ արցունք կ'արիւնէր զանոնք: Եւ շուրջս, օդը կը թանձրանար հետզհետէ եւ կը դառնար տաք ու հեղձուցիչ: Ու միջոցը կը մթնէր տակաւ: Եւ մտածումս, ներկայէն հալածական՝ լուսայորդ պողոտաներէն, բարձրարերձ շէնքերէն եւ քովերէս խլացուցիչ ժխորով սլացող ինքնաշարժներու վրայէն կ'արշաւէր, կը փախչէր դէպի ծանօթ բայց ստուերապատ անցեալը...:

Եւ ո՛րքան յանկարծօրէն կը շրջուէին միջոցն ու անջըրպետը:

Ու անապատէ մը կ'անցնէի առանձին, ուր համատարած եւ անթափանց խաւար մը կը տիրէր: Նոյնքան թանձր լուսիւն մը կը պաշարէր զիս: Ո՛չ հովի ծփանք կը լսէի ականջներուս դէմ, եւ ո՛չ ալ քայլերուս տակ անտրտունջ փլչող աւազը կը տեսնէի: Բայց դիտէի թէ անապատ մը կը կոխկրտէին կրունկներս այդ պահուն՝ որովհետեւ անգերեզման դիակներու ծանօթ եւ գարշելի հոտը կը խանձէր դէմքս եւ երբեմն ոտքերս կը դարնուէին լերկ ոսկորներու դէղի մը, ուրկէ չոր ու հնչուն ճարճատիւն մը կը բարձրանար:

Բայց նոյնքան անակնկալօրէն լուծուեցաւ այս զգայնութիւնը: Եւ անյայտացած անապատին փոխարէն՝ հիմա դէմս հրաշագեղ արշալոյս մը կը պայծառանար, որուն կարմրավառ ցուքերը կը հոսէին ամէն ուղղութեամբ եւ որոնց ջերմութենէն բռնկեր էր ամբողջ հորիզոնը: Եւ լայնաձակ քառուղիի մը վրայ գտայ ինքզինքս, դարձեալ մինակ բոլորովին: Այս պողոտան կ'երկարէր ու կարծես կը ձուլուէր այդ շքեղ արշալոյսին ծոցը: Եւ այն կէտէն, ուր կը միախառնուէին այս լուսայորդ ճամբուն վախճանն ու այն շիկակարմիր հորիզոնը՝ հսկայ, բոցավառ արեւ մը երեւցաւ մէկէն եւ անկէ կախուած աստղահիւս ցուցանակի մը վրայ գրուած էր,

Երգանկուրթիւն:

Այդ հրաշագործ եւ մաղնիրասական հրազունդին բոլոր-տիքը, լուսաճաճանչ դօտիներով պսակուած պատկերներ տեսայ, որոնք կենդանի էլին կարծես ու կը ճառագայթէին իմաստութեամբ եւ բարութեամբ: Անոնց դիմադիծերը ծանօթ թուեցան ինծի եւ ես յիշեցի տեսած ըլլալ դանոնք պատմութեան գիրքերու էջերուն վրայ: Անոնք բազումներ ունեցան յանկարծ, երկարեցին զանոնք ինծի եւ կարծես կը պաղատէին, — Ես Պուտտան եմ, Պրահման եմ, Մովսէսն եմ, Քրիստոսն եմ, Մուհամէտն եմ, Լէնինն եմ... եկուր ինծի, եւ ես քեզ պիտի տանիմ քու երազիդ փառքին:

Բնադրօրէն անդրադարձայ հետզհետէ, թէ բոլոր անոնք չէին կրնար միայն զիս կանչել: Ու գլուխս շրջեցի ետ, այդ նորածիլ կասկածը փարատելու համար: Բայց ինչ որ տեսայ՝ դողացուց ոսկորներս, ահաբեկեց զիս եւ կարծես հաշմեց բոլոր ջիւղերս: Ինձմէ վերջ, ամբողջ քառուղիին լայնքով եւ դէպի ետ՝ անթիւ հազարներ եւ անհամար բիւրաւորներ կը քալէին առաջ հեւալէն, հեծեծեւէն, հայհոյեւէն: Անոնց բոլորին ուսերուն պողպատէ լուծեր կը ծանրանային եւ անոնց բերաններէն պրկուած սանձեր կ'երկարէին ետեւ: Այդ սանձերը կը ցնցուէին անդադար, եւ ցաւազին զալարումներով կը հոնդային լծակիր մարդոց բազմութիւնները, որոնք դեղին, սեւ, պղնձագոյն եւ ճերմակ կարգերու կը բաժնուէին:

Այդ պահուն էր, որ կոնակիս վրայ մտրակի մը շաշիւնը լսեցի: Ու ակնարկով հետեւեցայ անոր: Ան կուգար ետեւէն, հեռուէ՛ն, վիթխարի ու ժանտատեսիլ կառքէ մը, որուն վրայ, կառավարներու բազմաթիւ խումբեր, հարբած եւ ինքնամոռաց, կոկորդապատառ քրքիջներով եւ հայհուղներով, մոլեգնօրէն կը քաշքշէին մեր սանձերը եւ կատաղօրէն կը մտրակէին մեզ: Ու մենք, երջանկութեան արեւին հասնելու մեր ձգտումէն եւ այդ պսականած ու բռնակալ կառավարներէն մտրակուած՝ կը քաշէինք կառքը դէպի վեր: Եւ այդ կառքին ճակատին ու կողերուն, հարիւրաւոր լեզուներով քանդակուած էր

միակ բառ մը, որ կը պսպղար արշալոյսին ցուրերուն դէմ,


Կեանք:

Ու դարձայ առաջ, ծունկերուս կթոտումին եւ յուսահատութեանս իշխելու ճիգով մը: Այն ատեն էր, որ նշմարեցի մարդերու այն ծովածաւալ ովկէանոսը, որ ինձմէ առաջ կը փոռէր, կը ձգուէր, կ'ալեւծփար դէպի հեռաւոր հորիզոնը: Ուսերուս ծանրացող լուծը սուր շեղբի մը պէս կը խրէր միսերուս մէջ ու ոսկորներս կը սարսուռային ցաւին սաստիկութենէն: Կը դգայի թէ լեզուս ու շրթունքներս բլբլուած՝ կ'արիւնէին անդադար պրկուող սանձին ժանդոտ երկաթին հարուածներէն: Ու ամէն մարդ կը կճրտէր իր ակոսները, մաշեցնելու, փշրելու համար այս խուժուոժ լուծը: Բայց այդ պայքարի տաժանքին մէջ կ'իյնային մեզմէ շատեր: Անոնք որ տկար էին կամ կը սայթաքէին՝ կ'իյնային իրենց սանձերուն վրայ: Եւ կամ առաջ շարժող բազմութիւնը, բիւրաւոր դարչապարներու դանակոծումին տակ կը ճգմէր, արիւնաշաղ խմորի կը վերածէր անոնց փխրուն մարմինները, կամ ահարկու կառքին ծանրաթաւալ անիւներուն տակ ցելս ու փոշի կը դառնային անոնց միսերն ու ոսկորները եւ վերջին հոնդիւններն ալ կը խեղդուէին ճոխչին ու ճարձատին մէջ...: Ու հազիւ կը լսէինք ինկողներուն, մեռնողներուն ճիչերը, հծծիւնները, կանչերն ու աղաղակները, ա'յնքան բարձր, ա'յնքան կոկորդալիւր կը պոռային, կը ծիծաղէին ու կ'երգէին մեզ վարողները...:

Եւ յանկարծ գայթեցաւ մէկ ոտքս, ու ինծի մօտ, շատ մօտ, դարհուրելիօրէն մօտ, կոնչեց ծանրաթաւալ անիւը... ամէն բան ջնջուեցաւ, աներեւութացաւ մէկէն... դէմս ինքնաշարժ մը կանդնած էր, որուն վարիչը կանչեց բարկացած,

— Ապո'ւշ, չնայի՞ս քալած ճամբուդ...:





ՀՀ Ազգային գրադարան



NL0328534

19.794

ԳԻՆ՝ ՄԷԿ ՏՈԼԱՐ

Ստանալու համար դիմել Հեղինակին՝

A. ANTREASSIAN
723 Fulton Street
Fresno, Calif.
U. S. A.